ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК ОБЩЕСТВЕННЫХ НАУК

HERALD OF SOCIAL SCIENCES

2(656)
ՄԱՅԻՍ-ՕԳՈՍՏՈՍ
МАЙ-АВГУСТ
MAY-AUGUST

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն/Изд. «Гитутюн» НАН РА/“Gitutyun” Press NAS RA
ԵՐԵՎԱՆ/ЕРЕВАН/YEREVAN 2019

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

АРЦРУН АВАКЯН, АРАРАТ АГАСЯН, ВЛАДИМИР АРУТЮНЯН,ГАМЛЕТ ГЕВОРКЯН, ВАРДАН ДЕВРИКЯН, ГАГИК КАЗИНЯН, РУБЕН КАРАПЕТЯН, ВИКТОР КАТВАЛЯН, АШОТ МЕЛКОНЯН,ВАЧЕ ОВАКИМЯН, НИКОЛАЙ ОГАНЕСЯН, ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН, ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

ARARAT AGHASYAN, ARTSRUN AVAGYAN, HAMLET GEVORGYAN, VARDAN DEVRIKYAN, ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN, RUBEN KARAPETYAN, VLADIMIR HARUTIUNYAN, VACHE HOVAKIMYAN, NIKOLAY HOVHANNISYAN, GAGIK GHAZINYAN, ASHOT MELKONYAN, GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN

© Լրաբեր հասարակական գիտությունների
© Вестник общественных наук
© Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Խառատյան – Էգեյանի առափնյա հայկական գաղթօջախների պատմությունից (XVII-XIX դդ.)..... 10
Երվանդ Գրեկյան – Կլիմայական փոփոխությունները և Ուրարտական պետության անկումը..... 35
Գայանե Մախմուրյան – Սևրի դաշնագիրը և Հայաստանի Հանրապետությունը ԱՄՆ-ի 1919-1920 թթ. քաղաքականության մեջ..... 72

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յուրի Սուվարյան – Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները..... 87

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Սվետլանա Արզումանյան – Մետամոդեռնիզմ՝ ձգտում դեպի զգացմունքի նոր կառուցվածք..... 105
Լուսինե Թասալյան – Հաշտարարության ընթացակարգային սկզբունքները..... 119

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Արփի Կարապետյան – Էթնիկ հետերոկարծրատիպերի միգրացիոն համատեքստը (էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի հիման վրա)..... 128

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Վազգեն Համբարձումյան – Լեզվի ճանաչողությունը և դրա ուսումնասիրության մակարդակներն ու աստիճանները..... 141
Լալիկ Խաչատրյան – Կրկնավոր բարդությունների հնչյունաանկումով տիպն Աստվածաշունչ մատյանում..... 166

Լիլիթ Սաֆրաստյան – Իրանական սփյուռքի գրականությունը «մշակութային թարգմանության» համատեքստում. Թաղի Մոդարեսի, Նասիմ Խաքսար..... 181

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մերի Կիրակոսյան, Մարի Աբրահամյան – Ստեփան Աղաջանյանի մանկական դիմանկարները..... 193
Արմինե Պետրոսյան – Գեղանկարիչ Հմայակ Հակոբյանի արվեստը..... 207

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գարեգին Թումանյան – Կիմերները և սկյութները Հայկական լեռնաշխարհում..... 219
Լիլիթ Սիմոնյան – «Եկեղեցի» և «ուխտավայր» մշակութային երևույթների հարաբերակցությունը հայ ժողովրդական քրիստոնեության մեջ..... 241
Արման Նալբանդյան – Արձանագիր խաչքարեր Մեղրիի Ս. Հովհաննես (Անապաստանաց) վանքից..... 272

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սերգո Երիցյան, Մերի Թադևոսյան – Ժամանակակից մեդիատեքստը տեղեկատվական-հաղորդակցական տարածքում..... 288

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անուշավան Զաքարյան – Ա. Ախմատովայի «Սպիտակ երամ»-ը Ս. Գորոդեցկու գնահատմամբ..... 300

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համո Սուքիասյան, Անի Ֆիշենկճյան – *Կարո Ժամխարյան,* Կրթա-մշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920–1930-ական թթ. 304

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Վահան Տեր-Ղևոնդյան, Արսեն Բոբոխյան – Հնագույն քաղաքակրթությունների հարցերին նվիրված երկրորդ ֆորումը..... 307
Գրիգորի Այվազյան – «Կովկասյան Աղվանքը Եվրասիայի պատմամշակութային տարածքում» միջազգային գիտական համաժողովի մասին..... 312

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Ռուբեն Վարդանյան, Հասմիկ Մարգարյան – Մտավորականի ուղին..... 321

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Альберт Харатян – Из истории армянских колоний Эгейского побережья (XVII-XIX вв.)..... 10
Ерванд Грекян – Климатические изменения и падение Урартского государства..... 35
Гаянэ Махмурян – Севрский договор и Республика Армения в политике США 1919-1920 гг. 72

ЭКОНОМИКА

Юрий Суварян – Качественные характеристики и приоритеты экономического развития..... 87

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Светлана Арзуманян – Метамодернизм: стремление к новой структуре чувства..... 105
Лусине Тасалян – Процедурные принципы медиации..... 119

СОЦИОЛОГИЯ

Арпи Карапетян – Миграционный контекст этнических гетеростереотипов (по материалам этносоциологического исследования)..... 128

ФИЛОЛОГИЯ

Вазген Амбарцумян – Когнитивность языка, уровни и степень ее исследования..... 141
Лалик Хачатрян – Редупликативные словообразовательные типы с падением звуков в Библии..... 166
Лилит Сафрастян – Литература иранской диаспоры в контексте "культурного перевода": Таги Модарресси и Насим Хаксар..... 181

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Мэри Киракосян, Мари Абрамян – Детские портреты Степана Агаджаняна 193
Армине Петросян – Искусство художника Амаяка Акопяна..... 207

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Гарегин Туманян – Киммерийцы и скифы на Армянском нагорье..... 219
Лилит Симонян – Соотношение культурных феноменов “церковь” и “паломное место” в армянском народном христианстве..... 241
Арман Налбандян– Хачкары с надписями из монастыря Св. Ованеса (Анапастанац) в Мегри..... 272

ЖУРНАЛИСТИКА

Серго Ерицян, Мери Тадевосян – Современный медиатекст в инфокоммуникативном пространстве..... 288

ПУБЛИКАЦИИ

Анушаван Закарян – "Белая стая" А. Ахматовой в оценке С. Городецкого..... 300

РЕЦЕНЗИИ

Амо Сукиасян, Ани Фишенкчян – *Каро Жамхарян*, Культурно-образовательная жизнь и вопросы сохранения армянства в армянских общинах Сирии и Ливана 1920-1930-ых гг. 304

НАУЧНАЯ ХРОНИКА

Ваан Тер-Гевондян, Арсен Бобохян – Второй форум, посвященный вопросам древних цивилизаций..... 307
Григорий Айвазян – О международной научной конференции "Кавказская Албания в историко-культурном пространстве Евразии"..... 312

СЛОВО ПАМЯТИ

Рубен Варданян, Асмик Маргарян – Путь интеллигента..... 321

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

Albert Kharatyan – From the History of the Armenian Colonies of the Aegean Coast (17-19th centuries) 10
Yervand Grekyan – Climate Changes and the End of the Urartian State... 35
Gayane Makhmurian – The Sevres Treaty and the Republic of Armenia in the U.S. Policy of 1919-1920..... 72

ECONOMY

Yuri Suvaryan – Qualitative Indicators and Priorities of Economic Development..... 87

PHILOSOPHY AND LAW

Svetlana Arzumanyan – Metamodernizm:The Aspiration for a New Structure of Feeling..... 105
Lusine Tasalyan – Procedural Principles of Mediation..... 119

SOCIOLOGY

Arpi Karapetyan – Migration Context of Ethnic Heterostereotypes (Based on Ethno-Sociological Research Materials)..... 128

PHILOLOGY

Vazgen Hambardzumyan – Linguistic Cognition. Levels and Degrees of the Research..... 141
Lalik Khachatryan – Reduplicative Word-Formation Types of Phonemic Delection in the Bible..... 166
Lilit Safrastyan – Literature of Iranian Diaspora in the Context of "Cultural Translation". Taghi Modarressi, Nasim Khaksar..... 181

CULTURE AND ART HISTORY

Mary Kirakosyan, Mari Abrahamyan – Children Portraits of Stepan Aghajanyan..... 193

Armine Petrosyan – The Art of Painter Hmayak Hakobyan..... 207

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Garegin Tumanyan – Cimmerians and Scythians in the Armenian Highland..... 219
Lilit Simonyan – Correlation of Cultural Phenomena "Church" and "Shrine" in the Armenian Folk Christianity..... 241
Arman Nalbandyan – Khachkars (Cross-Stones) with Inscriptions from St. Hovhannes (Anapastanats) Monastery of Meghri..... 272

JOURNALISM

Sergo Yericyan, Mery Tadevosyan – Modern Mediatext in Infocommunicative Space..... 288

PUBLICATIONS

Anushavan Zakaryan – "The White Flock" by A. Akhmatova as assessed by S. Gorodetsky..... 300

LITERARY REVIEWS

Hamo Sukiasyan, Ani Fishenkchyan– *Karo Zhamkharyan,* Cultural and Educational Life and Issues of the Preservation of Armenians in the Armenian Communities of Syria and Lebanon during 1920s and 1930s..... 304

SCIENTIFIC CHRONICLE

Vahan Ter-Ghevondyan, Arsen Bobokhyan – The Second Forum Devoted to the Issues of Ancient Civilizations..... 307
Grigory Ayvazyan – Towards the International Scientific Conference "Caucasian Albania in the Historical and Cultural Space of Eurasia".. 312

WORD OF MEMORY

Ruben Vardanyan, Hasmik Margaryan – The Way of the Intellectual... 321

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԷԳԵՅԱՆԻ ԱՌԱՓՆՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (XVII-XIX դդ.)

Ալբերտ Խառատյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր
Մարշալ Բաղրամյան 24/4 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ info@haygithimnadram.am
Հոդվածը ներկայացվել է 04.07.2019, գրախոսվել է 01.08.2019, ընդունվել է տպագրության 15.08.2019

Զմյուռնիայի տերունի թեմն իր սկզբնավորումից ի վեր (XVII դ. 2-րդ տասնամյակ) ընդգրկում էր փոքրասիական տարածքների արևմտյան մասը՝ իր հայաբնակ քաղաքներով, ավաններով ու գյուղերով: Այդ թեմի մեջ մտնող բնակավայրերի ցանկը տրված է Սիմեոն կաթողիկոսի «Ջամբռ» աշխատության մեջ և մեզ հասած կաթողիկոսական կոնդակներում: Կոնդակներում Զմյուռնիայից հետո, սակավ բացառություններով, հիշատակվում են Այդընը և Մանիսան, իսկ մյուս քաղաքներն ու այլ բնակավայրերը՝ անկանոն հերթականությամբ: Կարելի է միայն ասել, որ Զմյուռնիայի հայ բնակչության համեմատությամբ այդ ոչ մեծ համայնքները հիմնականում համալրվել էին XVII-XVIII դդ.՝ Սյունիքից, Ղարաբաղից, Արարատյան հովտի և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից շարունակական գաղթերի հետևանքով: Ժամանակային այս կտրվածքով բավականաչափ տվյալներ կան Այդընի, Մանիսայի, Էոդեմիշի, Քրքաղաչի, Գընըքի, Բերգամայի, Դենիզլիի, Նազիլիի և այլ համայնքների վերաբերյալ, որոնց կանդրադառնանք ստորև[1]:

---

[1] Զմյուռնիայի և առհասարակ Էգեյանի առափնյա շրջանների գաղթօջախների պատմության վերհանման առաջին և հաջողված փորձը պետք է համարել Հ.Դիմաքսյանի «Շիթ մ՚անունք ի Միջերկրականէ» (Կ. Պոլիս, 1878) աշխատությունը: Իր փաստառատ տվյալներով առանձնանում է Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» ամսագրի 1879 թ. հունվար-մարտ համարներում տպագրված՝ Մ. վարդ. Բարխուտարյանի «Վիճակագրութիւն» հմտալի ուսումնասիրությունը: Տևական ժամանակ անց դրան հաջորդած՝ Մխիթարյան հայր Հ. Քոսյանի «Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս» (Վիեննա, 1899) երկհատոր գիրքն ունի պատմագիտական լուրջ արժեք:

Այդընն (հին հունական անվանումը՝ Տրալիս, հետագայում հայտնի է Գյոզելիհիսար անվամբ և դրա հնչյունափոխված ձևերով), դեռևս անտիկ դարաշրջանից հայտնի այս քաղաքը XIII դ. վերջերին բյուզանդացիներից անցել է սելջուկյան էմիր Այդընին՝ այդուհետև կոչվելով նրա անվամբ: 1425 թ. Այդընի էմիրությունը վերջնականապես անցել է Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո: Այդընի հայ բնակչության կամ գաղթականության պատմությունը, եթե դատելու լինենք մի հնագույն շիրմաքարի արձանագրությունից, վկայվում է XVI դարից[2], իսկ եթե նկատի ունենանք հենց գերեզմանատան առկայությունը, որտեղ գտնվել է այդ շիրմաքարը, էլ ավելի վաղ ժամանակներից: Մակար վարդ. (Բարխուտարյան) 1879 թ. նշում է, որ Այդընի հայերը գաղթել են Հայաստանի տարբեր շրջաններից, նրանց թվաքանակը «հետզհետէ նուազելով՝ այժմ հազիւ 71 տուն կայ», ընդամենը՝ 277 մարդ[3]: Հ. Քոսյանը, հենվելով վերոհիշյալ արձանագրության վրա, կարծում է, որ «Հայք իբր 150 տարի առաջ գաղթած են յԱյտընն»[4]:

Փոքրասիական հայ համայնքների մեջ Այդընը մնում էր իբրև ճանաչված բնակավայրերից մեկը՝ թեկուզ և անցյալի շատ ավելի բազմամարդ բնակչության և երևելի պատմության շնորհիվ: Մի պահ այն կարող էր լինել նաև Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդական կենտրոնը, ինչը տեսնում ենք 1635 թ. մի բժշկարանի հիշատակարանում՝ «կենդանի նահատակ» Տրդատ արքեպ. օրինակով, որը քահանա էր ձեռնադրել գրիչ Սարգսին՝ Այդընում[5]: Ավելին, Հ. Քոսյանը Այդընում հայտնաբերել և հրապարակել է երկու շիրմաքարեր, որոնցից մեկը Մաղաքիա եպ. Եփեսացունն է, շատ հավանական է, թեմի առաջնորդինը՝ վախճանված ՌՃ (1651) թվականին[6]:

Մեկ-երկու բացառություններով, շիրմաքարերը վերաբերում են XVIII դարին՝ մեծ մասամբ նշելով Սյունիքից եկածներին՝ շվանիձորցիներ, տաթևացիներ, սրաշենցիներ, շիկահողցիներ, կիրթաղեցիներ (կերթաղեցի) և այլն, Արարատյան դաշտից՝ կարբեցիներ: Հ. Քոսյանի մեջբերած գրեթե բոլոր դամբանագրերում հիշվում են Սյունիքի գյուղերը և հուշարկելով, որ Այդընում XVII դ. 2-րդ կեսին, ինչպես և XVIII դ. 2-րդ կեսին ապրել են Սյու-

[2] Քոսեան 1899, հ. Բ, 25:
[3] Արևելեան մամուլ 1879, 437:
[4] Քոսեան 1899, 25:
[5] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դարի (1621-1640) 1978, 596:
[6] Հ.Յ.Ք. (Քոսեան) 1906, 278:

նիքից գաղթած հայրերի որդիները: Կնշանակի՝ գաղթերը Սյունիքից դեպի Էգեյանի ափեր շարունակվել են երկու հարյուրամյակների ընթացքում՝ XVII և XVIII դդ.:

Օսմանյան տարածքներից գաղթած Այդընի հայերը (ի տարբերություն Արևելյան Հայաստանից գաղթածների), որ հիմնականում թրքախոս էին, XIX դ. 2-րդ կեսին, խմբված ազգային եկեղեցու և դպրոցի շուրջ, ակնհայտ շրջադարձ էին արել դեպի հայախոսությունը: Հ. Աճառյանը գրում է, որ «Փոքր Ասիոյ մէջ, Զմիւռնիոյ եւ Այտընի քովերը հին գաղթականութիւն մը կայ, որ մէկ-երկու դար առաջ Ղարաբաղէն հեռանալով՝ այս տեղերը հաստատուէր էին: Թէեւ յիշեալ գաղթականութեան մեծագոյն մասը տաճկախօս դարձած է, բայց երկու տեղ, այն է՝ Պուրտուր եւ Էօտէմիշ, դեռ իրենց մայրենի բարբառը անկորուստ կը պահեն»[7]:

Սակայն, կարծում ենք, որ բուն Այդընի հայերի մեծ մասը թրքախոս չէր կարող լինել և խոսքն այստեղ, թերևս, կարող էր վերաբերել այդ քաղաքի մերձակա գյուղական բնակավայրերին՝ երկուսուկես տասնյակի չափ գյուղերում[8] բնակվող հայերին, որոնց համայնքների գոյացման մասին մենք տեղեկություններ չունենք: Համենայն դեպս, հենվելով Սյունիք-Էգեյանի առափնյա տարածքներ գաղթերի, ինչպես և Այդընի գերեզմանաքարերի մակագրությունների վրա, կարող ենք եզրակացնել հետևյալը. թուրքերեն կարող էին խոսել կամ Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններից եկած գաղթական հայերը, կամ հնաբնակ՝ մեզ հայտնի գաղթերից առաջ Այդընում ապրած հայերի սերունդները: Սյունիքից եկած հայությունը, որ անշուշտ, մեծամասնություն է կազմել Այդընի համայնքում, մինչդեռ, հաստատվելով Էգեյանի մերձափնյա բնակավայրերում, շուրջ երկդարյա շարունակական գաղթերի հետևանքով պահպանել էր իր հայախոսությունը՝ խոսելով մայրենի բարբառով:

Այդընի հայ գաղթականությունը զբաղվում էր առևտրով, գյուղատնտեսությամբ և արհեստներով՝ կապեր ու հարաբերություններ ունենալով Զմյուռնիայի նման խոշոր նավահանգստի հետ:

Մանիսա (Մագնեզիա), անտիկ աշխարհում համբավված քաղաքներից մեկը, գտնվում էր Մեանդր գետի ափին, Եփեսոսի շրջակայքում, որին

---

[7] Աճառեան 1911, 66:

[8] Հ. Քոսյանը թվարկում է Այդընի շրջակա 28 գյուղ, այդ թվում՝ Իմամ քյոյ, Գոճակյուր, Սերչեքյոյ, Ումուրլու, Թեփեճիք, Չերքեզ քյոյ, Ըշըգլը և այլն (Քոսեան 1899, 7):

էլ վիճակված էր դառնալու հայկական գաղթավայրերից մեկը փոքրասիական տարածքներում: Մինչև XIV դ. սկզբները գտնվում էր բյուզանդական տիրապետության ներքո, 1313 թ. Մանիսան կից շրջաններով մտավ Սարուխանի բեյության կազմի մեջ, 1420-ական թթ. միացվել է Օսմանյան Թուրքիային: Մանիսան ևս տարածաշրջանի հնագույն հայ գաղթօջախներից է, որը ներգրավված էր ջենովական առևտրի ու հանքային արտադրության ոլորտում: Վ. Գորդլևսկին գրում է, որ սելջուկների ժամանակ հայերի ձեռքին պետք է կենտրոնացած լիներ մետաղամշակությունը և առհասարակ, տեղական արտադրությունը[9]:

XVII դ. Մանիսայի շրջանում ևս կազմավորվեց դերեբեյություն, ինչը հատուկ էր դարձել օսմանյան փոքրասիական տարածքներին: Մանիսան դարձավ Կարաօսմանօղլու գերդաստանի նստավայրը: XVI դ. և դրանից առաջ այստեղ գոյացել էր հայկական համայնք, որի մասին անգնահատելի տեղեկություններ է տալիս 1609-1611 թթ. ճանապարհորդության ընթացքում այստեղ կանգառած Սիմեոն Լեհացին. «Եւ կայր այս քաղաքս երկու եկեղեցի հայոց, փայտէ տան պես, մինն ի վերն լերան վրայ, եւ մինն ի դաշտն, կայր եպիսկոպոս մի անունն Յակոբ Ֆրնօզցի եւ երկու էրէց եւ մի քանի հարիւր տուն հայի»[10]:

Ակներևաբար, հայկական այս երկու թաղերը հիմնվել են տարբեր ժամանակներում, կարելի է կարծել՝ հայրենիքի տարբեր բնակավայրերից սկիզբ առած գաղթերի հետևանքով, հակառակ դեպքում գաղթականները կտեղավորվեին մեկ թաղում՝ առանց վերին և ներքևի (դաշտի) բաժանման: Մի քանի հարյուր տուն ասելով, բնականաբար, Սիմեոն Լեհացին նկատի ունի զույգ թաղերի հայ բնակչությանը՝ միասին վերցրած: 1853 թ. հրատարակված իր աշխատության մեջ Ղ. Ալիշանը նշում է այդ թիվը՝ 2500 մարդ, իրենց երկու՝ Ս. Սիոն և Ս. Լուսավորիչ եկեղեցիներով[11]: Ավելի քիչ է ներկայացված Մանիսայի հայերի թիվը դրանից 20 տարի առաջ՝ 1833 թ. Բոստոնում տպագրված՝ ճանապարհորդ Է. Սմիթի գրքում՝ 400 տուն[12] (եթե նկատի առնենք միջին վիճակագրական թիվը՝ յուրաքանչյուր տունը՝ 5 մարդ): Մ. վարդ. Բարխուտարյանը 1879 թ. ամրագրում էր Մա-

[9] Гордлевский 1960, 132-133.

[10] Սիմէոն դպրի Լեհացւոյ 1936, 37:

[11] Ալիշանեան 1853, 543:

[12] Armenians in the Ottoman Empire 1997, 195. Չի բացառվում, որ Է. Սմիթը նկատի ունեցած լինի միայն Վարի Մանիսայի հայերի թվաքանակը:

նիսայի հայկական երկու թաղերի տների և բնակիչների քանակն առանձին-առանձին. Վարի Մանիսայում՝ 390 տուն 1766 բնակչով և Վերին Մանիսան՝ 103 տուն 407 բնակչով[13]: Մ. Բարխուտարյանից քիչ առաջ՝ 1878 թ., Հ. Դիմաքսյանն ամբողջ Մանիսայում հաշվում է 650 տուն հայ[14]: Հ. Քոսյանը Վարի թաղի տների թիվը հաշվում է 500, բայց հետո կրկնում է Մ. Բարխուտարյանի նշած և միայն Վարի թաղի տներին վերաբերող՝ 390-ը. Վերին թաղի տների քանակը, ըստ Քոսյանի, հասնում էր 100-120-ի[15]: Հանրագումարի բերելով այս բոլոր տվյալները՝ կարող ենք ասել, որ XIX դ. Մանիսայում ապրել է շուրջ 2500-3000 հայ:

Մանիսան փոքրասիական արհեստագործության կենտրոններից մեկն էր, որի տարացեղ բնակչությունը ակտիվորեն մասնակցում էր գյուղատնտեսական և տնայնագործական ապրանքների շրջանառությանը: Մանիսայի հայերի մեջ ամենից շատ տարածված արհեստը մանուսայագործությունն (ջուլհակագործություն) էր:

Մանիսացի հայերը ունեին նաև այլ արհեստավորներ՝ դերձակներ, ժամագործներ, սափրիչներ, ատաղձագործներ, դարբիններ, կոշկակարներ, ոսկերիչներ և այլն: Տեղի արհեստավորների և առհասարակ համայնքի կյանքի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակում Զմյուռնիայի առաջնորդ Փիլիպոսի գրառումները իր նվիրակական այցերի վերաբերյալ: 1816 թ. նոյեմբերին նա այցելել է Վարի թաղ՝ նշելով, որ այն ունի 9 ծուխ՝ համապատասխան թվով քահանաներով: Նրանցից ավագ քահ. Տեր-Հարությունի ծխում հիմնականում առևտրականներ էին (մահտեսի պատվանունով), կային նաև արհեստավորներ[16]: Առևտրական հայերը ներգրավված էին գյուղատնտեսական ապրանքների և հումքի (բամբակ, ցորեն, պտուղներ) առևտրի ոլորտում, որտեղ եկամտաբեր էր հատկապես բամբակի առևտուրը: Այստեղ ևս զբաղվում էին այգեգործությամբ, աճեց-

[13] Վիճակագրութիւն 1879, 440: Շատ բանով ենք պարտական Մ. Բարխուտարյանին, նրա կազմած՝ Զմյուռնիայի թեմի հայ բնակչության վիճակագրական ցանկի համար, բայց հարկ է նշել, որ այն լրիվ չէ. ցանկից դուրս են մնացել Թիրա, Մենեմեն, Ալաշեհիր, Այասլուք (Եփեսոս), Թուրգութ, Ստանքյոյ, Բոդրոում բնակավայրերի համայնքները:

[14] Դիմաքսեան 1878, 353:

[15] Տե՛ս Քօսեան 1899, 118, 129, 131:

[16] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, 12-13:

նում էին խաղող, թուզ և այլ պտուղներ, որոնք հանվում էին շուկա, սակայն եկամտի հիմնական աղբյուրը մնում էր արհեստագործությունը:

Մանիսայի հայերը և նրանց ազգային կյանքը սերտ առնչություններ ունեին զմյուռնահայ իրականության հետ, նրանց հոգևոր ու տնտեսական կացությունը փաստորեն ուղղորդվում էր Զմյուռնիայի առաջնորդարանի և մեծահարուստների կողմից: XVIII դ. վերջերին և XIX դ. առաջին կեսին այստեղ զգալի դերակատարություն ունեին զմյուռնացի Ապրոյանները, Էքիզյանները և Կոստանդյանները:

Թանզիմաթի ժամանակներից Մանիսայի հայերի մեջ ևս վերելք ապրեց ազգայնության ոգին, ուշադրության կենտրոնում հայտնվեցին վարժարանները, ստեղծվեցին արհեստավորական, կրթական-բարեսիրական և տիկնանց ընկերություններ, առավել ամրացան կապերը Զմյուռնիայի առաջնորդարանի և ազգային մյուս հաստատությունների հետ:

Էոդեմիշ, փոքրասիական հնագույն գաղթավայրերից մեկն է. իր շրջակա բնակավայրերով (Բիրգի, Թիրե, Այասլուք, Եփեսոս, որտեղ XVII դ. և հնարավոր է՝ դրանից էլ առաջ կային հայկական համայնքներ) և Զմյուռնիային կից այլ քաղաքներով հանդերձ, ապրել է տարածաշրջանի ողջ պատմական ճակատագիրը: Մակար վարդ. Բարխուտարյանը Էոդեմիշի հայ համայնքի պատմությունը սկսում է XVI դարից՝ արձանագրելով նաև նրանց տեղաշարժը գաղթելուց հետո. «Հայք 300 տարի առաջ գաղթած են ի Պերկի, որ Էոտէմիշէն մեկուկես ժամ հեռի գիւղ մ'է եւ անկից Էոտեմիշ իջած հաստատուած են[17]» - գրում է նա:

Հ. Քոսյանը նոր մանրամասն է հավելում. 300 տարի առաջ թողնելով իրենց հայրենիքը՝ հայերը գաղթել են Պերկի, որը և թողել են «գրէթէ 150 տարի առաջ»[18], ուրեմն, մոտ XVIII դ. երկրորդ կեսին, անցնելով Էոդեմիշ:

Հ. Քոսյանի վկայակոչած՝ Պերկիի հին դամբանագրերը, սակայն, հիմք են տալիս ասելու, որ հայերն այնտեղ են եղել ավելի վաղ, քան XIX դ. երկրորդ կեսին: Նկատենք, որ դամբանագրերից ամենահինը թվագրված է 1651-ով, վերջինը՝ 1737-ով, և այստեղ հարկ է աչքի առաջ ունենալ այն պարզ ճշմարտությունը, որ այդ 1651-ը ոչ թե գերեզմանատունը հիմնելու, այլ ընդամենը հայտնաբերված շիրմաքարերից հնագույնի թվականն է: Կարող էին լինել և ավելի հները, որ մեզ մնում են անհայտ:

---

[17] Վիճակագրութիւն 1879, 439:

[18] Քոսեան 1899, 68:

Պերկիի հին գերեզմանատան պահպանված վերջին շիրմաքարը կրում է ՌՃՁՋ (1737) թվականը, իսկ Էոդեմիշի ամենահին շիրմաքարերը՝ 1741 թվականը[19]: Դրանից պետք է մակաբերել, որ սյունեցիները Պերկիից Էոդեմիշ են տեղափոխվել 1737-1741 թթ. միջև: Այնուհետև, եթե Պերկիի հին գերեզմանատան XVII դ. շիրմաքարերը հիշատակում են միայն հանգուցյալների անունները և գյուղերը՝ **շաշկետեցի Պողոս**, **կալերցի Աբգար**, **Գրիգոր կալերցի**[20] և այլն, ապա Էոդեմիշի՝ ուշ շրջանի շիրմաքարերը, սկսած 1741 թ. մինչև 1780-ական թթ.՝ նաև հանգուցյալների հայրանունները և նրանց գյուղը՝ **շաշկետեցի Պօղոսի որդի Կապրիէլ**, **գեղջէն Քուզիրեթցի** (իմա՛ Քուջերթցի) **Ավանի որդի Հակոբ**, **ղափանցի մահտեսի Եղիայի դուստր Թաման**, **մարզերեցի** (մազրեցի) **Ղազարի դուստր Բրապիոն** և այլն[21]:

Ի լրումն վերոհիշյալի, ավելացնենք, որ 1817 թ. առաջնորդ Փիլիպոսը գրանցել է Էոդեմիշի նվիրատուների անուններ՝ առանց հայրերի և նրանց գյուղերի հիշատակման, միայն իրենց հայրենի գյուղի նշումով՝ **շաշկետեցի Սիմոն**, **մանլևեցի Մարտիրոս**[22] և այլն, որ ցույց է տալիս նրանց՝ հայրենիքում ապրած լինելու և նոր գաղթական լինելու իրողությունը:

Ղ. Ալիշանը, որքանով մեզ հայտնի է, առաջինն է նշում Էոդեմիշի հայերի թվաքանակը՝ 700 մարդ[23]: Մ. Բարխուտարյանը 1879 թ. Էոդեմիշի համայնքում հաշվում էր 177 տուն՝ ընդամենը 933 մարդ (տղամարդ, կին, երիտասարդ, պատանի, օրիորդ, երկսեռ երեխաներ առանձին հաշվարկով), որ քսան տարի անց նույնությամբ կրկնում է Հ. Քոսյանը՝ ըստ երևույթին, ձեռքի տակ նոր տվյալներ չունենալով[24]: Այս դեպքում, կարելի է ասել, որ XIX դ. ընթացքում Էոդեմիշի հայերի մոտավոր թվաքանակը չի գերազանցել 1000-ը:

Էոդեմիշի համայնքում տարածված զբաղմունք էին մետաքսագործությունը և երկրագործությունը: Կային նաև տնտեսության վերոհիշյալ ճյուղերի արտադրանքը շուկա հասցնող վաճառականներ: Հետաքրքիր է,

---

[19] Քոսեան 1899, 69, 86:

[20] Քոսեան 1899, 69-70:

[21] Քոսեան 1899, 86-93:

[22] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, 41:

[23] Ալիշանեան 1853, 54:

[24] Վիճակագրութիւն 1879, 439: Քոսեան 1899, 177: Սրան նախորդող էջերից մեկում Հ. Քոսյանը, սակայն, հայերի տների մեկ այլ թիվ է նշում՝ 210 տուն (Քոսեան 1899, 68):

որ այստեղ ապրում էին նաև հայ բոշաներ, որոնք, կարելի է կարծել, գաղթել էին հայերի հետ միասին՝ Սյունիքից:

Քրքաղաչ, այս բնակավայրը գտնվում է Զմյուռնիայից հյուսիս-արևելք, շուրջ 145 կմ հեռավորությամբ: Մանիսայից և Էոդեմիշից հետո Քրքաղաչը Զմյուռնիայի թեմում երրորդն է՝ հայ համայնքների թվաքանակով: Ըստ Մ. Բարխուտարյանի՝ 156 տուն, բնակիչների թիվը 811, իսկ Հ. Դիմաքսյանի տվյալներով՝ 140 տուն՝ 450 բնակչով (երկուսն էլ՝ 1870-ականի 2-րդ կեսի կտրվածքով)[25], իսկ 1850-ականի հաշվարկով, ըստ Ալիշանի՝ համայնքը կազմում էր 700 մարդ[26]:

Քրքաղաչի հայ համայնքը գոյացել է կամ XVII դ., և կամ դրանից էլ վաղ մի ժամանակաշրջանում, իսկ XVIII դ. առաջին կեսին ընդունել է նոր գաղթականների:

Վերապահությամբ պետք է մոտենալ Հ. Դիմաքսյանի կարծիքին, որի համաձայն, Քրքաղաչի «կանայք եւ մանկտիք հայերէն կը խօսին զմիւռնացւոց եղանակաւ եւ նմանութեամբ», իսկ տղամարդիկ ընդհանրապես խոսում էին թուրքերեն, թեև ոմանք հայերեն գիտեին[27]: Բայց այսպիսի տարօրինակ բազմաբարբառայնություն չի կարող լինել, որ լեզվի գործածության հիմքում ընկած լինի սեռատարիքային գործոնը: Դրան բավական մոտ կարծիք է հայտնում Հ. Քոսյանը, ըստ որի, ծերերը Քրքաղաչում տաճկախոս են, իսկ նոր սերունդը՝ հայախոս[28]: Բայց գաղթականներով շարունակ համալրվող Քրքաղաչի համայնքը չէր կարող հանկարծակի թուրքախոս դառնալ: Հ. Աճառյանը, մինչդեռ, Զմյուռնիայի բարբառով խոսող փոքրասիական բնակավայրերի մեջ մտցնում է նաև Քրքաղաչը, որի հանրության լեզվում զգալի էր ղարաբաղյան խոսվածքների շերտը[29]:

Քրքաղաչի հայ բնակչությունը զբաղվում էր արհեստներով ու հողագործությամբ: Կային կոշկակարներ, դերձակներ, սափրիչներ, ոսկերիչներ, երկաթագործներ և այլն: Իրենց պատրաստած արտադրանքի մի մասը նրանք վաճառում էին Զմյուռնիայի անհամեմատ ընդարձակ առևտրական հրապարակում: Գյուղատնտեսական արդյունքներից էին հացահատիկը,

---

[25] Վիճակագրութիւն 1879, 440: Դիմաքսեան 1878, 123: Այս հեղինակը նշում է նաև քաղաքի ընդհանուր բնակչության թիվը՝ 14.530 մարդ (Դիմաքսեան 1878, 123):

[26] Ալիշանեան 1853, 144:

[27] Դիմաքսեան 1878, 127:

[28] Քօսեան 1899, 149:

[29] Աճառյան 1911, 239:

քնջութը, բամբակը, ձիթապտուղը. վերջինիս ավանդական հիմքի վրա XIX դ. վերջին գործում էր զմյուռնացի Գ. Դավիթյանի շոգեշարժ սարքավորումներով հագեցած ձիթհան գործարանը[30]:

Քրքաղաչի տնտեսության մեջ բավական գործուն դեր ունեին առևտրականները: Նրանց ձեռքով Զմյուռնիա, Գնըք, Բերգամա և փոքրասիական այլ քաղաքներ էին արտահանվում տեղական գյուղատնտեսական արդյունքները՝ ներմուծելով, հիմնականում Զմյուռնիայից՝ շալ, բրդեղեն, սուրճ, շաքար, օճառ և այլն: XIX դ. սկզբներին Քրքաղաչում հայտնի էր վաճառական Կ. Եղիվարդյանը, որի հաշվեմատյանը (1816-1821) պահվում է Երևանի Մատենադարանում: Այս վաճառականի ամերիկաբնակ հետնորդներից մեկը գրում է, որ 1745 թ. կողմերը գաղթելով Եղվարդից՝ իր նախնիները «Իզմիրի գետեզերքի հողերու վրայ գլխի յազմա (գլխաշոր-Ա.Խ.) տպելու և ներկելու գործարան մը հիմնած էին, որ մինչև 1810 թուականին շարունակուեցաւ»[31]:

Խոսքը, կարծում ենք, վերաբերում է ոչ թե Զմյուռնիային, այլ հենց Քրքաղաչին կամ դրան մոտ շրջաններից մեկին, քանի որ բուն Զմյուռնիայում 1790-ականին սկսեց գործել չթագործների (պասմաճիների) արհեստանոցը, որի տերերի մեջ Եղիվարդյաններ չեն եղել:

Գնըք (Ղնըխ), գտնվում է Բերգամայի մերձակայքում: Ղ. Ալիշանը հիշատակում է Քըլըք կամ Կընըխ ձևերով[32]: Հ. Դիմաքսյանը գաղթօջախի հնությունը հաշվում է 180-200 տարի[33], այսինքն՝ շուրջ XVII դ. երկրորդ կեսից: Սակայն կա մեզ հասած ավելի վաղ շրջանի մի հիշատակարան՝ գրված Ստեփանոս երեցի ձեռքով, որն հայտնում է. «Զվերջին նորոգումն Սբ Աւետարանիս... եղեւ երկրիս Ղնխոյ ի վիճակիս Սբ Աթոռոյս Սիսայ կաթողիկոս տեառն տէր Սիմէոնի ի թուականութիւն Հայոցս ՌՁԶ (1637)... Քանզի էաք մեք յերկրէն Արարատեան ի Հայոց մեծաց, ի հաւ[ա]տէն Սբ Գրիգորի և ի թեմէն լուսակառուց Սբ Էջմիածնայ ի գեաւղէն Թալին կոչեցեալ»[34]:

Կարելի է կարծել, որ Գնըքում հայ բնակչություն գոյություն է ունեցել շատ ավելի վաղ: Մ. Բարխուտարյանը գրում է, որ «Գնըքի հայերն մայրե-

[30] Քոսեան 1899, 150:
[31] ՄՄ, ձեռ. 1027/2:
[32] Ալիշանեան 1853, 547:
[33] Դիմաքսեան 1878, 139:
[34] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դարի, 704:

նի լեզուն բոլորովին մոռցած են և տաճկերէն կը խօսին»[35]: Բայց Արևելյան Հայաստանից եկած հայերը տաճկախոս չէին, այդպիսիք կարող էին լինել սելջուկների, ապա օսմանյան թուրքերի տիրապետության տակ գտնված հայերը: Մինչդեռ հետազոտողները միաբերան նշում են, որ հայերը Գնըք են եկել Արևելյան Հայաստանից XVII-XVIII դդ. ընթացքում: Մնում է մակաբերել, որ Գնըքի տաճկախոս հայերը եկել էին կամ Օսմանյան Թուրքիայից և կամ էլ տաճկախոս դարձած՝ տեղի հին հայկական համայնքի վերապրուկներն էին:

Գնըքի հայ բնակչության թվաքանակի մասին տվյալները մասամբ տարբեր են Հ. Դիմաքսյանի և Մակար վարդ. հրապարակումներում (1870-ական թթ. կտրվածքով). առաջինը նշում է 117 տուն՝ 252 անձով (ընդհանուր ազգաբնակչությունը՝ թուրքեր, հույներ և այլն, 1167 տուն, 3004 մարդ), իսկ Մակար վարդ.՝ 105 տուն, 466 անձ[36]: Ըստ Ղ. Ալիշանի, Գնըքի հայերի թիվը կազմում է 420 մարդ[37]:

Գնըքի հայ բնակչությունը գլխավորապես զբաղվում էր արհեստներով ու հողագործությամբ: Տեղական բնակչությանը սպասարկում էին տարբեր արհեստավորներ՝ դերձակներ, կոշկակարներ, ոսկերիչներ, սափրիչներ, երկաթագործներ և այլք: Առևտրական ոչ մեծաթիվ խավը Զմյուռնիայի և Պալըքեսերի շուկաներ էր արտահանում տեղական գյուղատնտեսական արդյունքները՝ բամբակ, ափիոն, բուրդ, ցորեն, պտուղներ և ներմուծում կենցաղային սպառման առարկաներ՝ կոշիկ, թեյ, սուրճ և այլն:

Բերգամա (Բերգամոն), գտնվում է Գնըքից արևմուտք: Նշանավոր է իր պատմական անցյալով:

Բերգամայի հայ գաղթօջախը հնագույններից մեկն է փոքրասիական թերակղզու արևմուտքում, որտեղ այն գոյություն ուներ, ինչպես կտեսնենք ստորև, դեռևս VII դարում, արաբական արշավանքների հետևանքով Բյուզանդական կայսրություն անցած հայերի տեղաշարժերից հետո: Հայ ազնվականությունն այստեղ, նկատում է Հ. Գելցերը, «իր բախտը յունական պատերազմի ծառայութեանց մէջ կը շինէ, ինչպէս Բեռնի եւ Ֆրայբուրգի ազնուականները՝ գաղղիական բանակներու մէջ: Այս կերպ բազ-

[35] Վիճակագրութիւն 1879 440:
[36] Դիմաքսեան 1878, 135: Վիճակագրութիւն 1879, 440:
[37] Ալիշանեան 1853, 547:

մաթիվ ընտանիքներ յունական գետնի վրայ հաստատուեցան»[38]: Սրանցից էր սերում բյուզանդական գահին տիրած հայազգի Փիլիպիկոս-Վարդանը (VIII դ.)[39]:

Խնդրին քաջածանոթ Հ. Բարթիկյանը գրում է, որ բյուզանդական Պերգամոն քաղաքում հայ համայնքն առաջացել էր, հավանաբար VII դ., քանի որ այն արդեն կար VIII դ. սկզբին: Նա առավել որոշակիություն է մտցնում հիմնահարցի մեջ՝ նկատելով, որ Բյուզանդական կայսրության փոքրասիական թերակղզու ափերին «տարբեր ժամանակներում կազմավորվել էին հայկական համայնքներ, որոնցից ամենահինը, հավանաբար, Պերգամոնի համայնքն էր»[40]:

Հայտնի չէ Բերգամայի հայերի հետագա ճակատագիրը, թեև այս առումով վավերագրերի կամ այլ վկայությունների առկայությունը չի բացառվում: Կարելի է կարծել, սակայն, որ այդ համայնքին դժվարին ժամանակներ էին սպասվում, եթե այն հարատևած լիներ Բյուզանդական կայսրության հետագա գոյության, սելջուկների ու մոնղոլների տիրապետության ու ռազմական բախումների ժամանակաշրջաններում:

XVII դ. առաջին տասնամյակներին, ինչպես և Զմյուռնիայի ամբողջ մերձակայքում, Բերգամայում ևս իրեն զգացնել տվեց հայերի գաղթականական նոր հոսքը: Հ. Դիմաքսյանը գրում է, որ այստեղ հայ համայնքն ունի 230-250 տարվա պատմություն[41], որպես սկիզբ համարելով, հավանաբար, 1620-1640-ական թվականները: Բերգամայում ափ առած մարդիկ սերում էին Արևելյան Հայաստանից՝ Սյունիքից, Նախիջևանից և այլն: Արևելյան Հայաստանից գաղթը շարունակվեց նաև XVIII դ. առաջին տասնամյակներին: 1711 թ. այստեղ ձեռագրեր էր ընդօրինակում կարբեցի երեց Վարդան գրիչը[42]: Կարբեցիներն, ի դեպ, հետագայում ևս անցել են Էգեյանի կողմերը՝ առ հարկին պահպանելով իրենց ավանդական կապերը տեղի հայ համայնքների հետ: Այս առումով հետաքրքիր տեղեկություններ է տալիս Մեսրոպ Թաղիադյանը. «Վերջին աւերած Կարբւոյ, - գրում է նա,

[38] Գելցեր 1907, 226-227:
[39] Գելցեր 1907, 226-227:
[40] Բարթիկյան 2006, 73:
[41] Դիմաքսեան 1878, 150-151:
[42] ՄՄ, ձեռ. 2129, էջ 29/ա, 51/ա:

-եղեւ յաւուրս Նադրայ արքայի պարսից, յորոց ի բնակչաց կէսք գնացին ի Զմիւռնիա, իսկ կէսքն եկին ի յԵրեւան[43]»:

Կ. վարդ. Շահնազարյանը ևս առանձնացնում էր գաղթի հաջորդ նշանակալի հոսքը՝ XVIII դ. առաջին կեսի թուրք-պարսկական բախումներ-ի և Նադիր շահի բռնությունների պատճառով, և ի թիվս այլ գաղթավայրերի՝ հիշատակելով նաև Բերգաման[44]:

Ղ. Ալիշանը 1853 թ. Բերգամայի հայերի թիվը հաշվում է 60 տուն՝ հույների և թուրքերի դրացիությամբ: Շուրջ քառորդ դար անց այդ թիվը ավելի նվազ է ցույց տալիս Հ. Դիմաքսյանը՝ 42 տուն, 92 անձ[45]: 1879 թ., ըստ Մակար վարդ. տվյալների, Բերգամայում կար 50 տուն հայ՝ 300 բնակիչներով[46], գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին: Մի մաշտոցի նվիրատվության հիշատակարանում ասվում է, որ Քրքաղաչի Սարգիս քահանայի որդի պարոն Կյուրեղն այդ ձեռագիրը «տուաւ Բերկամայ սուրբ Աստուածածնայ անուամբ կառուցեալ Սուրբ եկեղեցւոյ… թուին ՌՄԻԶ (1777) դեկտեմբեր ամսոյ Դ-ին, Ղասապէն Քրքաղաճ»[47]:

Բերգամայի հայ համայնքն ընդգրկված էր տեղական գյուղատնտեսական արդյունքների արտահանման ոլորտում: Զմյուռնիայի, Թիրեի, Դենիզլիի և շրջակայքի այլ բնակավայրերի հետ տնտեսական շփումների պայմաններում Բերգաման XVII-XIX դդ. արտահանում էր բամբակ՝ միանալով երկրի ոչ միայն ներքին, այլև արտաքին ապրանքաշրջանառությանը:

Հայերը զբաղվում էին նաև արհեստներով: Այստեղ նրանց հետ կողք կողքի ապրում էին բոշաները, որոնք մաղագործներ և անասնապահներ էին: Հ. Դիմաքսյանը գրում է, որ նրանք կրոնասեր էին, խոսում էին թուրքերեն[48]:

Դենիզլի, գտնվում է Զմյուռնիայից հարավ-արևելք, պատմական Լավոդիկեի մերձակայքում, որտեղ գործում էր Սարգիս եպիսկոպոսը, որը՝ իբրև հայ բնակչության հոգևոր ներկայացուցիչ, այս աստիճանակարգով մասնակցել է 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովին՝ Սիրիայի և Միջա-

---

[43] Թաղիադյան 1975, 122:
[44] Ստ. Օրբէլեան 1859 (գրքի Առաջաբանը), 30:
[45] Դիմաքսեան 1878, 147:
[46] Վիճակագրութիւն 1879, 440:
[47] Արշալոյս 1908, մայիսի 5:
[48] Դիմաքսեան 1878, 151:

գետքի եպիսկոպոսների շարքում[49]: Հ. Քոսյանը ևս գրում է, որ Դենիզլին Զմյուռնիա-Տիներ երկաթուղու մի հանգույցն է այն երթուղու վրա, որն անցնում է «հնումն նշանաւոր Լաւոդիկէի աւերակաց քովէն»[50]:

Դենիզլիում և շրջակա գյուղերում ևս հայեր են բնակվել, հավանաբար դեռևս XII դ. և դրանից էլ առաջ: Հ. Բարթիկյանը այս ժամանակաշրջանի կտրվածքով առանձնացնում է փոքրասիական թերակղզու ափերին գտնվող բյուզանդական Թրակեսիոն բանակաթեմը, որի տարածքում էին Լյուդիան, Փիլադելփիան, Պերգամոնը, Լավոդիկիան, Սարդիսը և այլն[51]: Սելջուկների ժամանակ Դենիզլին ուներ առևտրաքաղաքական կարևոր նշանակություն, որ հատկապես երևում է Բյուզանդիայի և սելջուկների փոխհարաբերությունների ոլորտում:

Դենիզլիի հայերի գաղթականության մասին առայժմ կցկտուր աղբյուրներ են հայտնի: Բացի վերոհիշյալից, այստեղ նրանց ներկայության հետքերից մեկը կարելի է համարել XIX դ. սկզբներին այանի կարգավիճակը պահպանած հայազգի մի անձնավորության առկայությունը[52]: Եթե նկատի առնենք, որ այանները հին բեյությունների ժառանգական իրավունքները պահպանած վերնախավի բեկորներն էին ընդհուպ մինչև XIX դ. Օսմանյան Թուրքիայում, ապա չի բացառվում հայ այանի այսպիսի զարմանալի հարատևումը Դենիզլիում: Հ. Քոսյանը Դենիզլիի հայերին համարում է Պարսկաստանից գաղթածներ՝ ակնհայտորեն նկատի առնելով XVII-XVIII դդ. Սյունիքից և Արարատյան դաշտից գաղթած հայերին: Այստեղ նույնպես հայ բնակչությունն ապրում էր առանձին թաղում, սրա ներքին բաժանմամբ՝ Վերի և Վարի թաղերում՝ ունենալով դրանց միջև կառուցված եկեղեցի: Իրենց հին թաղը նրանք լքել են XVIII դ. վերջերին, հավանաբար, այստեղ բռնկված հրդեհի պատճառով, որի մասին հիշվում է 1831 թ. կառուցված եկեղեցու արձանագրության մեջ[53]:

Դենիզլիում և շրջակայքում հայերն ապրում էին հույների, թուրքերի և հրեաների հարևանությամբ: Մակար վարդ. նրանց հաշվում է 82 տուն՝ 389 անձով, Հ. Քոսյանը՝ նույնչափ, գրեթե 400 անձով[54]: Մոտավորապես

[49] Օրմանեան 2001, 1718:
[50] Քոսեան 1899, 56:
[51] Բարթիկյան 2006, 77, 148:
[52] Гордлевский 1960, 261.
[53] Քոսեան 1899, 59:
[54] Վիճակագրութիւն 1879, 440: Քոսեան 1899, 59, 66-67:

նույն տվյալներն են, ուստի կամ Հ. Քոսյանն է օգտվել Մակար վարդ. տվյալներից, կամ էլ նրանք երկուսն էլ օգտվել են առաջնորդարանի տվյալներից, որովհետև Հ. Քոսյանն իր թվերն ամրագրել է վարդապետից քսան տարի անց՝ 1899 թ.:

Հայ բնակչությունը Դենիզլիում ներգրավված էր արհեստների և առևտրի ոլորտներում: Առևտրականներն իրացնում էին տեղական հումքը, հատկապես բամբակ: XIX դ.Դենիզլիի և Ալաշեհիրի կտավի ու բատիստի գործվածքների արտադրությունը, որ հայտնի էր դեռևս Անատոլիայի բեյությունների ժամանակներից, մի հայտնի չափով պարտական էր տեղական հումքն իրացնող առևտրականությանը: Գյուղատնտեսությամբ զբաղվող հայերը XIX դ. վերջերին ցրված էին քաղաքի մերձակա գյուղերում:

Մինչև XIX դ. երկրորդ կեսը հինգշաբթի և կիրակի օրերին Դենիզլիում պարբերաբար գործում էին տոնավաճառները:

Նազիլի, Էգեյանի հնագույն բնակավայրերից մեկը՝ Այդընի հյուսիս-արևելյան մերձակայքում, որի պատմական վկայություններն էին հնագույն քաղաքակրթություններից մնացած շինությունների ավերակները: Մակար վարդ. Նազիլիի գաղթականությանը տալիս է չորս հարյուր տարվա վաղեմություն՝ փաստորեն այն համարելով XV դ. տեղաշարժերի հետևանք, թեև ոչ նա, և ոչ էլ Հ. Քոսյանը որևէ փաստարկ կամ հիմնավորող տվյալ չեն բերում գաղթօջախի սկզբնավորման իրենց ենթադրությունն ամրապնդելու համար[55]:

Մակար վարդ. Նազիլիում հաշվում է 53 տուն՝ 279 անձով, իսկ Հ. Քոսյանը՝ 53 կամ 60 տուն՝ 274 անձով (սեռատարիքային դասակարգմամբ), իսկ այդ թվաքանակը ավելի նվազ է ցույց տալիս Ղ. Ալիշանը՝ 130 մարդ[56]: Կ. Պոլսի «Մանզումեի էֆքյար» թերթի տվյալներով Նազիլիի ամբողջ բնակչությունը կազմում էին 3141 տղամարդ, 2972 կին՝ մահմեդականների բացարձակ մեծամասնությամբ՝ 3870 մարդ, հույներ՝ 1498, հայ՝ 336[57]: Հ. Քոսյանի վերարտադրած դամբանագրերից ամենահինը վերաբերում է 1698 թ., ուստի առնվազն այդ դարից սկսած՝ կարելի է խոսել Սյունիքից եկածների գաղթականության մասին: Դամբանագրերը ցուցա-

[55] Վիճակագրութիւն 1879, 436: Հ. Քոսյանը Նազիլիի գաղթականությանը նախ տալիս է 250 տարվա, իսկ այնուհետև Մակար վարդ. հետևելով՝ 400 տարվա (իմա XV դ. երկրորդ կես) հնություն (տե՛ս Քոսեան 1899, 50, 56):

[56] Վիճակագրութիւն 1879, 436: Քոսեան 1899, 50, 56: Ալիշանեան 1893, 547:

[57] Մանզումէի էֆքեար 1901, մայիսի 4/17:

դրում են ոչ միայն Սյունիքի տեղանունները (Մանլև, Ափքես, Գումարք, Ղափան և այլն), այլև մղում են այն եզրակացության, որ Արևելյան Հայաստանից գաղթերը շարունակվել են երկու հարյուրամյակներում՝ XVII և XVIII դդ.: Նազիլիի շիրմաքարերը վկայում են նաև, որ համայնքի մաս են կազմել կեսարացի, թոքատեցի և Աֆիոն-կարահիսարցի հայերը:

Նազիլիի հայերը XIX դ. վերջին բնակվում էին քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, ոչ թե համախումբ՝ մեկ թաղում, այլ ցաքուցրիվ, իրարից հեռու տներով: Համայնքը թուրքախոս էր, վերջին՝ Ս. Հռիփսիմե եկեղեցին նորոգվել էր 1843 թ.: Սոցիալական շերտերը նույնն էին, ինչ մյուս հայկական համայնքներում՝ արհեստավորներ, հողագործներ, առևտրականներ, հոգևորականություն: Կային նաև Արևելյան Հայաստանից եկած մաղագործ բոշաներ: Աճեցնում էին բամբակ, ձիթապտուղ, բանջարանոցային բերքեր:

Կասաբա (Գիրմաստ), ճանաչված էր իբրև հին բնակավայր (թուրք.՝ kasaba-բնակավայր): Զմյուռնիային ամենամոտ քաղաքներից մեկը՝ դրա հյուսիսային կողմում: Ղ. Ալիշանը XIX դարակեսին հայերի թիվն արձանագրում էր 400 շնչով, ըստ Հ. Դիմաքսյանի՝ 370 շունչ, մահմեդականներինը՝ 1120, հույներինը՝ 290[58]: Մակար վարդ.՝ գրեթե նույն ժամանակաշրջանին (1870-ականի երկրորդ կես) վերաբերող տվյալները տարբեր են՝ 105 տուն, 486 մարդ: Հ. Քոսյանը ևս դարավերջին հաշվում է 100 տուն՝ 486 անձով[59]: Հ. Դիմաքսյանը նկատում է, որ հայերը բնակվում են առանձին թաղում, ինչպես հույներն ու թուրքերը, այսինքն, ըստ կրոնաէթնիկական հատկանշի: Կասաբայի համայնքի հնությունը նա հաշվում է մինչև 300 տարի՝ նկատի ունենալով XVI դ. երկրորդ կեսը[60]: Կասաբայի եկեղեցու վերաբերյալ շատ ուշագրավ տեղեկություն է հաղորդում անգլիացի ճանապարհորդ Ֆ. Արընդելը՝ Լոնդոնում 1834 թ. տպագրած իր գրքում: Կասաբայում հայերը, գրում է նա, «կարծեմ այստեղ են հաստատվել մոտավորապես 1690 թ. և դրանից քիչ ժամանակ անց էր, որ նրանք եկեղեցի կառուցելու ֆերման ձեռք բերեցին»[61]:

---

[58] Ալիշանեան 1893, 547: Դիմաքսեան 1878, 77:
[59] Վիճակագրութիւն 1879, 440:
[60] Դիմաքսեան 1878, 82:
[61] Armenians in the Ottoman Empire 1997, 232.

Տեղի հայ բնակչությունը հիմնականում գաղթել էր Արևելյան Հայաստանից՝ Սյունիքից, սակայն դժվարանում ենք ասել՝ այդ համայնքը 1620-ականին էր հիմնվել, թե համալրել էր հինը: Համայնքում տարածված էին դերձակությունը, ոսկերչությունը, երկաթագործությունը և հացագործությունը:

Հարուստ զմյուռնահայերը նյութական հովանավորություն էին ցուցաբերում Կասաբայի և, առհասարակ, Էգեյանի շրջանի հայ համայնքներին:

Աքիսար (Թիրա, Թիրադիր, Թիյաթիրա), Թիրա տեղանվամբ բազմիցս հիշվում է XVIII-XIX դդ. կաթողիկոսական կոնդակներում՝ միջակա տեղ զբաղեցնելով Զմյուռնիայի թեմական բնակավայրերի թվարկման շարքում: Հայտնի չէ, թե հայերը երբ են հաստատվել այս բնակավայրում, թեև որոշակի է՝ դեռևս XVII դ. առաջ: Այդ դարի սկզբներին հիշվում է Սիմեոն Լեհացու ուղեգրության մեջ. Զմյուռնիայից նա անցնում է Թիրա՝ նշելով, որ այստեղ կար տասը տուն հայ, բայց «էրեց չկար»[62]: Դրանից կարելի է ենթադրել, որ այս փոքրիկ գաղթօջախը կամ դեռևս չի կայացել, և կամ էլ այնտեղ կանգառել են պատահականորեն այնտեղ հայտնված գաղթական խմբերի պատառիկները, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ 1610-ական թթ. սկզբներից (երբ Թիրայում էր Սիմեոն Լեհացին), դեպի այս տարածաշրջան էր ձգվում գաղթական հայերի հոսքը Արևելյան Հայաստանից: XIX դ. հայերի տների թիվն այստեղ հասնում էր 50-ի (բնակավայրի 5-հազարանոց բնակչության մեջ), գործում էին Ս. Աստվածածին եկեղեցին և դպրոցը[63]: XVIII դ. պարսկաթուրքական պատերազմների և հատկապես Նադիր շահի օրոք Սյունիքից և Արարատյան դաշտից ծայր առած գաղթականության մի մասը ապաստանեց Աքիսարում: 1746 թ. այստեղ ափ առան Նախիջևանից գաղթած կաթոլիկ հայերը՝ թվով 700 մարդ[64]: 1879 թ. Մակար վարդ. այստեղ արձանագրել է 84 տուն հայ՝ 339 բնակիչներով[65]:

Սելջուկների, ապա օսմանյան տիրապետության ժամանակներից ի վեր Աքիսարից արտահանվել են բամբակ և բամբակյա գործվածքներ, այգեգործական բազմազան բերքեր, ձիթապտուղ և այլն, որի շնորհիվ, ինչպես և Զմյուռնիային կից լինելու հանգամանքով բնակավայրը ընդ-

---

[62] Սիմէօն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն 1936, 38:
[63] Ալիշանեան 1853, 547:
[64] Ալիշան 1893, 407:
[65] Վիճակագրութիւն 1879, 440:

գրկված էր ներքին և արտաքին առևտրի մեջ: Հայ համայնքը ապրում էր հողագործությամբ, արհեստներով ու առևտրով: Հայտնի էին Աքիսարի հայ երկաթագործները, թամբագործներն ու դերձակները, իսկ բնակիչների մի մասն էլ հումքը կամ պատրաստի արտադրանքը Էգեյանի շրջաններ էր տեղափոխում իր սայլերով և այլ փոխադրամիջոցներով[66]:

Աքիսարում նույնպես հայ բնակչության հետ խառնված էին հայ բոշաները, որոնք, լինելով հայ եկեղեցու հետևորդներ, ի տարբերություն մահմեդականացած բոշաների, XX դ. սկզբներին գրեթե տարրալուծվել էին հայ համայնքի մեջ. «Գըրգ Աղաճի, Ագիսարի եւ Ուշագի հայ բնակչութեան մէկ կարեւոր տոկոսը հայ բոշա ծագում ունի, թէեւ… այժմու սերունդներէն շատերը ի զուր կը ջանան ծածկել նախապապերուն ցեղը», - գրում է լավատեղյակ հեղինակը[67]:

Այդընի վիլայեթում հայ բոշաները նշանակալի թիվ չէին կազմում. նրանց թիվը չէր անցնում 50-60 վրանից[68]:

Աքիսարի հայ բնակչությունը եկեղեցու և դպրոցի շնորհիվ կարողացավ պահպանել իր հայախոսությունը, մանավանդ Զմյուռնիայի նշանավոր «Սյունյաց ընկերության» ջանքերով բացված վարժարանի շնորհիվ[69]: Բայց նախքան ընկերության խնամատարությունը, 1845 թ. Աքիսարում գործում էր վարժարան՝ 34 աշակերտով (նաև իտալերենի դասավանդմամբ)[70]: Բավական էր, սակայն, որ Աքիսարի համայնքը XX դ. սկզբներին և թերևս, դրանից էլ առաջ աչքաթող աներ վարժարանն ու նրա կարևորությունը ազգային հաստատությունների շարքում, որպեսզի թուրքախոսությունը տարածվի. «Վարժարանը ձգուած ըլլալով անխնամ, ան չէ կրցած իր դրօշմը դնել հասարակութեան վրայ», - գրում էր զմյուռնահայ թերթերից մեկի տագնապահար աշխատակիցը[71]:

Կուշադա (Սկալա նովա, իտալ.՝ Նոր նավահանգիստ), հնագույն քաղաք՝ Զմյուռնիայից հարավ-արևմուտք, Եփեսոսի ծովածոցում: Քաղաքի

---

[66] Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, 59-61:

[67] Հայրենիք 1931, 138:

[68] Հայրենիք 1931, 138:

[69] Ընկերությունն օգնել է նաև Քրքաղաչի, Կասաբայի և Այդընի վարժարաններին՝ ապահովելով ուսուցիչներով, իսկ աշակերտներին՝ նպաստներով (տե՛ս Բիւզանդիոն, 1905, օգոստոսի 4/17):

[70] Տե՛ս Արշալոյս Արարատեան, 1845, հոկտեմբերի 5, նոյեմբերի:

[71] Ցոլակ, 1912, հոկտեմբերի 12:

կենսագրությունը ծայր է առնում հունահռոմեական դարաշրջաններից, բյուզանդացիների, սելջուկների, ջենովացիների ու բեյությունների առևտրական փոխհարաբերություններում եղել է առևտրական բանուկ ճանապարհների հանգուցակետ՝ վաճառաշահ նավահանգիստ, որն իր դերակատարությունը կարողացել է պահպանել նաև օսմանյան թուրքերի տիրապետության օրոք:

Հայ բնակչության կամ գաղթականության հաստատման սկիզբը Մակար վարդ. համարում է XVI դ. առաջին կեսը՝ նշելով, որ «250 տարի յառաջ գաղթած են Հայք այս քաղաքն»[72]: Թուրնըֆորի այցի ժամանակ (XVII դ. երկրորդ կես) Կուշադան բնակեցված էր մահմեդականներով (1000 տուն), հույներով (600 տուն), հայերով (60 տուն) և հրեաներով (10 տուն). քաղաքը ամրացված նավահանգիստ էր[73]: Եթե Ղ. Ալիշանը 1850-ականին հայերի թիվն այստեղ հաշվում էր 20 տուն, ապա Մակար վարդ. շուրջ երեք տասնամյակ անց հաշվում էր 29 տուն՝ 120 անձով[74]: Հ. Քոսյանն այստեղ բավական հակասական է. լիովին կրկնում է Մակար վարդ., թեև դրանից առաջ այլ թվեր է արձանագրում՝ «Ասկէ քսան տարի յառաջ (իմա՛ 1870-ականի վերջերին-Ա.Խ.), երեսուն տուն կը հաշուէին, սակայն այս օրս հազիւ 12 տուն մնացած են»[75]: Դրանից շուրջ տասը տարի անց Կուշադայում հայերի տների թիվն էլ ավելի էր նվազել՝ 10 տուն[76], որ վկայում է XX դ. սկզբին այդ գաղթօջախի խամրելու մասին:

Հ. Քոսյանի մեջբերած դամբանագրերը (XVIII-XIX դդ.) վկայում են այստեղ ապրած սյունեցիների, խարբերդցիների, երևանցիների, արաբկիրցիների և այլոց երբեմնի ներկայության մասին. XVII դարից մնացած մի քանի տապանաքարերի մակագրությունները[77], այնուամենայնիվ, հուշում են, որ նշանակալի է եղել սյունեցիների գաղթականությունը: Ավելի հին գերեզմանաքարեր չեն պահպանվել, համենայն դեպս՝ XVI դ. այստեղ գոյացած հայ համայնքի պատմությունը ապացուցելու չափ: Եվ այդ հասկանալի է՝ հին գերեզմանատները, որպես կանոն, Էգեյանի առափնյակի գաղթօջախներում լքվում էին շուրջ երկու կամ երկուսուկես հարյուրամյա-

[72] Վիճակագրութիւն 1879, 438:
[73] Tournefort J.-P. 1982, 328.
[74] Ալիշանեան 1893, 543: Վիճակագրութիւն 1879, 440:
[75] Քոսեան 1899, 115 և 112:
[76] Դաշինք 1910, ապրիլի 5:
[77] Քոսեան 1899, 113-114:

կը չբոլորած՝ կամ թաղերի տեղերը փոխվելու, կամ էլ բնակավայրերի սոցիալական պայմանների փոփոխությունների բերումով: Հին շիրմաքարերի հայտնությունը նոր գերեզմանատներում ուներ զուտ պատահական բնույթ:

Կուշադայի եկեղեցուն վերաբերող ամենահին տվյալը, որ մեզ հաջողվեց գտնել, վերաբերում է 1781 թ., շատ ավելի ուշ շրջանի, քան հայերի՝ այստեղ հաստատվելը: Այդ թվականի մի վավերագրում այրի Մերիեմը հայտնում է, որ «Ղուշատայում եղեալ մեր միւլք տունն վեց հարիւր ղուրուշ ծախեցինք վասն եկեղեցի շինելոյ Ղուշատայ բնակեալ ժողովրդոց»[78]:

Կառուցվել է արդյոք համայնքի հավաքած միջոցներով այդ եկեղեցին՝ հայտնի չէ, բայց XIX դ. առաջին կեսին Քուշադայում գործում էր Ս. Հովհաննես եկեղեցին, ինչը հիշատակում է Ղ. Ալիշանը, իսկ Մակար վարդ. այն հիշում է *Ս. Աստվածածին* անվամբ[79]:

Կուշադայի ոչ մեծ համայնքը XIX դ. երկրորդ կեսին սկսել է նվազել՝ կապված Զմյուռնիայի առևտրաարհեստավորական միջավայր տեղափոխվելու նպատակահարմարության հետ: Նշանակություն ունեցավ Զմյուռնիա-Այդընի երկաթուղու գործարկումը: Մինչ այդ, 1860-ական թթ., Այդընի քարավանային ճանապարհները կենտրոնանում էին այդ նավահանգստում, որտեղից արտահանվում էին վիլայեթի գյուղատնտեսական արտադրանքը և բնական հարստությունները: Երկաթուղին անշքացրեց այս առևտրի ավանդական վերջնակետը՝ այդ արտադրանքը (ցորեն, գարի, բամբակ, բուրդ, ձիթապտուղ, հանքային արդյունքներ և այլն) շատ ավելի կարողունակ նավահանգիստ-շուկա՝ Զմյուռնիա տեղափոխելով: Իր նախկին տնտեսական հմայքը պետք է կորցներ Սկալա նովա հին նավահանգիստը՝ առևտրական ուղիների այդ կտրուկ փոփոխությունների հետևանքով: Այդ միաժամանակ, կասկածի տակ էր դնելու Կուշադայի համայնքի գոյատևման հեռանկարները՝ XX դ. սկզբներին:

Մենեմեն, հունական հին բնակավայրերից էր (Թեմնոս), այն կրել է տարածաշրջանին հատուկ՝ անվերջ երկրաշարժերի հարվածները՝ քանիցս ավերվելուց և վերաշինվելուց հետո: Քաղաքը վերանվանվել է դարձյալ ըստ հունարենի՝ Մենոմենոս (Հերմոս գետի անվանումներից մեկը)[80]:

---

[78] Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր 1941, 151:

[79] Տե՛ս Ալիշան 1893, 543: Վիճակագրութիւն 1879, 438:

[80] Արշալոյս 1908, հունվարի 16:

Մենեմենի հայությունը հոչակված էր Ս. Սարգիս հոյակապ եկեղեցիով, որը կառուցվել էր Մելքիսեթ կաթողիկոսի ժամանակ, կարելի է կարծել, 1620-ական թթ. փոքր-ինչ ավելի ուշ, քան Արմաշի վանքը: Դատելով եկեղեցու վեհությունից, Մենեմենում խմբված է եղել բավական ստվար գաղթականություն՝ իբրև XVII դ. առաջին քառորդի տեղաշարժերի արդյունք, երբ փոքրասիական տարածքները ողողվել էին հայ գաղթականության ալիքներով: Մենեմենում մի ժամանակ կային «քահանաներու երամ, ստուար ժողովրդեան դաս, իշխաններ, աղաներ, կալուածատերեր», - գրում էր զմյուռնահայ թերթը[81]:

1850-ական թթ. Մենեմենում մնացել էր ընդամենը 35 տուն հայ[82], ըստ երևույթին տեղի տալով տնտեսական դժվարություններին: XVIII-XIX դդ. տեղական բամբակի տնայնագործական, այնուհետև գործարանային արտադրության մեջ ընդգրկված էր նաև հայ համայնքը՝ գերազանցապես սպասարկելով բնակչության հասարակ խավերին:

Սյոքե, բնակավայր Զմյուռնիայից հարավ, որտեղ, ըստ Մակար վարդ., 1879 թ. կար փոքրաթիվ հայ համայնք, 19 տուն՝ 75 անձով: Վերջինս նաև հավանական է համարում, որ հայերն այստեղ ապրում են 200 տարի ի վեր, այսինքն՝ XVII դ. երկրորդ կեսից և պահել են իրենց լեզուն և սովորությունները[83]: Հ. Քոսյանն այստեղ հաշվում է 25 տուն՝ 150 անձով[84]: Այս հեղինակի նշած դամբանագրերում կան ղափանցի, խոյեցի, ակնեցի, կարահիսարցի, կեսարացի հայեր, որոնք թվաքանակով շատ ավելի քիչ են եղել, քան Արևելյան Հայաստանից գաղթածները և նրանց սերունդները:

Ամփոփելով՝ նշենք, որ իրենց ամբողջության մեջ Էգեյանի առափնյակի գաղթօջախներում, եթե համադրելու լինենք մեզ մատչելի վիճակագրական տվյալները, XIX դ. վերջին և XX դ. սկզբներին ապրում էր ավելի քան 8 հազար մարդ, մոտավորապես այնքան, որքան կազմում էր բուն Զմյուռնիայի հայերի թիվը:

Էգեյանի առափնյա շրջանների ամբողջ հայ բնակչությունը գոյատևեց մինչև տարածաշրջանի քրիստոնյա համայնքների վախճանը՝ 1922 թ.:

---

[81] Դաշինք 1911, փետրվարի 18:

[82] Ալիշան 1893, 547:

[83] Վիճակագրութիւն 1879, 440 և 437-438:

[84] Քօսեան 1899, 104: Իր աշխատության հավելվածում, սակայն, Հ. Քոսյանն այլ թվեր է նշում. 15 տուն՝ 70 անձով (էջ 110):

Եզրակացություններ

Էգեյանի առափնյա գաղթօջախները, որոնց պատմությունը սկիզբ է առնում դեռևս VIII դ. առաջ, հիմնականում համալրվեցին XVII-XVIII դդ.՝ Սյունիքից, Ղարաբաղից, Արարատյան հովտի և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից շարունակվող գաղթերի հետևանքով: Կարելի է կարծել, որ Սյունիքից եկած հայությունը, որ մեծամասնություն էր կազմում ասպնջական տարածաշրջանում, հենց այս գաղթերի հետևանքով չէր կարող պահպանած չլինել իր հայախոսությունը: Անկախ այս հարցի շուրջ այլ մոտեցում ունեցող հեղինակների կարծիքներից, առավել հավանական է թվում այն, որ գաղթօջախներում (XVII-XVIII դդ. կտրվածքով) թուրքախոս կարող էին լինել միայն կամ հին գաղթօջախների (Այդընում, Մանիսայում, Բերգամայում, Մենեմենում, Քրքաղաչում և այլն) բեկորները կամ էլ Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի մի մասը:

Գաղթօջախների համեմատաբար սակավաթիվ բնակչությամբ համայնքները ազգային-հասարակական ու եկեղեցական սերտ կապեր ունեին իրենց էջմիածնական թեմի կենտրոն Զմյուռնիայի հետ: Այդ կապերն առավել սերտ դարձան XVII դ. երկրորդ տասնամյակից, երբ Զմյուռնիան ճանաչվեց իբրև էջմիածնական թեմ: Դրա շնորհիվ Էգեյանի գաղթօջախները ապրում էին ազգային լիարժեք կյանքով՝ իրենց սոցիալական տարբեր շերտերով (արհեստավորություն, երկրագործներ, առևտրականություն, եկեղեցականություն), ազգային-կրթական հիմնարկներով և այլն:

Առկա գրավոր տվյալներից ելնելով կարելի է եզրակացնել, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբներին Էգեյանի գաղթօջախներում ապրում էր ավելի քան 8000 մարդ, մոտավորապես այնքան, որքան Զմյուռնիայի հայ համայնքում:

Գրականություն

Ալիշան Ղ. 1853, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, հրատ. նշված չէ, 801 էջ:

Ալիշան Ղ. 1893, Սիսական, Վենետիկ, հրատ. նշված չէ, 562 էջ:

Աճառեան Հ. 1911, Հայ բարբառագիտութիւն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, հրատ. նշված չէ, 305 էջ:

Արշալոյս 1908, Իզմիր, մայիսի 5, հունվարի 16:

Արշալոյս Արարատեան 1845, Զմիւռնիա, նոյեմբերի 5:

Բարթիկյան Հ. 2006, Հայ-բյուզանդական հարաբերություններ, հ. III, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 316 էջ:
Բիւզանդիոն 1905, Կ. Պոլիս, օգոստոսի 4/17:
Գելցեր Հ. 1907, Հայ հասարակութիւնն ի Պերգամոն եւ պերգամացին գահին վրայ, Հանդէս ամսօրեայ, թիւ 8, Վիեննա, էջ 225-228:
Դաշինք 1910, Զմիւռնիա, ապրիլի 5:
Դիմաքսեան Հ. 1878, Շիթ մ'անունք ի Միջերկրականէ, Կ. Պոլիս, 358 էջ:
Թաղիադյան Մ. 1975, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, հրատ. նշված չէ, 618 էջ:
Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր 1941, կազմ. Աբրահամյան Ե., Երևան, 189 էջ:
Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դարի (1621-1640) 1978, կազմ. Հակոբյան Վ.,Հովհաննիսյան Ա., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 941 էջ:
Հայրենիք ամսագիր, թիւ 6, Բոստոն, 1931, էջ 132-141:
Հ.Յ.Ք. (Քօսեան Յ.) 1906, Ակնարկ մը հնութեան բեկորներու, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, թիւ 9, էջ 278:
Մանզումեի էֆքյար 1901, Կ. Պոլիս, մայիսի 4/17:
Մաշտոցյան Մատենադարան (ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 12-13, 41, 49-50:
Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն 1936, Վիեննա, 493 էջ:
Ստեփաննոս Օրբէլեան Պատմութիւն նահանգին Սիսական 1859, ներածականը՝ Կ. վարդ. Շահնազարյանի, Փարիզ, հ. Ա, 346 էջ:
Վիճակագրութիւն 1879, Արեւելեան մամուլ, թիւ 3, Զմիւռնիա, էջ 435-440:
Քօսեան Յ. 1899, Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս 1899, հ. Բ, Վիեննա, 166 էջ:
Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1870 էջ:
Гордлевский В.А. 1960, Государство сельджукидов в Малой Азии, Соч., т. I, Москва, изд. АН СССР, 551 с.
Armenians in the Ottoman Empire 1997, Ghazazian V. (edit.), Waltham-Massachusetts, Mayreni Publishing, 836 p.
Tournefort J.-P. 1982, Voyage d'un botaniste, II, Paris, Francois Maspero, 330 p.

ԷԳԵՅԱՆԻ ԱՌԱՓՆՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (XVII-XIX դդ.)

Ալբերտ Խառատյան

Էգեյանի առափնյա հայկական գաղթօջախների գոյացումը ձգվում է մինչև XII դ., շատ հնարավոր է՝ ավելի հին ժամանակներ: Պերգամոնի (Բերգամա), Դենիզլիի, Այդընի, Զմյուռնիայի, Մանիսայի, Էոդեմիշի, Քրքաղաչի, Քուշադայի, Գնըքի, Նազիլիի և կից շրջանների հայկական գաղթօջախները ապրել են տարածաշրջանի ողջ պատմական ճակատագիրը՝ բյուզանդական ժամանակներից մինչև սելջուկներ և մոնղոլներ, փոքրասիական բեյություններից մինչև օսմանյան կայսրություն: Նշված գաղթօջախները կենսագործունեության նոր ազդակներ ստացան XVII-XVIII դդ.՝ հայերի վերսկսված գաղթերի հետևանքով (հատկապես Սյունիքից, Ղարաբաղից և Արևելյան Հայաստանի այլ բնակավայրերից), երբ այս գաղթօջախների շարքում առաջատար տեղ գրավեց Զմյուռնիայի հայ համայնքը (XVII դ. առաջին քառորդից) իր տնտեսական, կրոնական ու մտավոր նշանակությամբ: Էգեյանի գաղթօջախներն ընդգրկված էին գյուղատնտեսության, արհեստագործության, ներքին ու միջազգային առևտրի ոլորտում՝ իրենց լուման ներդնելով ազգային եկեղեցու ամրապնդման և մշակույթի հարստացման ասպարեզում:

Նշված բոլոր գաղթօջախները կործանվեցին Զմյուռնիայի աղետի օրերին (1922, սեպտեմբեր)՝ քեմալական Թուրքիայի շարունակած ցեղասպան գործունեության հետևանքով:

Բանալի բառեր՝ Էգեյանի առափնյա տարածքներ, Զմյուռնիայի հայկական թեմ, հայ բոշաներ, արհեստավորներ, շիրմաքարեր, թեմական առաջնորդ, գաղթականներ Սյունիքից:

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКИХ КОЛОНИЙ ЭГЕЙСКОГО ПОБЕРЕЖЬЯ (XVII-XIX вв.)

Альберт Харатян

Образование армянских колоний на побережье Эгейского моря восходит к раннему средневековью. Армянские колонии в Бергама, Денизли, Айдыне, Смирне, Манисе, Эйдемише, Кркагачи, Кушада, Гынки, Назили и близлежащих районах имели общую историческую судьбу, начиная со времен Византийской империи до сельджуков и монголов, с малоазийских бейств до Османской империи. Новый импульс к развитию названные колонии получили в XVII-XVIII вв. в результате всплеска миграции армян (особенно из Сюника, Карабаха и иных населенных пунктов Восточной Армении). В ряду этих колоний ведущую роль в экономическом, религиозном и интеллектуальном плане стала играть армянская колония Смирны (с первой четверти XVII в.). Население армянских колоний Эгейского побережья было активно задействовано в сфере сельского хозяйства, ремесел, внутренней и внешней торговли, внося достойный вклад в дело укрепления национальной церкви и обогащения культуры.

Рассматриваемые колонии пришли в упадок в результате геноцидальных действий (сентябрь 1922 г.) в Смирне, инициированных кемалистской Турцией.

Ключевые слова – прибрежные районы Эгейского моря, Армянская епархия Смирны, армянские цыгане, ремесленники, надгробья, глава епархии, мигранты из Сюника.

FROM THE HISTORY OF THE ARMENIAN COLONIES OF THE AEGEAN COAST (17-19TH CENTURIES)

Albert Kharatyan

The formation of Armenian colonies on the Aegean seashore dates back to the early Middle Ages. Starting from the era of the Byzantine Empire up to the Seljuk and Mongol domination reaching the period of Asia Minor Amira

government, the Armenian colonies in Bergam, Denisli, Smyrna, Manis, Eidemish, Krkagachi, Kushad, Gynki, Nazili and neighboring regions suffered the same historical fate. In the 17th-18th centuries the flow of Armenian emigrants (especially from Karabakh, Syunik and other settlements of Eastern Armenia) into the given colonies contributed greatly to the pace of development. In terms of economic, religious, intellectual significance the Armenian colony of Smyrna (since the first quarter of the 17th century) stood out among the aforementioned colonies, playing a crucial role. The population of Armenian colonies of the Aegean seashore was actively involved in such spheres as agriculture, crafts, home and foreign trade, making a significant contribution to the consolidation of the national church and enrichment of the culture.

The colonies under study fell into decay because of the genocidal policy perpetrated by Kemalist Turkey in the September of 1922, in Smyrna.

Key words – coastal regions of the Aegean Sea, Armenian diocese of Smyrna, Armenian gypsies, craftsmen, epitaphs, the head of the diocese, emigrants from Syunik.

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Երվանդ Գրեկյան

Պատմական գիտ. դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Չարենցի 15, 0025 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ ervandgr@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 02.02.2019, գրախոսվել է 26.08.2019, ընդունվել է տպագրության 15.08.2019

Ներածություն

Ուրարտական տերությունը պալատական/տաճարային տիպի պետություն էր: Խիստ կենտրոնացված բնույթ ուներ երկրի տնտեսությունը, որին կարելի է տալ «էտատիզմ» բնորոշումը[1]: Այն ենթադրում է պալատի/տաճարի անմիջական հսկողությամբ իրականացվող տնտեսական փակ ցիկլ՝ սկսած նյութական միջոցների ստացումից մինչև հաշվառում, պահեստավորում, վերաբաշխում և սպառում: Վերաբաշխման համակարգի վրա հիմնված իր տնտեսությամբ Ուրարտուն չափազանց նմանվում էր Ուրի III հարստությանը[2]: Ուրարտական պալատական/տաճարային տիպի պետության համար երկրագործությունն ուներ կենսական նշանակություն:

Հայկական լեռնաշխարհը հիմնականում ընկնում է բնական տեղումների՝ 200-250 մմ նվազագույն սահմանագծից բարձր գոտում, ինչը թույլ է տալիս զբաղվելու անջրդի երկրագործությամբ[3]: Սակայն եղանակային տատանումներով պայմանավորված վաղաժամ հալոցքները, հաճախակի հանդիպող երաշտային ամիսները դեռևս բերքի հասունացման շրջանում առաջ են բերում ջրի կարիք, ինչի հետևանքով լեռնաշխարհի մի շարք գոտիներում անհնար է դառնում երկրագործությունն առանց արհեստական ոռոգման: Բացի այդ, Վանա և Ուրմիա լճերի ավազանները սնուցող Կոտուր-Վասպուրականի, Կորդվաց և Զագրոսյան ծալքաբեկորավոր լեռներից սկիզբ առնող գետերին բնորոշ է ամառային սակավաջրությունը՝ պայմանավորված դրանք սնուցող աղբյուրների շարքում ստորգետնյա

---

[1] Բնութագրման համար տե՛ս Looney 2001, 1475-1480.
[2] Renger 1994, 176-180. Տե՛ս և հմմտ. նաև Van De Mieroop 2004, 59.
[3] Neumann, Parpola 1987, 162. Riehl 2009, 94.

ջրերի քիչ չափաբաժնով՝ ի տարբերություն հրաբխային ծագման լեռներում ձևավորվող գետերի[4]: Դրա հետևանքով ծալքաբեկորային լեռներից սկիզբ առնող գետերի մեծ մասն ունի ժամանակավոր հոսք և ամռանը ցամաքում է: Ջրի անհրաժեշտ պաշարներ չկուտակելու դեպքում այդ երևույթը երկրագործական հասարակությունների համար սակավաջուր տարիներին և հատկապես տևական երաշտի ժամանակ կարող էր ունենալ աղետալի հետևանքներ: Իսկ Ուրարտուի միջնաշխարհն ընկած էր հենց վերը նշված՝ Վանա և Ուրմիա լճերի ավազանները ձևավորող ծալքաբեկորային լեռների գոտում:

Ռուսա Արգիշթորդին և Ուրարտուի «վերակազմավորումը»

Ռուսա Արգիշթորդու կառավարման տարիները (Ք.ա. VII դ. առաջին կես) սովորաբար համարվում են Ուրարտուի վերածննդի կամ վերակազմավորման շրջան[5]: Ինչպես հայտնի է, ուրարտական այս արքան տերության տարբեր հատվածներում հիմնադրել է առնվազն չորս նոր վարչաքաղաքական կենտրոններ՝ «Թեյշեբայի քաղաքը» (Կարմիր բլուր), «Ռուսայի փոքր քաղաքը» (Բաստամ), «Զիուկունի երկրի Խալդիի քաղաքը» (Արծկե/Ադիլջևազ – Քեֆքալեսի) և «Ռուսախինիլի Էիդուրուկային» (Այանց/Այանիս): Բացի այդ, նրա կողմից կառուցվել են նոր շքեղ տաճարներ, անցկացվել են նոր ջրանցքներ, երկրի ներսում, ինչպես ենթադրվում է, հաստատվել է կայունություն ու խաղաղություն, այդ թվում նաև՝ տարբեր էթնիկական խմբերի միջև: Դրա շնորհիվ աստիճանաբար վերացել է անտագոնիզմը «բիայնական» և «տեղական» մշակույթների միջև[6], միաժամանակ, իրականացվել են նոր արշավանքներ տարբեր ուղղություններով[7] և այլն:

Մեր նախորդ աշխատանքներում, սակայն, այս շրջանի համար ենթադրել ենք միանգամայն այլ պատկեր և վերը նկարագրված մի շարք երևույթներ, որքան էլ որ տարօրինակ հնչի, դիտել ենք որպես ուրարտական տերությանը համակած ճգնաժամի վկայություն: Մասնավորապես, այդ

---

[4] Գաբրիելյան 2000, 179:

[5] Burney 1977, 3. Հմայակյան 1995, 105-106. Smith 1999, 57. Zimansky 2001, 22-23. Zimansky 2012, 104.

[6] Հմայակյան 1995, 105-106:

[7] Salvini 2008, A 12-1 VI_{10-11} (այսուհետև՝ CTU I).

նույն Ռուսա Արգիշթորդու իշխանության ինչ-որ պահից սկսած՝ ականատես ենք լինում մի իրավիճակի, որը բնութագրվում է անկայունությամբ և քաղաքական/ռազմական հաջողությունների աղոտ հեռանկարով. երկրում իրականացվում են պաշտպանական հապշտապ միջոցառումներ՝ քաղաքների պարիսպները լրացուցիչ ամրացվում են, ամրոցների դարպասները նեղացվում են կամ փակվում՝ թողնելով միայն մեկ մուտք, սկսվում են ամրոցներին կից ձևավորված «արտաքին քաղաքների» պարսպապատման աշխատանքներ, նկատվում է կայազորի թվաքանակի և զինագործության աճ, ամրոցներում հավելյալ մթերքների կուտակում և մեծ քանակությամբ բնակչության և ընտանի կենդանիների հարկադրական տեղաշարժ դեպի ամրոցներ և ամրացված վայրեր: Իսկ աստվածների պատվին կառուցված տաճարները, մեծաքանակ զոհաբերությունները, Ռուսայի իրականացրած արշավանքները գրեթե բոլոր ուղղություններով՝ կարող են և վկայել ոչ միայն փայլուն ժամանակների, այլև հակառակը՝ տերությունը փրկելու ջանքերի մասին[8]: Այդ ամենին հաջորդում է ուրարտական՝ ըստ էության բոլոր խոշոր կենտրոնների կործանումը[9]: Դրանցից առնվազն մեկը՝ «Ռուսայի փոքր քաղաքը», ինչպես կարծում են, հրդեհվել և ավերվել է դեռևս Ռուսա Արգիշթորդու իշխանության շրջանում[10]:

Ակնհայտորեն, ինչ-որ գործընթաց կամ երևույթ խախտել է տերության բնականոն կենսագործունեությունը ներսից, ապա և հանգեցրել գործող համակարգի ամբողջական փլուզմանը: Կարծում ենք, որ Ուրարտուում նման ճգնաժամի պատճառ կարող էին դառնալ ոչ թե արտաքին սպառնալիքները, էթնիկական տեղաշարժերը կամ ապստամբությունները երկրի ներսում (դրանք կարող էին լինել, բայց միայն որպես ճգնաժամի հետևանք), այլ բնակլիմայական պայմանների փոփոխությունը՝ նկատի ունենալով կլիմայի չորացումը և տևական երաշտը:

Հիդրոշինարարությունը Ուրարտուում Ք.ա. VII դարում

Ուրարտական տերության երբեմնի տարածքներում հնագիտորեն վկայված է շուրջ 110 ջրամբար, որոնցից 80-ը կամ 2/3-ից ավելին, կառուց-

[8] Տե՛ս Grekyan 2014, 57-94:

[9] Пиотровский 1959, 240-241. Мартиросян 1974, 169-175. Ավետիսյան 2001, 95: Erzen 1978, 55-56. Belli 2005, 421. Çilingiroğlu, Salvini 2001, 15-24; Erzen et al. 1960 [1961], 13-14. Lloyd, Burney 1965 [1967], 218-2019.

[10] Kroll 1984, 169.

ման տեխնիկայից դատելով, թվագրվում է Ք.ա. VII դարով: Դրանցից առնվազն հինգը կառուցվել է Արգիշտի Ռուսայորդու կողմից, մնացածը՝ Ռուսա Էրիմենայորդու կամ Ռուսա Արգիշթորդու[11]: Դրանց շարքում են Ուրարտուում երբևէ կառուցված երկու ամենախոշոր ջրամբարները: Առաջինը Ռուսա Էրիմենայորդու կառուցած «Ռուսայի ծովն» է (ներկայիս «Քեշիշ-գյոլը»), որը գոյություն ունի մինչ օրս և շարունակում է ծառայել որպես ոռոգման ջրի կարևոր աղբյուր[12]: Ջրամբարը զբաղեցնում է ավելի քան 7 կմ^2 մակերես և ամբարում է առնվազն 40 մլն մ^3 ջուր[13]: Ընդ որում, ենթադրվում է, որ ուրարտական շրջանում ջրի մակարդակը պետք է լիներ 10 մ-ով ավելի բարձր, քան այժմ է՝ կուտակելով մինչև 100 մլն մ^3 ջուր, որից մատչելի է եղել շուրջ կեսը[14]: Նման ծավալներով այն զուգադրելի է Մենուայի (Շամիրամի) ջրանցքի հետ, որով տեղափոխվում է գրեթե նույն քանակությամբ՝ տարեկան մոտ 40-45 մլն մ^3 ջուր: Քեշիշ-գյոլից սկիզբ առնող ջրանցքով (Գերոֆ Դերեսի) ջուր էր հասցվում Թոփրաքքալեին հարակից դաշտերը[15]: Ուրարտական ջրամբարներից ամենախոշորը Մեյդան Բողազըի ջրամբարն է՝ ավելի քան 9 կմ^2 մակերեսով[16]: Այս նույն շրջանով թվագրվող մեկ այլ խոշոր կառույց էր Սիփանի ջրամբարը՝ շուրջ 10-11 մլն մ^3 ծավալով[17] և այլն:

Պատկերը նույնն է նաև ջրանցքների պարագայում: Երբեմնի ուրարտական տարածքներում հնագիտորեն վկայված թվով 40 ջրանցքներից 21-ի անցկացումը թվագրվում է Ք.ա. VII դ., 6-ի կառուցման շրջանը մնում է հարցական, և միայն 13-ն են, որոնք թվագրվում են Ք.ա. IX-VIII դդ., այդ թվում՝ նշանավոր Շամիրամի ջրանցքն ու Արարատյան դաշտավայրի հողերը ոռոգող հինգ խոշոր ջրանցքները[18]:

Ք.ա. VII դ. իրականացված ջրանցքաշինական խոշոր ծրագրերից մեկն ընդգրկում էր Արարատյան դաշտավայրի՝ Կարմիր բլուրին մերձակա

---

[11] Grekyan 2014, 61-62, Tab. 1.

[12] Öğün 1970, 12-13. Garbrecht 1980, 310-312. Garbrecht 2004, 32-55. Belli 1988, 314-315. Salvini 2001, 150-153. figs 6-7.

[13] Belli 1999, 22-23, figs 14-15.

[14] Տե՛ս և հմմտ., միաժամանակ, Garbrecht 1980, 311. Garbrecht 2004, 53-54. Salvini 2001, 152.

[15] Belli 1999, 22-24, figs 16-18; Garbrecht 2004, 52, Abb. 42.

[16] Belli 1995, 358-365.

[17] Belli 1994, 78.

[18] Grekyan 2014, 80-84, Tab. 1.

տարածքները: Հրազդան գետից տարված նոր ջրանցքը, որին տրվել էր Ումեշինի անունը[19], անցնում էր մոտ 400 մ-անոց ժայռափոր թունելով[20]: Ընդ որում, ինչպես ժամանակին ենթադրել է Չարլզ Բըրնին, Ռուսա Արգիշթորդին կարող էր անգամ խորացնել Հրազդանի ակունքը և լրացուցիչ ջուր վերցնել Սևանա լճից[21]:

Այդ նույն շրջանում Շարուր-Նախիջևանում անցկացվում է իր երկարությամբ երրորդ ուրարտական ջրանցքը՝ Ֆերհաթ-քանալը: Միայն ներկայիս Նախիջևանի ԻՀ տարածքում ջրանցքն ունեցել է 25-30 կմ երկարություն[22]: Նման երկարությամբ մեկ այլ խոշորածավալ ջրաբաշխիչ համակարգ է անցկացվել Բաստամի շուրջը[23]: Ք.ա. VII դ. Վանա լճի ավազանում կառուցված Մենգենեի ջրանցքն ունի 16-17 կմ երկարություն[24], Աշաղը Մեզրայի ջրանցքը ձգվում է 11-12 կմ և այլն[25]:

Քննարկման մեկ այլ նյութ է Ուրարտուում քյահրիզների գոյության հարցը[26]: Թեև այստեղ կարծիքները տարամետ են, սակայն նույն դարաշրջանի Ասորեստանում քյահրիզների առկայությունն ամենևին չի բացառում, եթե չասենք՝ հաստատում է նման համակարգերի գոյության հնարավորությունը նաև Ուրարտուում:

Այստեղ նշենք նաև, որ Ք.ա. VIII դ. վերջին – VII դ. առաջին կեսին են վերաբերում աստվածների համար զոհաբերություններ սահմանող այն բոլոր արձանագրությունները, որոնցում աստվածներից ակնկալվում է անձրև և լիաջուր ջրանցք[27]: Կարելի է կարծել, որ սկսած Ռուսա Էրիմենայորդուց և հատկապես Արգիշտի Ռուսայորդու և Ռուսա Արգիշտորդու ժամանակ ջրի խիստ պակաս է զգացվել՝ արքաներին մղելով կատարելու նորանոր զոհաբերություններ՝ աստվածներից ակնկալելով առատ տեղումներ: Հետաքրքիր է նաև, որ ջրամբարներ կառուցելու մասին են հայտնում

---

[19] КУКН, $421_{4\text{-}15}$; CTU I, A $12\text{-}81_{4\text{-}15}$.

[20] Մուշեղյան 1971, 212-215: Եսայան 1982, 38:

[21] Burney 1972, 183.

[22] Այվազյան 1976, 91: Belli, Sevin 1999, 27-30, Res. 29-30.

[23] Kleiss 1970, 59-62, Abb. 32. Kleiss 1976, 34.

[24] Belli 2004, 337.

[25] Belli 2010, 85.

[26] Այս համակարգի մասին տե՛ս և հմմտ. Lehmann-Haupt 1926, 111-115. Laessøe 1951, 21-32. Belli 1984, 170. Garbrecht 2004, 14-19, Abb. 8-9. Çifci, Greaves 2013, 200. Հմմտ. Salvini 201, 143-155. Dalley 2001-2002, 446-448. Dalley 2005, 40-43.

[27] Арутюнян 2001, Nos 391, 407, 421 (այսուհետև՝ КУКН); CTU I, A 11-1, 12-8, 14-1, 14-2.

միայն Ռուսա Էրիմենայորդու և Արգիշտի Ռուսայորդու արձանագրությունները[28], արքաներ, որոնց կառավարման շրջանն ընկնում է ինչ-որ տեղ Ք.ա. VIII դ. վերջին – VII դ. առաջին կեսին[29]:

Երկրագործություն

Ինչպես թվում է՝ Ուրարտուում նկատվող ջրի պակասն էր պատճառը, որ երկրագործության մեջ անցում է կատարվում չորադիմացկուն և վաղահաս մշակաբույսեր աճեցնելուն: Այսպես, երկշարք և բազմաշարք գարու (*Hordeum distichon*, *Hordeum vulgare* L.) փոխարեն, որը հացահատիկային հիմնական մշակաբույսն էր Ուրարտուում և ընդհանրապես՝ ողջ Առաջավոր Ասիայում, սկսած Ք.ա. 3-րդ հազ. վերջերից, այստեղ սկսում են աճեցնել սովորական և աղվեսագի կորեկ (*Panicum miliaceum* L., *Setaria italiaca* L.P. Beauvois): Կորեկի ցանքսն արվում է տաք եղանակին՝ գարնան վերջերին, և ունի հասունացման կարճ շրջան: Այդ բույսը չորադիմացկուն է, ջերմասեր և աճում է նաև անջրդի հողերում[30]:

Հայկական լեռնաշխարհի մինչուրարտական շրջանի հուշարձաններում կորեկ գրեթե չի հանդիպում[31]: Մինչդեռ, պատկերը ճիշտ հակառակն է ուրարտական շրջանի համար: Կորեկ և կորեկի պաշարներ են հայտնաբերվել Կարմիր բլուրից[32], Արգիշտիխինիլիից[33], Այանցից[34], Էրեբունիից[35], Բաստամից[36], Հոռոմից[37] և այլն: Հետաքրքիր է, որ Այանցի ամրոցում (Ք.ա. VII դ.) Խալդի աստծուն ընծայված նվիրատվական կապարճները նույնպես լցված էին կորեկի հատիկներով[38]:

Ուրարտուում տեղ գտած մեկ այլ փոփոխություն կարող էր լինել, ջրի անբավարարությամբ պայմանավորված, խաղողուտների համատարած չորա-

---

[28] КУКН, Nos 391, 406-407; CTU I, A 11-1, 11-2, 14-1, 14-2.

[29] Ռուսա Էրիմենայորդու գահակալության շրջանի վերաթվագրության վերաբերյալ տե՛ս Գրեկյան 2017 23-37 (հղված գրականությամբ):

[30] Nesbitt, Summers 1988, 94. Murphy 2007, 88-90.

[31] Туманян 1944, 78: Տե՛ս նաև Овсепян 2009, 29: Կարմիր բլուրի մինչուրարտական շրջանի բնակավայրից հայտնաբերված կորեկի մասին տե՛ս Мартиросян 1961, 16:

[32] Туманян 1944, 76. Арутюнян 1964, 92-93, рис. 9-10.

[33] Гулканян 1966, 112-113, նկ. 6).

[34] Cocharro et al. 2001, 393. Solmaz 2013, 185-186, figs 5-8.

[35] Арутюнян 1964, 80.

[36] Hopf, Willerding 1988, 290-291, Taf. 17, Abb. 16, Taf. 44.

[37] Мирзоян и др. 1998, 48.

[38] Çilingiroğlu 2005, 34-35, Fig. 10.

ցումը: Այն փաստը, որ ուրարտական կենտրոններում կառուցված գինու մառանները Ք.ա. VII դ. համատարած օգտագործվել են այլ նպատակով՝ դրանցում ամբարելով հացահատիկ, կարող է լուրջ կռվան դառնալ պնդելու համար, որ այդ շրջանում ստացված խաղողի բերքը չափազանց քիչ էր և ավելին, կարող էր օգտագործված լինել պարզապես որպես սնունդ[39]:

Ջրի խնդիրն ուրարտական կենտրոններում և Ռուսայի քաղաքների հիմնադրումը

Ռուսա Արգիշթորդու օրոք նոր կենտրոնների հիմնադրումը սովորաբար բացատրվում է երկրում իրականացված վարչաքաղաքական վերափոխումներով: Մյուս կողմից, նոր հիմնադրված քաղաքներից առնվազն երկուսն ընկած են հին կենտրոնների մերձավորությամբ. «Թեյշեբայի քաղաքը» (Կարմիր բլուր) Էրեբունիից հեռու է մոտ 7 կմ: Ամենայն հավանականությամբ, Ռուսա Էրիմենայորդու կողմից կառուցված «Ռուսախինիլի Կիլբանիկային» մայրաքաղաք Տուշպայից հեռու է ընդամենը 4, իսկ Վերին անձավի արքայանիստ ամրոցից՝ մոտ 7 կմ: Հետևաբար, դժվար է ասել՝ այդ ի՞նչ գործառույթներ պետք է իրականացնեին նոր կենտրոնները, որը չէին կարող անել հները: Ավելին՝ Էրեբունին իր դիրքով և ամրացվածությամբ, ակնհայտորեն, գերազանցում էր նորակառույց «Թեյշեբայի քաղաքին», իսկ «Ռուսախինիլի Կիլբանիկային», ինչպես ենթադրվում է, անգամ զուրկ է եղել ամրություններից[40]: Տուշպայի «արտաքին քաղաքի» հնարավոր ավերումը Թիգլաթպալասար III-ի կողմից Ք.ա. 735 թ. ևս չի կարող բացատրել Տուշպան լքելու և արքունիքն այստեղից դեպի «Ռուսախինիլի Կիլբանիկայի» կամ, ավելի շուտ, դեպի «Ռուսախինիլի Էիդուրուկայի» տեղափոխելու հնարավորությունը մի քանի պատճառով: Տուշպան, նախ և առաջ, անգամ Թիգլաթպալասարի արշավանքից հետո պահպանել էր իր նշանակությունը՝ որպես մայրաքաղաք առնվազն Ռուսա Սարդուրորդու և Արգիշտի Ռուսայորդու օրոք. ասորեստանյան սեպագիր աղբյուրները բավարար հիմք են տալիս նման եզրակացության համար[41]: Ավելին, «Ռուսախինիլի Էիդուրուկայիից» հայտնաբերված մի տեքստում Տուշ-

[39] Մերձավորարևելյան զուգահեռների մասին տե՛ս Riehl 2009, 93-114. Riehl 2009, 221-222.

[40] Sevin 2006, 144.

[41] Տե՛ս, օրինակ, Lanfranchi, Parpola 1990, Nos 3, 84-87, 91-92, 113 տեքստերը և այլն:

պան դեռևս հանդես է գալիս որպես «արքայական քաղաք» (URU LUGAL *ṭu.<špa>*)[42]: Բացի այդ, ինչպես նշվեց, «Ռուսախինիլի Կիլբանիկային», լինելով վարչական խոշոր կենտրոն, որի ծառայող և սպասարկող անձնակազմն անցնում էր 5500 հոգուց[43], զուրկ էր ամրություններից, և համեմատության եզրեր չկան Վանի միջնաբերդի հետ, ինչն անտրամաբանական է դարձնում ուրարտական այս կենտրոնի դիտարկումն իբրև տերության նոր մայրաքաղաք անգամ այն դեպքում, երբ վերջինիս հիմնադրումը դեռ վերագրվում էր Ռուսա Սարդուրորդուն[44]: Այդ նույնը կարելի է ասել «Ռուսախինիլի Էիդուրուկայիի» համար: Ռուսա Արգիշթորդու այս փառահեղ ամրոցն աչքի էր ընկնում իր հանդիսավորությամբ, արքայական նստավայր էր[45], այդուամենայնիվ, ավելի պաշտպանված չէր, քան ուրարտական որևէ այլ կենտրոն: «Զիուկունի երկրի Խալդիի քաղաքը» վերը նշված նոր կենտրոնների համեմատությամբ, թեև ուներ շատ ավելի ամուր բնական դիրք[46], սակայն այս քաղաքի հիմնադրումը ևս դժվար է բացատրել ռազմական անհրաժեշտությամբ: Ինչ վերաբերում է «Ռուսայի փոքր քաղաքին», որը, «փոքր» կոչվելով հանդերձ, իր տարածքով ամենախոշորն է ուրարտական ամրոցների թվում[47], ինչպես երևում է, սկզբնապես նախատեսված չէր ունենալու նման մասշտաբներ: Բաստամի ընդարձակումը և նոր պարսպաշարերի բարձրացումը մի քանի փուլով, ըստ երևույթին, երկրում իրադրության փոփոխության արդյունք էին դիտարկվում են նաև ուրարտական մնացյալ կենտրոններում այդ նույն շրջանում[48]:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ, ռազմական ներխուժման սպառնալիքը չէր, համենայն դեպս, որը ստիպեց հիմնադրելու այդ նոր քաղաքները: Այդ մասին կարող է վկայել նաև այն հանգամանքը, որ քննարկվող շրջանում բավական ջերմ հարաբերություններ էին հաստատվել Ուրարտուի և նրա երբեմնի ոխերիմ թշնամու՝ Ասորեստանի միջև, անգամ ասորեստանյան արձանագրությունները հայտնում են երկու երկրնե-

[42] Salvini 2012 (այսուհետև՝ CTU IV), CB Ay-2.

[43] КУКН, No. 412; CTU IV, CT Tk-1.

[44] Пиотровский 1959, 92. Арутюнян 1970, 280. Հմմտ. Burney, Lang 1971, 162. Zimansky 1985, 79.

[45] Çilingiroğlu, Salvini 2012, 99-112; CTU IV, 100.

[46] Burney 1957, 50-51. Burney 1998, 150-151, fig. 14.5-6.

[47] Ամփոփ տե՛ս և հմմտ. Kroll 2006-2008, 469.

[48] Տե՛ս Grekyan 2009, 98-126.

րի միջև հաստատված դաշինքի մասին[49]: Դաշնակցային հարաբերություններ էին հաստատվել նաև տարածաշրջանում հայտնված էթնիկական նոր խմբերի՝ կիմմերների հետ, ինչի մասին ուղղակի վկայում են ասորեստանյան գուշակային տեքստերը[50], հարաբերությունները թերևս բավական սերտ էին նաև սկյութների հետ, որոնց անգամ տեսնում ենք ուրարտական ծառայության մեջ[51]: Ինչ վերաբերում է տեղի նվաճված/ենթակա բնակչությանը, ապա վերջինս, կարծես, արագորեն ինտեգրվում էր ուրարտական վարչակազմում ու բանակում, և պատահական չէ «էթնիկական» անուն կրող պաշտոնյաների ի հայտ գալն այդ շրջանի ուրարտական տեքստերում[52]: «Ուրարտական» մշակույթի ծնունդն այն բովանդակությամբ, ինչպես որ ընկալվում է հայ հնագիտության մեջ[53], երկրում հաստատված յուրահատուկ «համախոհության» արդյունք կարող էր լինել:

Հետևաբար, թե՛ ռազմական, թե՛ անգամ վարչական հնարավոր փոփոխությունները դժվար թե խթան ծառայեին նման հսկայածավալ քաղաքաշինության համար: Այդ ամենը բացատրել նաև բնակչության աճով պայմանավորված նոր բնակավայրերի հիմնադրման անհրաժեշտությամբ՝ հազիվ թե իրատեսական լինի: Ուրարտական խոշոր կենտրոնները, որքան էլ որ դրանք «քաղաք» անվանենք, երբևէ չեն եղել մեծաթիվ բնակչության կենտրոնացման վայրեր, իսկ միջնաբերդին կից հիմնադրված բնակատեղին կոչված էր միայն սպասարկելու ամրոցի կարիքները: Քաղաք և քաղաքային կյանք այն բովանդակությամբ, ինչ Միջագետքում էր, Ուրարտուում չի ենթադրվում[54]: Դրա փոխարեն, նոր կենտրոնների հիմնադրումը միանգամայն կարող էր տնտեսական կամ ավելի շուտ՝ էկոլոգիական դրդապատճառներ ունենալ:

Կարելի է կարծել, որ Կարմիր բլուրի հիմնադրումը Սևանա լճից սնվող Հրազդան գետի անմիջական ափին, Էրեբունիի գործառույթների տեղափոխումը Կարմիր բլուր կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ Էրեբունին ուներ ջրամատակարարման հետ կապված

[49] Borger 1956, 106 (Gbr. II iii 32). Leichty 2011, 79-80 (No. 33 Rev.? iii 32′).
[50] Starr 1990, 22-24 (No. 18).
[51] Меликишвили 1954, 316, 364. Wartke 1993, 70.
[52] CTU IV, CT Kb-1 Ro_{10}.
[53] Հմայակյան 1995, 105-106: Avetisyan, Bobokhyan 2012, 373-378.
[54] Grekyan 2017, 121-125.

խնդիրներ[55], և անգամ ոչ տևական երաշտի դեպքում քաղաքը կանգնելու էր ոռոգման ջրի լրջագույն պակասի առջև[56]: Մինչդեռ, Կարմիր բլուրի շրջակա հողերը ոռոգելու համար Հրազդանից անցկացված ջրանցքը գետից վերցնում էր վայրկյանում մոտ 4 մ^3 ջուր[57], ինչն ավելին է, քան «Մենուայի ջրանցքի» ստացած ջուրը Վերին Մժնկերտի աղբյուրներից՝ 2-3 մ^3 ծավալով[58]: Ակնհայտ է, որ քաղաքի տարածքի ընտրության համար վճռորոշ նշանակություն է ունեցել մշտական հոսք ունեցող Հրազդան գետի մերձավորությունը: Մատչելի ջրի աղբյուրների գործոնը ակնհայտ երևում է նաև Ք.ա. VII դ. հիմնադրված ուրարտական մյուս խոշոր կենտրոնների տարածքի ընտրության դեպքերում[59]:

Տնտեսական ճգնաժամը

Ուրարտուում նկատվող ջրի տևական պակասը բավական էր, որ պետության համար լրջագույն խնդիրներ հարուցեր: Պալատական/տաճարային տիպի պետության համար վերաբաշխման հիմնական միջոց հանդիսացող հացահատիկի պակասը խնդիրներ էր առաջացնելու, առնվազն, պետական հողերում բնակեցված երկրագործ բնակչությանը կերակրելու առումով: Դրա հետևանքը կարող էր լինել երկրագործ համայնականների կամ հողին ամրացված կախյալների զանգվածային փախուստը պետական հողերից: Այդ առումով, կարող է հարց առաջանալ, թե՝ արդյո՞ք Շուբրիայում ապաստանած ուրարտացիները, որոնց մասին հայտնում է ասորեստանյան արքա Ասսարհադդոնը (Ք.ա. 680-669 թթ.) Աշշուր աստծուն ուղղված իր «նամակում», հենց այդ փախստականները չէին, որոնց Ռուսան շուբրիական արքայից պահանջել էր վերադարձնել և ստացել էր վիրավորական մերժում[60]: Իսկ Շուբրիան փախստականների համար նախկինում ևս ապաստան էր ծառայել[61]: Հետաքրքիր է, որ քաղցի և սովի պատ-

[55] Оганесян 1980, 125, նկ. 93: Էրեբունիի ջրամատակարարման մասին տե՛ս և հմմտ. նաև Մուշեղյան 1971, 208-212. Агаханян, Мартиросян 1984, 194-198.

[56] Էրեբունիի լքումը ջրի խնդրով է պայմանավորում նաև Չարլզ Բըրնին (տե՛ս Burney 1972, 183).

[57] Մուշեղյան 1971, 212:

[58] Garbrecht 1980, 308-310. Garbrecht 2004, 19-31, Abb. 10, 12-15, 20. Belli 1997, 11-13. Salvini 1992, 67-80. Հմմտ. Kuşlu, Şahin 2009, 2110 (6-10 մ^3).

[59] Grekyan 2009, 67-68.

[60] Borger 1956, 106 (Gbr. II iii 28-30). Leichty 2011, 79-80 (No. 33 Rev.? iii 28′-30′).

[61] Տե՛ս, օրինակ, Lanfranchi, Parpola 1990, Nos 35, 52 տեքստերը ևն:

ճառով դեպի Շուբրիա փախած ասորեստանցիների մասին են վկայում նաև ասորեստանյան տեքստերը[62]:

Սկզբնապես, աշխատուժի պակասը պետությունը կարծես թե փորձել է լուծել նորանոր գերեվարություններով կամ հարկադիր վերաբնակեցումներով: Ռուսա Արգիշթորդու կողմից տարբեր ուղղություններով ձեռնարկված արշավանքների նպատակներից մեկը, կարելի է կարծել, պետական լքված հողերը աշխատուժով ապահովելն էր, և այն փաստը, որ արքայի արձանագրություններում որպես ձեռքբերում է նշվում ոչ թե տարածքային նվաճումների, այլ տարբեր երկրներից «տղամարդ ու կին» բերելու և «ամրոց(ներ)ում ու քաղաքներում» բնակեցնելու մասին, կարող է լինել դրա վկայությունը[63]:

Հավանաբար, համատարած փախուստն ու աշխատուժի խիստ կարիքն էր պատճառը, որ ուրարտական արքա Ռուսա Էրիմենայորդին ստիպված է լինում դիմելու թերևս աննախադեպ քայլի՝ որպես աշխատուժ օգտագործելու տերության մայրաքաղաքի բնակչությանը՝ այսպես կոչված, «Տուշպայի որդիներին»: Արքայի թողած Քեշիշ-գյոլ +Գյովելեքի և Սավաջբքի կոթողներում ասվում է.

Ṣ[*ṗa*)]*rubi* ^{LÚ}DUMU-*še* ^{URU}*ṭušpaini uruluni isi* KI$^{T[IM]}$ ^{m}*rusaḫinakai e'a inus*[*i ṣ*]*uini esi guni quldin*[*i šu*]*li manu* «…բերեցի Տուշպայի որդի(ներ)ին մշակելու/փորելու (՞) այս հողը Ռուսախինիլիի առջև և այս ծովի տարածքը, (որ) իրոք, ամայի էր (և) չոր»[64]:

Ի հայտ եկած խնդիրները ուրարտական պալատական-տաճարային տնտեսական համակարգը դարձրեց անկենսունակ: Եթե պետությունը չէր կարողանում միջոցներ կուտակել՝ կատարելու վերաբաշխման իր գործառույթները կամ այն իրականացնում էր մասամբ, ապա որպես արդյունք ունենալու էր անհնազանդություն, փախուստ, սով և մահ. ուշագրավ է, որ այդ շրջանում բնակչության լայն զանգվածներ, դատելով համայնական դամբարանների ոսկրաբանական նյութից, տառապել են թերսնումից: Մեծ

---

[62] Grayson 1991, 202 (A.0.101.1: 7-8), 243 (A.0.101.17: ii 21-24).

[63] Տե՛ս CTU I, A 12-1 VI_{10}-VII_1.

[64] CTU I, A 14-1 Ro_{44-48}. Տե՛ս նաև Սավաջբքի կոթողի նույն հատվածը (CTU I, A 14-2 Ro_{44-49}). «Տուշպայի որդիները» հիշատակվում են արձանագրության այլ հատվածում ևս՝ քիչ հասկանալի համատեքստում (տե՛ս KUKN, No. $391_{x+15-17}$; CTU I, A 14-1 Ro_{48-50}; A 14-2 Ro_{49-50} – A 14-2 I. $d._{1-3}$. Ընթերցման վերաբերյալ տե՛ս և հմմտ. Дьяконов 1963, 71, 88. Կարագյոզյան 1976, 104-105:

թիվ է կազմել հատկապես մանուկների և երեխաների մահացությունը[65]: Երկրում տիրող սովի մասին կարելի է դատել այն փաստից, որ Այանցի արտաքին քաղաքում բացված ուշ ուրարտական շրջանի՝ բավական անկանոն և հապճեպ կառուցված տներից հայտնաբերվել են մեծ քանակությամբ շան ոսկորներ, որոնց միսն օգտագործվել է որպես սնունդ[66]: Այստեղ հիշենք նաև այն, որ ուրարտական ամրոցների մառանները տերության կործանման նախաշեմին հիմնականում դատարկ էին[67]:

Ապաբնակեցում

Ինչպես երևում է, պալատական/տաճարային տնտեսություններից մարդկանց զանգվածները ձգտել են հեռանալ դեպի նախալեռնային կամ լեռնային գոտիներ: Պալատի/տաճարի հետ կապված երկրագործ բնակչությանը, արդեն տերության փլուզման նախաշեմին կամ փլուզումից հետո, թերևս գոյատևելու անհնարինության պատճառով, հետևել են նաև նրանք, ովքեր ուրարտական պետականության կրողներն էին, կանվանենք նրանց «ուրարտացիներ», «բիայնացիներ», թե կտանք մեկ այլ անուն: Ակնհայտ է, որ ուրարտական «հարթավայրային քաղաքակրթությունը», որը չէր ձգտում բարձրանալ ծ.մ. 2000 մ բարձր ընկած գոտիներ, այժմ ձգտում է դեպի վեր՝ իր հետ լեռներ տանելով նաև իր ավանդույթները և փորձելով հիմնավորվել այդտեղ: Ք.ա. VII դ. վերջ – VI դ. մի քանի հուշարձաններ, որոնք, անկասկած, կառուցվել են ուրարտական ճարտարապետության ոգով, հիմնվել են 2000 մ նշաձողից բարձր գոտիներում[68]:

Այդ նույն երևույթը դիտարկվում է նաև Ուրարտուի երկրագործական կարևոր շրջաններից մեկում՝ Շիրակի դաշտում: Այստեղ գտնվող Հոռոմի խոշոր ամրոցը լքվում է[69], փոխարենը՝ վերաբնակեցվում է Հոռոմից մոտ 20 կմ դեպի հարավ-արևելք ընկած ուշբրոնզեդարյան Ծաղկահովտի բարձրադիր բնակավայրը, որը լքված էր ուրարտական իշխանության

---

[65] Վանի մոտ բացված և ուրարտական շրջանով թվագրվող դամբարանադաշտի ոսկրաբանական նյութի վերլուծության համաձայն, մանուկների և երեխաների մահացությունը կազմել է շուրջ 45 տոկոս: Եվս մոտ 23 տոկոս է կազմել կանանց մահացությունը (տե՛ս Yiğit et al. 2005, 52, տախտակ 52, աղ. 1):

[66] Տե՛ս Stone 2008, 162-163:

[67] Տե՛ս, օրինակ, Пиотровский 1952, 19-20: Çilingiroğlu 2011, 356:

[68] Grekyan 2014, 73 (հղված գրականությամբ):

[69] Kohl, Kroll 1999, 244. Badaljan et al. 1997, 227.

շրջանում[70]: Ակնհայտ է, որ տեղի է ունենում բնակչության կենտրոնացում նախալեռնային/լեռնային գոտիներում: Այանցի «արտաքին քաղաքի» լքվելը[71], միգուցե, կարելի է դիտարկել հենց այս համատեքստում:

Ապաբնակեցման հետևանքները պատկերացնելու համար կարող ենք բերել հնագիտորեն առավել լավ ուսումնասիրված հյուսիս-արևմտյան Իրանի երբեմնի ուրարտական տարածքների օրինակը: Այստեղ գտնվող ավելի քան 70 ամրոցների և բնակավայրերի ճնշող մասը ուշ ուրարտական շրջանում լքվել է, ընդամենը տասը-տասներկու հնավայր է, որ ցույց է տալիս հետագա բնակության թռուցիկ հետքեր[72]:

Զուգահեռներ

Ք.ա. VIII դ. վերջ – VII դ. Ուրարտուում տեղ գտած երևույթները դիտարկվում են նաև Առաջավոր Ասիայի այլ երկրներում, նախ և առաջ՝ Ասորեստանում: Այս շրջանի ասորեստանյան սեպագիր աղբյուրներում հաճախակի են դառնում ջրի խնդրի արծարծումը և արքաների՝ այն լուծելուն ուղղված ջանքերի նկարագրությունն ու փառաբանումը: Դրանցից առաջինը Ասորեստանում Սինախերիբի (Ք.ա. 705-681 թթ.) և Ասսարհադդոնի իշխանության շրջանում իրականացված խոշորածավալ հիդրոշինարարական աշխատանքներն էին[73]: Միայն Սինախերիբի իշխանության շրջանում կառուցվում է 18 ջրանցք՝ 150 կմ ընդհանուր երկարությամբ, որոնցից մեկը՝ 55 կմ ձգվող Խիննիսի ջրանցքն անվանակոչվում է արքայի անունով (*Patti Sîn-aḫḫē-erība*)[74]: Ընդ որում, եթե Սինախերիբի իրականացրած հիդրոշինարարական առաջին ծրագրերը[75] կարելի է ինչ-որ տեղ փոխկապակցել Նինվեի վերակառուցման և ընդարձակման հետ[76], ապա ասորեստանյան արքայի՝ քիչ ավելի ուշ շրջանում թողած մի քանի արձանագրություն-

[70] Smith et al. 2004, 28.

[71] Zimansky 2005, 239.

[72] van Loon 1979, 370. Kroll 2004, 47.

[73] Ասորեստանում իրականացված՝ Ք.ա. VII դ. ջրանցքաշինության մասին տե՛ս Reade 1978, 61-66. Reade 1978, 157-175. Bagg 2000, 169-229. Bagg 2000, 316-320, fig. 3. Dalley 2001-2002, 451-455.

[74] Reade 1978, 47-48; Bagg 2000, 212-224. Bagg 2000, 318-320. Ur 2005, 335-341, pic. 16-18.

[75] Հմմտ., օրինակ, Ք.ա. 695, 694 և 691 թթ. կազմված՝ Սինախերիբի արձանագրությունները [տե՛ս Grayson, Novotny 2012, 123-124 (No. 16 viii 15-28), 144-145 (No. 17 viii 22-45), 159-160 (No. 18 viii 1′-12′)]:

[76] Frahm 2008, 15-17.

ներ միանգամայն առանձնանում են իրենց բովանդակությամբ և հիդրոշինարարական աշխատանքների իրականացումը բացատրում են բնակչության ունեցած ջրի խիստ կարիքով[77]: Սա շատ տարօրինակ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նինվեի շրջանն ընկած է բնական տեղումների այնպիսի նշագծում (տարեկան մոտ 400 մմ), որը միանգամայն թույլ է տալիս զբաղվելու երկրագործությամբ առանց արհեստական ոռոգմանը դիմելու[78]:

Սինախերիբին հաջորդած Ասսարհադդոնը հայտնում է Վերին Զաբ գետից դեպի Կալխու ձգվող և նախկինում ամայացած Թեբիլթու ջրանցքի վերակառուցման մասին[79]: Նոր ջրանցքներ են անցկացվում Կալխուի և Էրբիլի մերձավորությամբ[80]: Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել նաև Ասորեստանի միջնաշխարհից դուրս՝ ասորեստանյան նահանգային կենտրոններից Դուր-Կատլիմուի մերձավորությամբ (Թելլ Շեյխ Խամադ հնավայրը, հյուսիսարևելյան Սիրիա) և այլուր[81]: Հետաքրքիր է, որ տեղի ջրանցքների անցկացումը նույնպես թվագրվում է Ք.ա. VIII դ. վերջ – VII դ.[82]:

Քյահրիզների համակարգի ի հայտ գալն Ասորեստանում Սինախերիբի օրոք[83] նույնպես վկայում է ջրի խնդրի գոյության մասին: Այդ նույնը կարելի է ասել շադուֆների մասին, որի տեխնոլոգիան, ամենայն հավանականությամբ, ասորեստանցիները ներմուծել էին Եգիպտոսից[84]: Դա թույլ էր տալու ջուր վերցնել Տիգրիսից, որի խորը և ուղղաձիգ ափերով հունը ոռոգման համար անմատչելի էր դարձնում գետի ջրերը[85]:

Ասորեստանյան առաջին ջրամբարները ևս կառուցվում են այս շրջանում[86]: Թե՛ Ուրարտուում և թե՛ Ասորեստանում տեղ գտած այս բուռն հիդրոշինարարությունը հիշեցնում է խեթական տերության գոյության վերջին շրջանը, երբ միայն խեթական արքա Թուդխալիաս IV-ը (Ք.ա. 1240-

---

[77] Grayson, Novotny 2014, 310-317 (No. 223 5b-7). Bagg 2000, 348-353 (Nr. 45-46). Տե՛ս նաև Bagg 2000, 316-317: Այլ տեսակետի վերաբերյալ տե՛ս և հմմտ. Reade 1978, 173-175:

[78] Bagg 2000, 303-304, Fig. 2. Paulette 2012, 173.

[79] Borger 1956, 35-36 (Klch. C). Leichty 2011, 169-170 (No. 87).

[80] Bagg 2000, 225.

[81] Kühne 1990, 15-30. Kühne 1995, 82. Morandi Bonacossi 2000, 384.

[82] Kühne 1990, 22. Kühne 1995, 82.

[83] Burney 1972, 181. Տե՛ս և հմմտ. Dalley 2001-2002, 448-451:

[84] Սինախերիբի իշխանության շրջանում շադուֆների կիրառության և այլ «նորարարությունների» մասին տե՛ս Tamburrino 2010, 36-38:

[85] Bagg 2000, 309-310.

[86] Reade 1978, 64, Fig. 8a/b; Lamprichs 1997, 228.

1220 թթ.) կառուցում է 10-ից ավելի ջրամբարներ՝ կանխելու համար ջրի նկատվող պակասը Ք.ա. XII դ. մերձավորարևելյան ճգնաժամին ընդառաջ[87]: Խոսքը բնակլիմայական փոփոխությունների առաջ բերած ճգնաժամի մասին է, որը հանգեցրեց խեթական տերության կործանմանը (տե՛ս ստորև):

Երկրորդ զուգահեռը վերաբերում է երաշտադիմացկուն մշակաբույսերի և մասնավորապես՝ կորեկի լայն օգտագործմանը երկրագործության մեջ: Եթե կորեկը հին Առաջավոր Ասիայում ընդհուպ մինչև ուշ բրոնզի դար քիչ է հանդիպում և վկայված է ընդամենը մի քանի հնավայրերում, ապա Ք.ա. VII-VI դդ. այն արդեն հայտնի էր Առաջավոր Ասիայի գրեթե ողջ տարածքից[88]:

Երրորդ զուգահեռը տեսնում ենք քաղաքաշինական նոր ձեռնարկումներում: Խոսքը, նախ և առաջ, արքայանիստ Կար-Թուկուլթի-Նինուրտա քաղաքի կառուցման մասին է Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրտա I-ի կողմից (Ք.ա. 1234-1197 թթ.): Հետաքրքիր է, որ ասորեստանյան նոր մայրաքաղաքը գտնվում էր Աշշուրի մերձավորությամբ՝ նրանից ընդամենը 3 կմ դեպի հյուսիս-արևելք, ինչը շատ է հիշեցնում ուրարտական զուգահեռները: Կար-Թուկուլթի-Նինուրտայի մերձավորությունը Աշշուրին, մի կողմից, մյուս կողմից, քաղաքի՝ ինքնուրույն վարչաքաղաքական դերակատարության բացակայությունը[89] մղում է քաղաքի հիմնադրման համար որոնելու այլ դրդապատճառներ: Հաշվի առնելով, որ Կար-Թուկուլթի-Նինուրտան, ի տարբերություն Աշշուրի, կառուցված էր երկրագործության համար բարենպաստ գոտում, որի ոռոգման համար արքան անցկացրել էր նաև ասորեստանյան առաջին ջրանցքներից մեկը՝ *Pattu-mēšari*-ն[90], ապա մայրաքաղաքի տեղափոխությունը դեպի երկրագործական գոտի կարելի է պայմանավորել այս նույն շրջանում Առաջավոր Ասիայում դիտարկվող ջրի պակասով և հողերի ոռոգման համար ջրի հնարավոր աղբյուրների մատ-

[87] Emre 1993, 1-42. Nossov 2008, 50-51. Kuşlu, Şahin 2009, 2110.
[88] Nesbitt, Summers 1988, 94. Riehl, Nesbitt 2003, 306.
[89] Gilibert 2008, 181-183.
[90] Grayson 1987, 270 (A.0.78.22: 45-48).

չելիությամբ[91]: Այդ մասին է կարծես ակնարկվում քաղաքի հիմնադրմանը վերաբերող արքայական արձանագրություններից մեկում[92]:

Հետաքրքիր է, որ Ասորեստանի արքայի կողմից նստավայրի նոր տեղափոխությունը վերստին տեղի է ունեցել մի շրջանում, որն իր վրա էր կրում կլիմայական փոփոխությունների կնիքը: Խոսքը, այս դեպքում, վերաբերում է Աշշուր-նաձիր-ապալ II-ի կողմից (Ք.ա. 884-858 թթ.) Կալխուի ընտրությանը՝ որպես նոր մայրաքաղաք: Այս անգամ ևս քաղաքի վերակառուցման հետ միաժամանակ անցկացվում է նոր խոշոր ջրանցք՝ *Patti-ḫegalli*-ն, որն ուներ կարևոր տնտեսական նշանակություն[93]:

Կարծում ենք, որ ինչպես Կար-Թուկուլթի-Նինուրտայի և Կալխուի դեպքում, այնպես էլ՝ Սինախերիբի կողմից Նինվեի՝ որպես արքայական նոր նստավայրի ընտրության գործում կարևոր դերակատարություն էր ունենալու այդ քաղաքի դիրքը երկրագործական բարենպաստ գոտում: Նինվեի շրջանը հնարավոր էր ոռոգել հյուսիսզագրոսյան և արևելատավրոսյան լեռներից սկիզբ առնող և քաղաքի միջով հոսող Խոսր գետը թափվող ջրանցքների ջրերով, չհաշված՝ մշտական հոսք ունեցող Տիգրիսի մերձավորությունը[94]: Ինչ վերաբերում է Սարգոն II-ի կողմից նոր նստավայրի՝ Դուր-Շարրու-ուկինի կառուցմանը, ապա, ինչպես հայտնի է, այդ քաղաքն ըստ էության, կյանք չստացավ, մի կողմից, Սարգոնի անսպասելի զոհվելու պատճառով, մյուս կողմից, հնարավոր է՝ այն լքեց Սինախերիբը միանգամայն գործնական նկատառումներով. քաղաքը, ինչպես երևում է, դեռևս չէր ապահովվել ջրով[95]:

Փաստորեն, ասորեստանյան արքաների կողմից ջրանցքաշինական բոլոր ձեռնարկումները համընկել են արքունի նստավայրի տեղափոխության հետ: Մյուս կողմից, դրանք իրականացվել են այնպիսի ժամանակաշրջանում, երբ աղբյուրները վկայում են ջրի պակասի մասին[96]: Այդ առումով թե Թուկուլթի-Նինուրտա I-ի, թե Աշշուր-նաձիր-ապալ II-ի կառա-

---

[91] Այս առումով տե՛ս և հմմտ. նաև Kühne 2000, 271-272. Gilibert 2008, 183 և pic. 1: Թուկուլթի-Նինուրտայի իրականացրած հիդրոշինարարական աշխատանքների մասին տե՛ս Bagg 2000, 36-44. Bagg 2000, 307-311, Fig. 3:

[92] Grayson 1987, 273-274 (A.0.78.23: 88-109).

[93] Bagg 2000, 95-101. Bagg 2000, 311-314, Figs. 3-4.

[94] Reade 2000, 389-390.

[95] Bagg 2000, 314-315.

[96] Հմմտ. Kühne 1995, 72:

վարման շրջանները համընկնում են Ք.ա. XII-IX դդ. ճգնաժամի փուլին[97]: Կարծես, Սինախերիբը նույնպես իշխել է այդպիսի մի շրջանում՝ փորձելով իր հսկայածավալ հիդրոշինարարական ձեռնարկումներով դիմագրավել կլիմայական փոփոխությունների առաջ բերած մարտահրավերները:

Չորրորդ զուգահեռը վերաբերում է աշխատուժին: Փախստականներին վերաբերող՝ Ասորեստանի արքա Ասսարհադդոնի՝ վերը հիշված տեքստում միաժամանակ նշվում է նաև Շուբրիայում ապաստանած մեծաքանակ ասորեստանցիների մասին: Թեև աղբյուրը հայտնում է, որ նրանց շարքերում եղել են նաև բարձրաստիճան պաշտոնյաներ[98], սակայն, հազիվ թե ճիշտ լինի բոլոր փախստականներին անխտիր համարելու Ասորեստանի արքայի քաղաքական հակառակորդներ[99]: Փախստականների թվում էին, և դա ասորեստանյան աղբյուրները չեն էլ թաքցնում, նաև մարդիկ, որոնք փախչում էին պայմանական հողատիրական համակարգ հանդիսացող *ilku*-ծառայությունից[100], ըստ երևույթին՝ պետական հողերի վրա գոյատևելու անհնարինությունից դրդված:

Նորասորեստանյան տեքստերում նույնպես տվյալներ են պահպանվել Ասորեստանում ի հայտ եկած տնտեսական խնդիրների մասին: Մասնավորապես, Ք.ա. VII դ. կեսերից սկսած գարու համար անսովոր բարձր գներ[101] և անբերրիության տարիներ են նշվում ասորեստանյան որոշ տեքստերում[102]: Պարզվում է, որ մեծաթիվ բնակիչներ ստիպված էին գոյատևել պալատի կամ տաճարների շտեմարաններից պարտքով վերցված հացահատիկի շնորհիվ[103]: Ք.ա. 650-ական թթ. երկրում տիրող երաշտի և սովի մասին են հայտնում թե՛ ասորեստանյան, և թե՛ բաբելոնյան տեքստերը[104]: Այս նույն շրջանի ասորեստանյան տեքստերում կարելի է գտնել տեղեկություններ նաև կենդանիների զանգվածային անկման մասին[105]:

---

[97] Weiss 1982, 182. Kirleis, Herles 2007, 31.
[98] Borger 1956, 102 (Gbr. I 3). Leichty 2011, 79-80 (No. 33 Obv.? ii 3).
[99] Հմմտ., օրինակ, MacGinnis, Matney 2009, 13.
[100] Տե՛ս, նաև, Lanfranchi, Parpola 1990, No. 35, 52, և այլն:
[101] Deller 1964, 260-261.
[102] Տեքստային հղումների և մեկնաբանության մասին տե՛ս Ephᶜal 2009, 125-127:
[103] Ponchia 1990, 39-60.
[104] Schneider, Adali 2014, 438-439.
[105] Fales 1995, No. 94.

Իրերին այս տեսանկյունից նայելիս ամենևին տարօրինակ չի թվում, որ այս շրջանում ասորեստանյան ընտանիքներում նկատվում է անդամների թվի կտրուկ անկում՝ միջինը 1/3-ով[106]: Ասորեստանյան պակասավոր տեքստերից մեկում, որը ներկայացնում է բնակչության վերահաշվարկ, նշվում է, մի դեպքում, 189 մարդու բացակայության մասին՝ 760 հոգուց, մյուս դեպքում՝ 334 «բացակաների» մասին՝ 1020-ից: Նույն տեքստի մեկ այլ հատվածում նշվում է 525 «բացակաների» մասին[107]: Սա կարող էր լինել թե փախուստների, և թե մահացությունների արդյունք[108]:

Միաժամանակ, ակնհայտ է դառնում, որ պետությունն ունեցել է աշխատող ձեռքի խիստ կարիք՝ ստիպված լինելով երկրագործական աշխատանքներում օգտագործելու աշխատուժի ամեն մի աղբյուր, անգամ պալատի հետ կապված տարբեր մասնագիտությունների տեր անձանց (դերձակներ, խոհարարներ և այլն)[109]: Այդուհանդերձ, հողերի մոտ կեսը մնացել է անմշակ[110]:

Եվ, վերջապես, **հինգերորդ** զուգահեռը վերաբերում է ապաբնակեցմանը: Ինչպես վերը նշեցինք, ուրարտական՝ ըստ էության, բոլոր խոշոր կենտրոնները ավերվում են և լքվում, դրանց հետ կապված երկրագործական շրջանները՝ ապաբնակեցվում: Այս իրավիճակը միանգամայն համահունչ է Ք.ա. XII դ. մերձավորարևելյան ճգնաժամի հետ: Օրինակ, Ք.ա. XIII դ. Միկենյան Հունաստանը համակած ճգնաժամի հետևանքով նրա բնակավայրերի ճնշող մասը լքվում է: Միայն Մեսսենեն Պելոպոննեսում կորցնում է իր բնակչության ավելի քան 90 տոկոսը: Այդ նույն շրջանում ապաբնակեցվում է խեթական տերության ողջ միջնաշխարհը և այլն[111]:

Ինչպես երևում է, այդ նույն երևույթը տեղ է գտել նաև Ասորեստանում: Վերևում արդեն անդրադարձանք ասորեստանյան տարածքներից նկատվող զանգվածային փախուստներին: Հնագիտական հետազոտությունները ևս վկայում են, որ Ք.ա. VII վերջերին Ասորեստանի հիմնական երկրագործական գոտիներում՝ Խաբուր և Բալիխ գետերի ավազանում

---

[106] Galil 2007, 346, Tab. 33-34.

[107] Fales, Postgate 1995, No. 159.

[108] Galil 2007, 352.

[109] Fales, Postgate 1995, No. 201 I: 32, 41-42, No. 202 II; 16′-17′, ևն:

[110] Galil 2007, էջ 348.

[111] Desborough 1975, 663-671. Косян 1998, 45-52. Քոսյան 1999, 126-127, 182-183, քարտեզ 2:

(Ջազիրա) ընկած բնակավայրերի ճնշող մասն այլևս անբնակ էր[112]: Ասորեստանի նահանգային խոշոր կենտրոնները, ինչպիսիք էին Թիլ-Բարսիպը (Թելլ Ահմար) և Թուշխանը (Զիյարեթ Թեփե), լքվում են խաղաղ կերպով[113]:

Մյուս կողմից, տեղի է ունենում ասորեստանյան ավանդույթների տեղափոխություն դեպի լեռնային շրջաններ: Այն փաստը, որ Ասորեստանի դեմ պայքարող նորբաբելոնյան բանակը Ք.ա. 611 թ. արշավում և գրավում է Թուշխանն ու Շուբրիան[114], իսկ Խառանի համար մղվող մարտերի ընթացքում՝ Ք.ա. 609 թ., արշավում նաև դեպի Իզալլա, հրդեհում ինչ-որ լեռնային ամրոցներ և վտարում ասորեստանյան (՞) արքայի հաստատած կայազորները՝ հասնելով մինչև «Ուրարտուի մարզը»[115], կարող է լինել դրա վկայությունը:

Էթնիկական տեղաշարժեր

Ամփոփ անդրադառնանք կլիմայական փոփոխությունների հետևանքով տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերին: Հայտնի է, որ հին Առաջավոր Ասիայի պատմության մեջ վկայված՝ բնակչության զանգվածային տեղաշարժերը փոխկապակցված էին կլիմայական գործոնների հետ. կարելի է նշել կուտիների արշավանքները դեպի Աքքադ և Աքքադի թագավորության կործանումը, խուռիների նոր ալիքն ու լայն տարածումը Սիրիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Միջագետքում Ք.ա. XVIII-XVII դդ., հյուքսոսների արշավանքները դեպի Եգիպտոս և Միջին թագավորության կործանումն այդ օտարականների կողմից[116]: Այլ օրինակներից են Ք.ա. XII դ. մերձավորարևելյան ճգնաժամի հարուցած՝ բնակչության զանգվածային տեղաշարժերը՝ ի դեմս «Ծովի ժողովուրդների», որոնց տեսնում ենք Փոքր Ասիայի հարավում և լևանտյան տարածքներում[117], կամ մուշկերի և աբեշլայցիների հայտնվելը Հայկական լեռնաշխարհի հարավում այդ նույն շրջանում և այլն[118]:

---

[112] Bunnens 1997, 28. Kuhrt 1995, 239. Ur, Wilkinson 2008, 309. MacGinnis, Matney 2009, 14-15: Հմմտ. Kühne 1995, 83.

[113] Bunnens 1997, 28. MacGinnis, Matney 2009, 14-15:

[114] Parpola 2008, 13-14. Հմմտ. Glassner 2004, 222-223 (No. 22: 53-55).

[115] Glassner 2004, 224-225 (No. 22: 66-75).

[116] Ամփոփ տե՛ս Քոսյան 1998, 127-128:

[117] Sandars 1978. Քոսյան 1999, 92-97: Issar, Zohar 2007, 167-176.

[118] Տե՛ս, օրինակ, Grayson 1991, 14 (A.0.87.1: i 62-88), 33 (A.0.87.2:18-22): Պատմահնագիտական վերլուծության համար տե՛ս Քոսյան 1999, 155-167:

Ք.ա. VIII դ. վերջերից սկսվում են կիմմերական արշավանքները, որոնց այնուհետև հանդիպում ենք Առաջավոր Ասիայի գրեթե ողջ տարածքում՝ Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիա, Իրանական բարձրավանդակ և Լևանտ[119]: Ք.ա. VII դ. առաջին քառորդին հայտնվում են սկյութները՝ Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում մի պահ խաղալով լրջագույն դերակատարություն[120]: Խիստ ակտիվանում են մարերն Իրանական բարձրավանդակում[121], որտեղ նկատվում է նաև բնակչության շարժունակության կտրուկ աճ, իսկ մարական կենտրոններն այստեղ ինչ-որ ժամանակ անց լքվում են[122]: Այս համատեքստում անհնար է շրջանցել նաև քննարկվող շրջանի կարևորագույն իրադարձություններից մեկը՝ հունական մեծ գաղութացումը, ընդ որում, գաղութացման հիմնական փուլը տեղ է գտել հենց Ք.ա. VII դ.[123]:

Այս բոլոր տեղաշարժերի դրդապատճառը կարող էր լինել կլիմայի չորացումը, ինչպես ժամանակին առաջարկել է նաև Չարլզ Բըրնին կիմմերների և սկյութների տեղաշարժերի դեպքում[124]: Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, ապա այստեղ ևս կարելի է տեսնել տեղաշարժերի մի քանի ուղղություն՝ Փոքր Ասիայի արևելյան՝ վերինեփրատյան տարածքներից դեպի Հայկական լեռնաշխարհ (Թիլ-Գարիմմու/Տուն Թորգոմա)[125], մարերի/իրանական ցեղերի հնարավոր շարժումը դեպի մերձարաքսյան գոտիներ, որոնց դեմ էր, հավանաբար, Արգիշտի Ռուսայորդու հեռավոր արշավանքը Կասպից ծովի ուղղությամբ[126], սկյութների կամ ավելի ճիշտ՝ սկյութա-էթիունյան համագործակցության լայն ակտիվությունը լեռնաշխարհի գրեթե ողջ տարածքում, որոնք էլ, ինչպես կարծում ենք, վերջին հարվածը հասցրեցին ուրարտական երերացող տերությանը[127]:

---

[119] Diakonoff 1992, 168-193. Քոսյան 1999, 240-254. Grekyan 2014, 158.
[120] Տե՛ս, օրինակ, Дьяконов 1994, 108-109.
[121] Տե՛ս, օրինակ, Diakonoff 1985, 101-109.
[122] Տե՛ս, օրինակ, Stronach 2003, 236. Stronach, Roaf 2007, 217-218.
[123] Graham 1982, 160-162.
[124] Burney 1972, 185.
[125] Քոսյան 1999, 256-257:
[126] КУКН, Nos 409-410; CTU I, A 11-4, A 11-5, A 11-6.
[127] Grekyan 2014, 160-161:

Հնակլիմայաբանական ուսումնասիրություններ

Որքան մեզ է հայտնի, Հայկական լեռնաշխարհի հնակլիմայաբանական, հնաբուսաբանական համալիր ուսումնասիրություն գոյություն չունի[128]: Որքանով որ կարող ենք դատել առկա աշխատանքներից՝ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում՝ Ք.ա. 700-600 թթ. սահմաններում, դիտարկվում է Միջերկրական և Հոնիական ծովերի ջրի ջերմաստիճանի անկում, որն ուղիղ համեմատության մեջ է Մերձավոր Արևելքում տեղումների քանակի նվազման հետ: Տեղումների քանակի վրա ազդող մեկ այլ գործոն է Ատլանտյան օվկիանոսում մթնոլորտային և օվկիանոսային հոսանքների շրջանառության տատանումը (North Atlantic Oscillation – NAO): Մասնավորապես, «Հյուսիսատլանտյան տատանման» ազդեցությունը Հայկական լեռնաշխարհը, Սիրիան և Միջագետքը սնուցող Եփրատի և Տիգրիսի ջրերի հոսքի ծավալի վրա կարող է կազմել տարեկան մինչև 40%[129]: Կլիմայի չորացում է նկատվում արևելամիջերկրածովյան տարածքներում Ք.ա. 700 թ. սահմաններում[130]: Հնակլիմայաբանական ուսումնասիրությունները եղանակային չոր պայմանների մասին են վկայում կենտրոնական փոքրասիական տարածքներում Ք.ա. 670-630-ական թթ. վերաբերյալ: Այդ նույն ուսումնասիրությունների համաձայն՝ Ք.ա. VII դ. կեսերը համարվում են Հոլոցենի առավել չորային շրջաններից մեկը[131]: Այդ ամենը կարող էր պայմանավորված լինել արևի ակտիվության նվազման հետ[132]: Այս երևույթները, որ դիտարկվում են Ք.ա. XII դ. մերձավորարևելյան ճգնաժամի ընթացքում նույնպես, գուցե նպաստեն հասկանալու համար թե՛ ուրարտական և թե՛ ասորեստանյան արքաների իրականացրած ակտիվ, իսկ Ուրարտուի դեպքում, թվում է, անգամ հախուռն հիդրոշինարարությունը:

Եզրահանգում

Ուրարտուում «Ք.ա. VII դ. ճգնաժամի» դրսևորումներն ու հետևանքները կարելի է համախմբել հետևյալ կետերում.

---

[128] Առկա ուսումնասիրություններից տե՛ս Lamcke 1997, 653-678. Wick et al. 2003, 665-675.

[129] Cullen, deMenocal 2000, 853, 861.

[130] Langgut et al. 2013, 155-157, 161-162.
Военный аспект Армянского вопроса в начале 1920 г.

Затем, 21 февраля 1920 г., европейцы заявили Погосу Нубару, А. Агароняну и генералу Г. Корганяну на Лондонской конференции о невозможности выделить войска и услышали, что армяне сами займут

[19] US NA, RG 59 General Records of the Department of State, 861.00/1175a:Telegram.
[20] НАА, ф. к. 1021, оп. 2, д. 962, л. 123.
[21] Maintenance of Peace, 1919, 28, 70, 100.
[22] НАА, ф. к. 1457, оп. 1, д. 178, л. 7.
[23] НАА, ф. 200, оп. 1, д. 431, л. 42 и 43.

западные провинции. К 19 марта 1920 г. Сенат США официально отверг османские мандаты; тем не менее, 25 марта на Лондонской конференции было принято решение о передаче объединенному армянскому государству Вана, Битлиса, Эрзерума и Трапезунда. При этом новый госсекретарь Б. Колби разъяснил председателю Армянского национального союза Америки М. Свазляну, что США предоставят грузы помощи и оружие, но солдатами армяне должны были обеспечить себя сами. В то же время в Турции готовились воспротивиться Мирному договору, и было весьма вероятным, что через "шесть месяцев ситуация ухудшится"[24].

Итак, армянским политикам подтвердили, что РА может рассчитывать только на свою армию, и никто не гарантирует ей мира на протяжении последующих шести месяцев при любом содержании документа. Тем не менее, дипломатическое представительство РА в Тифлисе оптимистично писало в своем информационном бюллетене от 21 апреля 1920 г. для ереванских властей о включении в расширенную Армению Ванской, Битлисской и Эрзерумской провинций, с передачей французам мандата на Киликию[25].

Далее, 22-23 апреля Погос Нубар и А. Агаронян дважды заявили в Сан-Ремо о готовности солдат РА занять западные провинции. В то же время 23 апреля США признали правительство Еревана де-факто, а 24-го числа Агаронян предложил продвинуть границу еще на 150 км., чтобы охватить Ерзнку. Автор этой инициативы отрицал опасность возможного нападения националистов в Эрзеруме, хотя и признавал, что последних "не вытеснить без... значительных войск союзников." Армию М. Кемаля он назвал "не столь многочисленной, ...плохо вооруженной и плохо оснащенной," повторив при этом, что "армяне были вполне способными самостоятельно захватить Эрзерум, если Союзники предоставят достаточно оружия, боеприпасов и окажыт моральную

[24] House of Lords, 11.03.1920 - "The Times", Lnd., March 12:10, 1920, хранится: там же, ф. 200, оп. 1, д. 427, л. 104 об.

[25] Там же, д. 576, л. 247 об.

поддержку”[26].

На такой волне 26 апреля конференция в Сан-Ремо пригласила президента США стать пограничным арбитром. 17 мая президент дал согласие и 24-го числа направил послание Конгрессу, чтобы ему разрешили принять опеку. При этом В. Вильсону “не удалось определить территорию, на которую должен был распространиться мандат, его сроки и условия, необходимые расходы и обязанности, а также преимущества и выгоды для США.” Он “не привел веских доводов, основанных на американских национальных интересах, включая возможности инвестиций, рынка, а также других экономических и стратегических соображений”[27]. По оценке А. Агароняна, “Вильсон, хорошо понимая, что его предложение обязательно будет отклонено, …тем не менее, обратился, чтобы снять с себя ответственность”[28]. А поскольку арбитр выносил решение только после заключения договора или его ратификации, то весь процесс опять был приостановлен. Даже “Нью-Йорк Таймс” оповестила весь мир о том, что у главы admини-страции нет ни малейшего шанса на Капитолии.

И действительно, 1 июня 1920 г. Сенат проголосовал против армянского мандата. Президенту оставили лишь пограничный арбитраж в пределах четырех вилайетов. Что касается Закавказья, то его республики должны были сами прийти к взаимному соглашению. Казалось, оформить границы будет несложно: ведь их уже согласовали в Лондоне. Вильсону было достаточно назвать конкретные меры военно-политической поддержки и можно было перейти к их реализации. Но этого не произошло.

Работа над пограничным арбитражем до лета 1920 г.

В русле арбитражной работы, 14 июня 1920 г. Объединенная армянская делегация в Париже и дипломаты РА в Соединенных Штатах

---

[26] Там же, д. 556, л. 314 – см. его письмо послу США в Италии Р. Джонсону.

[27] Ованнисян 2007, 687.

[28] См. его письмо премьер-министру РА А. Оганджаняну от 25.05.1920: НАА, ф. 200, оп. 1, д. 290, л. 144.

направили президенту письмо и четыре меморандума: “Население Армении”, “Топографические особенности наземных коммуникаций”, “Нота о выходе к морю” и “Нота о границах Армении” А. Багратуни. К ним добавили справки “Об армянской иммиграции” от 26 февраля и три записки “О границах Армении” от 21, 23 февраля и 2 марта 1920 г.[29] Заметим, что генерал Багратуни тесно сотрудничал с членами президентского Комитета по границам В. Вестерманом, Г.Г. Дуайтом.

Уже накануне подписания в Севре – 6 августа 1920 г. – госсекретаря Колби попросили поскорее прислать решение Вильсона о границах. Он ответил: “Изучение и проверка различных исторических и картографических документов… требовали достаточного времени”[30]. Между тем кемалисты успешно наращивали их военно-финансовый потенциал. Так, лондонское Армянское бюро указывало в депеше для Госдепартамента на угрозу турецкой агрессии и на необходимость передышки для республиканских войск хотя бы до весны 1921 г. Армия республики не могла перейти сейчас в наступление, так как РА “вела борьбу за свое существование” даже в пределах собственных границ[31].

Через месяц Верховный комиссар США М. Бристоль добавил: никто не поверит, что турки “выведут войска с любой передаваемой Армении территории, если их не заставят это сделать”. И вообще, союзникам “придется принуждать их признать договор”[32]. Затем, в самом начале турецко-армянской войны – 28 сентября – Вестерман, Л. Мартин и Дуайт передали в Госдепартамент “Полный отчет Комитета об арбитраже границы между Турцией и Арменией”. Их документ стал результатом заседаний, длившихся с 10 августа по 11 ноября 1920 г., когда бумаги были вручены Вильсону. 22 ноября президент подписал “Полный отчет”. В

---

[29] НАА, ф. 200, оп. 1, д. 557, л. 393.

[30] US NA, RG 59, 760J.6715/40; Papers Relating, 1920, in 3 vols., vol. III, Wash., 1936, p. 787.

[31] United States National Archives Microfilm Publications, Records of the Department of State Relating to Internal Affairs of Armenia, 1910-1929, T1192, Roll 7, NA and Records Service, General Services Administration, Wash., 1975, RG 59, 860J.48/43/ folio 2, хранится в: НАА, коллекция микропленок № 36 (далее: US NA, T1192/R7/км).

[32] Papers Relating, 1920, III, 788; US NA, RG 59, 760J.6715/23:Telegram.

нем были максимально учтены этнографические данные, но отправной точкой служили экономические и военно-стратегические соображения.

“Полный отчет Комитета об арбитраже”.

Так, составители записки не одобряли торговлю через прорусский Батум, отдавая предпочтение Трапезунду. В этом направлении либо в Тиреболи было намечено строительство железных дорог из Эрзерума, Битлиса и Вана[33]. Описывая демилитаризованную зону вдоль новой границы, генерал-майор Харборд указывал, что разоружение турок потребует силы, а вооружать христиан опасно. Поэтому размещение иностранных войск неизбежно заставит их приступить к действиям. Значит, оставалось надеяться на местную жандармерию, подчиненную межсоюзнической комиссии. Корпус жандармов в 50 тыс. чел., являвшихся представителями обеих религий, мог бы использовать пушки только против серьезных волнений.

Демилитаризованная полоса турецкой территории имела ширину в 80 км., и ее можно было распространить на вилайеты Диарбекир и Харберд[34]. Полосы шириной в 40–80 км. было достаточно для совместных зон свободной торговли и льготного экономического сотрудничества. Поэтому Мартин хотел создать такие мирные территории и в будущем курдском государстве на юге.

Майор С.Г. Мейсон также считал массовое разоружение недостижимым. Поскольку Армения прикрывала фланги давно противоборствующих великих национальных интересов, она становилась объектом соперничества и нападений. В списке возможных мер сдерживания офицер перечислил слабое экономическое развитие приграничья, включая скудную сеть железных и шоссейных дорог. Вслед за этим следовал запрет на расширение контингента солдат и накапливание арсеналов, на строительство военизированных поселеникй. Все это подлежало постоянному контролю со стороны нейтральной державы. Причем если

---

[33] Ibid., doc. 65/f. 83, 85, 88, T1193 Records of the Department of State of Rlating to Political Relations Between Armenia and Other States, 1910-1929/R2/км 35. См. также: Ованнисян 2007, 710-719.

[34] US NA, RG 59, 760J.6715/65/f. 91-93/T1193/R2/км 35.

Харборд и Мартин размещали зону на турецкой стороне границы, то Мейсон распространял ее на оба государства[35].

Все трое потребовали, чтобы офицеры-жандармы контролировали только одну сторону границы[36]. Эксперты принимали реализацию мер доверия обеими сторонами Севрского договора, но принудительному ограничению и постоянному контролю подвергался лишь зачинщик агрессии и геноцида.

По оценкам комитета, до войны в регионе проживало 3 млн. 570 тыс. человек (40% из них – армяне, 49% – все мусульмане, 4% – греки, 5% – лазы и 1% – езиды, русские и другие). В 49% мусульман входила явно заниженное американцами число курдов – всего 5%[37]. После переселений и репатриации численность населения в послевоенном государстве могла достигнуть 3 млн. чел. (50% из них – армяне, до 40% – турки, курды и кавказские татары, 3% – греки, 6% – лазы, и постоянный 1% – езиды, русские и христиане-халдеи). Мир и свое безопасное государство создавали для следующего поколения армян благоприятные условия для быстрого и продолжительного роста их численности[38].

В политике ожидалась британская поддержка независимой Армении, хотя "прибрав к рукам" Азербайджан, большевики заметно усилились. Их приобретение значительно укрепило как советско-турецкий альянс, так и Кемаля. Авторы "Полного отчета" отметили: движение националистов "будет крайне опасным для армянского государства, если большевистские лидеры... решительно осуществят их план"[39]. Члены комитета сообщали о малочисленных, но хорошо обученных войсках РА: "Им недавно поставили оружие и боеприпасы, а общая политическая ситуация благоприятствует их успеху. Сами они уверены в их способности вести войну против слабых сил националистов и уста-

[35] Там же, f. 97.

[36] Там же, f. 101-102.

[37] Там же, f. 134.

[38] Там же, f. 135-136.

[39] Там же, f. 144. Месяцем ранее аналогичное мнение высказал и работавший в Грузии дипломат РА князь М. Туманян, в своем письме консулу Ч. Мозеру от 14.08.1920. US NA, 860J.00/ 4/Encl. 1/f. 8, T1192/R1/км 49.

новить контроль в четырех восточных вилайетах. Беспокоящим… фактором в ситуации является – что именно… сделают большевистские лидеры, чтобы содействовать сопротивлению турецких националистов. При отсутствии мандатного надзора одной из великих держав дальнейшее поддержание армянской независимости сомнительно." При новом столкновении давних сил "Армении, может быть, лучше перейти в сферу защиты какой-либо великой державы, возможно России, и таким образом сохранить огромную меру ее своеобразия и независимости"[40].

И вместо возмещения за резню новое государство обязали выплатить 33,5 млн. долл. в счет оттоманского долга, вместе с 2,1 млн. в год на его обслуживание. Ежегодные доходы, которые должны были быть направлены на управление новой республикой, оценивали в 5 млн. долл.[41] В целом положение дел в республике считалось удовлетворительным. Поэтому США рекомендовали выдать новому государству небольшие кредиты и направить туда технических советников.

Влияние турецко-армянской войны 1920 г.

Ознакомившись с "Полным отчетом", 18 октября 1920 г. госсекретарь Колби получил заверенную копию Севрского договора. 28-го числа Пастрмаджян встретился с его заместителем Н. Девисом[42]. Посланник РА рассказывал о стабильности, включая превосходный моральный дух населения и солдат. Он отметил, что Ереван осознавал всю тяжесть войны на два фронта, но не уступал большевикам, не допуская вступление Красной армии и сохраняя права на Севр. Между тем, уже 5 ноября 1920 г. депеша Оганджаняна на имя президента Вильсона оповещала: "Изнуренная борьбой, …потеряв Карс и оказавшись накануне потери Александрополя, Армения вынуждена воззвать к вам в последний раз с просьбой… вмешаться в вооруженный конфликт и дипломатическим путем заставить врага прекратить его военные действия." Через день тот же автор добавил: его страна "была вынуж-

[40] Ованнисян 2007, 718-719; US NA, 760J.6715/65/f. 149, T1193/R2/км 35.
[41] Там же, f. 151.
[42] Там же, 860J.00/-/f. 2, T1192/R1/км 49.

дена подписать сегодня, 7 ноября, перемирие”[43].

Следующий призыв о помощи, обращенный к консулу Ч. Мозеру 11-го числа, гласил: “Турецкое наступление на Александрополь, последовавшее за взятием Карса, пока приостановлено нашими войсками прямо под Александрополем. Турки атакуют станцию Кизил-Чахчах, взятие которой решит участь” этого города. Его оккупация выглядит неизбежной.

“В этих обстоятельствах… ничего не остается, кроме как принять исходящее от турок предложение о перемирии,” а значит – сдать врагу городскую крепость и вокзал. Считаю моим долгом выразить “вполне понятное чувство ужаса, с которым мое правительство согласилось предпринять этот шаг. …Терпение истерзанного и стонущего армянского народа приходит к концу.” Этот народ принял “перемирие, которое, в других условиях и при хотя бы незначительной поддержке союзников, он бы отверг с негодованием и несокрушимой твердостью.” Трагическое положение Армении “становится еще более очевидным, если учитывать, что 1) это новое бедствие обрушилось… после признания ее Республики де-юре… в Севрском договоре, и 2) что после его подписания множество беженцев прибыли из России, Европы и Константинополя, …заторопившись вернуться на родину, а тут они снова должны подвергаться смертельным ударам; а также 3) соображение, что этот разгром развертывается… с ведома союзников, не пожелавших оказать Армении реального содействия”[44].

Политические выводы из ситуации конца 1920 г.

Как известно, Азербайджан тоже действовал в условиях советско-турецкого альянса. Однако там своевременно изменили курс и многое приобрели в аналогичных нашим условиях. Между тем катастрофический ход турецко-армянской войны 1920 г., обусловленный неверием масс в победу при боях на два фронта, привел к отказу РА от Севра.

---

[43] Там же, 760J.6715/47: Telegram, T1193/R2/км 35; НАА, ф. 200, оп. 1, д. 249, л. 663-664.

[44] US NA, 860J.00/17/Encl. 3, T1192/R1/км 49.

Этот отказ был оформлен в Александрополе нотой ереванской делегации от 26 ноября, зачитанной 27-го числа в ходе II пленарного заседания двусторонних переговоров[45]. Между тем при подготовке Севрского договора были проработаны и согласованы все его технические аспекты. Однако практическую, особенно военную реализацию договора оставляли исключительно армянам. В целом, анализ нератифицированного воевавшими сторонами, но сыгравшего важную роль Севрского договора поможет лучше понять политическую историю и адекватно ориентироваться в современных, часто непростых ситуациях.

Литература

Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., 2012, Махмурян Г.Г. (сост. и пер. с англ.), Ереван, "Институт истории НАН РА", 560 с.

Ованнисян Р. 2007, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ереван, "Тигран Мец", 912 с.

Բ. Լեզրանի միսսիան, Дипломатическая миссия РСФСР в Армении, 1967, Саркисян Е.К. (изд.), Вестник архивов Армении, № 3, Ереван, с. 21-104.

Խատիսեան Ա. 1968, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պեյրութ, «Համազգային», 487 էջ:

Hovannisian R. 1996, The Republic of Armenia, vol. IV. Between Crescent and Sickle: Partition and Sovietization, Berkeley & Los Angeles, "University of California Press", 496 p.

Maintenance of Peace in Armenia, 1919, Hearings before a Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, 66th Congress, 1st Session on S.J.R. 106. A Joint Resolution for the Maintenance of Peace in Armenia, Wash., GPO, 125 p.

Papers Relating to the Foreign Relations of the United States, 1934, 1919, in 2 vols., vol. II, Wash., GPO, 913 p.

Papers Relating to the Foreign Relations of the United States, 1936, 1920, in 3 vols., vol. III, Wash., GPO, 832 p.

[45] НАА, ф. 200, оп. 1, д. 602, л. 377; оп. 2, д. 104, л. 8; Բ. Լեզրանի միսսիան, 1967, 93-94; Hovannisian 1996, 364-365.

ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի 1919-1920 ԹԹ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գայանե Մախմուրյան

Սևրի դաշնագիրը և ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի սահմանային իրավարար վճիռը ի հայտ են բերում Միացյալ Նահանգների դժկամությունը հայերի՝ տնտեսապես քիչ շահավետ խնամակալության հանդեպ: Ամերիկայի սենատորները ՀՀ դիվանագետներին զգուշացնում էին պայմանագրի՝ թուրքական լայնածավալ հարձակման համար առիթ դառնալու մասին, իսկ Վաշինգտոնի բոլոր ձգձգումները Երևանի իշխանություններին չեն օգնել հաղթանակ տանելու քեմալականների դեմ ռազմակազմակերպչական ու քաղաքական մրցասպարեզում: Սա հանգեցրեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմում ծանր պարտության ու Սևրի դաշնագրից պաշտոնապես հրաժարվելուն, որը ձևակերպվեց Ալեքսանդրապոլում նույն թվականի նոյեմբերի 26-27-ին: Սևրի դաշնագիրը միաժամանակ ընդգրկել է Հակական հարցի կարգավորման տեխնիկական բազում լուծումներ:

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագիրը, 1919-1920 թթ. Փարիզի վեհաժողովը, ԱՄՆ, Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, հայկական մանդատ, Պողոս Նուբար, Ա. Ահարոնյան:

СЕВРСКИЙ ДОГОВОР И РЕСПУБЛИКА АРМЕНИЯ В ПОЛИТИКЕ США 1919-1920 гг.

Гаянэ Махмурян

Севрский договор и процесс пограничного арбитража В. Вильсона показали слабую заинтересованность США в недостаточно выгодном армянском мандате. Американские сенаторы предупреждали дипломатов Республики Армения, что договор станет поводом к широкомасштабному турецкому нападению. Все проволочки в ходе переговоров не помогли Еревану выиграть соревнование с кемалистами в военной или политиче-

ской сфере. Эта неудача привела к тяжелому поражению в турецко-армянской войне 1920 г. и официальному отказу от Севрского договора, оформленному 26-27 ноября того же года в Александрополе. В то же время Севрский договор содержит множество технических решений, полезных для урегулирования Армянского вопроса.

Ключевые слова – Республика Армения 1918-1920 гг., Севрский договор 10 августа 1920 г., Парижская мирная конференция 1919-1920 гг., США, арбитражное решение В. Вильсона, армянский мандат, Погос Нубар, А. Агаронян.

THE SEVRES TREATY AND THE REPUBLIC OF ARMENIA IN THE U.S. POLICY OF 1919-1920

Gayane Makhmurian

The shaping of the Sevres Treaty with the U.S. President W. Wilson's border arbitrary award revealed the U.S. unwillingness to put Armenians in ward, since it was insufficiently profitable. American Senators warned diplomats of the Republic of Armenia that the Treaty would urge the wide-front Turkish offensive. All procrastinations of Washington in negotiations did not help the official Erivan to compete the Kemalists neither in the sphere of formation and operation of the armed forces, nor in politics. This failure resulted in the heavy defeat, suffered in the Turkish-Armenian war of 1920 and led to the official repudiation of the Sevres Treaty; it was arranged on November 26-27 of the same year in Alexandropol. At the same time, the Sevres Treaty contained a lot of engineering solutions, usable for a settlement of the Armenian question.

Key words – Republic of Armenia 1918-1920, Sevres Treaty of August 10, 1920, Paris Peace Conference 1919-1920, USA, arbitrary award of W. Wilson, Armenian mandate, Poghos Nubar, A. Aharonian.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրի Սուվարյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար
ք. Երևան 0019, Մարշալ Բաղրամյան 24
էլ. հասցե՝ suvaryan@sci.am
Հոդվածը ներկայացվել է 30.05.2019, գրախոսվել է 03.09.2019, ընդունվել է տպագրության 15.08.2019

Ներածություն

Արդի հարափոփոխ աշխարհում տնտեսական, սոցիալական և անգամ քաղաքական զարգացումների հիմքը գիտատեխնիկական առաջադիմությունն է, որը պայմանավորում է նոր տեխնոլոգիաների ստեղծումը, երկրների մրցունակությունը միջազգային շուկայում, դիրքը քաղաքական հարթակներում, բնակչության կենսամակարդակը և սոցիալական պաշտպանվածությունը: Այս առումով յուրաքանչյուր երկիր երաշխավորված ապագա կարող է ունենալ, եթե կարևորում է զարգացման ռազմավարական ծրագիրը, որի միջուկը գիտության և կրթության, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի հիմքի վրա տնտեսության տեխնոլոգիական անընդհատ զարգացման ապահովումն է: Ահա թե ինչու տնտեսական աճի համար հարկ է կարևորել դրա որակական բաղադրիչները, որոնք գլխավորապես տնտեսություն–գիտություն–կրթություն փոխառնչություններում են, որն ապացուցվում է մարդկային քաղաքակրթության վերընթաց զարգացման դարավոր պատմությամբ: Իսկ որակական բաղադրիչները բովանդակում են քանակական զարգացման թե՛ խթանները, թե՛ արգելակները:

1. Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները

Հայտնի ճշմարտություն է՝ բարձր որակը առաջընթացի էական նախադրյալն է:

Գործնականում ընդունված է տնտեսական զարգացման ընթացքը բնութագրել քանակական ցուցանիշներով, որոնցից են մակրոմակարդակում համախառն ներքին արդյունքի ծավալը և աճի տեմպերը: Չնսեմացնելով դրանց կարևորությունը՝ ստորև կդիտարկվեն ոչ պակաս կարևոր որակական բնութագրիչները, որոնցից է տնտեսական զարգացման բնույթը: Եթե տնտեսական առաջընթացի քանակական ցուցանիշը աճի տեմպերն են, ապա որակական առումով այն կարող է լինել՝

– էքստենսիվ՝ նոր ռեսուրսների ներգավմամբ,

– ինտենսիվ՝ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ*,

– հումքային ուղղվածության՝ համախառն ներքին արդյունքում լեռնահանքային և գյուղատնտեսական արտադրանքի գերակշռմամբ: Ուստի՝ ՀՆԱ ճյուղային կառուցվածքը որակական ցուցանիշ է, այդպիսին է նաև աճի կառուցվածքը,

– աճի դանդաղ, կայուն կամ արագ (թռիչքային) տեմպերով,

– թողարկվող արտադրանքի բարձր որակով և մրցունակությամբ կամ հակառակը:

Տնտեսական զարգացման որակական բնութագրիչներից է նաև այն, թե ինչ տնտեսական կառուցակարգով է ապահովվում երկրի տնտեսության դինամիկան, այսինքն՝ որչափով առաջադիմական են տնտեսական համակարգը և դրա կառավարման սկզբունքները: Տնտեսությունը կարող է կառավարվել կենտրոնացված, վարչարարական մեթոդներով՝ սահմանափակելով տնտեսավարող սուբյեկտների ազատ գործունեությունը: Այդպիսին է տնտեսավարման կառուցակարգը վարչահրամայական համակարգ և պետական սեփականության գերակայություն ունեցող երկրներում, որպիսին, օրինակ, նախկին ԽՍՀՄ-ն էր: Մինչդեռ առաջադիմական է սեփականության բազմաձևության հիմքի վրա գործող շուկայական տնտեսությունը՝ ժողովրդավարական կառավարման սկզբունքներով: Վեր-

---

* Արտադրության ինտենսիվացման աստիճանը կարող է հաշվարկվել արտադրանքի և ամբողջական աշխատանքի ծախսերի հավելաճի համադրմամբ հետևյալ բանաձևով՝ $\beta = \frac{\Delta H - \Delta F}{\Delta H} \cdot 100$, որտեղ β – *և* ամբողջական աշխատանքի արտադրողականության տեսակարար կշիռն է արտադրության հավելաճում, այսինքն՝ արտադրության ինտենսիվացման աստիճանը, ΔH-ն արտադրության ծավալի հավելաճն է, ΔF – *ամբողջական աշխատանքի (կենդանի և առարկայացած) ծախսերի հավելաճն է* (Տե՛ս մանրամասն Суварян 1987, 129-131):

ջին դեպքում արտադրանքը և ծառայությունները ունենում են միջազգային շուկայում մրցունակություն և բարձր որակ: Մեկ այլ որակական բնութագրիչ է այն, թե որչափով հավասարաչափ են բաշխվում տնտեսական աճի շնորհիվ ստեղծված բարիքները հասարակության անդամների միջև, որը պայմանավորված է երկրում տիրապետող քաղաքական ու տնտեսական համակարգով և հետադարձ ազդեցություն կարող է ունենալ տնտեսական զարգացման ընթացքի վրա: Եկամուտների անհավասարաչափ բաշխումը համաշխարհային երևույթ է, այն բնորոշ է նաև շատ զարգացած երկրների, անգամ ԱՄՆ-ին[2], սակայն դա համահարթելու կամ մեղմացնելու խնդիրը մնում է արդիական ու կարևոր բոլոր երկրների համար:

Վերը նշվածի առումով ուշագրավ է, որ հայկական մամուլում նկատվում են դիտարկումներ «տնտեսական հեղափոխություն» արտահայտության՝ իբրև տնտեսական զարգացման բնույթի վերաբերյալ: Դրական վերաբերմունքի հետ մեկտեղ հաճախ որոշ մասնագետներ գտնում են, որ տնտեսությունը սիրում է կայունություն, ուստի դրա համար հեղափոխությունը չի կարող բնութագրական լինել: Իսկ ի՞նչ է հեղափոխությունը: Հայտնի է հարցադրման հանրագիտարանային պատասխանը. այն որևէ երևույթի խոր որակական փոփոխությունն է և տարբերվում է թե՛ էվոլյուցիոն զարգացումից, թե՛ բարեփոխումներից: Տեսության մեջ և պրակտիկայում գործածական է և ընդունված քաղաքական, սոցիալական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական ոլորտներում կտրուկ, արմատական փոփոխությունները կոչել հեղափոխություն: Պատմությանը հայտնի են այդ բնույթի շատ հեղափոխություններ: Հատկապես գիտատեխնիկական, տեխնոլոգիական հեղափոխություններն էականորեն նպաստել են հասարակական ու տնտեսական առաջընթացին: Մասնավորապես, հայտնի են միջազգայնորեն ընդունված տեխնոլոգիական հեղափոխության փուլերը և դրանց բնութագրիչները՝

– արդյունաբերական հեղափոխություն (XVIII դ. 60-ական թվականներ),
– ստանդարտացում և մեքենայացում (XVIII դ.),
– հոսքային հավաքման գծեր (1913 թ.):

ՌԳԱ ակադեմիկոս Ս. Գլազևը տեխնոլոգիական հեղափոխության շրջանակներում առանձնացնում է տեխնոլոգիական կացութաձևերը՝ հա-

[2] Стиглиц 2019, 85-91.

մապատասխան առանցքային գործոններով, տեխնոլոգիական միջուկով, առանձնահատկություններով և ինստիտուցիոնալ կառուցվածքով[3]:

Կարո՞ղ է լինել նաև տնտեսական հեղափոխություն: Այս հարցի պատասխանի համար հարկ է դիտարկել տնտեսական համակարգերի փոփոխությունների պատմական ընթացքը:

Տնտեսական համակարգը սերտորեն շաղկապված է քաղաքական համակարգին, դրա բաղադրիչն է, ուստի դրանց փոփոխությունները տեղի են ունենում միասին և միաժամանակ: Հայտնի է, որ քաղաքական համակարգի փոփոխությունը զուգակցվում է սեփականատիրական հարաբերությունների, տնտեսական կառուցակարգերի, կառավարման սկզբունքների և կառուցվածքների փոխակերպումներով: Օրինակ, XX դարի 90-ական թթ. սկզբին նախկին ԽՍՀՄ տարածքում, նաև Հայաստանում տեղի ունեցան լուրջ քաղաքական փոփոխություններ: Ըստ այդմ՝ արտադրության միջոցների պետական սեփականությունը մեծ մասամբ մասնավորեցվեց, տիրապետող դարձավ սեփականության բազմաձևությունը՝ մասնավորի առաջատար դերով, էականորեն փոխվեց դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը, ազատականացվեցին գները, արտաքին առևտուրը, ըստ էության ստեղծվեց տնտեսական գործող համակարգից տարբերվող որակապես նոր համակարգ՝ համապատասխանելով քաղաքական նոր իրողություններին: Փոփոխությունների նկարագրված համալիրը, որ վերաբերում է տնտեսական համակարգի բազային բաղադրիչներին, բովանդակությամբ լիովին համապատասխանում է հեղափոխության բնութագրությանը, ուստի տեսականորեն և գործնականում տնտեսական հեղափոխություն կարող է լինել, եթե տեղի ունեցող փոփոխություններն ընդգրկում են ողջ տնտեսական համակարգը:

Տնտեսական համակարգում արմատական փոփոխությունները տրամաբանորեն կարող են հանգեցնել էական փոփոխությունների տնտեսական աճի տեմպերի և բնույթի առումով: Սակայն սա վերաբերում է նոր համակարգի ներուժային հնարավորությանը, որի գործնական դրսևորումը պայմանավորված է բազմաթիվ քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, ընդհանուր առմամբ՝ ներքին և արտաքին միջավայրերի գործոններով: Նոր տնտեսական համակարգը կարող է ապահովել բարձր տեմ-

[3]Глазьев 2018, 200-213.

պերով ու նոր որակական զարգացում, եթե դրա համար ստեղծվում է նպաստավոր ներքին և արտաքին միջավայր:

2. Տնտեսական զարգացման գերակայությունները

Տնտեսական զարգացման որակական ցուցանիշների փոփոխության միտումների առումով անդրադառնանք տնտեսական զարգացման կարևորագույն գերակայություններին, որոնք էական են տնտեսական զարգացման թե՛ որակական, թե՛ քանակական բաղադրիչների արմատական փոփոխության համար: Ըստ այդմ՝ նախ դիտարկենք տնտեսություն-գիտություն-կրթություն փոխառնչությունները: Ժամանակակից տնտեսության զարգացման հիմքը առաջադիմական, մրցունակ տեխնոլոգիաներն ու բարձր որակավորման կադրերն են: Կան տնտեսության ճյուղեր, որոնց արտադրություններին բնորոշ են արագ փոփոխվող տեխնոլոգիաները, այսինքն՝ խիստ գիտատար են, զգայուն են նորի հանդեպ և արագ են արձագանքում գիտատեխնիկական զարգացումներին: Այդ ճյուղերից են ճշգրիտ մեքենաշինությունը, քիմիա-կենսաբանական արտադրությունները, դեղագործությունը և այլն: Նման արտադրությունների համար պահանջարկված է գիտությունը, հատկապես իր կիրառական մշակումներով: Տնտեսության որոշ ճյուղեր, ինչպիսիք են, օրինակ, սննդի և թեթև արդյունաբերությունը, համեմատաբար պակաս չափով են արձագանքում նոր գիտատեխնիկական մշակումներին՝ ապավինելով ավանդական տեխնոլոգիաներին: Ուստի տնտեսության ճյուղային ու բարձրագույն և մասնագիտական կրթության կառուցվածքի, ինչպես նաև տնտեսության և գիտության մշակումների նկատմամբ պահանջարկի միջև գոյություն ունեն որոշակի փոխառնչություններ:

Հետևաբար, ռազմավարական առումով և պետականորեն հարկ է կարևորել այնպիսի արտադրությունների բուռն զարգացումը, որոնք կարող են լոկոմոտիվի գործառույթ կատարել տարբեր ոլորտների և խնդիրների լուծման համար: Այդպիսիք են, մեր համոզմամբ, գիտատար և աշխատատար, քիչ նյութատար ճշգրիտ մեքենաշինական արտադրությունները: Դրանց զարգացումը կարող է ստեղծել աշխատատեղեր, նպաստել քաղաքացիական նշանակության սարքավորումների և պաշտպանական բնույթի արտադրատեսակների թողարկման ընդլայնմանը:

Ներկայումս մեր հանրապետությունում գիտական արդյունքների և բարձր որակավորման ինժեներատեխնիկական կադրերի, բնական գի-

տությունների ներկայացուցիչների հանդեպ պահանջարկը համեմատաբար նվազել է, ինչը ՀՆԱ և մշակող արդյունաբերության ճյուղային դեֆորմացված կառուցվածքի հետևանք է (աղ. 1 և 2): ՀՆԱ-ում մշակող արդյունաբերության բաժինը 11% է, իսկ գյուղատնտեսության տեսակարար կշիռը ավելի բարձր՝ 14-15%, ծառայությունների (առևտուր, կրթություն, առողջապահություն, բնակչության սոցիալական սպասարկում, մշակույթ, զվարճություններ, հանգիստ և այլն)՝ հատվածը՝ ավելի քան 25%: Ավելի անմխիթար է արդյունաբերության կառուցվածքը. հանքագործական և բաց հանքերի շահագործման ոլորտը կազմում է ամբողջի 15.5 (ՀՆԱ-ի՝ 3), մշակող արդյունաբերությունը՝ 69.8%: Վերջինիս կառուցվածքում սննդի արտադրությունների բաժինը հասնում է 63.3, թեթև արդյունաբերությանը՝ 4.6, մեքենաշինական արտադրանքինը՝ 2.3, քիմիական և դեղագործական արտադրությունների տեսակարար կշիռը՝ 1.9%: Հանրագումարում զուտ գիտատար արտադրանքի հատվածը (մեքենաշինություն և քիմիա-դեղագործություն) կազմում է 4.2%: Ի դեպ, հուսադրող չէ նաև թե՛ ՀՆԱ, թե՛ մշակող արդյունաբերության ոլորտների (ճյուղերի) արտադրանքի (ծառայությունների) աճի կառուցվածքը: Հարաբերաբար ավելի արագ են աճում ոչ թե իրական տնտեսության և գիտատար արտադրանք թողարկող արտադրությունները, այլ առևտրի, կացության և հանրային սննդի, զվարճությունների ոլորտները: Գործնականում տնտեսության մեջ աշխատատեղերի կառուցվածքը ունի նույն պատկերը, և մարդիկ ձգտում են սովորել այնպիսի մասնագիտություններով, որոնց համար կան աշխատատեղեր: Տնտեսության ոչ առաջադիմական կառուցվածքը այդպիսին է դարձնում նաև կրթության կառուցվածքը (աղ. 3):

Աղյուսակի տվյալներով հանրապետության բարձրագույն կրթության համակարգի շրջանավարտների ընդհանուր թվում հումանիտար մասնագիտություններով կրթություն ստացածների բաժինը 2017 թ. հասել է 64.5 տոկոսի: Մասնավորապես, սոցիալական և վարքաբանական գիտությունների գծով շրջանավարտների թիվը կազմել է 4214, գործարարության ու վարչարարության և իրավունքի մասնագիտություններով համապատասխանաբար՝ 1 315 և 1 311, իսկ ֆիզիկական գիտությունների գծով՝ 179, կենսաբանական գիտությունների ուղղություններով՝ 296, մաթեմատիկա և վիճակագրություն մասնագիտություններով՝ 398, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գծով՝ 649 և այլն:

Ի դեպ, ոչ էական փոփոխություններով պատկերը նույնն է նաև 2018 թվականին: Ռազմավարական առումով կրթության նման կառուցվածքը նպաստավոր չէ աշխարհում ընթացող տեխնոլոգիական հեղափոխության ներկա փուլում մեր երկրի դիրքավորման, տնտեսության գիտատար ճյուղերի զարգացման ապահովման համար: Վիճակը մխիթարական չէ գիտական աստիճանաշնորհման բնագավառում: Այստեղ նույնպես գիտական աստիճան հայցողների, ասպիրանտուրայում սովորողների ընդհանուր թվում գերակշռում են տնտեսագիտական, իրավաբանական և մյուս հումանիտար մասնագիտությունները, փոքրաթիվ են ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական՝ տեխնոլոգիական փոփոխությունների ներուժ ապահովող մասնագիտություններով գիտական աստիճանի ձգտողները (աղ. 4): Նույն աղյուսակի տվյալներով՝ գիտական աստիճան հայցողների և պաշտպանածների թվում գերակշռում են կանայք:

Վերը նշված աննպաստ զարգացումները կհաղթահարվեն գիտատար արտադրանքի թողարկման ծավալման շնորհիվ, ավելին՝ այն կխթանի թե՛ կրթության, թե՛ գիտության բուռն զարգացումը: Սակայն այդ արտադրությունների զարգացումը հնարավոր է ներդրումների և մրցունակ տեխնոլոգիաների առկայության պարագայում: Այդ դժվարագույն խնդիրների լուծման համար համաշխարհային պրակտիկայում հայտնի է երկու տարբերակ.

– սինգապուրյան փորձը[4]. Պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում նպատակային ներգրավել անդրազգային կամ ազգային խոշոր կորպորացիաների՝ առաջարկելով բարենպաստ տնտեսավարման պայմաններ, բարձր որակավորման մասնագետներ, որոշ զարգացած ենթակառուցվածքներ.

– համատեղ ձեռնարկությունների ստեղծումը պետական մասնակցությամբ:

Հնարավոր բոլոր տնտեսական լծակներով պետք է խրախուսել հանրապետության համար ավանդական թեթև, կահույքի, շինարարական նյութերի, փոքր քիմիայի արտադրությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Նույնը վերաբերում է հարաբերաբար բարենպաստ զարգացման ընթացք ունեցող սննդի արդյունաբերության, ծառայությունների ոլորտի ճյուղերին:

[4] Լի Կուան Յու 2017, 93-113:

Չափազանց կարևոր խնդիր է գյուղատնտեսության արդիականացումը՝ ինդուստրացման, գյուղատնտեսական կազմակերպությունների՝ կոոպերացման կամ բաժնետիրացման շնորհիվ խոշորացման, արտադրություն–արդյունաբերական մշակում–իրացում շղթայի կատարելագործման ուղիներով, որը հնարավորություն կընձեռի բարձրացնելու գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը, կիրառելու բերքի աճեցման ժամանակակից տեխնոլոգիաներ, զոոտեխնիկական, անասնաբուժական և ագրոնոմիական ծառայություններ, ստեղծելու բազմաճյուղ տնտեսություններ՝ բնական ռիսկերի ազդեցությունը նվազեցնելու համար և այդպիսով ավելացնելու բերքատվության ու մթերատվության մակարդակը: Գյուղատնտեսության ինտենսիվացումը մշակովի հողատարածքների սահմանափակության պայմաններում երկրի պարենային անվտանգության ապահովման գլխավոր ուղին է:

Գյուղատնտեսության ոլորտում տեխնոլոգիական և տնտեսական զարգացման առանցքային խոչընդոտներից է մանր գյուղացիական տնտեսությունների մեծ թիվը՝ շուրջ 318 հազար, որն անցյալ դարի 90-ական թթ. ճյուղի արտադրության միջոցների մասնավորեցման ոչ ճիշտ մեթոդաբանության արդյունք է: Գյուղացիական տնտեսությունների տիրապետած գյուղատնտեսական նշանակության հողակտորները փոքրածավալ են (աղ. 5), ցածր է տնտեսությունների ապրանքայնության միջին կշռված մակարդակը՝ շուրջ 57%, որի 30%-ն է դրամային արտահայտությամբ, մնացածը ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված միջոցներն են: Ընդ որում, ապրանքայնության մակարդակի ցուցանիշը 2017-2018 թթ. տարբերակվում է ըստ մթերքների և մարզերի: Մասնավորապես, միջինից ցածր է այդ ցուցանիշը հացահատիկի և հատիկաընդեղենի (31-35%), ձվի (40-41%), բրդի (32-47%) գծով, բարձր է ապրանքայնությունը խաղողի (90%), բանջարեղենի (81-82%), պարենային բոստանի (92%) համար: Հատկապես բարձր է ապրանքայնությունը Արարատի և Արմավիրի մարզերում, իսկ մյուս մարզերում և հանրապետությունում որոշ մթերքների արտադրությունն ունի բնամթերային բնույթ: Ակնհայտորեն այդպիսի գյուղացիական տնտեսությունների ներուժը անբավարար է վերը թվարկված խնդիրների լուծման համար: Ուստի դրանց խոշորացումն օրհասական խնդիր է, որը կստեղծի նախադրյալներ գիտական հիմքով արդի գյուղատնտեսություն ունենալու համար:

Անկախության տարիներին երկրում միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ձևավորված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը հիմնականում համապատասխանում է ժամանակակից չափանիշներին, սակայն նկատելի են որոշ բացեր, որոնք կարող են հաղթահարվել: Դրանցից առաջինը պակաս արդյունավետ հարկային վարչարարությունն է, հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունների ստեղծված պրակտիկան:

Դրամավարկային քաղաքականության ոլորտում չափազանց շատ են ձգտումները խուսափելու ֆինանսատնտեսական ռիսկերից, որի հետևանքով միշտ չէ, որ տնտեսական աճի ռազմավարությունը զուգակցվում է արդյունավետ փողի և վարկային քաղաքականության հետ:

XXI դարում առանձնակի կարևորություն են ստանում ազգային նորամուծական համակարգի ձևավորումը և գործարկումը: Այն երկրները, որոնք ավելի են կարևորել գիտական առաջընթացը, նպաստել դրան, հասել են ավելի բարձր քաղաքակրթական, տնտեսական և պաշտպանական արդյունքների: Արդի աշխարհն այդ չափանիշով բաժանվում է զարգացած, զարգացող և թույլ զարգացած երկրների: Գիտատեխնիկական զարգացումն ընթանում է շատ արագ. եթե XVIII դարի 60-ական թթ. և հաջորդ դարի առաջին կեսին տեխնոլոգիական միջավայրի առանցքային գործոնները մանածագործական հաստոցները և շոգեքարշն էին, ապա XXI դարում արդեն տիրապետող են նանո և բջջային տեխնոլոգիաները[5]:

ՀՀ-ում որոշակի աշխատանք է կատարվել նորամուծական համակարգի ձևավորման ուղղությամբ, մասնավորապես՝ ստեղծվել է համապատասխան օրենսդրանորմատիվային դաշտ[6]: Սակայն դեռևս չի կայացել ազգային արդյունավետ գործող նորամուծական համակարգը՝ կրթություն-գիտություն-արտադրություն ինտեգրված շղթայով, պետական մարմինների միջև անհրաժեշտ լիազորությունների հստակ բաշխմամբ, գիտատեխնիկական գործունեության կոնկրետ գիտակոնստրուկտորական և սոցիալ-տնտեսական արդյունքներին միտված ֆինանսավորման և դրանց առևտրայնացման ենթահամակարգերով: Մինչդեռ այդ համակարգի ստեղծումը և դրա արդյունավետ գործունեության ապահովումը տնտեսության բարձր

[5] Глазьев 2018, 201-202

[6] Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը և հայեցակարգային գերակայությունները, 2017, 165-173:

տեմպերով զարգացման և մրցունակ արտադրանքի թողարկման, երկրի ռազմավարական խնդիրների լուծման կարևորագույն երաշխիքներից են:

Աղյուսակ 1

ՀՆԱ-ի կառուցվածքը և իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ[7]%

Ծածկագիրը՝ ըստ ՏԳՏԴ խմբ. 2		ՀՆԱ-ի կառուցվածքը		Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ	
		2017 թ.	2018թ.	2017թ.	2018թ.
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	15.0	13.7	94.9	91.5
B	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	3.3	2.9	125.7	85.8
C	Մշակող արդյունաբերություն	10.6	11.3	111.8	111.1
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	4.1	3.7	103.8	109.2
E	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.5	0.5	110.1	99.2
F	Շինարարություն	7.3	6.6	102.8	100.8
G	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավ-տոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	11.1	11.3	120.5	109.5

[7] Վիճակագրական բոլոր աղյուսակները կազմված են ՀՀ ԱՎԾ տեղեկատվության հիման վրա:

H	Փոխադրումներ և պահեստային տնտե-սություն	3.0	3.2	114.2	111.4
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	1.4	1.8	124.9	135.6
J	Տեղեկատվություն և կապ	3.3	3.2	104.8	104.5
K	Ֆինանսական և ապա-հովագրական գործունեություն	4.9	5.3	118.5	117.8
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	7.8	7.9	99.9	103.5
M	Մասնագիտական, գիտական և տեխ-նիկական գործունեություն	1.1	1.2	98.9	114.8
N	Վարչարարական և օժանդակ գործու-նեություն	0.9	1.0	111.5	111.1
O	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապա-հովագրություն	4.7	4.2	103.0	91.2
P	Կրթություն	2.7	2.6	97.3	100.4
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	4.2	4.2	111.5	104.7
R	Մշակույթ, զվարճություններ և հան-գիստ	4.6	5.7	112.0	131.5
S	Սպասարկման այլ ծառայություններ	0.9	0.9	142.0	106.0
T	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների ար-տադրություն սեփական սպառման համար	0.1	0.1	99.6	98.8

Աղյուսակ 2

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալները՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների

Ծածկագիրը՝ ըստ ՏԳՏԴ խմբ. 2		2018թ. հունվար-դեկտեմբեր, ընթացիկ գներով *մլն դրամ*	2017թ. հունվար-դեկտեմբեր, ընթացիկ գներով *մլն դրամ*	2018թ.-ը 2017թ.-ի հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	Կառուց-վածքը, 2018թ. հունվար-դեկտեմբեր %
C	*մշակող արդյունաբերություն*	1 349 852.6	1 213 642.7	108.3	100.0
	որից՝				
10	սննդամթերքի արտադրություն	523 870.5	470 909.7	105.8	38.8
11	խմիչքների արտադրություն	152 569.3	149 241.9	100.9	11.3
12	ծխախոտային արտադրատեսակ-ների արտադրություն	178 367.7	157 747.2	108.4	13.2
13	մանածագործական արտադրատեսակնե ոի արտադրություն	1 147.6	620.4	177.0	0.1
14	հագուստի արտադրություն	22 488.6	16 848.8	140.8	1.7
15	կաշվե արտադրատեսակ-ների արտադրություն	2 004.8	1 861.7	99.0	0.1
16	փայտանյութի արտադրություն	1 861.7	1 422.4	136.9	0.1
17	թղթի և թղթե արտադրատեսակ-ների արտադրություն	34 727.2	26 138.3	132.3	2.6
18	պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	19 182.5 ’	15 087.9	126.4	1.4
20	քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակ-ների արտադրություն	16 603.5	11 605.7	143.4	1.2
21	դեղագործական արտադրանքի արտադրություն	9 548.2	9 602.4	100.6	*0.7*
22	ռետինե և պլաստմասե արտադրատեսակ-ների արտադրություն	35 511.1	31 148.0	114.0	2.6
23	այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակ-ների արտադրություն	61 564.5	44 740.9	139.5	4.6

24	հիմնային մետաղների արտադրություն հիմնային մետաղների արտադրություն	173 752.0	174 928.3	93.6	12.9
25	պատրաստի մետաղե արտադրատեսակ-ների արտադրություն	14 087.5	12 393.0	109.6	1.1
26	համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	9 558.8	7 721.3	110.7	0.7
27	էլեկտրական սարքավորանքի արտադրություն	14 782.3	18 460.8	79.5	1.1
28	մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	5 874.8	3 883.0	155.4	0.5′
30	այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն	155.6	113.8	134.5	0.0
31	կահույքի արտադրություն	5 226.6	3 694.4	145.2	0.4
32	այլ արտադրատեսակ-ների արտադրություն	53 145.8	51 189.7	117.0	3.9
33	մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում	13 822.0	4 283.1	3.8 անգամ	1.0

Աղյուսակ 3

Բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ուսանողների քանակի շարժը՝ ըստ մասնագիտությունների խմբերի, 2017-2018 ուս. տարի

	Ընդունվել են		**Ուսանողների քանակը**		**Ավարտել են 2017թ.**	
	ընդա-մենը	**նրանցից՝ կանայք**	**ընդա-մենը**	**նրանցից՝ կանայք**	**ընդա-մենը**	**նրանցից՝ կանայք**
Կրթություն	1223	730	10 621	6 533	1665	1231
Արվեստ	1 014	650	4 666	3153	1 145	826
Հումանիտար	426	231	2 293	1191	719	464
Բանասիրական	1 363	1 302	7 556	7 169	2 418	2 363

Սոցիալական և վարքա-բանական գիտություններ	2 726	1 449	12 120	6 322	4 214	2 463
Լրագրություն և տեղեկատվական	207	186	1 035	877	260	236
Գործարարություն և վարչարարություն	1 304	680	5 923	3128	1 315	735
Իրավունք	1 136	431	5 845	2 256	1 311	525
Կենսաբանական	201	163	927	817	296	268
Շրջակա միջավայր	110	43	265	114	124	55
Քիմիա	78	56	559	456	111	94
Գիտություններ երկրի	142	40	936	355	256	126
Ֆիզիկական	148	30	735	168	179	72
Մաթեմատիկա և	509	237	2 022	959	398	238
Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ	942	232	3 763	1 178	649	241
Ճարտարագիտություն	1 006	102	4 285	463	776	107
Արդյունաբերություն և տեխնոլոգիա	521	92	2 188	462	189	52
Ճարտարապետություն և շինարարություն	383	58	1 999	350	341	75
Գյուղատնտեսական	228		912	-	84	-
Անասնաբուժություն	109	22	554	120	67	26
Առողջապահություն	959	571	6 321	3 711	593	339
Սոցիալական աշխատանք	47	40	261	233	90	66
Անհատական	475	264	2 010	1 179	401	262
Անվտանգության	281	66	951	247	186	44
Ընդամենը	15 538	7 675	78 747	41 441	17 787	10 908

Աղյուսակ 4

Գիտության թեկնածուի գիտական աստիճան հայցողների և թեկնածուական ատենախոսություն պաշտպանած հայցողների քանակը՝ ըստ մասնագիտության, 2018 թ. մարդ

	Գիտության թեկնածուի գիտական աստիճան		Թեկնածուական ատենախոսություն	
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
Ֆիզիկամաթեմատիկական	36	17	8	4
Քիմիական	27	17	2	2

Կենսաբանական	38	39	7	7
Երկրաբանական	21	12	15	8
Տեխնիկական	51	17	31	8
Գյուղատնտեսական	5	3	4	2
Պատմական	64	33	6	3
Տնտեսագիտական	114	62	39	21
Փիլիսոփայական	4	4	-	-
Բանասիրական	77	67	7	7
Իրավաբանական	82	47	5	1
Մանկավարժական	89	72	3	2
Բժշկական	50	28	5	4
Դեղագործական	5	5	-	-
Արվեստագիտական	16	14	2	2
Ճարտարապետական	9	6	1	1
Հոգեբանական	57	48	2	2
Սոցիոլոգիական	2	2	-	-
Քաղաքական	21	9	-	-
Ընդամենը	768	502	137	74

Աղյուսակ 5

Տնտեսությունների բաշխվածության կառուցվածքը՝ ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի չափերի

	Տնտեսությունների քանակ, հատ	Տեսակարար կշիռ, %
մինչև 0.1 հա	78 447	22.7
մինչև 0.1-0.19 հա	24 461	7.1
մինչև 0.2-0.49 հա	41 391	12.0
մինչև 0.5-0.99 հա	61 971	17.9
մինչև 1-1.99 հա	69 878	20.2
մինչև 2-2.99 հա	31 217	9.0
մինչև 3-4.99 հա	22295,	6.4
մինչև 5-9.99 հա	12 359	3.6
մինչև 10-19.99 հա	2 857	0.8
մինչև 20-49.99 հա	829	0.0
մինչև 50-99 հա	119	0.0
մինչև 100-199 հա	37	0.0
200 հա ավել	13	0.0

Մինչև 0.19 հա => 30.0 %	**Մինչև 0.49հա => 42.0 %**	**Մինչև 0.99հա => 60.0 %**	**Մինչև 1.99 հա => 80.0 %**

Գրականություն

Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը և հայեցակարգային գերակայությունները, ՀՀ ԳԱԱ ակադ. Յու. Մ. Սուվարյանի խմբ., Երևան, «Գիտություն», 2017, 192 էջ:

Լի Կուան Յու, Երրորդից առաջին աշխարհ. Սինգապուրի 1965-2000 թվականների պատմությունը, Երևան, հեղինակային հրատ., 2017, 1276 էջ:

Глазьев С.Ю. 2018, Становление шестого технологического уклада. – В кн.: Яковец Ю.В., Фарах С.Н. Диалог и партнерство цивилизаций, Москва-Казань, изд. "Институт экономических стратегий", 444 с.

Стиглиц Дж. 2019, Нечестная экономика, “В мире науки’’, Москва, № 1-2, с. 85-91.

Суварян Ю.М. 1987, Управление ростом производительности труда в промышленности, Ереван, "Айастан", 228 с.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրի Սուվարյան

ՀՀ ՀՆԱ կառուցվածքում 2018 թ. մշակող արդյունաբերության բաժինը 11% էր, իսկ մշակող արդյունաբերության արտադրության ծավալում գիտատար արտադրանքի տեսակարար կշիռը՝ 4.2%, որի հետևանքով ձևախեղված է նաև կրթության կառուցվածքը՝ բուհերում սովորողների ընդհանուր թվում գերակշռում են հումանիտար մասնագիտություններով սովորողները (64.5%), նվազել է պահանջարկը գիտակոնստրուկտորական մշակումների նկատմամբ: Որոշակի ռազմավարությունը կնպաստի գիտատար և աշխատատար, քիչ նյութատար ճշգրիտ մեքենաշինության արտադրությունների զարգացմանը, որն էլ ժամանակի ընթացքում տնտեսության կառուցվածքը կդարձնի առաջադիմական՝ խթանելով գիտության և տեխնոլոգիական կրթության զարգացումը:

Բանալի բառեր՝ տնտեսական աճ, ճյուղային կառուցվածք, որակական բնութագրիչներ, գիտություն, տեխնոլոգիա, ազգային նորամուծական համակարգ, կրթություն:

КАЧЕСТВЕННЫЕ ХАРАКТЕРИСТИКИ И ПРИОРИТЕТЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

Юрий Суварян

Доля обрабатывающей промышленности в 2018 г. в ВВП РА составила 11%, а в объеме ее продукции удельный вес наукоемких производств снизился до 4.2%, вследствие чего деформировалась структура высшего образования – в общем числе студентов вузов стали преобладать учащиеся по гуманитарным специальностям (64.5%), снизился спрос на научно-конструкторские разработки.

Предлагаемая в данной работе стратегия будет способствовать развитию наукоемкой и трудоемкой, маломатериалоемкой производств точного машиностроения, что позволит модернизировать структуру экономики, стимулировать развитие науки и технологического образования.

Ключевые слова – экономический рост, отраслевая структура, качественные характеристики, наука, технология, национальная инновационная система, образование.

QUALITATIVE INDICATORS AND PRIORITIES OF ECONOMIC DEVELOPMENT

Yuri Suvaryan

The paper covers and analyzes the qualitative characteristics of economic development, the nature and structure of growth, the quality and competitiveness of production, the structure of the GDP and the processing industry, economic system's performance and government principles, the degree of distribution equality among society's members.

Observing “economic-science-education” relationship, it is mentioned, that for 2018 in the structure of GDP in Armenia, the share of the processing industry was 11 percent, while the share of scientific oriented output in the processing industry was 4.2 percent, as a result of which the structure of education was deformed. The students in the higher veducational institutions

were predominantly in the humanities (64.5 percent) and the demand for scientific and engineering specialities was decreased.

It is suggested, to built a certain strategy for supporting knowledgeable and labor-intensive, low-cost precision machine-building production, that will make the structure of the economy more progressive and will stimulate the development of science and technology oriented education.

The main issues of technological development in agriculture, as well as the problems of creation and operation of an effective national innovation system are covered.

Key words – economic growth, branch structure, qualitative characteristics, science, technology, national innovation system, education.

МЕТАМОДЕРНИЗМ: СТРЕМЛЕНИЕ К НОВОЙ СТРУКТУРЕ ЧУВСТВА

Светлана Арзуманян

Кандидат философских наук
Институт философии, социологии и права НАН РА
Арама 44, 0010, Ереван, Армения
эл. почта: s.arzumanyan@inbox.ru
Статья представлена 06.08.2018, рецензирована 03.09.2019, принята к печати 15.08.2019

Вступление

Особый интерес в этой связи представляет пример новой армянской диаспоры, сформировавшейся на территории постсоветских стран, представители которых во внутрисетевом пространстве на личностном и групповом уровнях могут выступать в качестве медиаторов межгосударственных отношений. Это обстоятельство было учтено при создании совместного армяно-беларусского проекта "Армяне Беларуси в миграционном контексте этнокультурных связей Армения-Беларусь: этнические традиции и современная ситуация". В рамках этого проекта была разработана специальная методика изучения сложившихся в результате миграции армянского населения социальных сетей, ставших одним из каналов передачи и воспроизводства в условиях мононациональной по составу населения Армении элементов инонациональной культуры, социальных ценностей, стереотипов поведения и сознания. Методика заключалась в исследовании семей, имеющих и поддерживающих связи со своими родными и родственниками, живущими в Республике Беларусь. Исходя из того, что в "беларусском сегменте" миграционного массива значимое место занимал сельский контингент и именно из северных районов Армении[4], для данного исследования были выбраны четыре села таширского подрайона Лорийского марза – с. Сарчапет, п. Ташир, с. Лернаовит и с. Мецаван. Посредством проведенного в Армении стандартизированного интервью с членами каждой четвертой семьи жителей этих поселений была собрана информация о родных и родственниках, живущих в Беларуси, благодаря чему стало возможным выявить степень их осведомленности о характере жизнедеятельности мигрантов вне родины, включая время и место их адаптации, экономическое положение и социально-демографические параметры. Полученная через родных информация позволила изучить закономерности адаптации мигрантов в Беларуси, выявить их дальнейшие планы.

[4] Эта информация была получена в результате ознакомления с работами исследователя армянской диаспоры Беларуси Н. Аветян (см. Аветян 2015), а также при проведении опроса экспертов в данной области в самой Беларуси.

Содержащийся в исследовании материал о характере взаимоотношений родных и родственников, разделенных государственными границами, имел еще один “выход” для аналитических разработок. Они могут быть направлены на определение роли социальных сетей в качестве канала межкультурных связей между армянами и беларусами, в частности, в переносе и распространении через этот канал элементов беларусской культуры, ее влияния на образ беларусов в сочетании с самообразом.

Образ контактирующего с мигрантами этноса

Мы исходили из того, что клише образов контактирующего этноса может стать “определенным набором стереотипов”[5], на основе которого этническая группа может “прогнозировать возможную реакцию участников общения на ту или иную ситуацию”[6]. Необходимость в подобном исследовательском ракурсе продиктована весьма значимым влиянием последствий межэтнического взаимодействия на межгосударственные отношения. Гетеростереотипы, формирующиеся в ходе миграционных процессов, создают общий настрой как у принимающего мигрантов этноса, так и у самих мигрантов.

Рис. 1. Реакции респондентов при контакте с представителями иных национальностей*



[5] Шевелева 2003.

[6] Шевелева 2003.

* Ответы: 1. Затрудняется ответить; 2. Напрягается; 3. Ничего необычного; 4. Проявляется интерес; 5. Удовлетворение от общения.

В данном исследовании в первую очередь было обращено внимание на особенности самой личности в первичном восприятии представителей чужого этноса в целом и беларусов – в отдельности. Это особенно важно в связи с тем, что "исследователи, ограничиваясь проблемой межличностного восприятия"[7], не особо обращают внимание на роль "внешних и внутренних факторов". Помимо первых в данном случае важны субъективные ощущения, которые возникают при контактировании с лицом не своей национальности, где очевидны социально-демографические факторы, определяющие эти субъективные оценки.

Возраст, пол, социальный статус, профессия и прочие параметры, как в отдельности так и в различной конфигурации связей, образуют тот весьма неполный перечень признаков личности или группы, который существенным образом влияет на зафиксированные в процессе исследования вербальные ответы. Важна также роль опыта общения самого респондента с лицами другой национальности и информации, переданной ему находившимся в непосредственном контакте с другой национальностью членом его семьи, родственником, соседом и т.д.

По данным исследования определилась весьма выраженная вариативность в структуре ответов респондентов на вопросы о своих ощущениях, возникающих при общении с представителями другой национальности. "Напряжение", "ничего необычного", "интерес" и "удовлетворение от общения" – вот перечень ответов на открытый вопрос, полученный в ходе стандартизированного интервью.

Сравнение структуры распределения этих ответов в представленной дихотомии "не своей" и "беларусской" национальности показало весьма интересное расхождение (см. рис. 1). Первые три ответа "напряжение", "ничего необычного", "интерес" в левой колонке ("не своей национальности") имеют больший вес, чем в правой (беларусской национальности). Но в данном случае интерес представляет количество лиц, давших ответ "удовлетворение от общения" в правой колонке.

[7] Солдатова 1998, 67.

Если в отношении к “не своей национальности” этот ответ был зафиксирован у 4% опрошенных, то к “беларусской национальности”– почти 30%, т.е. больше, чем в 7 раз. Весьма интересен в этой связи еще и тот факт, что более половины респондентов судит о беларусах по информации, полученной от живущих в этой республике родственников, соседей, земляков. Поэтому последний показатель (см. рис. 1) свидетельствует о весьма благожелательном отношении беларусов к армянам-мигрантам, следовательно, о комфортной жизни последних в этой стране. В соответствии с этой оценкой можно предположить о передаче в Армению по каналам межродственных связей положительного образа беларусов. Причем только 5% опрошенных указали на национальную неприязнь при общении с беларусами и 15% затруднялись с ответом. Никаких затруднений в общении с беларусами не испытывало более трети опрошенных, а на различия в языке и поведении, усложняющих это общение, указало менее половины респондентов. Вышеуказанное весьма четко соотносится с образом беларусов, сформировавшимся у жителей исследованных нами сел Армении. Этот образ присутствует в гетеростереотипах респондентов, которые представлены как отдельно в оценках специфических с точки зрения опрошенных качеств беларусов, так и в сопоставительных (армян с беларусами) качествах в оппозиции “близость-различие”. Отмеченное важно для разработки нескольких исследовательских направлений.

Первое направление связано с тем, что переданная мигрантом информация содержит имплицитную, не выраженную, но осознаваемую им оценку комфортности своего положения и способности интегрироваться в среду. Поэтому крайне важно вывести закономерности связей между характером взаимодействия мигранта со средой и содержанием посылаемых информационных сюжетов. Второе направление нацелено на изучение характера воздействия на жителей Армении родных и родственников, живущих в других странах. Оно существенно для определения перспектив развития межнациональных отношений в условиях опосредованного межличностного корреспондирования информации. В этом случае исходящая от мигранта информация может

содержать “положительную-отрицательную” оценки, влияющие на отношение жителей Армении к титульному этносу страны пребывания их родных и близких. Третье направление исследовательского поиска – выведение признаков самоидентификации на фоне инонациональной культуры. Оно весьма значимо в понимании механизмов развития этнической идентичности в своей среде в реальном контексте опосредованных межэтнических связей.

В связи с вышеуказанным в программу исследования была заложена задача изучения содержания взаимосвязей гетеростереотипов (в отношении беларусов) с самообразом среди жителей Армении, имеющих связи со своими родственниками, живущими в Беларуси. Мы исходили из того, что “этнический стереотип включен в структуру этнической идентичности в качестве ее элемента, и он устанавливается в процессе идентификации индивида с этнической группой”[8]. Именно поэтому в процессе стандартизированного интервью респондентам были заданы вопросы, выясняющие характерные для беларусов черты, а также близкие или отличающие от армян качества этой этнической общности.

Соотносимость гетеростереотипов (относительно беларусов) и автостереотипов жителей Армении – родственников мигрантов

В начале следует отметить, что в процессе исследования было зафиксировано 69 гетеростереотипов, 127 вербальных ответов, характеризующих близость двух этносов, и 106 отличающих их друг от друга. Из них только в 13 ответах по трем предложенным вопросам было отмечено совпадение (независимо от их количества), в ответах на два вопроса (гетеростереотип – автостереотип) по признаку близости этих качеств совпадения были в 14 ответах, а по отличиям – в 16 ответах. Причем из опрошенных только 6% не дали ответ на вопрос о гетеростереотипах и их отличиях от автостереотипов. Но почти треть респондентов не смогли определиться в ответах о близости этнических ка-

[8] Ананьина 2018.

честв беларусов и армян. В этом случае нужна более достоверная информация, которая доступна только при непосредственном контакте. Кроме того, в инонациональном окружении все же этническая группа акцентирует внимание на различиях между ним и окружением, следовательно, передаваемая информация меньше всего содержит представления о сходстве с этим окружением. Очевидно, что объектом анализа могут стать те отмеченные респондентами качества, характеризующие беларусов и армян, которые совпадают друг с другом. График, изображенный на рис. 1, дает конкретное обоснование вышесказанному.

Рис. 1. Характер сопоставимости гетеростереотипов (по беларусам) с оценками схожести и различия между ними и армянами



Внутренне осознаваемая мигрантом ситуация в связи с его положением в беларусском окружении (степень его комфортности) весьма четко прослеживается, с одной стороны, в структуре гетеростереотипов, оценок близости и отличий этнических черт. С другой стороны, эта комфортность прослеживается в степени соотносимости данных вербальных оценок друг с другом. По степени близости самооценок и оценок беларусов можно фиксировать уровень этнической аффилиации армян с беларусами[9]. К тому же близкие с армянами характеристики беларусов (они христиане, семейственные, трудолюбивые, как мы)

[9] Ковальчук 2015.

облегчают взаимодействие на бытовом уровне. Указанное характеризует культурные и психологические условия вживания мигранта в данную среду и определяет в целом положительное содержание посылаемой им информации. Данное обстоятельство подчеркивает особую роль этих корреспондируемых сюжетов в представлении и стереотипах в отношении беларусов уже у жителей Армении, что существенным образом будет определять перспективы повторных миграций. При этом в дихотомии ("положительная-отрицательная") оценок у жителей Армении образ беларусов реально склоняется к первому члену этой дихотомии.

Следующим аналитическим выводом из представленных выкладок может стать выведение соотносимости содержания самооценок в связке гетеростереотипов с оценками близости и различий армян с беларусами. В этом плане весьма значимы этнические различия в восприятии содержания контекста, казалось бы, в одинаковых вербальных ответах. Так, "семейные отошения" подчеркиваются в качестве сближающей и то же время отличающей беларусов от армян характеристики. Очевидно, что они такие же семьянины, как и мы, но в то же время отличаются своими внутрисемейными отношениями – взаимоотношениями между супругами, родителями и детьми. Таким же образом близость по религии осознается в контексте общехристианского сообщества. Но внутри этого контекста отличия между армянами и беларусами существенны.

Исходя из вышесказанного, можно с уверенностью отметить, что транслируемая в социальных сетях информация двухслойна по своему содержанию. Первый слой – приемлемый общий план соотносимости, характеризуемый близостью фоновых признаков – института семьи, гостеприимства, религии и т.п., а второй слой – выделяющий сугубо личностные особенности, которые противопоставляются и в которых подчеркивается своя национальная черта. Это весьма важно для респондентов, 75% которых подчеркивают свою национальную принадлежность, а 80% считают это очень важным в их жизни. Здесь мы имеем дело с транслируемым по социальным сетям элементом актуализированного в инонациональном окружении этнического самосознания. В

мононациональной среде это не столь важно, но сам факт такого "всплеска" этнической идентификации – свидетельство именно ее трансляции.

Следующим следствием внутрисетевого информационного обмена стал перенос на "армянскую" почву представлений о возможностях сохранения идентичности в инонациональном окружении. В структуру факторов, способствующих, по мнению респондентов (следует напомнить, что они являются жителями Армении), сохранению этнической идентичности в диаспоре, вошли язык – 23%, традиции – 22%, религия, культура и история, равно как и внутриобщинное общение – 15%, связь с родиной – 10%, мононациональный брак и воспитание детей – 8%. Интересно, что подобная структура ответов присуща армянской этнической группе диаспоры, что подтверждает вышеназванную закономерность.

Заключение

Исследование реальных проявлений собственной соотносимости со своей и контактируемой общностями у отдельной личности, группы лиц и больших массивов людей становится одной из важных предпосылок осмысления роли этнического фактора в современных социальных, политических и экономических процессах. Миграция – одна из составных компонентов современного состояния армянского этноса, который в происходящих на мировой арене процессах выступал и выступает в двух качествах – в виде национального государственного образования и диаспоры. Последняя представлена различными компактными и дисперсными группами армян, рассредоточенными в разных политических, экономических, социальных, этнических и конфессиональных средах. Взаимоотношения между представителями этих двух звеньев этноса образуют общее социальное и культурное информационное пространство, в котором складываются механизмы передачи инонациональных социальных и культурных ценностей. Опыт исследования этого процесса на примере армяно-беларусских отношений способствует конкретизации наших представлений о роли мигрантов в

переносе в Армению стереотипов сознания, сформированных в беларусской среде.

Литература

Կարապետյան Ռ.Ս. 2013, Միգրացիան և հայկական նոր սփյուռքը. Էթնոսոցիոլոգիական հետազոտություն, Երևան, «Գիտություն», 220 էջ:

Аветян Н. 2015, Армянская диаспора в Республике Беларусь. LAP Lambert Academic Publishing, 155 с.

Ананьина В.Т. 2018, Особенности исследования этнических стереотипов. elar.urfu.ru/bitstream/10995/58950/1/978-5-91256-403-1_2018_112.pdf (15.06.2018).

Карапетян А.Р. 2011, Автопортрет армян: этничность в самооценках, Ереван, "Гитутюн", 186 с.

Карапетян Э.Т. 1966, Родственная группа “азг” у армян, Ереван, изд. АН Арм. ССР, 166 с.

Ковальчук Е.Г. 2015, Этнические авто-и гетеростереотипы студентов-беларусов и студентов-туркменов. elib.bsu.by›...› (11.02.2018) Психология 1-23 01 04› Психология.

Солдатова Г.У. 1998, Психология межэтнической напряженности, Москва, "Смысл", 386 с.

Стефаненко Т.Г. 1999, Этнопсихология. И-т психологии РАН, Москва, 320 с.

Шевелева И.П. 2003, Этнический стереотип как феномен культуры http://dspace.nbuv.gov.ua/bitstream/handle/123456789/73785/20-Shevelyeva.pdf?sequence=1 (20.10.2018).

Этнические процессы в современном мире, 1987, отв. ред. Ю.В. Бромлей, Москва, "Наука", 446 с.

Хотинец В.Ю. 2000, Этническое самосознание, СПб., "Алетейя", 240 с.

ԷԹՆԻԿ ՀԵՏԵՐՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ (ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Արփի Կարապետյան

Բելառուսում հաստատված հայ միգրանտների և Հայաստանի բնակիչների միջև ստեղծված անդրսահմանային սոցիալական ցանցերը, որոնք հիմնված են արյունակցական-բարեկամական հարաբերությունների վրա, մեծապես նպաստել են հետերոկարծրատիպերի փոխանցման պայմանների առաջացմանը: Բելառուսում բնակվող բարեկամների հետ կապ պահպանող ՀՀ չորս գյուղերի բնակիչների շրջանում կատարված էթնոսոցիոլոգիական հետազոտությունը թույլ տվեց ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության միաէթնիկ միջավայրում օտարազգի շրջապատում արդեն ձևավորված կարծրատիպերի փոխանցման մեխանիզմները: «Դրական-բացասական» գնահատականների հակադրության մեջ հնարավոր եղավ բացահայտել շրջապատի հետ միգրանտների սերտացման աստիճանը, ինչը վկայում է տվյալ էթնիկ միջավայրում նրանց հարմարվողականության վիճակի մասին:

Բանալի բառեր՝ հետերոկարծրատիպ, էթնոսոցիալական միջավայր, փոխանցում, միգրանտ, սոցիալական ցանց, արյունակցական-բարեկամական հարաբերություններ, ինտեգրում:

МИГРАЦИОННЫЙ КОНТЕКСТ ЭТНИЧЕСКИХ ГЕТЕРОСТЕРЕОТИПОВ (ПО МАТЕРИАЛАМ ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ)

Арпи Карапетян

Сформировавшиеся на основе кровнородственных отношений трансграничные социальные сети между мигрантами, осевшими в Беларуси, и жителями Армении во многом способствовали формированию канала передачи гетеростереотипов. Проведенные в четырех селах Армении этносоциологические исследования среди жителей, поддерживающих отношения с родственниками, живущими в Беларуси, позволили проследить

механизмы передачи в мононациональную среду нашей республики гетеростереотипов из инонациональной среды. По дихотомии “положительный – отрицательный” определился высокий уровень аффилированности мигрантов с окружением, что свидетельствует о комфортности жизни в данном этническом окружении.

Ключевые слова – гетеростереотипы, этносоциальная среда, трансмиссия, мигранты, социальная сеть, кровнородственные отношения, интеграция.

MIGRATION CONTEXT OF ETHNIC HETEROSTEREOTYPES (BASED ON ETHNO-SOCIOLOGICAL RESEARCH MATERIALS)

Arpi Karapetyan

Transboundary social networks formed between Armenian migrants and residents of Belarus, based on kinship relations, have greatly contributed to the development of heterostereotypes interchange. The ethno-sociological survey among the residents of four villages in Armenia who have relatives or friends in Belarus allowed us to follow the mechanisms of transmission of stereotypes from foreign surroundings to a monoethnic environment in our republic. The analysis of positive and negative evaluations have driven out the level of convergence of migrants with the environment, which indicates that they are in comfort with the given ethnic surroundings.

Key words – heterostereotypes, ethnosocial environment, transmission, migrants, social networks, kinship relations, integration.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԻ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Վազգեն Համբարձումյան

Բանասիր. գիտ. դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Գրիգոր Լուսավորչի 15, Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ hambardzumyanvazgen01@aspu.am
Հոդվածը ներկայացվել է 11.12.2018, գրախոսվել է 02.09.2019, ընդունվել է տպագրության 15.08.2019

1. Լեզվական միավորը և հասկացությունը նշանակում են նյութական աշխարհի բնական պատկերը, ներկայացնում առանձնապես ընդհանրական և հարաբերականորեն միասնական լեզվաիմացական ամբողջույթներ: Եթե դրանցից առաջինը դիտարկենք որպես հաղորդակցական որոշակի արտացոլում, իսկ երկրորդը՝ իբրև նյութական աշխարհի առանձնակի երևույթների ընդհանրացում, ապա նրանց միջև նկատելի է դառնում լեզվական-տրամաբանական այնպիսի փոխհարաբերություն, որ պայմանավորված է, մի կողմից՝ անվանման ձայնա-/հնչանշանային արտահայտվածությամբ, իսկ մյուս կողմից՝ ընդհանրացման պատկերային (մտապատկերային) իմաստավորմամբ: Բնապատկերային լեզվական-իմացական արտացոլումն ընդհանուր առմամբ գոյանում է մտապատկերային և գեղապատկերային երկակիությամբ:

ա. Լեզուն իրականության արտացոլումն է, որում բառը հարաբերակցվում է հասկացությանը անվանումային, իսկ առարկային՝ ընդհանրացման եղանակով: Բառը անվանում է հասկացությունը և ընդհանրացնում առարկան: Այս հարաբերությամբ արտալեզվական ոլորտ և լեզվական ոլորտ պայմանական երկատումը կատարվում է սոսկ լեզվի իմացաբանության հիմունքով, ընդ որում աշխարհայացքային ճանաչողականը բեկվում է հոգեբանական պրիզմայով և արտացոլվում իբրև մտահայաց-

քային իմացական՝ կապված զգայական-հասկացական, կամ որ նույնն է՝ մտածողական-գիտակցական անցումների հետ:

բ. Լեզվական աշխարհի ճանաչումը կամ յուրացումը երկրորդ աստիճանի, բայց բնավ ոչ երկրորդական ճանաչողական գործընթաց է, որի համեմատությամբ առաջինը կամ առաջնակարգը մնում է արտալեզվական աշխարհի ճանաչումը: Այլ կերպ ասած՝ իմացածի վերաիմացումը բոլորովին նոր իմացություն է, *բարձրակարգ* իմացություն:

Եթե լեզուն դիտարկում ենք իմացաբանական հայեցակետից կատարվող քննության շրջանակում, ապա, ի հակադրություն նյութական աշխարհի, այն հոգևոր աշխարհ է, նյութական աշխարհի վրա իմացաբանորեն բարձրացած մտա-/ գեղապատկերային ուրույն աշխարհ:

Նյութական աշխարհի լեզվական արտացոլումը պատկերավոր արտացոլում է, որտեղ լեզվական իմաստավորումը հագեցած է լինում հնարավոր նշանակման բազմազանությամբ, տարբերությամբ: Բառի իմաստը բովանդակում է առարկան և նրա մասին մեր ունեցած գաղափարը կիրառելի զանազան նշանակություններով:

Յուրաքանչյուր արտացոլում, որպես ֆիզիկական երևույթ, ըստ էության պատկերային է և ավելի քան տրամաբանական («ներխոսական»)-մտապատկերային՝ իբրև իմացական իրողություն, նույնքան հոգեբանական (հոգեպատկերային)՝ իբրև վարքաբանական իրողություն, և այդ ամենով հանդերձ ավելի քան գեղարվեստական (գեղապատկերային)՝ որպես գեղագիտական (էսթետիկական) իրողություն:

Եվ այս դիտարկումը լիովին նկատելի է իմացաբանների (գնոսեոլոգների), հոգեբանների (պսիխոլոգների), արվեստագետների (էսթետոլոգների) կողմից, սակայն այն տարբերությամբ, որ նրանց մի մասը հիմնված է հասկացական պատկերացում-անուն, մյուս մասը՝ հոգեկան պատկերացում-անուն, մեկ այլը՝ գեղապատկերացում-անուն փոխհարաբերության վրա: Կ. Պաուստովսկին, օրինակ, գտնում է, որ «Մարդկային միտքն առանց պատկերավորության անպտուղ է այնպես, ինչպես որ հավասարապես պատկերավորությունն է անպտուղ առանց իրականության»[1]: Այստեղ, ինչպես նկատելի է, համեմատության եզրեր են դիտված, մի կողմից՝ հասարակական պատկերավոր մտածողությունը, իսկ մյուս կողմից՝ վեր-

[1] Паустовский 1957, 625.

ջինիս հիմքում ընկած իրականության պատկերավոր հայեցողությունը այն հաշվով, որ լեզվական-պատկերային արտացոլման կարևորությունը խարսխվում է իրականության և մտածողության փոխադարձ սերտ կապի վրա՝ անկախ ճանաչողության տրամաբանական, վարքաբանական, գեղագիտական կամ գեղարվեստական տարբերություններից: Ըստ այսմ՝ արտալեզվական աշխարհի լեզվական արտացոլումը, բնականաբար, գոյանում է մտածողության ոլորտում, որում այն ենթադրում է երկու հակադիր կողմերի՝ արտացոլողի և արտացոլվողի, այլ կերպ ասած՝ հիմքի և կերտվածքի այնպիսի փոխհարաբերություն, որ շաղկապվում է արտացոլքի կամ պարզապես ցոլքի (Հումբոլդտի տերմինով՝ *էներգետիկ կապի*) միջոցով:

գ. Տվյալ դեպքում արտալեզվականը այն հիմքն է, որի վրա կերտվում է լեզվականը և արտացոլվում մտածողության մեջ: Ճանաչումը, իբրև մտածողություն, միջնորդավորում է արտալեզվականը և լեզվականը: Ըստ այդմ, լեզուն գիտակցական էություն է, իմացության իրական անդրադարձումը, նյութական աշխարհի հիմնականում ամբողջական արտացոլումը: Այս հարաբերությամբ է միայն, որ առարկայական աշխարհի պատկերը գիտակցության ոլորտում հնարավոր է լինում կաղապարելու (մոդելավորելու), այլև տրոհելու և միմյանց հարաբերականորեն հակադրելու, իբրև երկու ինքնուրույն կաղապարներ (մոդելներ)՝ դիտարկելու և զուգադրելու, որպիսով բացահայտվում է ամենից առաջ այն, որ «այդ մոդելները, աշխարհի այդ երկու՝ տրամաբանական և լեզվական պատկերները, հիմնականում համընկնում են»[2]:

դ. Նյութական աշխարհի ընդհանրական պատկերը, այլև վերջինիս լեզվական-իմացական յուրացումը և վերարտադրումը տեղի չեն ունենում այլ կերպ, քան որ ունեն նշանային բնույթ:

Եթե նյութական աշխարհի ընդհանրական պատկերի մինչիմացական դիտարկումը ընդհանրապես առնչվում է արտալեզվական նշանին, ապա վերջինիս իմացական ընդհանրացման դեպքում, ընդ որում այդ նույն ընդհանրական արտալեզվական նշանի հիման վրա, գործ ունենք առանձին էություն ներկայացնող լեզվական նշանի հետ, ընդ որում նյութական աշխարհի իմացության պրոցեսի գիտակցումով և վերաիմացությամբ:

[2] Բրուտյան 1972, 3:

Այսպիսի երկատում-բաշխումը հնարավոր է այնքանով, որքանով լեզվական նշանը որպես արտացոլման սահմանային միջոց ընկած է լեզվական գործունեության հիմքում, ուղենշային է դառնում արտալեզվական և լեզվական ոլորտների հարաբերակցային իմաստավորման ճանապարհին:

Լեզվական նշանների նպատակադիր հաղորդակցական հարաբերակցմամբ գոյանում և ձևավորվում է նյութական աշխարհի լեզվական պատկերը: Եվ այն ներքին բաշխումների մեջ հագեցած է լինում ներշնչման պահով, բանաստեղծական (խոսքաստեղծական) կերպով. այս դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները:

1) Իմացաբանորեն տրամաբանական բնույթի արտացոլումը, իբրև առանձին երևույթի բնութագրիչ մեկ կողմը կազմող վիճակ, իրական և ընդհանրական, «մաքուր» ճանաչում է, այլ կերպ ասած՝ մտապատկերային-հասկացական իմացություն, որի հակադրությամբ գեղագիտական-գեղարվեստական արտացոլումը, նույնպես իբրև առանձին և երևույթի բնութագրիչ մյուս կողմը ներկայացնող վիճակ, մասնավոր և անհատական, «էմոցիոնալ» ճանաչում է, այսինքն՝ գեղապատկերային-զգացական իմացություն:

Տվյալ դեպքում խնդիրը լեզվաիմացական գործունեության մեջ հաղորդակցման հայեցակետային մոտեցումն է: Այստեղ էականը և հիմնականը առաջին դեպքում մտապատկերային-հասկացականն է, երկրորդ դեպքում՝ գեղապատկերային-զգացականը. գեղարվեստականի ձեռքբերման ճանապարհին արմատական նշանակություն ունի էմոցիոնալ-երևակայականը: Վ.Գ. Բելինսկին, օրինակ, ժամանակին նկատում է, որ «Որքան էլ կոտորակենք կյանքը, այնուամենայնիվ այն միշտ միասնական է ու ամբողջական: Ասում են, որ գիտության համար հարկավոր է խելք և դատողություն, ստեղծագործության համար՝ երևակայություն, և, կարծում եմ, դրանով բանն ամբողջովին որոշել են, այնպես որ կարող են այն հանձնել արխիվ: Իսկ արվեստի համար խելք և դատողություն հարկավոր չե՞ն: Իսկ գիտնականը կարո՞ղ է իր գործը կատարել առանց երևակայության: Ճիշտ չէ: Ճշմարտությունն այն է, որ արվեստի մեջ երևակայությունն է խաղում ամենագործուն և առաջնակարգ դերը, իսկ գիտության մեջ՝ խելքն ու դատողությունը… Շեքսպիրի երկերում չգիտես ինչի վրա ավելի զարմանաս՝

ստեղծագործական երևակայության հարստությա՞ն, թե՞ համապարփակ մտքի հարստության»[3]:

2) Գրողը բառի ընդհանուր իմաստի շրջանակում ընտրում է հատկապես այն իմաստային տարբերությունը, որ նշանակում է իր անհատական զգացածը, իր ապրածը, երևույթի նկատմամբ իր ունեցած գեղապատկերային զգացումը: Այնուհետև գրողը տարբերվում է ինչպես լեզվաիմացական (բանական) գործունեությամբ մյուս զբաղվողներից, այնպես էլ, ի դեպ, իր նմաններից:

Հասարակական իդեալի իրականացման, իրականությանը գեղարվեստի լեզվով արձագանքելու ճանապարհին յուրաքանչյուր գրող ի հայտ է բերում իր գեղարվեստական աշխարհը, հաղորդակցական իր ճանաչողականության զինանոցը (արսենալը), ինչպես նաև այդ ամենը պայմանավորող տվյալ լեզվանշանային համակարգի իր խոսքային բազան, գեղարվեստական խոսքի իր կառուցվածքային ամբողջականությունը:

Հիշենք Բելինսկու նաև հետևյալ ձևակերպումը. «Փիլիսոփան խոսում է սիլոգիզմներով, պոետը՝ կերպարներով և պատկերներով, բայց երկուսն էլ նույն բանն են անում: Քաղաքատնտեսագետը, զինվելով վիճակագրական թվերով, ապացուցում է, ներգործելով իր ընթերցողների կամ ունկնդիրների մտքի վրա, թե հասարակության մեջ այս կամ այն դասակարգի դրությունը շատ է բարելավվել կամ շատ է վատացել այս կամ այն պատճառների հետևանքով: Պոետը, զինվելով իրականության կենդանի և վառ պատկերացմամբ, ճշմարիտ պատկերով ցույց է տալիս, ներգործելով իր ընթերցողների երևակայության վրա, թե հասարակության մեջ այսինչ դասակարգի դրությունը իրոք շատ է բարելավվել կամ վատացել է այսինչ կամ այնինչ պատճառներից: Մեկն ապացուցում է, մյուսը ցույց է տալիս, և երկուսն էլ համոզում են, միայն թե մեկը՝ տրամաբանական փաստարկներով, իսկ մյուսը՝ պատկերներով»[4]:

3) Մեր ընդհանուր նկատառումն այն է, որ նյութական աշխարհի գեղարվեստական արտացոլման, ավելի մասնավոր՝ գեղարվեստական յուրացման և վերարտադրման մեջ շատ կարևոր դեր է ստանում գեղարվեստական պահը, բանաստեղծական (resp. նախնական իմաստով՝ բառաստեղ-

[3] Բելինսկի 1956, 459-460:

[4] Բելինսկի 1956, 467-468:

ծական) կերպը, որը նույնպես վերջին հաշվով միտում ունի իրականության վերափոխման, մաքրության և կատարելացման:

2. Արտալեզվական նշանը ճանաչողության այն առարկան է, որն ընկած է հասկացության դրսևորման հիմքում, իսկ հասկացությունը ձեռք է բերում որոշակի անվանում և, իր հերթին, հիմք է հանդիսանում կոնկրետ լեզվականի համար: Այս առումով արտալեզվական նշանը և լեզվական նշանը հարաբերակից են այնպես, ինչպես արտացոլման պրոցեսը ներկայացնող վերը նշված իրար հակադիր երկու կողմերը՝ հիմքը և կերտվածքը, որոնց հարաբերությամբ հասկացությունը ներկայացնում է միջանկյալը: Արտալեզվականի լեզվանշանային արտացոլումն իրականանում է հիմքում ընկած առարկայի և անվանում հանդիսացող բառի փոխհարաբերության մեջ, որտեղ միջնորդավորումը գոյանում է հասկացությամբ: Եզրերն ակնհայտ են և սևեռուն, իսկ անցումները՝ մի տեսակ բարդ և զուգադրական:

Արտալեզվականի, հասկացականի և լեզվականի (առարկայի, հասկացության և անվան) ուսումնասիրությամբ զբաղվում են տարբեր գիտակարգեր՝ ունենալով խնդիրներ և նպատակներ, դրանց իրականացմանը ծառայող յուրահատուկ ձևեր և եղանակներ:

ա. Նշանագիտությունը ավելի ուշ առաջ եկած գիտություն է, թեև իր ակունքներն ուներ մարդկային մտածողության համեմատաբար ավելի վաղ շրջաններում: Հնդիկ լեզվաբաններից, օրինակ, Պանինինը (մ.թ.ա. V դ.) իր հայտնի աշխատության մեջ որոշակի տեղ է տալիս լեզվական միավորներին, հատկապես անդրլեզվյան հասկացությունների նշանային արտահայտություններին՝ վերջիններս արժեքավորելով ամենից առաջ գործնական նպատակներով[5]:

Արտալեզվական և լեզվական նշանների ուսումնասիրությունը հնարավոր է իրականացնել հիմնականում երկու հայեցակետով. առաջինը գոյաիմացաբանական հայեցակետն է, իսկ երկրորդը՝ լեզվահաղորդակցա-

[5] Տե՛ս Культура Древней Индии, 1976, 375: *Նշանագիտություն* տերմինը թեև առաջին անգամ գործածում է Ջ. Լոկը, սակայն նշանի մասին գիտելիքներն իրենց ակունքներն ունեին հույն ստոիկյան փիլիսոփայության մեջ: Այդ ուղղության ներկայացուցիչները, իրենց հերթին, այս առումով ազդվել էին հունական բժշկագիտության ավանդույթներից. հունական բժշկության մեջ մարդու հոգեվիճակի հետ կապված ախտորոշիչ (դիագնոստիկ) և կանխարգելիչ (պրագնոստիկ) երևույթները մեկնաբանվում էին իբրև նշանային պրոցեսների դրսևորումներ:

կանը կամ անվանաբանականը: Քանի որ գոյաիմացաբանական հայեցակետային ուսումնասիրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ արտալեզվական և լեզվական նշանների քննություն, այսպես կոչված, փիլիսոփայական առումով, փիլիսոփայական կողմի՝ առարկայի և նրա մասին ստեղծված գաղափարի փոխհարաբերության բացահայտումով, իսկ լեզվական-հաղորդակցականը կամ անվանաբանականը՝ լեզվաբանական կողմի, այսինքն՝ առարկայի հիման վրա ստեղծված գաղափարի և վերջինիս անվանման փոխհարաբերության վերհանումով, ուստի այստեղ արդեն տվյալ դեպքում մեր ուշադրության առարկան ամբողջովին լեզվական միավորների կոնկրետ նշանային բնութագրի բացահայտումն է լեզվական հաղորդակցման հայեցակետից:

բ. Նշանագիտությունը, որպես առանձին գիտակարգ և ուսումնասիրության ուրույն խնդիրներ ունեցող բնագավառ, ֆենոմենոլոգիական-փիլիսոփայական առումով առանձնացվում է Չ. Պիրսի, իսկ լեզվահաղորդակցական տեսակետից՝ Ֆ. դը Սոսյուրի կողմից, ընդ որում, եթե Պիրսը նշանի և նշանակության կապը պայմանավորում է անհատի վարքի ընձեռած հնարավորություններով, ապա Սոսյուրը դրան ավելի շատ ունի հասարակական (սոցիալական) պայմանավորվածություն: Սոսյուրի պատկերացմամբ նշանագիտությունը (իմա՝ նշանաբանությունը. semiologie) պիտի դիտվի մի այնպիսի համապարփակ գիտակարգ, որի մեջ ընդգրկվեն ինչպես ուրիշ գիտություններ, այնպես էլ լեզվաբանությունը:

Արտալեզվական և լեզվական ոլորտների տարբերակման հիմունքների, նրանց նշանային ներքին կազմակերպվածության և արտաքին դրսևորվածության ընդհանուր հայեցակետային աստիճանավորումների, համապատասխան փոխանցումների և ստորակարգումների, այլև սրանց հարաբերությամբ լեզվական ոլորտի գործառական կազմակերպվածության կոնկրետ հայեցակարգային քննությունը վերջին տարիներին մեզանում հետևողականորեն կատարել է Է. Աթայանը[6]:

գ. Մարդկային լեզվի մենաշնորհը բնապատմական զարգացման արդյունք է: Եվ որպես անհատի ինքնարտահայտման միջոց, իբրև աշխարհի ճանաչման, իմացության միակ հարատև միջոց, լեզուն անփոխարինելի է մարդկային հաղորդակցման համար: Ինքնարտահայտման երկկողմանի կապի վերլուծության (հաղորդման) և համադրության (ընդուն-

[6] Տե՛ս Соссюр 1977, 53-55: Հմմտ. Атаян, 1976:

ման) գործողությունները ապահովում է հաղորդակցումը: Վերջինիս գործառական բաշխվածությունը բնութագրվում է հաղորդակից կողմերի տարածական և ժամանակային հնարավորություններով, որտեղ վճռորոշ, արմատական նշանակություն է վերապահվում հաղորդակից կողմերի հոգեկան-ֆիզիոլոգիական և հասարակական-աշխարհայացքային առանձնահատկություններին: Ըստ այդմ էլ, լեզվական գործունեության անմիջական նյութ հանդիսացող արտալեզվական աշխարհի և նրա լեզվական պատկերի բացահայտմանը ծառայող հաղորդակցական երկկողմանի կապը և գործառական բաշխվածությունը, իբրև ճանաչողության միասնական և ընդհանրական պրոցեսի բնութագրիչ կողմեր, կազմում են լեզվաիմացական արժեք ունեցող գոյի՝ ուսումնասիրության առարկայի հիմքը: Այս պրոցեդուրալ ամբողջության մեջ է, որ լեզուն հանդիսանում է կենսաձև, մարդկային գործունեության արտահայտիչ:

դ. Հաղորդակցումը մարդկային լեզվական գործունեության էությունն է: Այն հանդես է գալիս կոնկրետ երևույթների՝ ինքնարտահայտումների միջոցով: Ինքնարտահայտումը, սակայն, լինելով հաղորդակցման կոնկրետ դրսևորումը, միշտ չէ, որ գոյանում է իդեալական վիճակով, այսինքն՝ նյութական առումով ձևավորված, ուղղվածության տեսակետից՝ կողմնորոշված, և գործառության դիրքերից՝ բաշխված: Իսկ սա նշանակում է, որ ինքնարտահայտման տարբեր դրսևորումները կարող են միասին բնութագրվել հիմնականում երեք տարբերակիչ հատկանիշով՝ նյութականություն, կողմնորոշվածություն և բաշխվածություն:

1) Ելնելով ինքնարտահայտման նյութականության կամ հաղորդակից կողմերի, հաղորդվող նյութի տարբերակիչ հատկանիշից՝ առանձնացնում ենք ձևավորված («ձևակերպված») և չձևավորված («ամորֆ») ինքնարտահայտում: Դրանցից առաջինը աչքի է ընկնում ձևական-իմաստային համամասնությամբ և, ըստ այդմ, զուգակշիռ դրսևորվածությամբ, իսկ երկրորդը՝ «մաքուր» բովանդակությամբ, այսինքն՝ անզուգակշիռ առկայացմամբ, չձևավորված բովանդակությամբ ինքնարտահայտում: Երկրորդ դեպքի համար է ասված, թե գաղափարը կա, սակայն այն դրսևորված չէ, դեռևս ձևավորված չէ, վերջնական-սահմանումային տեսքի չի բերված:

2) Ըստ կողմնորոշվածության կամ հաղորդակից կողմերի միջև հաղորդվող նյութի ուղղվածության տարբերակիչ հատկանիշի՝ առանձնացնում ենք երկկողմանի և միակողմանի ինքնարտահայտում: Երկկողմանի

ինքնարտահայտումը ձևավորվում է առարկայական աշխարհի լեզվագործունեությամբ օժտված առնվազն երկու էակների միջև և առնչվում է վերջիններիս հաղորդակցական գործուն փոխհարաբերության հետ: Իսկ միակողմանի ինքնարտահայտումը դրսևորվում է առարկայական աշխարհի լեզվական գործունեությամբ օժտված հաղորդակից էակներից մեկի կամ մյուսի մեջ՝ առանձին-առանձին, միաժամանակ կամ զանազան պահերի ու տարբեր հանգամանքների բերումով և հարաբերվում է նրանց անհաղորդակից, ներքին բաբախումների ոլորտում սփռվող լեզվագործունեության հետ:

3) Ըստ ինքնարտահայտման գործառական բաշխվածության տարբերակիչ հատկանիշի կամ հաղորդակից կողմերի տարածական-ժամանակային հնարավորության, այսինքն՝ ըստ հաղորդվող նյութի որակական-քանակային արժեքավորության՝ բաժանում ենք տվյալ տարածական-ժամանակային հատվածում որոշակի քանակով և որակով բաշխված ինքնարտահայտում և ընդհակառակը՝ տվյալ տարածական-ժամանակային հատույթում անորոշ քանակով և որակով բաշխված ինքնարտահայտում: Ըստ այսմ՝ երկկողմանի, ձևավորված և իմաստալից կամ միակողմանի, չձևավորված («ամորֆ») և ոչ իմաստալից (անիմաստ, «ալոգիկ») բաշխվածություն ունեցող ինքնարտահայտումներն այնպիսի երևույթներ են, որոնց էությունն է անորոշ, անտես («ամորֆ») և չգործառված («անֆունկտիվ») ինքնարտահայտումը: Հիշյալ երկու կողմերը նույնպես բնավ մեկուսացած չեն միայն նշված բնութագրիչ հատկանիշներով, ուստի դեռ ավելին՝ հաղորդակցման գործընթացում հնարավոր է տարբերակիչ հատկանշային փոխանցում:

Այսպես, անձնական դերանունների հարաբերակցումը, գեղարվեստական խոսքում՝ իբրև լեզվական պատկերի բաղադրիչների միասնության նմուշ, կարող է ունենալ յուրահատուկ դրսևորում: Հմմտ. «Ես եմ, դու ես, ես ու դու / Օրերում այս դյութական, / Մենք մենակ ենք՝ ես ու դու, / Ես էլ դու եմ, ես չկամ»[7]: Այստեղ գործառական դիմային բաշխվածություն ունեցող անձնական դերանունների տարասեռ հակադրությունները հաղորդակցման կողմնորոշվածության՝ ձևավորման, իմաստավորման և գործառման տեսակետից այնպիսին են, որ *ես* կամ *դու* դիմային-հասկացական անվանումներն առանձին-առանձին միակողմանի, անձև իմաստային

[7] Տերյան 1989, 111:

բաշխվածություն ունեցող նշաններ են. հմմտ. *ես (եմ), դու (ես)* ըստ էության երկկողմանի, ձևային և իմաստակիր բաշխվածություն ունեցող *ես-(ու)-դու* ընդհանրական նշանի կոնկրետ իրացումներն են, իսկ *ես ու դու* (տեքստում՝ կրկնակի կիրառությամբ), նաև *մենք մենակ ենք* միավորների դեպքում նկատելի է ինքնարտահայտման տարբերակիչ հատկանիշների փոխանցմամբ բնութագրում (հաղորդման վերլուծություն կատարողն իր *ինքնաճանաչմամբ* ներառվում է հաղորդակցի ճանաչման մեջ): Եվ սրանց համեմատությամբ *օրերում այս դյութական* ոչ ակտուալ ստորոգական արտահայտությունը («մենք գտնվում ենք այս դյութական օրերի մեջ») նշանակում է կոնկրետ տարածական-ժամանակային այն բաշխվածությունը, այն առկա իրադրությունը («երրորդ դեմքը՝ ի հակադրություն *ես* -ի և *դու*-ի»), որում հայտնվում են («տեղադրվում են») հաղորդակից կողմերը[8]:

3. Ըստ հաղորդակցվողների հասարակական լեզվական գործունեությունը պայմանավորող հոգեֆիզիոլոգիական ընդունարանների գործառության բաշխական հաշվառման չափանիշի, որին հարկ ենք համարում ըստ էության անդրադառնալ, իմացության պրոցեսի մեջ ընդգրկվող առարկաները հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի՝ տեսողական և լսողական:

ա. Տեսողական առարկաների ճանաչումը ինչ-ինչ հանգամանքներում կարող է հաստատապես հարստանալ այնպիսի զգացումների ընձեռած տեղեկություններով, ինչպիսին են համը, հոտը, շոշափումը, որոնց համար կարելի է անել հետևյալ վերապահումը. տեսողական առարկաները հիմնականում շոշափելի են, ունեն որոշ առումով համ և հոտ (հմմտ. կոնկրետ առարկաների դեպքը), մասամբ միանգամայն զուրկ են դրանցից (հմմտ. վերացական առարկաների դեպքը, օրինակ՝ գրային նշանները, հնչյունները և այլն):

Լսողական առարկան, նախորդից տարբեր, տարածական-ժամանակային իմացության մեջ ավելի շուտ ինչ-որ չափով ենթակա է ոչ կոնկրետ իմացության, և, ըստ այսմ, այն ավելի վերացական է (իմա՛ «անտեսանելի», «անշոշափելի», «անհամ» և «անհոտ»):

---

[8] Այս երկանդամ բաշխումը հիմնականում բնորոշ է հնդեվրոպական լեզուներին, որոնք, իբրև ընդհանուր ժառանգություն, չունեն երրորդ դեմքի անձնական դերանվան առանձին ձև, որը լրացվում է ցուցական դերանունների հաշվին, որն էլ այս տիպի լեզուների համար, ամենայն հավանականությամբ, ավելի ուշ ներդրում է:

Հաղորդակից կողմերը գործ ունեն հար և միշտ արտասանական-լսողական առարկա հանդիսացող ինչյունների հետ, որոնց դեպքում բացառվում է մյուս զգայարաններով կատարվող տեղեկությունների մասնակցություն, ավելին՝ անհրաժեշտությունը (հմմտ. ինչյունը կամ բառը և այլն չունեն համ, հոտ, գույն և այլն հատկությունները):

Բ. Լեզվական հաղորդակցման պրոցեսում միակ հիմք հանդիսացող բանականությունը («վեցերորդ զգայարանը») ձևավորման իսկ պահից ընկած է մյուս զգայարանների հիմքում, նստած է նրանց գործունեության արտագնա կարգավորումների և խորընկա կազմավորումների ճանապարհին:

Բանավոր հաղորդակցման դեպքում նշանակումը տեղի է ունենում լսողական և սրան առնչվող այլ համակարգերի անմիջական մասնակցությամբ: Եվ ըստ այդմ, լսողական-նշանային համակարգում ոչ միտումնավոր, այլ առարկայորեն (օբյեկտիվորեն) բացվող (բացահայտվող) խլությունը («չլսելը»), այլև համրությունը («չխոսելը»), ինչպես նաև սրանց հակադրությամբ, որն այս անգամ գոյանում է արդեն միտումնավոր՝ ոչ առարկայորեն (սուբյեկտիվորեն) փակվող (չբացահայտվող) լռությունը («չլսելու տալը» և «ձայն չհանելը») նշաններ են, ինչպես որ գրավոր հաղորդակցման պրոցեսում, տեսողական համակարգերի անմիջական մասնակցությամբ դրսևորվող նշանները: Իսկ վերջինները ևս միանգամայն ոչ միտումնավոր, այլ առարկայորեն հանդես եկող, մի կողմից՝ երկու բառի, այլև նախադասության (կամ ասույթի) միջև գրանշանների բացակայությունը (հմմտ. տեքստում բացատների գոյությունը), իսկ մյուս կողմից՝ բառերի, այլև նախադասությունների և ասույթների կրճատումը՝ կախման, զեղչման նշանների բացթողումը (կետանիշների «չգրությունը»), վերջապես սրանց հակադրությամբ, այս դեպքում երևույթը դրսևորվում է նույնքան միտումնավոր, սուբյեկտիվ եղանակով, արտասանական հպանցիկությունը՝ մեկ գրանշանի փոխարինումը մեկ ուրիշով կամ տվյալ գրանշանի վրիպումը («կուլ գնալ») ընթերցման հոսքի ինտենսիվության հետևանքով (հմմտ. գրանշանների «անտեսելը»):

Այս երևույթը բնորոշ է հաղորդակցական որոշակի հատույթ ներկայացնող յուրաքանչյուր խոսքի: Հմմտ. «Կա հոգեկան անհունության մի վայրկյան, / Երբ ամեն ինչ սուրբ է թվում ու անբիծ, / Երբ երազ է դառնում տաղտուկ առօրյան / Ու դառնում են ուղևորները ճամփից: /Դուռս բաց է, դուռս բաց է ձեզ համար /Օ՜, հեռավոր բարեկամներ ու քույրեր./ Սիրտս

վառել է կրակները անմար՝ /Հին երազներն ու կարոտները հրե»[9]: Այստեղ գեղարվեստական-խոսքային համադրության մեջ իմաստակիր լեզվական նշանների՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների, բառի բուն իմաստով՝ արժեքավոր նշանակությունների (գեղարվեստական պատկերի արժեք ներկայացնող անհատական-ոճական դրսևորումներով միջնորդավորված) նշանակումների կողքին գրավոր, այլև բանավոր խոսքային համակարգերում ոչ պակաս նշանակալից տեղ են գրավում գրավոր-խոսքային բացատների, հենակցումների, այլև համապատասխանաբար՝ բանավոր-խոսքային անցումների. դադար-կանգառների նշանակումները (հմմտ. բառերի միջև առկա բացատ-նշանները, բառակապակցությունների միացումները ստորակետ-նշանների օգնությամբ, որոնք արտացոլում են բանավոր խոսքի անցումները, դադարները, կախման վիճակի ապահովումը՝ իբրև առոգանական նշաններ):

Այնպես որ, ինքնարտահայտման հնարավորությունների սահմաններում այնքան էլ նեղ չեն գեղապատկերային կառույցների կիրառության շրջանակները, որ ձգվում են աննշան թվացող նշանակումներից (հմմտ. բացատ, հենակցում, դադար և այլն) մինչև նշանակալից համարելի նշանակումները (հմմտ. բառ, բառերի կապակցություն, նախադասություն և այլն):

գ. Լեզվական միավորների «արտահայտության պլանի միավորների ուսմունքը կամ արտահայտաբանությունը» (իմա՝ «հնչաբանությունը, գրաբանությունը և շարժաբանությունը») արդի լեզվաբանության մեջ առաջին անգամ ուշադրության հատուկ առարկա է դառնում միայն վերջին ժամանակներս[10]:

Հնչույթը լեզվական նշան է, հաղորդակցման միջոցի ելակետային՝ սկզբնական մակարդակի բուն միավոր, որ կազմավորվում է լսողական-տեսողական առարկա հանդիսացող հնչյունների իմացությամբ և ընդհանրացմամբ (վերացարկմամբ): Հնչյունը մեկընդմիշտ մնում է իբրև առկա իրականության որոշակի տարածական-ժամանակային հատույթում ազդանշվող բնական վիճակի դրսևորման, առկայացման ձև: Այն գործառում է ազդանշանայնորեն (իբրև ազդանշան. հմմտ. մեկ-երկու ամսական մանկան «հաղորդակցումը») և, ըստ այդմ, ունակ է ճանաչվելու, իմացության գործընթացի մեջ ընդգրկվելու: Թե՛ արտալեզվական և թե՛ վերջինիս հի-

[9] Չարենց 1983, 106-107:
[10] Ջահուկյան 1970, 31-122:

ման վրա բնապատմական առաջընթացի մեջ եղանակավոր (մոդուլացիոն) ճանաչումով գոյացած լեզվական հնչյունների էական տարբերակիչ հատկանիշը եղել և մնում է ազդանշանայնությունը (սիգնալայնությունը): Վերջինս, բնականաբար, հիմնարար նշանակություն է ունեցել բնազդանշանային («ինքնին, ինքն իր մեջ») կամ մինչգիտակցական ոլորտի առումով ընդհանրապես նշանային «համակարգերից» լեզվազդանշանային («այսկողմնային» կամ «մեզ համար») կամ գիտակցական ոլորտի առումով կոնկրետ լեզվանշանային համակարգերի ձևավորման («արտահայտման») հետագա կատարելացման համար:

Նկատելի է նաև, որ բնազդանշանայնությունը եղել է ձևավորման, գոյացման վիճակ (status nascendi) լեզվազդանշանայնության համար: «Հնչյունը մնում է մարդկային լեզվի ֆենոմենը, և նրա մեջ պետք է փնտրված լինեն այն հատկանիշները, որոնք թույլ են տալիս նրան դառնալու լեզվական ունակության իրականացման լավագույն միջոցը (որը կարող է հիմնավորվել արդեն լեզվի գոյության փաստի օգնությամբ)»[11]:

Եվ այստեղ առկա է այն, որ ազդադանշանայնության հատկանիշն արդեն յուրովի պարունակում է հաղորդակցման սաղմ. հնչյունը՝ ընդհանրապես, և լեզվում՝ մասնավորապես: Հնչյունը լեզվական հաղորդակցման նվազագույն տարր է, հոդաբաշխ ելակետային միավոր[12]: Հոդաբաշխ հնչյունը գոյանում է բնազդային-ազդանշանային և ըստ այդմ՝ բնական (ոչ ազդանշանային, ոչ պայմանական) ձայներից: Այս դեպքում փոխպայմանական (կոնվենցիոնալ) զարգացման որոշակիորեն առարկայական (օբյեկտիվ) պայմանների հաշվառումով ձայնը դադարում է պատահական (ոչ-պայմանական) լինելուց: Թեև իր հիմքում և սաղմնային վիճակում ձայնը պատահական էր, այժմ այն դառնում է անհրաժեշտ ձայն մեզ համար: Այն գիտակցվում է իբրև լեզվական հաղորդակցման անհրաժեշտ տարր, ձեռք է բերում լեզվանշանային ունակություն (կամ հնարավորություն, անգլ. competence):

Այնուհետև, արտահայտաբանությունը դիտարկելով որպես «արտահայտության երեք տեսակի միջոցների՝ արտահայտչական շարժումների

[11] Аветян 1968, 13:

[12] Արիստոտելն ունի այն գաղափարը, ըստ որի՝ հնչյունները՝ որպես բառերի առկայացուցիչներ, և բառերը՝ իբրև հասկացությունների արտահայտիչներ, ունեն սիմվոլիկ բնույթ. «հնչյուններով արտահայտած բառերը հոգու մեջ եղած գաղափարների սիմվոլներ են, իսկ գրերը՝ բառերի սիմվոլները». տե՛ս Аристотель 1976, 93:

(շարժամիջոցների) և գրային միջոցների (գրամիջոցների) ուսումնասիրություն», Գ. Ջահուկյանը դրանք ամենից առաջ տարբերում է ըստ պայմանականության հատկանիշի[13]:

Եվ, ըստ այդմ, կարելի է մտածել, որ հնչյունը դառնում է հաղորդակցական անհրաժեշտ միջոցի (լեզվի) սկզբնական և ելակետային տարր, նույնպես օժտվում է լեզվանշանայնությամբ և սփռվում ողջ մտածողության հիմքում՝ վերջինիս բնապատմական զարգացման ընթացքում:

5. Լեզվական նշանների հաղորդակցական առնչությունն ունի համակարգային բնույթ, դրսևորվում է որոշակի կառուցվածքային առանձնահատկություններով: Եթե լեզուն նշանային համակարգ է (որն ամենևին կասկած չի հարուցում), ապա նրա կառուցվածքի բոլոր բաղադրիչները (բաղադրամասերը), բնականաբար, նշանային են, այսինքն՝ լեզվական յուրաքանչյուր մակարդակի կամ աստիճանի միավոր աներկբայորեն ունի նշանային բնույթ:

Սակայն լեզվական համակարգի բաղադրիչների նշանային բնութագրման հարցը լեզվաբանության մեջ դեռևս դիտարկվում է անհամամասնական, միակողմանի գնահատության մեջ. ոմանք գտնում են, որ լեզվական միավորների մի մասը օժտված է նշանայնությամբ (օրինակ՝ բառը), իսկ մյուս մասը՝ ոչ (օրինակ՝ հնչույթը): Ըստ Է. Բենվենիստի՝ «նախադասությունը պարունակում է նշաններ, բայց ինքը նշան չէ»[14]: Վ. Զվեգինցևը գտնում է, որ «չնայած նախադասությունը պարունակում է նշաններ, այն չի կազմված սոսկ միայն նշաններից: Եվ ամեն անգամ, երբ գործածում ենք *նշաններ* նախադասություն կազմելու համար, մենք նշաններով ստեղծում ենք երևույթ, որը նշանային չէ: Վերակազմավորման այս առեղծվածը արդեն վաղուց հուզում է լեզվաբաններին, բայց չի կարելի ասել, թե այն վճռված է»[15]:

Ամբողջ հարցն այն է, որ նշանային միավոր համարվող բառին նախորդող այնպիսի մակարդակային միավոր, ինչպիսին է հնչույթը, ինչպես նաև հաջորդող այնպիսի մակարդակային միավորը, ինչպիսին նախադասությունն է, ներկայացվում են որպես բառի համեմատությամբ ավելի ստորակա և ավելի գերակա նշանային կազմավորումներ: Տվյալ դեպքում

[13] Ջահուկյան 1970, 53:
[14] Бенвенист 1974, 139:
[15] Звегинцев 1970, 95:

ստացվում է այնպես, որ մի կողմից՝ հնչույթը այնպիսի ոչ նշանային միավոր է, որ համադրում է նշանային միավոր (իմա՛ բառ), մյուս կողմից նշանային միավոր համարվող բառերով, անկախ առկա (ակտուալ) և ոչ առկա (վերառյալ) ստորոգականությունից, համադրվում են ոչ նշանային կազմություններ (իմա՛ նախադասություններ և այլն):

ա. Մեր պատկերացմամբ, լեզվանշանային բնույթ ունեն ոչ միայն ինքնուրույն մակարդակ ներկայացնող վերոհիշյալ միավորները (հնչույթը, այլև բառը՝ բնականաբար, նաև նախադասությունը), այլև այնպիսիները, ինչպիսիք են, օրինակ, հնչատարրույթը (հնչյունի տարբերակիչ հատկանիշը), վանկը, ձևույթը՝ մի կողմից, և բառակապակցությունը, շարույթը՝ մյուս կողմից, ընդհուպ լեզվականորեն սովորաբար «աննկատ միավորները»՝ կետադրության, առոգանության և նման կարգի մյուս նշանները[16]: Սա բնավ արտառոց չէ, քանի որ ընդունում ենք, թե լեզուն նշանային համակարգ է, որ տարածվում է բոլոր բաղադրիչների վրա:

Լեզվի նշանայնությունը հավասարապես տարածվում է բոլոր մակարդակների միավորների վրա: Տարբերությունն այն է, որ տարբեր մակարդակներում այն կարող է ունենալ դրսևորման տարբեր լարվածություն (ինտենսիվություն): Լեզվի նշանային համակարգի բաղադրիչները պետք է բավարարեն կառուցվածքային հետևյալ չափանիշները:

1) Նման միավորները բնորոշվում են մակարդակային և աստիճանային կազմավորվածությամբ. յուրաքանչյուր լեզվական նշան, իբրև համակարգի ելակետային տարր և նյութական արժեք ունեցող միավոր, կա՛մ հանդես է գալիս որոշակի մակարդակում, կազմում է որոշակի սահմանային-վերջնական եզր՝ մակարդակ, կա՛մ դրսևորվում է տվյալ մակարդակի ելակետային վիճակով, առկայանում է իբրև ենթամակարդակային, սահմանային-սկզբնական եզր՝ աստիճան: Ըստ այսմ՝ լեզվական նշանը ոչ այլ ինչ է, եթե ոչ համակարգի մեջ որոշակի մակարդմամբ և աստիճանավորմամբ հանդես եկող հաղորդակցական նյութական միավոր:

2) Լեզվական նշանն ունենում է որոշակիորեն ակնհայտ դրսևորվածություն և ընդգրկվածություն: Առաջինը նրա գոյն է, առկայացումը արտահայտության և բովանդակության պլանների մեջ, իսկ երկրորդը՝ այդ

[16] Հմմտ. լեզվի տեսության մեջ լայն գործածություն ունեցող *կետադրական նշան* տերմինը և այլն:

նույն գոյի կազմավորումը, հաղորդակցական գործընթացում շղթայակցվելը առկա հարացուցային շարքի մեջ, որոշակի շարակարգային գծայնությամբ. լեզվականը գոյություն ունի խոսքային ընդգրկուն դրսևորմամբ:

3) Լեզվանշանային միավորները խոսքի մեջ՝ լեզվի կառուցվածքում, ունենում են կոնկրետ գործառական բաշխվածություն: Իսկ դա նշանակում է, որ լեզվական նշանը, որպես ընդհանրական էություն ունեցող հաղորդակցական միավոր, բաշխվում է եզակի հնարավոր կիրառությունների մեջ և գործածվում այդ հնարավոր կիրառություններից միայն մեկով, հաղորդվող նյութի միայն տվյալ տարածական-ժամանակային հատույթում: Կիրառությունը տվյալ լեզվական նշանի կոնկրետ նշանակության գործառումը (ֆունկցիան) է որոշակի հաղորդակցական տիրույթում: Այստեղ արդեն նշանակությունը կոնկրետ է, իսկ գործառումը՝ որոշակի:

Ի մի բերելով վերը ասվածը՝ մնում է ավելացնել, որ արտալեզվականի լեզվական դառնալը և հակառակը՝ լեզվականի արտալեզվական վերադառնալը նշանի ոգին է, նշանակությունը: Այլ կերպ ասած՝ իրականության արտացոլումը լեզվի մեջ և հակառակը՝ լեզվի վերարտացոլումը իրականության մեջ նշանային բնույթ ունեն: Եվ ըստ այդմ՝ լեզվի յուրաքանչյուր միավոր նշանային է, իսկ ամեն մի նշան ունի լեզվական հիմք: Ուստի հետայսու լեզվական միավորի բնութագրմանն անդրադառնում ենք իբրև նշանային միավորի:

բ. Լեզվական նշանները, իբրև համակարգային միավորներ, խոսքում որոշակի հարաբերակցային կախվածության մեջ են, որը կառուցվածքի առումով տարրալուծելի է: Հարաբերակցային կախվածությունը և կառուցվածքային տարրալուծելիությունը լեզվական նշանի մյուս բաղադրիչ առանձնահատկությունն են: Ըստ այսմ, պարզվում է, թե տվյալ լեզվական միավորը այլ միավորների հետ ինչ հարաբերակցություն ունի և տվյալ հարաբերակցային կախվածության մեջ սերտության ինչ աստիճան է ներկայացնում, ինչպես նաև հարաբերակցային կախվածության որոշակի աստիճան ներկայացնող լեզվական նշանները միասին կամ առանձին-առանձին որքանով են տարրալուծելի և սահմանային:

Եվ ըստ հարաբերակցային կախվածության հատկանիշի՝ տարբերակում ենք անկախ և կախյալ հարաբերակցության լեզվական միավորներ, իսկ ըստ կառուցվածքային տարրալուծելիության հատկանիշի՝ զանազանում ենք տարրալուծելի (ոչ սահմանային՝ ամբողջական) և անտարրալու-

ծելի (սահմանային՝ մասնական) լեզվական միավորներ: Տարրալուծելի (ոչ սահմանային) բնույթ ունեցող լեզվական միավորները, իրենց հերթին, վերաբաշխելի կամ վերատարբերակելի են: Վերջինս կատարվում է ըստ կառուցվածքային տարրալուծելի-/զուգորդելիության ենթահատկանիշի, որի շնորհիվ ստացվում են տարրական համադրական (միասնական՝ ամբողջական) և տարրական հարադրական (մասնական՝ վերլուծական) կառուցվածքային բնութագիր ունեցող լեզվական միավորներ, և որոնք էլ, բնականաբար, եռանդամ հարաբերակցության մեջ են մտնում տարրական (սահմանային) լեզվական միավորների հետ:

գ. Լեզվական միավորի կառուցվածքային բնութագիրը խարսխվում է նաև հաղորդման պատկերային կողմի վրա: Պատկերը լեզվական նշանի հնչեղությունն է ինքնին կամ, այսպես կոչված, մյուսների հետ («յուրայինների շրջանում»)՝ վերցված հարացուցային կամ շարակարգային հարաբերակցության մեջ: Այս դեպքում, ըստ լեզվական նշանի հնչեղության (ֆոնացիայի) հատկանիշի, առանձնացվում են մենահունչ (մոնոֆոնիկ) և համահունչ (սիմֆոնիկ) լեզվական նշաններ:

1) Հնչույթները, խոսքի մասերից որոշ կապեր (հմմտ. *ի, ց* և այլն) շաղկապներ (հմմտ. *և, ու* և այլն), ձայնարկություններ (հմմտ. *օ՜, ա՜, ի՜, ո՜ւ* և այլն) ըստ էության մենահունչ լեզվական միավորներ են, եթե նկատի ենք ունենում ժամանակային միայն մեկ կտրվածք և ոչ թե, ասենք, նույն լեզվական վիճակի տարածական կտրվածքի հետ միասին վերցված, որի դեպքում կունենայինք, այսպես կոչված, այլահունչ (ալոֆոնիկ) հարաբերակցություն:

Մենահունչ միավորներ են նաև այն վանկերը, որոնք կազմված են մեկ պարզ վանկարար ձայնավորով (հմմտ. *ա-ղա-ղակ, ի-հար-կե* վանկերից առաջինները և այլն): Մյուս գրեթե բոլոր դեպքերում մենք գործ ունենք համահունչ լեզվական միավորների հետ:

2) Նախադասություններից միակազմը (հմմտ. *Քաղաք: Լռություն* և այլն), կրճատը (հմմտ. *Երևի: Թեկուզ* և այլն), հարցուպատասխանականը (հմմտ. *Ո՞վ: Այո: Ոչ* և այլն) կազմված են լինում մեկ պարզ բառային միավորով, որ, բնականաբար, նշանային բնույթի են և այլն:

3) Լեզվական պատկերը պարզվում է հաղորդակցման գործընթացում, ընդ որում մասամբ մենահունչ, հիմնականում համահունչ նշանների համադրությամբ, ըստ այդմ՝ գործ ունենք բաղադրիչ միավորների բազմա-

հունչ (պոլիֆոնիկ) դրսևորման հետ: Լեզվի արտահայտաբանության առարկան հիշյալ երևույթների ուսումնասիրությունն է՝ կա՛մ առանձին վերցված, կա՛մ պատմական ընթացքի հարաբերությամբ:

6. Լեզվի նշանային համակարգի համար առանձնացնում ենք երեք մակարդակ, իսկ յուրաքանչյուր դեպքում՝ երկու աստիճան:

ա. Մակարդակներն են՝ հնչույթային, բառային և շարահյուսական: Հնչույթային մակարդակը ելակետային է, բառայինը՝ անցակետային (միջակա), իսկ շարահյուսականը՝ հանգակետային: Հնչույթային մակարդակի միավորը հնչույթն է, բառային մակարդակինը՝ բառը (բառույթը), իսկ շարահյուսական մակարդակինը՝ նախադասությունը (շարահյուսույթը):

բ. Աստիճաններն են հնչատարրույթը (հնչյունի տարբերակիչ հատկանիշը) և վանկը՝ հնչույթային մակարդակում, ձևույթը և բառաձևը՝ բառային մակարդակում, բառակապակցույթը (բառակապակցությունը) և շարակապակցույթը (նախադասությունների կապակցությունը)՝ շարահյուսական մակարդակում:

Ինչպես նկատելի է, լեզվական միավորների մակարդակային և աստիճանային կազմավորվածությունը ստորակարգային (հիերարխիկ) բնույթ ունի: Այն սերվում է նշանային նվազագույն, մենահունչ միավորներից դեպի առավելագույն համահունչ միավորները՝ կապված ձայնա-/հնչանշանային հաղորդակցման մտապատկերային ամբողջականացման և համադրության հետ: Այստեղից էլ այն, որ լեզվի նշանային միավորները, համակարգային սերտությամբ պայմանավորված, մակարդակային, աստիճանային և, այսպես կոչված, աստիճանամակարդակային փոխհարաբերության մեջ են:

Դրանք հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ:

1) Մակարդակային միավորները ընդհանրության մեջ ներկայացնում են ստորակարգային (հիերարխիկ) բնույթի եռանդամ հարաբերակցություն, իսկ կոնկրետ դեպքում՝ երկանդամ անմիջական և միջնորդավորված փոխհարաբերություն: Այդ միավորներից հնչույթը և բառը, այլև բառը և շարահյուսույթը, բնականաբար, անմիջական, իսկ հնչույթը և շարահյուսույթը՝ միջնորդավորված երկանդամ հարաբերակցության մեջ են. այդ հարաբերակցությունը միջնորդավորված է բառով:

2) Ստացվում է մակարդակային միավորների պարբերական վերընթացություն, որ սկիզբ է առնում նվազագույն մակարդակի միավորից՝

հնչույթից, և ձգվում մինչև առավելագույն մակարդակի միավորը՝ նախադասությունը: Այդ վերընթացության յուրաքանչյուր փուլում (հանգրվանում), իսկ դրանք այստեղ երեքն են, ունենում ենք նշանի բնութագրիչ յուրահատկությունների բազմակողմ, ծավալային ամբողջություն: Հնչույթը օժտված է համեմատաբար նվազ նշանայնությամբ, նրա բնութագրիչ հատկանիշները, բնականաբար, ավելի թույլ են: Բառը հնչույթի համեմատությամբ բնութագրվում է ավելի ուժեղ նշանայնությամբ, սակայն ավելի նվազ, քան նախադասությունը: Վերջինս բնորոշվում է առավելագույն նշանայնությամբ:

Եվ եթե մակարդակային միավորները բնութագրելու լինենք լեզվանշանային նվազագույն մեկ որոշակի հատկանիշով, ապա ամենից առաջ կնկատենք, որ հնչույթը բնորոշվում է հնչման նշանայնությամբ (=*արտասանական նշանակում),* բառը՝ անվանման նշանայնությամբ (=*անվանողական նշանակում*), իսկ շարահյուսույթը՝ ստորոգման նշանայնությամբ (= *ստորոգական նշանակում):* Արտասանականի իդեալը անվանումն է, որ հնչյունական մակարդակում ստեղծում է ելք («հնչակապակցում»), անվանականի իդեալը՝ կապակցումը, որ բառային մակարդակում ներկայանում է իբրև միջակայք («բառակապակցում»), իսկ ստորոգականի իդեալը՝ շարահյուսումը, որ շարահյուսական մակարդակում ներկայանում է իբրև մուտք («շարակապակցում»): Այլ կերպ ասած՝ արտասանականը իրական (ռեալ), ձևավորված վիճակով գոյություն ունի անվանականի և ստորոգականի մեջ, թեև ինքնին՝ հնչյունական մակարդակում, այն ներկայացնում է որպես ելքային վիճակ («հնչակապակցում»), ինչպես նաև անվանականը իրական (ռեալ), ձևավորված վիճակով առկա է ստորոգականի մեջ, թեև ինքնին՝ բառային մակարդակում, այն ներկայացնում է իբրև միջակա վիճակ («բառակապակցում»), սակայն ի հակադրություն արտասանականի, մի այնպիսի վիճակ, որ ներքուստ ձգտում է դառնալու ստորոգական: Այս դեպքում է, որ յուրաքանչյուր անվանական նշանակում ոչ այլ ինչ է, քան «թաքնված» (իմպլիցիտ) ստորոգական նշանակում:

Այսպիսով, լեզվական հաղորդակցում նշանակում է մենահունչ հնչույթներից համահունչ իմաստակիր հնչույթաշարքերի (բառերի) գոյացում կամ սերում, որոնք, իրենց հերթին, առաջ են բերում տարահունչ հաղորդակից բառաշարքեր (շարահյուսույթներ. նախադասություններ), այլև համահունչ շարահյուսույթների խմբերից հետագա դրսևորումներ (պարբերություն կամ տեքստ):

3) Այս կամ այն մակարդակում աստիճանային միավորների առնչությունը, բնականաբար, պայմանավորված է տվյալ մակարդակի միավորով՝ ընկած սկզբի և վերջինի միջև («կիզակետում»). մակարդակների ներսում ելակետային միավորով սերվում է տվյալ աստիճանային միավորը, որ միաժամանակ հիմք է վերջակետային աստիճանային միավորի գոյացման: Այսպես, հնչույթային մակարդակում ելակետային և վերջակետային աստիճանային միավորներ են *հնչատարրույթը* (հնչույթի տարբերակիչ հատկանիշը) և *վանկը,* բառային մակարդակում՝ *ձևույթը* և *բառաձևը*, իսկ շարահյուսույթային մակարդակում՝ *բառակապակցույթը* (բառակապակցությունը):

7. Լեզվական միավորների աստիճանային-մակարդակային առնչությունը ևս եռանդամ է, որը գոյանում է տվյալ մակարդակային միավորով միջնորդավորված և այդ նույն մակարդակային միավորին հարող ելակետային և վերջնակետային աստիճանային միավորների առանձին-առանձին երկանդամ հարաբերությունների հիմունքով: Այսպես, հնչատարրույթի որոշակի և էական հատկանիշի նշանակումով համադրվում է հնչույթի այն նշանակությունը, որը հիմք է վանկի նշանակության գոյացման համար: Այս, մյուս երկու մակարդակներում ևս անխտիր գործ ունենք եռանդամ հարաբերությունների հետ, որ ամեն անգամ առկայանում են եզակի մակարդակային և երկակի աստիճանային միավորների մեկ աստիճանային և երկու աստիճանա-/մակարդակային երկանդամ հարաբերությունների համադրումից:

Այսպիսով, մակարդակային միավորները երեք առանձնակի երկանդամ և մեկ միասնական եռանդամ փոխհարաբերության մեջ են: Ընդ որում, աստիճանային միավորները ներկայացնում են յուրաքանչյուր մակարդակի ներսում առկայացող առանձնակի երկանդամ փոխհարաբերություն: Իսկ աստիճանա-/մակարդակային միավորները առանձին-առանձին կազմում են երեք երկանդամ և մեկ եռանդամ փոխհարաբերություն: Բնական է, չենք հաշվում այն առնչությունները, որոնք տեսականորեն գոյություն ունեն երկանդամ աստիճանա-/մակարդակային միավորների միջև՝ նրանց մակարդակային եռանդամ փոխհարաբերության պայմաններում (հմմտ. *հնչատարրույթ-հնչույթ-վանկ* եռանդամանու տեսականորեն հնարավոր փոխհարաբերությունը, ասենք, *ձևույթ-բառ-բառաձև* եռանդամանու հետ և

այլն): Հիշյալ բոլոր կարգի փոխհարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր):



8. Լեզվի յուրաքանչյուր բաղադրիչ, որպես նշանային միավոր, համակարգի մեջ հարաբերականորեն ինքնուրույն բաղադրիչ է, պատկերային բնույթ ունի: Այն հաղորդակցական նշան է այնքանով, որքանով լեզուն, իբրև գիտակցություն, և համապատասխանաբար՝ խոսքը, որպես մտածողություն, պատկերային ձևով են արտացոլում արտալեզվական աշխարհը: Վերջինիս յուրացումը և վերարտադրումը ունեն լեզվական-պատկերային բնույթ: Եվ ըստ այդմ՝ հաղորդակցման շղթայում հաղորդակից կողմերի միջև կատարվում է պատկերի փոխանցում. խոսողը վերլուծում է պատկերը, իսկ լսողը՝ համադրում (գրողը կատարում է պատկերի վերլուծություն՝ «շարադրում», իսկ ընթերցողը՝ համադրություն՝ «վերծանում կամ ընթերցում»):

ա. Լեզվականի պատկերը իմացական արտացոլման մեջ ունի գեղարվեստա-/ գեղագիտական հագեցվածություն: Այն իր ակունքներով բախվում է մարդկային լեզվամտածողությանը, պայմանավորվում է սոցիալ-հոգեբանական, տարածական-ժամանակային և լեզվական-համակարգային բազմաթիվ, բազմաբնույթ գործոններով և ազդակներով:

բ. Նշանի էությունը լեզվական պատկերի հնչեցումն է: Այն հնչուն («հնչեղ») է այն դեպքում, երբ արտահայտում է հարկավոր նշանակությունը, և երբ վերջինս ընկալվում, արտացոլվում է նույնությամբ: Բայց քանի որ հաղորդակցական գործընթացում նշանի նշանակության նշանակումը (իմա՛ նույնաբանություն՝ տավտոլոգիա չէ) հիմնովին կրում է ընդհանուր անհատական բնույթ, ուստի նշանակման մեջ միշտ բաց տեղ է մնում խոսքային անհատականության դրսևորման համար: Այս հարցը, ընդհանուր առմամբ, սերտորեն առնչվում է լեզվական նշանի դրսևորվածության, ընդգրկվածության և գործառական բաշխվածության հետ:

Այս պարագայում, վերջապես, անհրաժեշտ է նշել հետևյալը.

1) Լեզվական ոչ բոլոր նշաններն են, որ իբրև հաղորդակցական նյութական տարրեր, հանդես են գալիս միևնույն ձևով, հաղորդակցվողների գիտակցության մեջ ունենում են միևնույն իմաստը (բովանդակությու-

նը): Այստեղից էլ բխում է այն, որ լեզվական անհամամասնական երկվությունը (ասիմետրիկ դուալիզմը) նրա նշանակության ճիշտ և միակերպ նշանակման առումով հնարավոր թերացման («գայթակղության») առաջին նախապայմանն է[17]:

2) Լեզվական պատկերի հնչեղությունը պայմանավորված է ոչ միայն լեզվի նշանային համակարգի անհրաժեշտ միավորի հարացուցային կոնկրետ ընտրությամբ, այլև նրա շարակարգային նպատակային համադրությամբ: Այս դեպքում նկատի է առնվում այն, թե նշանային ինչ միավորով է հնարավոր հնչեցնել տվյալ լեզվական պատկերը, նույն կարգի միավորների ինչպիսի համադրությամբ է կարելի իրադրայնացնել հնչուն (արտահայտության պլան ստացող) լեզվական պատկերները խոսքի մեջ: Դա ոչ այլ ինչ է, քան նշանակել տվյալ լեզվական պատկերի տվյալ նշանակությունը՝ հասնելով վերջինիս կոնկրետ և անհատական կիրառության: Իսկ դա էլ նշանակում է, որ լեզվանշանային միավորների որոշակի ընդգրկվածության պայմաններում են ստեղծվում («արարվում») կենդանի և հագեցած, ինքնատիպ և անկրկնելի լեզվական պատկերները՝ իբրև իրականության յուրօրինակ արտացոլում:

3) Իդեալական դրսևորվածություն և ընդգրկվածություն ունեցող լեզվական նշանները, մի տեսակ, պակասավոր և թերի են արտացոլելու արտալեզվական պատկերը («իրականությունը») առանց որոշակի գործառական բաշխվածության: Վերջինս, իր հերթին, այլ բան չէ, քան կոնկրետ դրսևորում և ընդգրկում ունեցող հաղորդակցական տարրերի հիմնավոր կիրառություն նույնպիսի գործընթացի տվյալ տարածական-ժամանակային հատույթում (պատմամշակութային միջավայրում):

Լեզվի մակարդակային բոլոր միավորները անխտիր օժտված են վերոհիշյալ երեք կարգի բնութագրիչ առանձնահատկություններով: Հնչույթը, օրինակ, իբրև լեզվանշանային համակարգի նյութական միավորներից մեկը, գեղարվեստական-բանաստեղծական (եթե ոչ նաև այլ կարգի) խոսքում կարող է օժտված լինել պատկերային հնչեղությամբ, այսինքն՝ ամեն մի հնչույթ բանաստեղծական խոսքի մեջ ձևական և իմաստային հնարավորություններով ընդգրկվում է խոսքաշարի հատույթներում, համահունչ գործառությամբ ստեղծում իրական խոսք, ապահովում հաղորդակցում, որ ամեն կարգի գործունեության ելք է:

---

[17] Հմմտ. Карцевский 1965, 85-90:

Գրականություն

Բելինսկի Վ.Գ. 1956, Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. 2, Երևան, «Հայպետհրատ», 613 էջ:
Բրուտյան Գ.Ա. 1972, Փիլիսոփայություն և լեզու, Երևան, «Հայաստան», 613 էջ:
Չարենց Ե. 1983, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 672 էջ:
Ջահուկյան Գ.Բ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 586 էջ:
Տերյան Վ. 1989, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 608 էջ:
Аветян Э.Г. 1968, Природа лингвистического знака, Ереван, “Митк”, 223 с.
Аристотель 1978, Сочинения в 4-х томах, т. 2, Москва, “Мысль”, 687 с.
Атаян Э.Р. 1976, Внутренняя организация и внешняя отнесенность языковой сферы, Ереван, изд. Ер. гос. университета, 191 с.
Бенвенист Э. 1974, Общая лингвистика, Москва, “Прогресс”, 447 с.
Звегинцев В.А. 1970, Семиолингвистические универсалии, “Язык и человек”, Москва, “изд. Моск. университета”, 290 с.
Карцевский С. 1965, Об асимметрическом дуализме лингвистического знака (=Du dualizme asymétrique du signe linguistique, “Travaux du Cercle linguistique de Prague”, I, 1929), В.А Звегинцев, История языкознания XIX-XX веков в очерках и извлечениях, часть II, Москва, “Просвещение”, 496 с.
Культура Древней Индии, Москва, “Наука”, 429 с.
Паустовский К. 1957, Полное собрание сочинений в 6 томах, т. 2, Москва, “Гослитиздат”, 704 с.
Соссюр Ф. де. 1977, Труды по общему языкознанию, Москва, “Прогресс”, 696 с.

ԼԵԶՎԻ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Վազգեն Համբարձումյան

Լեզուն արտացոլում է իրականությունը խոսքի կառուցվածքի տիպերով: Լեզվի համակարգն ունի նշանային բնութագիր, որը միևնույն ձևով կիրառելի է համակարգի բոլոր բաղադրիչների նկատմամբ, լեզվի մակարդակների և աստիճանների փոխհարաբերության առնչությամբ:

Այդ միավորները գտնվում են ստորակարգային հարաբերակցության մեջ՝ որպես երկպլանային միավորներ հնչյունական, բառային և շարա-

հյուսական մակարդակներում: Ինչ վերաբերում է նրանց աստիճաններին, ապա մենք առանձնացնում ենք, այսպես կոչված, ենթամիավորներ, ընդ որում, երկանդամ հակադրությամբ՝ հնչատարրույթ - վանկ, ձևույթ - բառանձև, բառակապակցույթ - շարակապակցույթ: Լեզվի գործառույթը, վերջին հաշվով, իրականության արտացոլումն է նշանային համակարգի միջոցներով:

Բանալի բառեր՝ լեզու, նշանային համակարգ, լեզվի մակարդակ, աստիճան, լեզվական միավորներ և ենթամիավորներ, միավորների երկպլանային տիպ:

КОГНИТИВНОСТЬ ЯЗЫКА, УРОВНИ И СТЕПЕНЬ ЕЕ ИССЛЕДОВАНИЯ

Вазген Амбарцумян

Язык как средство самовыражения отражает реальность посредством структурных типов речи. Языковая система имеет знаковую характеристику, одинаково применимую ко всем компонентам системы в плане соотношения единиц уровней и степени, которые находятся в иерархическом соотношении как равноценные двуплановые единицы на фонетическом, лексическом, синтаксическом уровнях. Что касается их степеней, то мы различаем так называемые субъединицы, причём по двусоставному противопоставлению: меризма–слог, морфема – словоформа, словосочетание (комбинация слов) –синтаксическая комбинация (“комбинация предложений”).

Ключевые слова – язык, знаковая система, уровень языка, степень, языковые единицы и субъединицы, двуплановый тип единиц.

LINGUISTIC COGNITION. LEVELS AND DEGREES OF THE RESEARCH

Vazgen Hambardzumyan

Language, as a means of living expression, reflect the reality by structural types of speech. The language system has semiotic characteristic that is equally applicable to all components of the system, according to the ratio of units of levels and degrees.

These units are in hierarchical relations as equivalent two-sided units: at the phonetic, lexical, syntactic levels. As for the latter, we divide the subunits by binominal oppositions:phoneme – syllable, morpheme – word form, phrase (word combination) – syntactic combination ("combination of sentences"). Language seeks to reflect the reality through semiotic means.

Key words – language, semiotic system, language level, language units und sub-units, binomonal oppositions.

ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԱՆԿՈՒՄՈՎ ՏԻՊՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆՈՒՄ

Լալիկ Խաչատրյան

Բանասիրական գիտ. դոկտոր
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա
Տիգրան Մեծի 17, 0010, Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ lingualal51@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 4.08.2018, գրախոսվել է 26.08.2019, ընդունվել է տպագրության 15.08.2019

Ներածություն

Կրկնությունը լեզուներում գործող բառակազմության միջոցներից է: Հայերենի պատմության հնագույն շրջաններից ի վեր կրկնության ճանապարհով ստեղծվել են զգալի քանակությամբ բառեր, որոնք լեզվի բառային կազմի հետ փոխանցվել են հին հայերենին: Մյուս կողմից՝ նախագրային փոխառություններին զուգահեռ հինգերորդ դարում ի հայտ են գալիս կրկնության նոր կաղապարներ և նոր տիպեր. նախկին կաղապարների մի մասը դառնում է քիչ գործուն, մյուսը՝ ոչ գործուն և անարդյունավետ[1]:

Կրկնության կաղապարներով ստեղծված բառերը հին հայերենի բառային կազմի անքակտելի մասն են կազմում. դրանք լայն գործածություն են ունեցել ինչպես հինգերորդ և հետագա դարերի թարգմանական գործերում, այնպես էլ հայ հին գրականության ինքնուրույն երկերում: Այդ կարգի բառերի քննությունը բառագիտության առանցքային հարցադրումներից է, որ կարող է ամբողջացնել պատմական բառագիտության համալիր նկարագրությունը:

Մեր աշխատանքում փորձ է արվում կրկնավոր բարդությունների բառակազմական կաղապարների քննությունը կատարել Աստվածաշունչ մատյանի ընձեռած փաստական նյութի հիման վրա, քանի որ այն հայերեն առաջին (թարգմանական) աշխատանքն է, որտեղ արտացոլված է գրաբարի բառաքերականական իրողությունների ողջ համալիրը՝ նրա բաղադրիչ տարրերի գործառական լայն դրսևորումներով[2]:

---

[1] Ջահուկյան 1987, 364:

[2] Քննության բնագիր ենք ընտրել Հայաստանի աստվածաշնչային ընկերության (Ե., 1997) հրատարակած բնագիրը՝ «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց»:

Հնչյունաանկումով տիպի կրկնավորների իմաստակառուցվածքային յուրահատկություններն Աստվածաշունչ մատյանում

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Աստվածաշունչ մատյանի թարգմանական գրքերում գործածված կրկնավորները հանդես են գալիս բառակազմական որոշակի տիպերով[3]: Բառակազմական տիպը որոշվում է ըստ այն սկզբունքի, թե ինչ գործոններ են ընկած կրկնավոր բարդության ձևավորման հիմքում[4]: Ըստ այդմ, Աստվածաշունչ մատյանում կարելի է առանձնացնել կրկնության հետևյալ բառակազմական տիպերը՝ *արմատական* (գոյնագոյն, գունդագունդ, աղխաղխել, աղտաղտին, այլայլել, արծարծել…)[5], *ձայնդարձով և հերթագայությամբ* (բարբառ, թոթափել, կարկատել, սպառսպուռ…)[6], *աճականով և նախդրավոր (շաղկապավոր)* (աղջամուղջ, արհամարհել, կոկորդ, մրմնջել, դէմ ընդ դէմ, խառն ի խուռն…)[7], *հնչյունաանկումով* (թաթաւել, սասանել, խաբեբա, խաղաղ, գձուձ, խլխլել…):

Հին հայերենին փոխանցված և հին հայերենում կազմավորված կրկնավոր բարդությունները լայն գործածություն են ստացել հինգերորդ դարի թարգմանական գրականության մեջ և ժամանակի մատենագրական հուշարձաններում[8]:

Բառակազմական արմատակրկնության ժամանակ, որոշակի գործոններով պայմանավորված, բաղադրիչներից մեկում (կամ երկուսում) տեղի է ունենում հնչյունափոխություն: Այս կարգի հնչյունափոխությունը չպետք է կապել շեշտի փոփոխության հետ. այստեղ կարևոր դեր է խաղում նմանատիպ հնչյունների փոխազդեցության գործոնը, որի հետևանքով դրանցից մեկը կարող է դուրս գալ բառի հնչյունական կառուցվածքից[9]:

---

[3] Աստվածաշնչում գործածված կրկնավոր բարդություններին անդրադարձել է Վ. Առաքելյանը (Առաքելյան 1984, 125-127):

[4] Գրաբարի կրկնավոր բարդությունների հիմնական տիպերի մասին տե՛ս Туманян 1971, 168-170:

[5] Խաչատրյան 2019, 1. 52-62:

[6] Խաչատրյան 2018, 4. 194-205:

[7] Խաչատրյան 2018, 21. 64-75:

[8] Ըստ Հր. Աճառյանի՝ հայերենի կրկնավորների թիվը հասնում է շուրջ 500-ի (Աճառյան 1957, 83-93):

[9] Գ. Ջահուկյանը, դիտարկելով կրկնությունների ժամանակագրական փուլերը, նկատում է, որ հնդեվրոպական շրջանից եկող և դրանց նմանակությամբ հետհնդեվրոպական շրջանում կազմված բառերի համար բնորոշ է մասնական կրկնությունը, որ հաճախ ուղեկցվում է ձայնորդային հերթագայությամբ (Ջահուկյան 1989, 215):

Այս կարգի կրկնավորների քննությունը կատարելիս դրանք կարելի է դասակարգել ըստ որոշակի տեսակների՝ ելնելով այն իրողությունից, թե բառի ո՛ր բաղադրիչում (վանկում) է այս կամ այն ինչյունն ընկել[10]: Ըստ այդմ՝ Աստվածաշնչում գործածված կրկնավորների խմբում կարելի է առանձնացնել ինչյունաանկումով երեք ենթախումբ՝ անկում առաջին վանկում, անկում երկրորդ վանկում, անկում առաջին և երկրորդ վանկերում[11]:

ա) Անկում առաջին վանկում

Կրկնավորների այս տիպում ամբողջական արմատը բարդության երկրորդ բաղադրիչն է. առաջինը հանդես է գալիս ինչունական միավորի անկումով: Աստվածաշնչում հանդիպում են առաջին վանկի ինչունաանկումով հետևյալ բառերը՝ *թաթաղուն, թաթաւել, սասանել, պապանձիլ, դադար, բաբախել, խախուտ, որկոր, կակուղ, կական, ճաճանչ, պապակել, տատանել, փոփոխել:*

Դիտարկենք այդ բառերի արտահայտության պլանում ինչյունաանկման դեպքերն ու բարդության իրացումներն Աստվածաշնչի թարգմանական գրքերում: Քննության ընթացքում անհրաժեշտաբար վկայվում են արմատական բաղադրիչների ստուգաբանական վկայություններ՝ դրանց բնիկ հայկական կամ հնդեվրոպական ծագումը հաստատելու նպատակով:

Թաթաղուն կրկնավորի ծագումը հավանական է համարվում *թաղ* արմատից՝

«խիտ, կուռ, սեղմ» իմաստով[12]: Բարդության առաջին բաղադրիչը կորցրել է արմատական -*ղ* տարրը: Կրկնավոր ածականական բարդությունը նշանակում է «լցված, լեցուն, խիտ, լիուլի». այդ իմաստով այն գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Տուք եւ տացի ձեզ, չափ բարւոք, *թաթաղուն* …որով չափէք՝ չափեսցի ձեզ (Ղուկ., Զ 38):

---

[10] Ա. Բագրատունին, իր աշխատանքի «Յաղագս բարդութեան բառից» գլխում քննելով արմատակրկնությամբ առաջացած բարդությունների տեսակները, նկատում է. «Յայսպիսիս ուրեք գիր մի զանց առնի կամ փոխի. Փոփոխ, դադար, բաբախ, կակազ, թոթով, թեթև, վավաշ. - հեղեղ, շաղփաղփ, հեծեծեմ, պատատեմ….» (Բագրատունի 1852, 660):

[11] Գրաբարում նույն արմատի կրկնությամբ ստացվող կաղապարներում բաղադրիչների ինչյունական տարբերությունների մասին տե՛ս Հովսեփյան 1987, 113-114:

[12] Աճառյան 1973, 143: Գ. Ջահուկյանն այն բխեցնում է բնիկ հնդեվրոպական *tā- «հալչել, լուծվել» արմատից՝ *l- աճականով (Ջահուկյան 2010, 253):

Թաթաւել կրկնավորը ծագում է պարզական *թաւ* արմատից, որն էլ հանգում է բնիկ հնդեվրոպական *tap- «սուզել, թաթախել» արմատին[13]: Բարդության առաջին բաղադրիչը կորցրել է արմատական *-ւ* տարրը: *Թաթաւել* բայական բարդությունը նշանակում է «ընկղմել, մխրճել, շաղախել»: Այդ իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ Ամեսայի կայր *թաթաւեալ* յարեանն ի ճանապարհի (Բ Թագ., Ի 12): Աստվածաշնչում հանդիպում է փոխաբերական՝ «կեղտոտել, ապականել» իմաստով, հմմտ. Եւ ոչ արարից այց …հարսանց ձերոց՝ յորժամ շնասցին. զի նոքա ընդ պոռնիկս *թաթաւէին* (Ովս., Դ 14):

Սասանել կրկնավորի արմատական բաղադրիչն է *սան,* որ հանգում է բնիկ հնդեվրոպական *kan «տատանվել» արմատին[14]: *Սանսան* բարդությունը արմատահնչյունի անկումով ստացել է *սասան* ձևը: *Սասանել* բայական բարդությունը «տատանել, ցնցել. շարժել, տարուբերել. խախտել» իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Լերինք ի հիմանէ ջրովքն հանդերձ *սասանեցան* (Յդթ., ԺԶ 18): Հանդիպում է նաև փոխաբերական՝ «ահից՝ երկյուղից դողալ, սարսափել» իմաստով, հմմտ. Աստուած ի մէջ նոցա, եւ նոքա *մի՛ սասանեսցին,* օգնեսցէ նոցա Աստուած (Սղմ., ԽԵ 6):

Պապանձիլ կրկնավոր բարդության արմատական բաղադրիչն է *պանձ,* որ հանգում է բնիկ հնդեվրոպական *bandh- ձևին՝ դ>ձ հերթագայությամբ[15]: Բարդության առաջին բաղադրիչը կորցրել է վերջնահնչյուն *-նձ* տարրերը: *Պանձ>պանդ* լծորդական ձևերի մի տարբերակն է *պինդ* («կապել») արմատը. հետևաբար, *պապանձիլ* բայական բաղադրությունը նշանակում է «կապկպվել, կապ ընկնել (լեզուն)»: Այս իմաստով գործածական է Աստվածաշնչում, հմմտ. *Պապանձեցաւ* եւ համարեցաւ, թէ իմաստուն իցէ (Առակ., ԺԷ 28):

Դադար կրկնավորի արմատական բաղադրիչն է *դար,* որ հանգում է բնիկ հնդեվրոպական *dher- «պահել» արմատին՝ e>a ձայնդարձով[16]: *Դար* արմատից է *դարել* բառը՝ «կանգ առնել, կենալ, մնալ» իմաստներով: Արմատահնչյունի կորուստով ունենք՝ *դարդար>դադար:* Գրաբարում այն գործածվում է «հանգիստ, անդորր, կանգառ, դադարի տեղ. տաղավար, որջ,

[13] Ջահուկյան 2010, 254:
[14] Ջահուկյան 2010, 669:
[15] Աճառյան 1979, 26:
[16] Ջահուկյան 2010, 179:

փարախ» իմաստներով: Աստվածաշնչում *դադար* բարդությունը հանդիպում է այդ իմաստներով, հմմտ. Յիշեա՛ դու զհայհոյութիւնս նոցա եւ մի՛ տար նոցա *դադար* (Ա Մակ., Է 38):

Բաբախել կրկնավորի արմատական բաղադրիչն է *բախ*՝ «հարված, զարկ» իմաստով. հմմտ. բախ-ել «զարկել, ծեծել (դռան՝ ջրի ալիքի՝ կրծքի առումով»[17]: Հմմտ. Եւ ես ասեմ ձեզ. Խնդրեցէք եւ տացի ձեզ, *բախեցէք* եւ բացցի ձեզ (Ղուկ., ԺԱ 9): Նախնական՝ *բախբախ* կազմության արմատահնչյունի կորուստով առաջացել է *բաբախ(ել)* տարբերակը: Աստվածաշնչում գործածված է «իրար դիպչել՝ զարնվել, բախվել» իմաստով, հմմտ. Ծունկք նորա զմիմեանս *բաբախէին* (Դան., Ե 6):

Խախուտ բարդությունը համարվում է բնիկ հնդեվրոպական կրկնավոր կազմություն՝ *kha-khud- *(s)keud «նետել, նետվել, շտապել» արմատից[18]: Մեզանում այդ բառը ժառանգություն է նախալեզվից. նրա բառակազմական քայլերը հայերենի բառակազմական օրենքներով չեն մեկնաբանվում:

Խախուտ նշանակում է «անհաստատ, անկայուն, խարխուլ, քանդված»: Այդ իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Մի՛ արմատ եւ հիմն *խախուտ* հաստատեսցի (Իմաս., Դ 3): Աստվածաշնչում գործածված են այս հիմքով կազմված *խախտել* և *խախտող* բառերը:

Որկոր կրկնավորի արմատական բաղադրիչն է *կոր,* որ *կուր* տարբերակի հետ հանդես է գալիս որպես *կեր* արմատի ձայնդարձով տարբերակ: *Կոր* արմատը հանգում է բնիկ հնդեվրոպական *gʷer- արմատին՝ gʷor- ձայնդարձով[19]: *Որկոր* ստուգաբանորեն նշանակում է «կերակրի ամբողջ խողովակը՝ կոկորդից մինչև ստամոքսը. կերակրափող»: Աստվածաշնչում գործածված է փոխաբերաբար՝ «որովայնամոլություն, ուտելու անհագ ցանկություն. շատակերություն» իմաստով, հմմտ. Եթէ մարդք, որ վասն պորտոցն աղետի եւ *որկորոյն* չարութեան անցին ըստ աւրէնս նախնեացն … արդարանալ ոչ կարեն (Գ Մակ., Է 7):

Կակուղ բաղադրության արմատական բաղադրիչը, եթե ընդունենք *կուղ* առանձին անգործածական արմատը, ապա այն պետք է կապել բնիկ

[17] Աճառյան 1971, 389:

[18] Ջահուկյան 2010, 310:

[19] Աճառյանը հնարավոր է համարում բառի հնդեվրոպական կրկնավորից ծագած լինելը՝ gʷor - gʷor. միաժամանակ նկատելով. «դժուարութիւնը նախաձայնի անկման մէջ է» (Աճառյան 1977, 582):

հնդեվրոպական *gel- «գնդ(վ)ել, կլոր բան» արմատի հետ[20]: Հնդեվրոպական *gel->*կուղ* անցումն ուղեկցվել է e>a ձայնդարձով և l>ղ հերթագայությամբ: *Կակուղ* բառի իմաստն է «փափուկ, ոչ կոշտ», հմմտ. Քանզի եւ բրտի լմեալ զ*կակուղ* կաւն՝ դնէ ի վերայ դրգան եւ ստեղծանէ անաւթ (Իմաս., ԺԵ 7):

Աստվածաշնչում հանդիպում է փոխաբերական՝ «մեղմ, քնքուշ» իմաստով, հմմտ. Բանք սուտակասպասաց *կակուղ* են, բայց արկանեն ի շտեմարանս մարտի (Առակ., ԻԶ 22): Աստվածաշնչում *կակուղ* սերող հիմքով գործածված են հետևյալ բառերը՝ *կակղանալ, կակղել:*

Կական բարդությունը համարվում է բնաձայնական բառ՝ *կան* արմատի կրկնությամբ, որ առանձին գործածված չէ[21]: *Կական* կրկնավորն ունի «ճիչ, լացի ձայն, լաց ու կոծ, ողբ» իմաստներ: Աստվածաշնչում գործածված են *կականել*՝ համադրական և *կական զբառնալ* վերլուծական կազմությունները «լաց ու կոծ բարձրացնել, բարձրաձայն լալ, ողբալ» իմաստներով, հմմտ. Ընտիր ընտիրքն զձայն բարձեալ *կականէին,* եւ երիտասարդքն զփայտի հարեալ տկարացան (Ողբք., Ե 13): Եւ արքայ *կական բարձ* ի ձայն մեծ եւ ասէ (Բ Թագ., ԺԹ 4):

Ճաճանչ բառի կրկնավոր կազմությունը հավանական է համարվում. այն բխեցնում են իրանական աղբյուրից, սակայն բուն աղբյուրը չի հավաստված[22]: *Ճաճանչ* ստուգաբանորեն նշանակում է «ճառագայթ»: Գրաբարում գործածական է նաև «լույս, շող, ցոլք, փայլ, պայծառություն» իմաստներով, որ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Քանզի *ճաճանչ* է Աստուծոյ զաւրութեանն եւ ծագումն ճշմարիտ փառաց ամենակալին (Իմաս., Է 25):

Պապակել բարդությունը համարվում է կրկնավոր կազմություն՝ անծանոթ *պակ* արմատից[23]: Ունի «խիստ ծարավ» իմաստը, *պապակել* բայական միավորը՝ «սաստիկ ծարավ զգալ, ծարավից այրվել՝ տոչորվել»: Այդ իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Առաքեա՛ զՂա-

---

[20] Ջահուկյան 2010, 375: Ջահուկյանը միաժամանակ հնարավոր է համարում *կակուղ* բառի ծագումը *gag «կլոր բան, գունդ» արմատից և *ul ածանցից՝ որպես կրկնավոր կազմություն (անդ):

[21] Աճառյան 1973, 488:

[22] Ջահուկյան 2010, 487:

[23] Աճառյան 1979, 26: Ջահուկյանը ենթադրաբար այն կապում է փափագ-ի հետ (Ջահուկյան 2010, 621):

զարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր եւ զովացուսցէ զլեզու իմ, զի *պապակիմ* ի տապոյ աստի (Ղուկ., ԺԶ 24):

Տապանել բարդության արմատական բաղադրիչն է առանձին անգործածական *տան* ձևույթը, որ ստուգաբանորեն հանգում է բնիկ հնդեվրոպական *den «շարժել» արմատին[24]: Արմատակրկնության ժամանակ «արմատի վերջին մասը թեթևանում է բառի առաջին եզրի մեջ»[25], և արմատական բաղադրիչը հանդես է գալիս *տա-* ձևով:

Տապանել գրաբարում ունի «տարուբերել, երերալ, շարժել, սասանել» իմաստներ և այդ նշանակություններով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ ամենեքեան առ հասարակ աղաւթից բարբառով զձեռս համբարձեալ յերկինս մատունս *տապանէին* (Բ Մակ., Գ 20):

Փոփոխել բայի սերող հիմքը՝ *փոփոխ,* կրկնավոր կազմությունն է *փոխ* արմատի, որ նախապես նշանակել է «փոխ առնված բան, մանավանդ՝ դրամ»: *Փոխ* արմատը ստուգաբանորեն հանգում է ասուր. puxxu «փոխանակել» բառին, որ նախապես նշանակել է «փոխել»[26]: Իմաստի զարգացմամբ՝ *փոխփոխ* > *փոփոխ* ձեռք է բերել «փոխն ի փոխ» նշանակություն:

Աստվածաշնչում գործածվել է *փոփոխել* կրկնավոր բայական բառույթը՝«փոփոխության ենթարկել, կերպարանափոխել, փոխարկել. տեղափոխել» իմաստներով: Հմմտ. Եւ *փոփոխէ* զխորհուրդս խորամանկաց, եւ ոչ գործեսցեն ձեռք նոցա զճշմարտութիւն (Յոբ., Ե 12): Եղեն իշխանք Յուդայ՝ որպէս որ *փոփոխեն* զսահմանս (Ովս., Ե 10):

Աստվածաշնչում հանդիպում է *փոխփոխ* կրկնավորի եզակի վկայություն՝ բայական հարադրության կազմում («փոխն ի փոխ, հաջորդաբար» իմաստներով), հմմտ. Նոքա փողովք և թմբկաւք եւ պէսպէս պատերազմաւ *փոխփոխ* մարտիցեն ընդ նմա (Եսայ., Լ 32):

Աստվածաշնչում գործածված է այդ հիմքից սերած *փոփոխումն* բազմիմաստ բառը:

բ) Անկում երկրորդ վանկում

---

[24] Աճառյան 1979, 380:

[25] Աճառյան 1957, 89-90:

[26] Աճառյան 1979, 510-511: Գ. Ջահուկյանը *փոխ* արմատի ծագումը համարում է անհայտ (Ջահուկյան 2010, 766):

Կրկնավորների այս տիպում ամբողջական արմատը բարդության առաջին բաղադրիչն է. երկրորդ բաղադրիչը հանդես է գալիս հնչյունաանկումով: Աստվածաշնչում հանդիպում են *խաբեբա, խաղաղ, հեծեծել, հեղեղ* և *յոպոպ* բառերը: Դիտարկենք դրանց իմաստակառուցվածքային և գործառական յուրահատկությունները քննարկվող բնագրում:

Խաղաղ բաղադրության արմատական բաղադրիչը *խաղ* ձևույթն է[27], որ երկրորդ եզրում արմատակրկնության ժամանակ կորցրել է առաջնային հնչյունը: *Խաղաղ* կրկնավորը գրաբարում ունի «հանդարտ, հանգիստ, հանդարտորեն, մեղմորեն» իմաստներ: Աստվածաշնչում գործածված է վերջին (մակբայական) նշանակությամբ, հմմտ. Ոչ ախորժեաց ժողովուրդդ այդ զջուրն Սելովայ, որ գնայ *խաղաղ* (Եսայ., Ը 6):

Աստվածաշնչում այդ սերող հիմքով հանդիպում են համադրական և վերլուծական հետևյալ կազմությունները՝ *խաղաղական, խաղաղանալ, խաղաղարար, խաղաղութիւն, խաղաղութիւն առնել, խաղաղութիւն կալնուլ:*

Հեծեծել բարդության սերող հիմքը՝ *հեծեծ,* պարզական *հեծ* «հառաչանք, ախ քաշելը» արմատի կրկնությունն է՝ երկրորդ բաղադրիչի հնչյունական կորուստով[28]: *Հեծեծել* «վշտից հառաչանքներ արձակել, հոգոց հանել, ախ ու վախ անել» իմաստներով գործածական է գրաբարում. Այդ իմաստներով հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Անձինք տղայոց մեծամեծս *հեծեծեցին* (Յոբ., ԻԴ 12):

Քննարկվող բնագրում հանդիպում է *հեծեծելի* դերբայաձևը՝ «ողբալի, ցավալի» փոխաբերական իմաստով, հմմտ. Եւ եղիցիս *հեծեծելի* եւ եղկելի (Եզեկ., Ե 15):

Հեղեղ բարդությունը *հեղ* առանձին անգործածական արմատի կրկնությունն է, որ հանգում է բնիկ հնդեվրոպական *pel արմատին՝ «թափել, լցնել, հոսել» իմաստով[29]: Բարդությունը «ուղխ, ջրի հորդ հոսանք» իմաստով գործածվում է գրաբարում: Այդ նշանակությամբ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Իմաստնոց գիտութիւն որպէս *հեղեղ* յորդեսցէ եւ որպէս բղխումն աղբեր (Սրք., ԻԱ 16):

---

[27] Ջահուկյանը հնարավոր է համարում նաև նրա ծագումը բնիկ հնդեվրոպական *khl արմատից՝ –աղ ածանցով (Ջահուկյան 2010, 312):

[28] Աճառյան 1977, 91: Գ. Ջահուկյանը *հեծ* արմատի ծագումն անհայտ է համարում (Ջահուկյան 2010, 456):

[29] Ջահուկյան 2010, 456:

Աստվածաշնչում սերող այդ հիմքով գործածված են *հեղեղապ* և *հեղեղապել* բառերը:

Յոպոպ բարդության արմատական բաղադրիչն է *յոպ,* որ նմանեցվում է թռչունի հանած ձայնին: Արմատակրկնության ժամանակ բարդության երկրորդ բաղադրիչը կրել է հնչյունական փոփոխություն՝ սկզբնահնչյուն յ ձայնորդի անկում: *Յոպոպ* «հոպոպների ընտանիքին պատկանող չվող թռչուն» իմաստով գործածական է գրաբարում, այդ իմաստով հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Եւ ահա երկու կանայք ելանէին, եւ հողմ ի թեւս նոցա, եւ էին թեւք նոցա իբրեւ զթեւս *յոպոպոյ* (Զաք., Ե 9):

Աստվածաշնչում *յոպոպ* բարդությունը հաճախ գործածվում է *չիղջ* գոյականի հետ՝ իմաստի սաստկացման նպատակով, հմմտ. Եւ զքաղադր, եւ որ ինչ նման է նոցա, եւ զյոպոպ եւ զչիղջ (Բ Օրին., ԺԴ 18):

գ) Անկում առաջին և երկրորդ վանկերում

Արմատակրկնության ժամանակ հնչյունական անկում կարող է տեղի ունենալ բարդության թե՛ առաջին և թե՛ երկրորդ բաղադրիչների արտահայտության պլանում: Աստվածաշնչում հանդիպում են այդ տիպի հետևյալ բարդությունները՝ *գձուձ, խլխլել, ձգձգիլ:*

Դիտարկենք այդ բառերի արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունը և դրանց գործածությունը քննության առարկա բնագրում:

Գձուձ կրկնավորի արմատական բաղադրիչ է ենթադրվում առանձին անգործածական *գուձ* արմատը, որ կրկնությամբ նախապես տվել է *գուձգուձ*[30], որից՝ *գձուձ* (կամ՝ գձուձ), որի բառական նշանակությունն է՝ «անարգ, չնչին, նվաստ»: Ենթադրվում է, որ այն ծագում է բնիկ հնդեվրոպական *guhdio-՝ *guhdei- «անհետանալ, կործանվել» արմատից՝ կրկնությամբ և *կսկիծ* արմատից ազդված[31]:

Աստվածաշնչում գործածված է «անշուք, նվաստ, փոքր, փուչ» բառական նշանակությամբ, հմմտ. Մի՛ առնէր *գձուձ* զպտուղ ձեռաց քոց (Սրք., ԼԲ 10):

Աստվածաշնչում այդ սերող հիմքով հանդիպում է *գձձիլ* բայական միավորը՝ «անշուք դառնալ, նվաստանալ, վատթարանալ» իմաստներով:

---

[30] Աճառյան 1971, 566:

[31] Ջահուկյան 2010, 163:

Խլխլել կրկնավորի արմատական բաղադրիչը *խուլ* հիմնական ձևույթն է՝ «լսելու հատկությունից զուրկ, չլսող, լուռ անխոս» բառական նշանակություններով: *Խուլ* արմատը հանգում է բնիկ հնդեվրոպական *khol- *(s)k(h)el- «թեքել, ծռել, հենել, ծուռ» արմատին[32]: Արմատակրկնության ժամանակ երկու բաղադրիչներն էլ ենթարկվել են արմատական ձայնավորի հնչյունափոխության: *Խլխլել* բայական միավորը գրաբարում գործածվում է «խուլ ձևանալ, չլսելու տալ, անտեսել» նշանակություններով[33]: Աստվածաշնչում այն հանդիպում է այդ իմաստներից մեկով՝ «սուտ խուլ ձևանալ», հմմտ. Զմէ՞ *խլխլեցէք* զամպարշտութիւն, եւ զանօրէնութիւնս նորա գրգեցէք (Ովս., Ժ 13):

Ձգձգիլ կրկնավորի արմատական բաղադրիչը հանգում է *ձիգ* հիմնական ձևույթին՝ «պիրկ, ամուր պինդ. երկար. նյարդ. նետ», որ բխեցվում է բնիկ հնդեվրոպական *gʹhe-gh- կամ *gʹhi-u-՝ *ghei- «քշել, արագ շարժել, նետել, շպրտել» արմատից[34]: Արմատակրկնության ժամանակ բարդության երկու բաղադրիչներն էլ ենթարկվել են արմատական ձայնավորի հնչյունափոխության: *Ձգձգել* բայական միավորը գրաբարում գործածվում է «այս ու այն կողմ քաշել՝ ձգել, քաշքշել» բառական նշանակություններով: Աստվածաշնչում հանդիպում է «հետաձգել. խուսափել(՞)» իմաստներով, հմմտ. Վա՜յ ինձ, մա՛յր իմ, իբրեւ զո՞ ոք ծնար զիս. այր՝ դատափետեալ եւ *ձգձգեալ* ի դատաստան յամենայն երկրի (Երեմ., ԺԵ 10):

Եզրակացություններ

Աստվածաշնչի թարգմանական գրքերում հանդիպող բառակազմական տիպերի համատեքստում յուրահատուկ խումբ են կազմում հնչյունաանկումով տիպի բառերը, որոնք բնութագրվում են հնչյունաանկման որոշակի դիրքերով: Դիտարկվող բառակազմական տիպի բաղադրիչները (արմատահիմքերը) բնիկ հայկական կամ հնդեվրոպական փոխառյալ արմատներ են, որոնք կենսունակ ձևույթներ են դարձել բառակազմական մակարդակում: Այդ կարգի կազմությունները լայն գործածություն ունեն Աստվածաշնչի հայերեն թարգմանական գրքերում, որոնց ուսումնասի-

[32] Ջահուկյան 2010, 347:

[33] Այս բառը համանունություն է կազմում նույն հնչյունակազմով *խլխլել* բառի հետ, որ նշանակում է «ձգձգել, քաշքշել, արհեստական պատճառներ փնտրել». Աստվածաշնչում չի հանդիպում:

[34] Ջահուկյան 2010, 475:

ությունը բացահայտում է հին հայերենի բառակազմական հնարավորությունները լեզվի համաժամանակյա մակարդակում: Մյուս կողմից՝ պատմական բառակազմության եղանակով հնարավոր է բացահայտել այդ կազմությունների մի մասի նախագրային ժառանգության հարցը:

Աստվածաշնչի բառային կազմում հնչյունաանկումով տիպի (և ընդհանրապես կրկնության այլ տիպերի) համաժամանակյա քննությունը կարող է հիմք դառնալ բառակազմական տվյալ իրողության տարժամանակյա ուսումնասիրության համար ինչպես գրաբարի շրջանակում (նրա ենթափուլերի միջև), այնպես էլ գրաբարի և միջին հայերենի կամ գրաբարի և ժամանակակից հայերենի միջև:

Գրականություն

Աճառյան Հ. 1957, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Երևան, «ՀՍՍՌ ԳԱ հրատ.», 1011 էջ:

Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, «ԵՊՀ հրատ.», 698 էջ:

Աճառյան Հ. 1973, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, «ԵՊՀ հրատ.», 687 էջ:

Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, «ԵՊՀ հրատ.», 635 էջ:

Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, «ԵՊՀ հրատ.», 674 էջ:

Առաքելյան Վ. 1984, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 230 էջ:

Բագրատունի Ա. 1852, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, «Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու», 744 էջ:

Խաչատրյան Լ. 21. 2018, Կրկնավոր բարդությունների աճականով և նախդրավոր տիպերն Աստվածաշունչ մատյանում, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, N 21, էջ 64-75:

Խաչատրյան Լ. 4. 2018, Կրկնավոր բարդությունների ձայնդարձով և հերթագայությամբ տիպերն Աստվածաշունչ մատյանում, ՀՀ ԳԱԱ Բանբեր հայագիտության, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն հրատ.», N 4, էջ 194-205:

Խաչատրյան Լ. 1. 2019, Կրկնավոր բարդությունների արմատական տիպն հայերեն Աստվածաշունչ մատյանում, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, «ԵՊՀ հրատ.», N 1, էջ 52-62:

Հովսեփյան Լ. 1987, Գրաբարի բառակազմությունը, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 375 էջ:
Ջահուկյան Գ. 2010, Ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ» հրատ., 819 էջ:
Ջահուկյան Գ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 319 էջ:
Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 748 էջ:
Туманян Э. 1971, Древнеармянский язык, Москва, изд. "Наука", 448 с.

Համառոտագրություններ «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց» աշխատության

Առակ. - Առակք Սողոմոնի:
Եզեկ.- Եզեկիէլ:
Եսայ. - Եսայի:
Բ Թագ., - Գիրք Թագաւորութեանց Բ:
Դան. - Դանիէլ:
Երեմ. - Երեմիա:
Զաք. - Զաքարիա:
Իմաս. - Իմաստութիւն Սողոմոնի:
Ղուկ. - Աւետարան ըստ Ղուկասու:
Ա Մակ., - Գիրք Մակաբայեցւոց Ա:
Բ Մակ., - Գիրք Մակաբայեցւոց Բ:
Գ Մակ., - Գիրք Մակաբայեցւոց Գ:
Յոբ. - Յովբ:
Յդթ. - Յուդիթ:
Ողբք - Ողբք Երեմիա:
Ովս. - Ովսէէ:
Սղմ. - Գիրք Սաղմոսաց:
Սրք. - Գիրք Սիրաքայ:
Բ Օրին. - Երկրորդումն Օրինաց:

ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԱՆԿՈՒՄՈՎ ՏԻՊՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆՈՒՄ

Լալիկ Խաչատրյան

Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգմանական գրքերի բառային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառակազմական տարբեր կաղապարների շրջանակում ուրույն տեղ է զբաղեցնում կրկնավոր բարդությունների հնչյունաանկումով տիպը: Աստվածաշնչում բառակազմական այդ տիպը բնութագրվում է հետևյալ ձևակազմական գործոններով.

ա) հնչյունաանկում առաջին բաղադրիչում. *թաթաւել, սասանել, պապանձիլ, դադար, բաբախել, խախուտ, որկոր, կակուղ* և այլն,

բ) հնչյունաանկում երկրորդ բաղադրիչում. *խաբեբա, խաղաղ, հեծեծել, հեղեղ, յոպոպ* և այլն,

գ) հնչյունաանկում առաջին և երկրորդ բաղադրիչներում. *գծուծ, խլխլել, ծգծգիլ* և այլն:

Արմատակրկնությամբ կազմված բառերում հնչյունաանկումը տեղի է ունենում ինչպես բնիկ հայերեն բառերում, այնպես էլ հնդեվրոպական փոխառյալ արմատներում, որոնք հայերենում ունեն կենսունակ բառակազմական դեր:

Արմատակրկնությամբ ստեղծված բառերը, որոնք բնութագրվում են հնչյունաանկումով, լայն գործածություն են ունեցել Աստվածաշնչի թարգմանական գրքերում: Այդ կարգի բառերի ուսումնասիրությունը կարող է բացահայտել հայերենի բառակազմական առանձնահատկությունները համաժամանակյա կտրվածքում: Մյուս կողմից՝ հինգերորդ դարում արմատակրկնությամբ կազմված բարդ բառերի մեջ հնարավոր են տարժամանակյա (նախագրային) կազմություններ, որոնց ժամանակագրության հարցը կարող է լուծվել պատմական բառագիտության մեթոդներով:

Բանալի բառեր՝ Աստվածաշունչ մատյան, բառակազմություն, բառակազմական կաղապար, արմատակրկնություն, կրկնավոր բարդություն, հնչյունաանկում, արտահայտության պլան, բովանդակության պլան:

РЕДУПЛИКАТИВНЫЕ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ТИПЫ С ПАДЕНИЕМ ЗВУКОВ В БИБЛИИ

Лалик Хачатрян

Исследование словарного состава армянского перевода Библии показывает, что в ряду словообразовательных типов особое место занимает тип редупликации с падением звуков, который характеризуется следующими формообразующими факторами:

1/ падение в первом компоненте слов: *թաթաւել, սասանել, պապանձիլ, դադար, բաբախել, խախուտ, որկոր, կակուղ* и т.д.

2/ падение во втором компоненте слов: *խաբեբա, խաղաղ, հեծեծել, հեղեղ, յոպոպ* и т.д.

3/ падение в обоих компонентах слов: *գձուձ, խլխլել, ձգձգիլ* и т.д.

Компоненты редупликативных слов с падением звуков выступают как в качестве исконно армянских, так и индоевропейских заимствованных морфем. Эти корни играют активную словообразовательную роль в армянском языке.

Редупликативные слова с падением звуков широко использованы в книгах Библии, изучение которых может выявить словообразовательную особенность армянского языка в синхронном срезе. С другой стороны, в рамках редупликативных слов возможно наличие диахронических /дописьменных/образований, вопрос которых можно решать путем исторической лексикологии.

Ключевые слова – Библия, словообразование, редупликация, редупликативные сложные слова, падение звуков, план выражения, план содержания.

REDUPLICATIVE WORD-FORMATION TYPES OF PHONEMIC DELECTION IN THE BIBLE

Lalik Khachatryan

The analysis of the word stock of the translated books from the Bible shows that in the context of word-formation types, the phonemic deletion-type of reduplication forms a unique group, which is characterized;

1/ disappearance in the first component: *թաթաւել, սասանել, պապանձիլ, դադար, բաբախել, խախուտ, որկոր, կակուղ* e.g.

2/ disappearance in the second component: *խաբեբա, խաղաղ, հեծեծել, հեղեղ, յոպոպ* e.g.

3/ disappearance in the first and second components: *գնում, խլխլել, ձգձգիլ* e.g.

The phonemic deletion-type components of reduplication (root-stems) are either pure Armenian or Indo-European borrowed roots which have become productive word-formation morphemes at the level of Armenian word-formation. Formations of that kind have a wide usage in the Armenian translation of the Bible, the investigation of which reveals the word-formation opportunities of Old Armenian from the point of view of the synchronic stage of language investigation. On the other hand, among the compound words formed by phonemic deletion - reduplication there can also be formations belonging to the pre-writing period which is subjected to revelation by historical lexicology.

Key words – Bible, word formation, redublication, redublication of compound words, phonemic deletion, plane of expression, plane of content.

LITERATURE OF IRANIAN DIASPORA IN THE CONTEXT OF "CULTURAL TRANSLATION". TAGHI MODARRESSI, NASIM KHAKSAR

Lilit Safrastyan

PhD in Oriental Studies, Yerevan State University
1 Alek Manukyan, 0025, Yerevan, Armenia
E-mail: lilit.safrastyan@gmail.com
The article has been delivered on 09.08.2019, reviewed on 30.08.2019, accepted for publication on 15.08.2019

Preface

Iranian Diasporic literature is inseparable part of modern Iranian literature. In recent thirty years, the researchers of Iranian Diaspora examined the thousand literary texts of exiled writers which are the important arguments for understanding the experience of immigrant and exiled intellectuals dwelling away from their Homeland. Researcher M. Hron in her book "Translating Pain: Immigrant Suffering in Literature and Culture" published in 2009, advocates the role of writer as cultural translators, who create intersemiotic translations of his immigrant suffering. Within the framework of the concept of "*Translating Pain"* and "*Translating Culture*" this article presents the fiction of two Iranian famous writers Taghi Modarressi and Nasim Khaksar.

Fiction of Taghi Modarressi in the context of Translating Culture"

In the last two decades, the concept of "Cultural Translation" has had a special place in both anthropology and post-colonial studies. "Cultural translation" is a term currently much used in a range of disciplines – both inside, and perhaps especially, outside translations studies itself – and in very different ways[1]. American cultural anthropologist Talal Assad describes the problem of understanding foreign cultures in anthropology as a "translation"[2]. "We are all to a

[1] Buden, Nowotny 2019, 196-197.
[2] Asad 1986, 162-164.

certain extent, even our own culture "translating beings" living in "translated worlds" [3], -thinks Indian writer Salman Rushdie in his "Imaginary Homelands".

As M. Hron argues in her influential book "Translating Pain: Immigrant Suffering in Literature and Culture". "The lynchpin of Translating Pain is the concept of translation. In real life newly arriving immigrants finds themselves "figuratively translating" into citizens of the host country: they must transform their images of home, their idealized notions of the new country, their former values, customs, and, above all their culture into the context of the target of the host country. In their fiction waiters also "translate" their experiences of immigration into narratives"[4].

Writers have had a special role in the political and cultural life of modern Iran. They were fighters for freedom of expression. Iranian researcher M. Ghanoonparvar in his book "Prophets of Doom: Literature as Socio-Political Phenomenon in Modern Iran" points. "The role of 20th century writer in Iran becomes that of a prophet, a prophet whose mission concerns not the next, but the present world"[5].

The 21th century Iranian writers in exile are cultural translators. They through literary texts, translate their own culture as well as the pain of immigration in the context of their own sociocultural experience. Quoting German philosopher, sociologist Th. W. Adorno, E. Said in his essay "Intellectual Exile: Expatriates and Marginals - Representations of the Intellectual" comments "For a man, who has no longer homeland, writing becomes a place to live"[6].

In this article we explore two well-known writers of Iranian Diaspora Taghi Modarressi and Nasim Khaksar and their fiction to understand the notion of cultural translation.

One of the renowned writers of the modern Iranian diaspora is a famous psychiatrist[7], and novelist Taghi Modarressi. Modarressi was born in Iran in 1931. In 1959 he traveled to United States, then Canada, to continue psychiatrist's education. In 1953 in his student years, he published his first novel, "Yakolya

[3] Magedo 2006, 11.

[4] Hron 2009, xvi-xvii.

[5] Rahimieh 1992, 42.

[6] Said 1994, 58.

[7] Dr. Modarressi was the founder of the Center for Infant Study at the University of Maryland School of Medicine and a pioneer in exploring the psychological makeup of infants.

and her Loneliness". In 1959 other novel "Sharif Jan, Sharif Jan" is published. In the 1980s, after Islamic Revolution in Iran the arrival of a large group of Iranian immigrants to USA gave a new breath to Modarressi.

In 1986, after a lengthy creative break, the novel "The book of Absent People" is published in Iran and the United States. In 1989 novel "The Pilgrim's Rules of Etiquette" is published. "Modarressi belongs to that group of Iranian exiles who have begun to explore the creative possibilities of experimentation. This vision has allowed Modarressi to write works for an Iranian and American audience at once"[8]. In his essay "Writing with the Accent" Modarressi thinks.

"My eternal voice (which) I discovered... unexpectedly, while listening to the sound of Persian in the streets of Los Angeles and Washington. It was the sound of Iranian refugees bargaining in American shopping malls. My new voice did not have any content... at times my mind was silent, and the writing came with the unexpected halt. Then I hummed with my internal voice. The melodious Persian sound, that could sometimes throw light on forgotten scenes, bringing them out of total darkness and allowing me to invent memories of time, when I even wasn't even born"[9].

Moderressi explains an attempt to translate from Persian into English during the first few days of his arrival with the following poetic meaning. "If I wanted to say something, I compared Persian and English words as dictionaries do. Persian and English words arranged themselves in two parallel lines like dancers in the nineteenth century ballroom, bowing to each other and trying to find a mate"[10]. Looking at a far-sighted Iranian reality meeting against foreign cultures, Modarressi calls for a dialogue, noting:

"I thought that most immigrants, regardless of the familial, social or political circumstances causing their exile have been cultural refugees all their lives. They have because they fell like outsiders. Perhaps it is their personal language, that can build the bridge between what is familiar and what is strange"[11].

---

[8] Rahimieh 39, 41.
[9] Modarressi 2008, xii.
[10] Rahimieh 1992, 41.
[11] Rahimieh 1992, xiv.

In 2008 the latest novel of Modarressi, "The Virgin of Solitude," is published. 1997 premature death of author breaks the novel's own translation. Modarressi's wife, a well-known American prose writer, Pulitzer Prize winner A. Tyler[12] came to Nasrin Rahimieh with the proposal, that she translate the novel "The Virgin of Solitude" into English. In the words of Rahimieh. «This preface is also an homage to the man who taught me how to look for lightness and mirth in the depths of alienation and exile"[13].

In the national, cultural and historical context of the novel "The Virgin of Solitude", such universal issues, such as alienation, loneliness and loss of identity, are raised. As the Iranian literary critic M. Ghanoonparvar in his article "Azra-ye Khalvatneshin, Taghi Modarressi's Last Novel" mentions. "The Virgin of Solitude is a rather unusual novel for Modarressi. He is known as a novelist, who generally deals with philosophical and sometimes mystical themes... In contrast in Virgin of Solitude he seems to pursue social and psychological themes and relying on his knowledge and experience as a psychiatrist..."[14].

At the heart of the novel is the years of the young Nuri's maturing. As a long-time experienced psychiatrist, viewing psychologically from the point of view of the universal problem of alienation and loneliness, Modarressi underlines the internal perceptions and contradictions of Madame (Nuri's grandmother) and Nuri.

In 1980 Madam lay stretched out on her bronze bed in a deep coma, awaiting the arrival of her grandson "Prince charming". Her dear grandson, who was raised by his mother after leaving for America, was trying to return to the USA, from where he returned voluntarily years ago. In the opinion of the black mourning -dressed neighbors near Madame. "At the age of nineteen plus, Nuri is proud of nothing, but his European looks..."[15].

The half-meter statue of the Virgin Mary Madam bought from a Polish priest at St. Bartholomew's Church and in the same church she had had it baptized as "The Virgin of Solitude". "In "The Virgin of Solitude" Modarressi

[12] In 2006 published, the novel "Digging to America" by A. Tyler, which examines the issues of upbringing of two Korean children adopted in Persian and American families, as well as the perception of cultural and national identity.

[13] Rahimieh 1992, ix-x.

[14] Ghanoonparvar 2012, 3.

[15] Ghanoonparvar 2012, 4.

explores the theme of identity in the modern globalized world. Indeed he delves into dilemma of a shattered identity, not only for the protagonist of the novel, but for others, as well, including Nuri's grandmother who is gradually attempting albeit not quite succeeding, to be even more Iranian, than Iranians, even converting to Islam and learning rituals and prayers, but unable to cast off her European upbringing"[16]. Madam was eternal stranger of this world of Iranians and sense of loneliness and aloofness always associated with her and with her Statue.

"When she knelt before it, bit by bit she would become transformed into those strange creatures Nuri and Ladan had seen only in the moves about the movies"[17].

For Nuri, the Dezashibi house was an enchanted and mysterious place. The non-Iranian, unusual and magical reality of the Dezashibi dramatically changes Nuri's worldview. They were revolutionary in the life of the boy, the presence of the Noble-Viennese grandmother Madam, his formal way of asking his grandson with a European look "Your Excellency". 'So? Your Excellency's Eastern pride prevents You from treating your grandmother in a civilized manner"[18]. "Your blue eyes are German, but Your Excellency looks at the world like Easterners do"[19].

With the portrayal of characters in "Virgin of Solitude" Modarressi examines Iranian cultural identity, as a significant factor of belonging in globalized world. As a professional psychiatrist he explores universal human feelings such as love, lost, and loneliness.

Fiction of Nasim Khaksar in the context of "translating pain"

One of the renowned writers of modern Iranian Diasporic literature is Nasim Khaksar. Khaksar began writing fiction in 1966, He writes short stories novels, plays poetry, criticism and travel literature. Because his political views Khaksar obliged to leave Iran after the Islamic Revolution in 1980. In his host

[16] Ghanoonparvar 2012, 3.
[17] Ghanoonparvar 2012, 11.
[18] Ghanoonparvar 2012, 24.
[19] Ghanoonparvar 2012, 28.

country, in Holland, Khaksar published to collections of short stories "The Grocer of Kharzeville", "Between Two Doors" and novel "Windmills and Lashes".

Since Khaksar began his life in exile, he has been an articulate voice for the experiences of millions of Iranians, who had to adjust to life in unfamiliar lands.[20] Literary critic and phycologist H. Yavari in her article "Post-revolutionary fiction abroad" comments. "The short story "The Grocer from Kharzeville" is a chronicle of the days of the Iranian intellectual's in exile, in which the fate of millions of immigrants, the pain of their loneliness, regardless of nationality, is concentrated[21].

The Cold, the Snow, the Storm, Iranian writer in the clutches of weekly loneliness, an elderly Dutch lady and her husband are the main characters of the novel. The first months in exile were heavy punishment for writer, who writes.

"The word of an exile is a strange one. At first you think it's just you and your backpack – your four shirts, two pairs of socks and suit, two pieces of underclothes, a towel and the electric shaver. Then for a while it's all about the finding a place to live: you get a small room, a desk, a lamp... Little by little it starts... You began to remember, one memory after another. And suddenly it dawns that the being that sits here is a really an empty space, whose whole existence was floating around somewhere else... You see everything and the same time you see nothing. The pain penetrates to your bones you feel you're cursed"[22].

The plot of the entire novel "The Grocer from Kharzeville" is built by the *stream of consciousness* "May be it was all of this – and fear-that kept me imprisoned in my room for a week..."[23]. From the horror, one day the heart will stop beating, the writer leaves his door open, so that the old woman and the old man would find quickly, before his body started decomposing. "Afternoons, when it would usually get foggy outside... the gloomy dark green pine trees would appear and disappear in the fog like ghosts... I started to cry..."[24].

Researcher M Hron points. "Translating pain considers how writers may create effective intersemiotic translations of their immigrant suffering, given

[20] Mozzafari, Hakkak 2005, 93.
[21] Yavari 1999, 599-602,
[22] Khaksar 2005, 94-95.
[23] Khaksar 2005, 95.
[24] Khaksar 2005, 96.

the constraints of language, culture, genre and the assumptions of the target audience"[25].

In every episode of the story N. Khaksar's figurative language create for us the desperate body of loneliness. "One day you would say how nice it is to be with one's people and share their whispers. Then when you understood the meaning of a whisper you understood why the rock tolerates years of wind, storms, and sun and then remains forever. You accepted to be a whisper, a slowly whisper, the silent pain of your heart... You lived life as if it were journey, that passed through interlocking doors. You wove a colorful shirt from the laughter of children and hung it in the blowing wind. You lighted a small lantern with the small stream of hope, from those you loved until the sun... But behind of this, little by little, a hand was weaving its own nightmare"[26].

Return to the room, the world, with its closed and inner alarms, destructive and exciting emotions lying above the window of loneliness, where "red lights of the streets glowing strangely in the fog. It looks just like an eye that had been crying all day"[27].

The inner conviction of N. Khaksar is that a man in exile lives physically in the place where he does not exist. Memories are his eternal dwelling, from which there is tangible delusions and pain. However, as the author thinks, after the nightmare the sunrise opens and the heartbeat calls for the imperative to live, to live with a real and clear day's advice and not to want everything, urging to keep up with the XI century famous Persian poet, philosopher, traveler Nasser Khosrow's words which extracted from his "The Book of Travels".

"And from there my brother Ghollam Maki Hindu, who accompanied us, and I entered a village named Kharzeville. We had few provisions. My brother went to the grocer bye some food. Someone asked. "What do you want?" I'm the grocer". My brother said. "Anything you have, since I'm a stranger passing through". But everything my brother asked for, the grocer said he didn't have. So, from then on, whenever someone spoke like this, we said he must be the grocer from Kharzeville"[28].

---

[25] Hron 2009, xvii
[26] Khaksar 2005, 102.
[27] Khaksar 2005, 102.
[28] Khaksar 2005, 103.

This story can be divided into three parts, which are the main stages of existential experiences of intellectual in exile. Arrival. Conformity, Belonging. The story has allegorical meaning. Arriving to the new country Stranger cannot have the same life as in his home.

In 1988 "The Last Letter" of the N. Khaksar is published. The preface of this Play in one act begins with T. Eliot's "Rhapsody on a Windy Night" poem. ".. And Through of the spaces of the dark. Midnight shakes the memory. As a madman shakes a geranium…".

"The Last Letter" is an autobiographical story. It is about middle-aged writer in exile, who try to restructure the memories of the past. Iranian scholar F. Papan-Matin in her article "Text and Memory in the Literature of Iranian Diaspora: The Last Letter, A Play in One Act" comments. "The protagonist's past, his identity and his commitments are now suspended in a slip zone between being and becoming"[29].

And then is the Woman, a female companion of writer, the other character in the Play. The Woman was the ghost of the past, to whom he will write letters, which never would send to the addressee. These letters were kept bearing witness to where man came and to understand where he really was. "In the seclusion of his solitary "freedom" – an emancipatory frustration, that takes him into unfamiliar, nihilistic ground – the protagonist is visited by his life, who has come to challenge him out of his bewilderment. This encounter take place in the liminal space in protagonist's imagination"[30].

The fiction of Nasim Khaksar is the documentary monologue, that mirroring the exilic experience of thousands of Iranian intellectuals. The metaphoric presence of memory in his stories and plays made the meaning of the existence of the eternal past more visible.

Conclusions

To summer up, let us mention, that Iranian Diasporic literature created new platform for "Cultural Translation". In their fiction and poetry writers ide-

[29] Papan-Matin, Lane 1997, 309-310.
[30] Papan-Matin, Lane 1997, 309-310.

alized the notion of the homeland and their unique cultural values, indicating the importance of cultural identity in the multicultural milieu.

If the role of 20th century writer in Iran becomes that of a prophet, a prophet whose mission concern not to be next, but the present world, the writers of 21th century Iranian Diaspora are becoming cultural translators, whose mission concerns the voice of thousands of exiled and immigrant intellectuals. Through their literary texts, they translate their own culture as well as the pain of immigration in the context of their own sociocultural experience.

Literature

Asad T. 1986, The Concept of Cultural Translation in British Social Anthropology, Writing Culture: The Poetics and Politics of Ethnography, ed. Clifford J., Marcus G., E., Berkeley: University of California Press, p. 141-164.

Buden B., Nowotny St. 2019, Cultural Translation: An Introduction to the Problem, and Responses, Translations Studies, Vol, 2. No. 2, p. 196-219.

Ghanoonparvar R.M. 2012, Azra-ye Khalvatneshin, Taghi Modarressi's Last Novel, Persian Literary Studies Journal (PLSJ), Vol. 1, No. 1, Autumn-Winter, p. 1-5.

Hron M. 2009, Translating Pain: Immigrant Suffering in Literature and Culture, Toronto: Toronto University Press, 320 p.

Khaksar N. 2005, The Grocer of Kharzeville, Mozzafari N., Hakkak A.K., Strange Times, My Dear: The PEN Anthology of Contemporary Iranian Literature, New York: Arcade Publishing Inc., p. 93-105.

Magedo A., G. 2006, Identity and Cultural Translation: An Introduction, Identity and Cultural Translation: Writing Across the Borders of Englishness, Magedo A., G., Pereira M., E., Oxford, Bern: Peter Lang, p. 11-21.

Modarressi T. 2008, The Virgin of Solitude, trans. Rahimieh N., Syracuse, New York: Syracuse University Press, 381 p.

Mozzafari N., Hakkak A.K. 2005, Strange Times, My Dear: The PEN Anthology of Contemporary Iranian Literature, New York: Arcade Publishing Inc., 494 p.

Papan-Matin F., Lane A. 1997, Text and Memory in the Literature of Iranian Diaspora: The Last Letter, A Play in One Act, Iranian Studies 30:3-4 (Summer-Fall), p. 309-325.

Rahimieh N. 1992, The Quince-Orange Tree, or Iranian Writers in Exile, World Literature Today, Vol. 66, No 1 (winter), p. 39-42.

Rahimieh N. 1992, The Enigma of Persian Modernism, New Comparison, No. 13, Spring, p. 39-45.

Rushdie S. 1992, Imaginary Homelands: Essays and Criticism 1981-1991, London: Penguin Books, 448 p.

Said W.E. 1994, Intellectual Exile: Expatriates and Marginals.-Representa-tions of the Intellectual, The 1993 Reith Lectures, New York:Vintage Books, 103 p.
Yavari H. 1999, Post-Revolutionary Fiction Abroad. - Encyclopaedia Iranica, Vol. IX, Fasc. 6, p. 599-602.

ԻՐԱՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԹԱՂԻ ՄՈԴԱՐԵՍԻ, ՆԱՍԻՄ ԽԱՔՍԱՐ

Լիլիթ Սաֆրաստյան

Վերջին երկու տասնամյակում «մշակութային թարգմանություն» հայեցակարգը առանձնակի տեղ է զբաղեցնում մարդաբանական ուսումնասիրություններում:

Վերջին շրջանում մշակութային մարդաբանության բնագավառում տարածում է գտել մի նոր հայեցակարգ, համաձայն որի, օտար մշակույթների ընկալումը դիտարկվում է որպես թարգմանություն: Այս հայեցակարգի տեսակետից սփյուռքի գրականությունը կարելի է բնութագրել որպես ընդունող երկրի լեզվով սեփական մշակույթի թարգմանություն: Այդպիսով, սփյուռքի գրողները բնութագրվում են որպես մշակութային թարգմանիչներ, որոնք իրենց գեղարվեստական տեքստերի միջոցով թարգմանում են ազգային մշակույթի բազմազան շերտեր, ինչպես նաև ներգաղթի տառապանքը՝ իրենց սոցիալ-մշակութային փորձառության համատեքստում:

Արդի իրանական սփյուռքի հայտնի գրողներ Թաղի Մոդարեսիի և Նասիմ Խաքսարի արձակ ստեղծագործություններում հստակ ընդգծվում է մշակութային ինքնության կարևորությունը գլոբալ աշխարհում:

Բանալի բառեր՝ մշակույթ, թարգմանություն, հայեցակարգ, ինքնություն, սփյուռք գրականություն, օտարում:

ЛИТЕРАТУРА ИРАНСКОЙ ДИАСПОРЫ В КОНТЕКСТЕ "КУЛЬТУРНОГО ПЕРЕВОДА": ТАГИ МОДАРРЕССИ И НАСИМ ХАКСАР

Лилит Сафрастян

На протяжении последних двух десятилетий концепция "культурного перевода" занимает отдельное место в антропологических исследованиях.

За последние годы в сфере культурной антропологии была выдвинута новая концепция, согласно которой восприятие иностранных культур рассматривается как перевод.

С точки зрения этой концепции литературу диаспоры можно воспринимать в качестве перевода собственной культуры на язык принимающей страны. Таким образом, писатели диаспоры характеризуются как культурные переводчики, которые посредством своих художественных текстов переносят различные пласты национальной культуры, а также душевные перипетии иммиграции в контекст своего социокультурного опыта.

В свете сказанного рассматриваются произведения выдающихся писателей современной иранской диаспоры Таги Модарресси и Насима Хаксара, в которых подчеркивается важность культурной идентичности в глобализированном мире.

Ключевые слова – культура, перевод, концепция, идентичность, литература, диаспора, отчуждение.

LITERATURE OF IRANIAN DIASPORA IN THE CONTEXT OF “CULTURAL TRANSLATION”. TAGHI MODARRESSI, NASIM KHAKSAR

Lilit Safrastyan

In the last two decades, the concept of "cultural translation" has had a special place in both anthropology and post-colonial studies.

Recently, a new concept has emerged in the field of cultural anthropology, according to which the perception of foreign cultures is viewed as a translation. From the perspective of this concept, the literature of the Diaspora

can be characterized as translating of one's own culture into the language of the host country. Thus, Diaspora writers are characterized as cultural translators who, through their literary texts, translate diverse layers of national culture, as well as the suffering of immigration in the context of their social cultural experience.

In this article we examine the fiction of Iranian writers of modern Iranian diasporic literature Taghi Modarressi and Nasim Khaksar. In their fiction Modarresi and Khaksar clearly underline the significance of cultural identity in the globalized world.

Key words – culture, translation, concept, identity, diaspora, literature, alienation, loneliness.

ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Մերի Կիրակոսյան

Արվեստագիտության թեկնածու
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ
Մ. Բաղրամյան 24գ., 0025 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ marykirakosyan@mail.ru

Մարի Աբրահամյան

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, հայցորդ
Մ. Բաղրամյան 24գ., 0025 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ mari_abraham21@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 16.04.2019, գրախոսվել է 30.08.2019, ընդունվել է տպագրության 15.08.2019

Ներածություն

XX դարի առաջին կեսի հայկական կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչ, հայ դասական ռեալիստական դիմանկարչության հիմնադիր Ստեփան Աղաջանյանը (1863-1940) դիմանկարի ժանրում ստեղծել է ինքնատիպ, ամբողջական հավաքածու, որի մասն են կազմում մանկական դիմապատկերները:

Թեև Ստեփան Աղաջանյանի մանկական դիմապատկերների վերլուծությունների հանդիպում ենք արվեստաբան Եղիշե Մարտիկյանի, Ռուբեն Պարսամյանի աշխատություններում[1], սակայն մեր հոդվածը Ստեփան Աղաջանյանի մանկական դիմանկարները ամփոփ ներկայացնելու և վերլուծելու առաջին փորձն է:

Մանկական թեման պատահական չէ Աղաջանյանի արվեստում: Արվեստաբան Ե. Մարտիկյանի վկայությամբ՝ «Իր հոգեկան խառնվածքով լինելով վերին աստիճանի բարի, երեխայի նման անմեղ, անհիշաչար, նա շատ լավ է ըմբռնել մանուկների հոգին»[2]: Նկարիչը գեղարվեստական դիպուկ արտահայտչամիջոցներով վերարտադրել է մանկական պարզ ու

[1] Մարտիկյան 1956, 183: Պարսամյան 1963, 39:
[2] Մարտիկյան 1956, 90:

միամիտ էությունը՝ երեխայի բնավորության գծերը, նրա դեմքին հայտնվող ժպիտը կամ թախիծը:

Դոնի Ռոստովում Աղաջանյանի մանկական կենդանագրերի շարքում առանձնանում է 1912-1913 թթ. ստեղծած «Գլխարկով տղան» մանկական դիմապատկերը (նկ. 1): Աշխատանքը ողողված է շագանակագույնի մուգ երանգներով: Տղան պատկերված է պատուհանի մոտ՝ դիմահայաց դիրքով, պատուհանից թափանցող լույսը լուսավորել է նրա դեմքի միայն մի հատվածը: Թեք գլխարկի եզրագիծն ընդգծել է պատանու գլխի համաչափ կառուցվածքը, որով նկարիչը դիտողի ուշադրությունը կենտրոնացրել է միայն դեմքի վրա: Նկատելի է, որ Աղաջանյանը այնքան էլ նշանակություն չի տվել գլխարկի պատկերմանը, այն գրեթե ձուլված է մուգ ֆոնին: Լույսի և ստվերի կտրուկ անցումները տեսանելի են դարձրել կերպարի դիմագծերը, կարմրաշագանակագույն քսվածքներով ընդգծված շրթունքները, այտերը, խոսուն աչքերը: Դրսևորելով կատարողական և գեղանկարչական մեծ վարպետություն՝ Աղաջանյանը խոսեցրել է «մարդուն այնպես, որպեսզի կտավի դիտման ժամանակ բացարձակապես բացակայի նկարիչը»[3]:

Միանգամայն այլ մոտեցումով է պատկերագրված «Մանկական դիմանկար» աշխատանքը, որի թվագրման առնչությամբ առկա է որոշակի անհամաձայնություն. Հայաստանի ազգային արխիվում պահվող՝ Աղաջանյանի գրառումներում նշվում է 1907 թվականը[4], Ե. Մարտիկյանի աշխատության մեջ՝ 1912-ը[5], իսկ կատալոգներում /գրացուցակ/՝ 1914-ը[6]: Այս և մի քանի այլ մանկական դիմապատկերներ թվագրման առումով ճշգրտման կարիք ունեն, իսկ որոշ աշխատանքներ անթվակիր են[7]:

Տղայի կերպավորումն ինքնատիպ է՝ հայացքով դեպի դիտողը, լույսի բացակայությամբ: Ի տարբերություն մյուս աշխատանքների, այս դիմանկարի հենքը երկնագույնի, բաց շագանակագույնի և կանաչի նրբերանգ-

---

[3] Պարսամյան 1963, 19:

[4] Տե՛ս Рукописи (ՀԱԱ, ֆ. 1278, ց. 1, գ. 6):

[5] Տե՛ս Մարտիկյան 1956, 90-91:

[6] Տե՛ս Ստեփան Աղաջանյանի նկարների ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1963, 13: Народный художник Армянской ССР С.М. Агаджанян 1951, 14:

[7] Մանկական դիմանկարների վերաբերյալ թվագրման անճշտությունները և շատ դեպքերում աշխատանքների անթվակիր լինելը բացատրում ենք մանկական դիմապատկերների ոչ բավարար ուսումնասիրության հանգամանքով:

ներով զուգակցված լուսավոր բնապատկեր է: Գունային համահունչ երանգներով են տրված տղայի վերնաշապիկն ու հենքը, որով նկարիչը դիտողի հայացքը սևեռել է միայն մանկան դեմքին: Դիմապատկերն ամբողջությամբ ընկղմված է մուգ շագանակագույնի խտացված տաք երանգների մեջ, խիտ վրձնահարվածների անընդմեջ քսվածքներով մեղմ ու նուրբ են դարձել լուսաստվերային անցումները: Աղաջանյանը, արվեստագետի խորաթափանց նրբանկատությամբ, բնապատկերի թույլ լույսով «կոտրել է» դիմանկարի մթությունը. տեսանելի է դարձրել տղայի գլխի համաչափ կառուցվածքը, պարանոցը, այտերը, շրթունքները, մթությամբ պարուրված աչքերը: Այդ ամենի շնորհիվ կերպավորվել է իրականությանը համահունչ, հոգեբանական նրբին երանգավորմամբ մանկական դիմապատկեր:

Համակարծիք ենք արվեստաբան Ե. Մարտիկյանի այն մտքին, որ Աղաջանյանն իր ամբողջ գործունեության ընթացքում տուրք չի տվել ձևի պաշտամունքին: Նա դիմապատկերում ամեն ինչ պատկերել է իրական ճշմարտությամբ՝ ելակետ ընդունելով տվյալ անհատի ներաշխարհն իր առանձնահատկությամբ և կերպարային բնորոշ գծերով[8]:

Տիպարային այլ բնութագրմամբ է աչքի ընկնում Ստեփան Աղաջանյանի «Աղջկա դիմանկարը» անթվակիր աշխատանքը: Թեև թվացող արտաքին հանգստությանը, կերպարը կրում է ներքին անբացատրելի տխրություն, որով խորհելու տեղիք է տալիս, զգացմունքային առումով խորապես հուզում դիտողին: Փոքր-ինչ ծանր տպավորություն են թողնում գունապնակում գերիշխող շագանակագույնի բաց և մուգ երանգները: Վրձնահետքերը կտրուկ են ու անկաշկանդ: Լուսաստվերային խաղը կենտրոնացված է աղջկա դեմքի միայն մի հատվածի վրա, ինչի շնորհիվ դիմապատկերը դարձել է առավել իրական և զգացմունքային:

Ստեփան Աղաջանյանի խորաթափանց ըմբռնողությամբ են մանկական դիմանկարներն այդքան հրապուրիչ, այդքան ջերմ և կյանքի տրոփյունով լի[9]:

Դոնիռոստովյան շրջանի մանկական դիմանկարների շարքում կարևորվում է մեկ այլ «Աղջկա դիմանկարը»[10] (կամ «Վարդագույն ժապա-

[8] Մարտիկյան 1956, 92:

[9] Մարտիկյան 1956, 134:

[10] Այս մանկական դիմանկարի թվագրման առնչությամբ ևս կա որոշակի տարակարծություն: Համաձայն կատալոգների (գրացանկ), աշխատանքը թվագրվում է 1912-

վեններով աղջիկը») անվանումով աշխատանքը: Կրկին հանդիպում ենք նկարչի երանգապնակին բնորոշ մուգ տոնայնությանը: Աղջկա համաչափ լուսավորված դեմքը նայում է դիտողին. ընդգծված են նրա պարզ ու հստակ դիմագծերը: Վարդագույն ժապավեններն ու գոտին ներդաշնակում են իրար՝ ամբողջացնելով կտավի կոլորիտի երփնագրային հագեցվածությունը:

Նկատելի է, որ դոնիռոստովյան աշխատանքներում գերիշխում է մուգ կոլորիտը, որով էլ կատարողական տեսակետից արվեստագետը լուրջ խնդիր է լուծել՝ կերտել հոգեբանական առումով զգացմունքային և ներգործող կերպարներ:

Մանկական դիմանկարների այս ամբողջ շարքի վերլուծությունը բնորոշում է Ստեփան Աղաջանյանի վերաբերմունքը մանկական դիմանկարչությանը, և ըստ արվեստաբան Եղիշե Մարտիկյանի, «Աղաջանյանի կերտած մանկական կերպարները կերպավորված են անաչառ մոտեցմամբ, յուրաքանչյուրն իր հոգեկան վիճակում, իր ռեալ կացությամբ, իր կերպարին համապատասխան մշակման եղանակով»[11]:

Ստեփան Աղաջանյանի պրոֆեսիոնալիզմն ակնհայտ է դառնում, երբ նրա աշխատանքները համեմատում ենք իր ժամանակակից այլ նկարիչների աշխատանքների հետ, որոնցից են Դոնի Ռոստովում Աղաջանյանի հետ միաժամանակ ստեղծագործած Հմայակ Արծաթպանյանը[12] և Ակիմ Օվանեսովը[13]: Վերջիններիս մանկական դիմապատկերներում ևս հանդի-

---

1916 և 1916 թվականներով: Հմմտ. Ստեփան Աղաջանյանի նկարների ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1938, 23: Народный художник Армянской ССР С.М. Агаджанян 1951, 14:

[11] Մարտիկյան 1956, 129:

[12] **Հմայակ Աբրահամի Արծաթպանյան** (1876-1919) - հայ ռեալիստական գեղանկարչության վառ ներկայացուցիչներից: Ավարտել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը, աշակերտել Վ. Սերովին: Դեռևս վաղ գործերում հանդես է եկել որպես դեմոկրատական գաղափարներով տոգորված ռեալիստ նկարիչ՝ մեծ տեղ հատկացնելով իր հայրենակիցների կյանքին և կենցաղին: Նկարչի որոշ աշխատանքներ այժմ պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում՝ «Աղջիկը դաշնամուրի մոտ» (1899), «Մայրը երեխայի հետ» (1900), «Լոժկինայի դիմանկարը» (անթվակիր), «Նկարչի դուստրը կակաչներով» (1915), «Գյուղական պար» (անթվակիր) և այլն: Հմմտ. Հայկական սովետական հանրագիտարան 1976, 70: Հմայակ Արծաթպանյան 1967, 3-8:

[13] **Հովակիմ Կարապետի Հովհաննիսյան (Ակիմ Օվանեսով)** (1883-1967) - հայ գեղանկարիչ, նկարազարդող և մանկավարժ: Ծնվել և մեծացել է Նոր Նախիջևանում (Դոնի Ռոստով): 1906-ին ավարտել է Պենզայի գեղարվեստական ուսումնարանը: Օվա-

պում ենք գրեթե նույն տարիքի աղջկա դիմանկարների: Արծաթպանյանի «Աղջկա դիմանկար»-ում (անթվակիր) աղջնակը պատկերված է բնության ֆոնին, դիմահայաց, պատշգամբում նստած՝ միապաղաղ հայացքը հառած մի կետի: Տեսանելի է Արծաթպանյանին բնորոշ կոլորիտը. աղջկա դեմքի պարզությունը համադրվում է գունային պարզ ու լուսավոր երանգային լուծումների հետ: Վրձնահարվածները սահուն են, չկան լուսաստվերային կտրուկ հակադրություններ:

Նմանատիպ լուսառատ կոլորիտով է պատկերագրված Ակիմ Օվանեսովի «Այգում ընթերցող աղջիկը» (1947) աշխատանքը: Այգում, աթոռին նստած է աղջնակը, գլուխը՝ խոնարհած գրքին: Նկատելի է կերպարի կոմպոզիցիոն համադրումը ծաղկազարդ այգու ֆոնին: Գունապնակի բաց նրբերանգների թեթև ու սահուն քսվածքներով կերտված աղջկա կերպարը հանգստություն է պարգևում դիտողին:

Արծաթպանյանի և Ակիմ Օվանեսովի համեմատ, Աղաջանյանի ստեղծած կերպարները հոգեբանորեն առավել բարդ են. մուգ տոնայնությունը, լուսաստվերային կտրուկ զուգորդումներն ընդգծում են կերպարների հոգեբանական խորությունը:

Աղաջանյանի ստեղծագործական կյանքում կարևոր նշանակություն ունեցավ խորհրդային շրջանը (1921-1940)՝ նա հայրենիք վերադարձավ որպես մեծ կենսափորձ ունեցող, ճանաչված, ստեղծագործական ինքնատիպ ձեռագրով վարպետ: Նա անդավաճան մնաց ռեալիստական գեղանկարչության սկզբունքներին, սիրեց մարդուն, ստեղծագործեց ու աշխատեց հանուն այդ մարդու, հանուն գեղեցիկի և կատարյալի: Խորհրդային շրջանի աշխատանքներում նկատելի է նկարչի երանգապնակի աստիճանական պարզեցում. նա հրաժարվում է սրճագույնի, ակադեմիական շագանակագույնի երանգներից:

Այս շրջանի լավագույն աշխատանքներից է «Զավենի դիմանկարը» (նկ. 2)[14] (կամ «Տղայի դիմանկար գլխարկով»), որն իր երանգավորմամբ

նեսովը կնոջ հետ տեղափոխվել է հարազատ Նոր Նախիջևան, որտեղ և ծավալվել է նրա ստեղծագործական գործունեությունը: Աշխատանքներից են՝ «Մայր» (1917), «Մ. Նալբանդյանի ձերբակալումը» (անթվակիր), «Լողացող կանայք» (1918), «Սիմֆոնիա» (1918), «Ռոստովը երեկոյան» (1937) և այլն: Հմմտ. Аким Ованесов (Жизнь замечательных нахичеванцев) 2013, 6-14, 20-33, 45-52.

[14] Հիմք ընդունելով որոշ կատալոգների տվյալներ՝ «Զավենի դիմանկարը» վերագրում ենք 1926-ին: Հմմտ. Ստեփան Աղաջանյանի նկարների ցուցահանդեսի կատալոգ

համահունչ է նկարչի խորհրդային շրջանի աշխատանքներին: Տղան նստած է աթոռին՝ հաղթողի կեցվածքով, նրա հայացքում անբացատրելի ուրախություն է դրոշմված: Մուգ կապտականաչավուն գլխարկը հանդիսավորությամբ գրկել է նրա գլուխը: Ակնհայտ է աղաջանյանական կերպավորման ոճը՝ գլխարկի և բաճկոնի համահունչ գունազարդման միջոցով դիտողի հայացքը սևեռել միայն մանկան դեմքին: Հստակ ու պարզ է տղայի դեմքի կառուցվածքը. բաց շագանակագույնի, վարդագույնի, տեղ-տեղ մոխրագույնի խիտ քսվածքները ցայտուն ու արտահայտիչ են դարձրել դիմագծերը: Նկատելի մեղմ ու նուրբ լուսաստվերային անցումները նրբություն են հաղորդում մանկան դեմքին՝ այն դարձնելով խոսուն ու արտահայտիչ: Աշխատանքն ավարտուն է. կերպարի հոգեբանական նկարագրով, կատարողական վարպետությամբ նկարիչը լուծել է իր առջև դրված խնդիրը՝ խորությամբ բացահայտել մանկան ներաշխարհը:

Տրամաբանական է, որ Աղաջանյանի դիմանկարների հաջողվածությունը երկարատև ուսումնասիրության արդյունք է. «Իր աշխատանքի մեթոդով նա մոտ էր կանգնած դասական վարպետներին՝ երկարատև սեանսներ, բնորդի մանրազնին և ուշադիր ուսումնասիրում, ձևերի հետևողական մեթոդիկ մշակում, հատուկ ուշադրություն գծագրությանը…»[15]:

Նույնպիսի հաջողությամբ է կերտված «Փոքրիկ աղջկա դիմանկարը» (1927-1928 թթ.): Աղջնակի հանդարտ, հանգիստ, հայացքը սևեռված է մի կետի: Աշխատանքը ստեղծված է գունային մուգ, հագեցած և խիտ երանգավորմամբ: Վրձնահարվածների շեշտակի ու անկաշկանդ քսվածքներով ընդգծված լուսաստվերային հակադրությունները հայացքը դարձնում են խոսուն և արտահայտիչ: Աղաջանյանը հստակորեն վերարտադրել է կենսունակությամբ լի մանկական դեմքի արտահայտությունը: Հատկանշական է, որ Աղաջանյանի աշխատանքներում գծանկարը պետք է անպայման անսխալ լիներ, որպեսզի գույնին անցնելիս ուղղելու դժվարություն չառաջանար. «գույնով աշխատելիս շարունակ հետևում էր պահպանել ձևերի պնդությունը, միաժամանակ թե՛ գույնով ծածկելով, թե՛ վրձինով գծագրելով»[16]:

(գրացուցակ) 1938, 24: Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1963, 14:

[15] Մարտիկյան 1956, 162:

[16] Մարտիկյան 1956, 163:

Միանգամայն այլ զգացողություններ ենք ստանում 1928-ին ստեղծված «Սեդան խճճված մազերով» դիմապատկերից (նկ. 3): Աշխատանքը հայտնի է նաև «Պիոներուհին», «Սեդիկը կարմիր վզկապով» կամ «Սեդայի դիմանկարը կարմիր փողկապով» անվանումներով[17]: Այստեղ նկատելի են գունագամմային այլ համադրումներ. միմյանց հաջորդող վարդագույնի, դեղնադարչնավունի մեղմ երանգներ: Աղջնակի խճճված վարսերը, թափթփված ընդհանուր տեսքն ընդգծված են ազատ և անկանոն վրձնահարվածների եռանդուն քսվածքներով: Կերպարի խառնվածքային դրսևորումը կատարյալ է. նկարիչն ամեն մի շտրիխով արտահայտիչ է դարձրել երեխայի անհանգիստ, լարված հոգեվիճակը:

Այսպիսով՝ յուրաքանչյուր երեխայի պատկերման դեպքում երփնագրի ընտրությունը պատահական չէ: Գունային երանգները համընկնում են երեխաների հուզականությանը, ինչի շնորհիվ կերտվել են հոգեբանական խորը նկարագրով կենդանագրեր:

Աղաջանյանի խորհրդային շրջանի մանկական դիմապատկերներից է 1928 թ. նկարած «Անապաստանը» (նկ. 4)[18], որը թե՛ կատարողական և թե՛ հոգեբանական բնութագրման տեսանկյունից լավագույնն է մանկական դիմանկարների շարքում:

Ուսումնասիրելով տվյալ նյութը՝ պարզեցինք, որ Աղաջանյանը 1928-ին ստեղծել է «Անապաստանի» երկու տարբերակ: Այդ վկայությանը հանդիպում ենք Հայաստանի ազգային արխիվում պահվող Ստեփան Աղաջանյանի գրառումներում[19], ինչպես նաև 1963-ին Հայաստանի պետական պատկերասրահի (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ)՝ Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին հրատարակված կատալոգում[20]:

«Անապաստանի» օրինակներից մեկն այժմ պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում և ներառված է մշտական ցուցադրության մեջ, մինչդեռ աշխատանքի մյուս օրինակի գտնվելու վայրն անհայտ է:

---

[17] Մարտիկյան 1956, 128: Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1963, 15:

[18] Արվեստաբան Եղիշե Մարտիկյանը նկարչին նվիրված իր աշխատությունում «Անապաստան» աշխատանքը սխալմամբ թվագրում է 1929-ով: Հմմտ. Մարտիկյան 1956, 129:

[19] Рукописи (ՀԱԱ, ֆ. 1278, ց. 1, գ. 6):

[20] Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1963, 15:

Այս կերպարի վերլուծությանն անդրադարձել են արվեստաբաններ Ե. Մարտիկյանը, Ռ. Պարսամյանը, Ռ. Դրամբյանը[21]. այն Աղաջանյանի կենդանագրերի շարքում ամենալուսավոր ու լավատեսական կտավներից է: Դիմանկարն ամբողջությամբ հագեցած է կապտամանուշակագույնի, բաց շագանակագույնի, վարդագույնի, դեղին օքրայի տաք երանգների համադրումներով: Մեզ է նայում պատառոտված շորերով ու հին գլխարկով պատանին: Տղայի՝ արևի լույսով ողողված ժպտուն հայացքին հակադրվում է նրա սոցիալական վիճակը: Խոսուն ու տպավորիչ են տղայի՝ գունային թարմ ընկալմամբ, վրձնահարվածների խիտ ու անկաշկանդ քսվածքներով, լուսաստվերային մեղմ ու նուրբ անցումներով դիմագծերը: Պարզ, սովորական թվացող դիմանկարն ընկալվում է որպես խորիմաստ թեմատիկ կոմպոզիցիոն պատկեր: Այս առնչությամբ արվեստաբան Ռուբեն Պարսամյանը նկատում է. «Լինելով դիմանկարիչ, նա (Ստեփան Աղաջանյանը - Մ.Կ., Մ.Ա.) կարևոր նշանակություն էր տալիս ֆիգուրալ թեմատիկ պատկերներին: Այդ կարևոր բնագավառի զարգացման համար նա իր դիմանկարներով ստեղծեց անհրաժեշտ հող: Նա փայլուն կերպով ցույց տվեց նոր մարդու բնավորության, ապա ուրեմն և էության բացահայտման օրինակներ: Այդ օրինակները եղան ոգևորիչ ազդակներ ֆիգուրալ թեմատիկ պատկերի զարգացման համար»[22]:

Հիշատակության են արժանի խորհրդային շրջանին պատկանող նկարչի ևս երկու աշխատանքներ՝ «Պիոներուհի» անվանումով: 1928-ին ստեղծված «Պիոներուհին» իր կոմպոզիցիոն կառուցվածքով, գունային նկարագրով միանգամայն տարբեր է նույն թվականին կերտված մանկական այլ դիմանկարներից[23]: Աղջնակի կեցվածքում ամրագրված է արդեն իսկ նոր հասարակարգին պատկանող քաղաքացու ընդհանրացված կերպարը: Այստեղ նկատում ենք միանգամայն այլ տիպար, այլ գունային հարաբերակցություն: Աթոռին նստած աղջնակը պատկերված է կիսաթեք դիրքով, հայացքը դեպի դիտողը: Ձեռքին բռնած կարմիր գիրքը, որը կարծես զուտ նկարելու դիտավորությամբ պատկերված լինի, ներդաշնակվում է կարմիր վզկապի վերարտադրությանը: Վարդագույնի մեղմ երանգները

[21] Մարտիկյան 1956, 129: Պարսամյան 1963, 34: Դրամբյան 1963, 13:

[22] Պարսամյան 1963, 36:

[23] Տե՛ս Ստեփան Աղաջանյան -150 2013, 75: Ստեփան Աղաջանյանի նկարների ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1938, 25: Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1963, 15:

նրբորեն տարածված են ողջ դիմանկարով, ինչը պատկերը դարձնում է ընդհանրական:

Ընտրված ներկապնակով, կոմպոզիցիոն կառուցվածքով միանգամայն տարբերվում է 1930-1934 թթ. ստեղծված «Պիոներուհին»[24]: Դիմապատկերն ամբողջությամբ ավարտուն չէ, ձեռքերը միայն ուրվագծված են: Երփնագիրը ներկայացված է հանգիստ և տաք երանգների մեջ: Մեր առջև է հառնում դեմքի բարեհամբույր արտահայտությամբ, հանդարտ կեցվածքով, մեղմ նայվածքով, խոհուն արտահայտությամբ մի օրիորդ: Նկատում ենք աղաջանյանական նույն լուսաստվերային մոդելավորումը, դեմքի մի մասը լուսավորության, իսկ մյուս մասը՝ ստվերի մեջ պահելը, որով ընդգծվում է հայացքի արտահայտչականությունը՝ այն դարձնելով առավել բնութագրական:

Նկատելի է, որ Աղաջանյանի մանկական դիմապատկերներում մանուկները գրեթե միշտ պատկերված են մինչև գոտկատեղը՝ ստատիկ, դիմահայաց կեցվածքով, նկարիչն իր ուշադրությունը կենտրոնացրել է հատկապես դեմքին՝ արտահայտելով մանկան պարզությունն ու մաքրությունը, մինչդեռ կանանց կերպարներում կնոջ յուրօրինակությունն ընդգծել է դեմքի, ձեռքերի հմուտ մշակմամբ, լուսաստվերային անցումների հարուստ երանգավորմամբ և ստեղծելով հոգեբանորեն հասուն կերպարներ:

Եվս մեկ յուրօրինակ աշխատանք է Աղաջանյանի մանկական կերպարներից «Աղջկա դիմանկարը» (անթվակիր), որն ամբողջացնում է մանուկների պատկերների այս շարքը: Աղջնակը կերպավորված է մինչև գոտկատեղը՝ հանգիստ հայացքն ուղղած դիտողին: Գլխի թեթևակի թեքությունը շարժունություն է հաղորդում կերպարին՝ կարծես նկարիչն ակնթարթորեն է որսացել այդ պահը: Աղջկա դեմքի գունատությունն ակնհայտ է. փոս ընկած աչքերը, պիրկ հպված շրթունքները լրացնում են նրա նիհարիկ դեմքի կառուցվածքը: Աշխատանքում գունային ֆոնը հանդես է գալիս միատոն սառը երանգների՝ կապտավունի, դեղին օքրայի, մոխրագույնի, սպիտակագորշագույնի համակցությամբ: Լուսաստվերային

[24] Տե՛ս Ստեփան Աղաջանյան-150 2013, 70: Ստեփան Աղաջանյանի նկարների ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1938, 25-26: Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1963, 15:

խաղը նկատելի է դեմքի միայն մի հատվածի և պարանոցի վրա: Եվ կերտվել է պարզ ու անմիջական կերպար:

Եզրակացություն

Այսպիսով, Ստեփան Աղաջանյանը մանկական դիմապատկերներ ստեղծել է դոնիռոստովյան (1904-1921) և խորհրդային շրջաններում (1921-1940), որոնց քանակը, համաձայն Հայաստանի ազգային պատկերասրահի ֆոնդապահոցի տվյալների, տասնմեկն է[25]: Եղիշե Մարտիկյանի մենագրությունում նշվում է, որ նկարչի ստեղծագործություններում մանկական դիմանկարը երևան է եկել սկսած 1912-ից[26], սակայն Հայաստանի ազգային արխիվում պահվող՝ Ստեփան Աղաջանյանի գրառումներում մանկական դիմանկարները ավելի վաղ՝ 1907, 1910 թվագրում ունեն[27]:

Հայ ռեալիստական գեղանկարչության ջատագով Ս. Աղաջանյանի արվեստում մանկական դիմանկարներն իրենց իրապաշտական երփնագրությամբ, ռեալիստական ճշգրիտ ձևերի կուռ կառուցվածքով, լուսաստվերային անցումների ներդաշնակ հերթագայությամբ և կերպարների հոգեբանական նկարագրով ուրույն տեղ են զբաղեցնում նկարչի արվեստում:

---

[25] Ստեփան Աղաջանյան-150 2013, 64-70, 73-77: Այս աշխատանքները մեզ հայտնի մանկական դիմապատկերներն են, որոնց թվաքանակը վերջնական չէ: Չենք բացառում նաև, որ Ստեփան Աղաջանյանը մանկական դիմապատկերներ ստեղծել է նաև Փարիզում և Շուշիում ապրած տարիներին:

[26] Մարտիկյան 1956, 90:

[27] Рукописи (ՀԱԱ, ֆ. 1278, g. 1, գ. 6):

Նկ. 1. «Գլխարկով տղան» 1912-1913 թթ., 47x37, կտ., յուղ., ՀԱՊ

Նկ. 2. «Զավենի դիմանկարը» (Տղայի դիմանկար գլխարկով), 1926 թ., 47x42, կտ., յուղ., ՀԱՊ



Նկ. 3. «Սեղան խճճված մազերով» 1928 թ., 48x40,5, կտ., յուղ., ՀԱՊ

Նկ. 4. «Անապաստանը» 1928 թ., 45x39 կտ., յուղ., ՀԱՊ

Գրականության

Դրամբյան Ռ. 1963, Ռեալիստ նկարիչը, Սովետական արվեստ, Երևան, N 12, էջ 8-14:
Հայկական սովետական հանրագիտարան 1976, հ. 2, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն հրատ., 720 էջ:
Հմայակ Արծաթպանյան 1967 (ցուցահանդեսի կատալոգ), Երևան, Հայաստանի պետական պատկերասրահ, 28 էջ:
Մարտիկյան Ե. 1956, Ստեփան Աղաջանյան, Երևան, «Հայպետհրատ», 183 էջ:
Պարսամյան Ռ. 1963, Ստեփան Աղաջանյան, Երևան, «Հայպետհրատ», 39 էջ:
Ստեփան Աղաջանյան-150, 2013 (պատկերագիրք), Երևան, «Էդիթ Պրինտ», 128 էջ:
Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1963, Երևան, հրատ. նշված չէ, 30 էջ:
Ստեփան Աղաջանյանի նկարների ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ) 1938 (Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միություն, Արվեստի վաստակավոր գործիչ, 40-ամյա ստեղծագործության առթիվ), Երևան, Պետական համալսարանի հրատ., 40 էջ:
Аким Ованесов (Жизнь замечательных нахичеванцев) 2013, Ростов-на-Дону, изд. "Ковчег", 52 с.
Народный художник Армянской ССР С.М. Агаджанян, 1951 (каталог выставки), Дом культуры советской Армении, Государственная картинная галерея Армянской ССР, Москва, հրատ. նշված չէ, 27 с.
Рукописи (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1278, g. 1, գ. 6):

ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Մերի Կիրակոսյան, Մարի Աբրահամյան

Ստեփան Աղաջանյանը (1863-1940) հայ կերպարվեստի ռեալիստական դիմանկարչության ակնառու ներկայացուցիչներից է: Նրա արվեստում մանկական դիմապատկերները ուրույն տեղ են զբաղեցնում: Տաղանդավոր դիմանկարչին հաջողվել է վարպետորեն վերարտադրել մանկան կերպարի մաքուր և նուրբ ներաշխարհի առանձնահատուկ գծերը:

Դոնի Ռոստովում ստեղծված դիմանկարներում գերակշռում է մուգ կոլորիտը, ինչի շնորհիվ արվեստագետը կերտել է հոգեբանական առումով զգացմունքային և ներգործող կերպարներ: Նկարչի խորհրդային շրջանի կենդանագրերում նկատելի է գունաշարի աստիճանական պար-

զեցում, արվեստագետը հրաժարվում է ակադեմիական շագանակագույնի երանգներից: Ս. Աղաջանյանի արվեստում մանկական դիմանկարները լուսաստվերային անցումների ներդաշնակությամբ և կերպարների հոգեբանական նկարագրով իրենց ուրույն տեղն են զբաղեցնում:

Բանալի բառեր՝ Ստեփան Աղաջանյան, ռեալիստական գեղանկարչություն, մանկական դիմանկար, խորհրդային շրջան, կոլորիտ, հոգեբանական բնութագիր, լուսաստվերային անցումներ:

ДЕТСКИЕ ПОРТРЕТЫ СТЕПАНА АГАДЖАНЯНА

Мэри Киракосян, Мари Абрамян

Степан Агаджанян (1863-1940) является одним из ярких представителей реалистической портретной живописи в армянском изобразительном искусстве. В его творчестве детские портреты занимают особое место. Талантливому портретисту удалось воспроизвести на своих полотнах специфические черты чистого и нежного детского образа.

В портретах, написанных в Ростове-на-Дону, преобладает темный колорит, благодаря чему художник создал эмоциональные и трогательные образы, которые оказывают психологическое воздействие на зрителя. Портреты советского периода отличаются более светлой цветовой гаммой. Художник отказывается от использования оттенков академического коричневого цвета. Для детских портретов Степана Агаджаняна характерна гармония светотеневых переходов, психологическая характеристика модели.

Ключевые слова – Степан Агаджанян, реалистическая живопись, детские портреты, советский период, колорит, психологическая характеристика, светотеневые переходы.

CHILDREN PORTRAITS OF STEPAN AGHAJANYAN

Mary Kirakosyan, Mari Abrahamyan

Stepan Aghajanyan (1863-1940) is one of the distinguished representatives of realistic portrait paintings of Armenian fine arts. Children portraits have their unique place in his art. The talented portrait painter obviously succeeded to ingeniously reproduce the specific features of fine and clean internal world of a child's character.

In the portraits created in Rostov-on-Don, a dark color prevails, whereby the artist has created emotional and affecting images. The portraits of the Soviet period show a gradual simplification of the color range. The artist refuses shades of academic brown. In Stepan Aghajanian's oeuvre a special place is occupied by children's portraits, which are characterized by the harmony of the light and shade transitions and psychological characteristic of model.

Key words – Stepan Aghajanyan, realistic painting, children portraits, Soviet period, light-shadow transformations.

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Արմինե Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ
Մարշալ Բաղրամյան պող. 24 գ., 0019 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ armine.pet21@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 20.02.2019, գրախոսվել է 11.09.2019, ընդունվել է տպագրության 15.08.2019

Ներածություն

Հայ գեղանկարչության պատմության մեջ ուշագրավ երևույթ են XIX դ. վերջի – XX դ. սկզբի հայ ռեալիստական կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչ Հմայակ Հակոբյանի ստեղծագործությունները, որոնք արտացոլում են ազգային բնավորությունը, հոգեկերտվածքը, XIX դ. Թիֆլիսի կենցաղն ու կենսակերպը:

Հմայակ Ստեփանի Հակոբյանը (1871-1939) ծնվել է Տրապիզոնում, հարուստ վաճառականի ընտանիքում: Ծնողները վաղ մանկուց նկատում են նրա ձիրքը նկարչության ասպարեզում, և, քանի որ Տրապիզոնում գեղարվեստական դպրոց չկար, ընտանիքը որոշում է տեղափոխվել Թիֆլիս: Բնակություն են հաստատում Թիֆլիսի Պեսկի թաղամասի Ալիազովի քարվանսարայում, որտեղ ապրում էին տնայնագործներն ու արհեստավորները: Այդ միջավայրը էական դեր է խաղում ապագա նկարչի ստեղծագործական կյանքում:

1886-1891 թթ. Հմ. Հակոբյանը սովորում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում՝ Հարություն Շամշինյանի արվեստանոցում, որի ստեղծագործությունները նշանակալի ներգործություն են ունենում նրա գեղագիտական հայացքների ձևավորման վրա: Դրա վառ օրինակն է «Հին Թիֆլիս» (1888 թ.) բնանկարը: Այն արված է ինքնաբուխ զգացմունքով և այնպիսի անբռնազբոս եղանակով, ինչպես կարող էր վրձնել փորձ ունեցող նկարիչը[1]: Հ. Շամշինյանը միշտ խրախուսում էր իր աշակերտների՝ կյանքը ճշմարիտ կերպով վերարտադրելու ձգտումը, ուշադիր հետևում նրանց վարպետության կատարելագործմանը: Հասարակ մարդու նկատմամբ Շամշինյանի դրսևորած մարդասիրական մոտեցումը հատուկ էր գաղափարական

[1] Մարտիկյան 1983, 86:

ռեալիզմի ներկայացուցիչներին, որոնք ձգտում էին հասարակության մեջ անտեսված մարդու անհատականությունը վերհանել արվեստում՝ նրան արժանավոր տեղ հատկացնելով, և հենց նրանց ջանքերով էլ XIX դ. երկրորդ կեսին ինչպես հայ, այնպես էլ ռուսական արվեստում ռեալիզմը հասավ մեծ վերելքի[2]: Հայ գրող, դրամատուրգ Ա. Շիրվանզադեն, խոսելով ռեալիզմի մասին, նշում է. «Մենք գեղեցիկը փնտրում ենք ճշմարտության մեջ և այն ենք միայն համարում գեղեցիկ, ինչ որ ճշմարիտ է, և ճշմարտությունից դուրս մենք գեղեցկություն չենք ընդունում»[3]: Նույն կարծիքին էր նկարիչ Հարություն Շամշինյանը: Նա համոզված էր, որ ստեղծագործության ռեալիստական բնույթը պայմանավորված է ստեղծագործողի՝ իրականության գեղարվեստական ընկալման խորությամբ և ամբողջականությամբ, երևույթների էությանը նրա հասու լինելով և դրանց մեջ խորամուխ լինելու համար անհրաժեշտ ըմբռնումներով ու մեկնաբանություններով: Հմ. Հակոբյանը հավատարիմ էր ռեալիզմի այն սկզբունքներին, որոնք իր մեջ սերմանել էր Հ. Շամշինյանը:

Նշենք, որ Ներսիսյան դպրոցում նկարչի ուսուցիչներից էին Աբիսողոմ Հովհաննիսյանը և Ծերենցը (Հովսեփ Շիշմանյան), դասընկերներից էր հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Հայտնի է՝ Թումանյանի «Վերնատանը» հաճախ են հավաքվել ու ազգային մշակույթի մասին զրուցել թիֆլիսաբնակ և դրսից եկած հայ գրողներ ու արվեստագետներ[4]: Հմ. Հակոբյանը, ոգեշնչվելով այդ հանդիպումներից, անդրադարձել է Հովհաննես Թումանյանի կերպարին, որի բանաստեղծություններում ու պոեմներում գովերգված Լոռու չքնաղ բնությունը արտացոլում է գտել նկարիչներ Գ. Բաշինջաղյանի, Փ. Թերլեմեզյանի, Մ. Սարյանի և ուրիշների ստեղծագործություններում: Ցավոք, շատ քիչ են Թումանյանի կենդանության օրոք պատկերված նրա դիմանկարները: Բացի Հմ. Հակոբյանի և Գ. Շարբաբչյանի գործերից, մնացածները հետմահու արված նկարներ են[5]: Ըստ արվեստաբան Մ. Ղազարյանի՝ բանաստեղծի օրոք նկարված և պահպանված դիմապատկերներից հայտնի են երեքը: Մեկը պատկանում է Հմայակ Հակոբյանի վրձնին («Թումանյանի դիմա-

[2] Մարտիկյան 1975, 16:
[3] Պետրոսյան 2007, 200:
[4] Աղասյան, Հակոբյան, Հասրաթյան, Ղազարյան 2009, 270:
[5] Հովհաննես Թումանյանը կերպարվեստում. Ցուցահանդեսի կատալոգ 1958, 6:

նկարները»)[6]: Այն արված է 1919 թ., ածուխով, ունի արտահայտիչ գծանկար, ձևերի մեղմ անցումներ, նկարված է անմիջապես բնորդից և արտաքին նմանության հետ մեկտեղ արտացոլում է թումանյանական ներքին հան-գըստությունը, նրա մեղմ ու բարի էությունը (թ., ած., 29x40, Հովի. Թումանյանի տուն-թանգարան): Հանճարեղ լոռեցու մյուս դիմանկարի հեղինակը Գրիգոր Շարբաբչյանն է («Հովհաննես Թումանյան»): Այս կերպարը հեռու է Հակոբյանի գծանկարի մեղմությունից: Այստեղ մի փոքր չորության հասնող վրձնահարվածները, գույնի սահմանափակ օգտագործումը կերպարին տալիս են ինչ-որ օտարոտի բնույթ, որը հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ բանաստեղծն այդ ժամանակ արդեն (նկարված է 1922 թ.) տառապում էր անբուժելի հիվանդությամբ (կտ., յուղ., 85x70, 1922 թ., Հովի. Թումանյանի տուն-թանգարան): Երրորդը՝ նկարիչ Ա. Բաժբեուկ-Մելիքյանի վրձնած դիմանկարն է: Այստեղ երևում են Թումանյանի բնավորության փափկությունն ու մեղմությունը (թ., մատ., 1921 թ., Գրականության և արվեստի թանգարան)[7]: Ուշագրավ է Եղիշե Թադևոսյանի կերտած դիմանկարը: Ինչպես նշում է արվեստաբան Մ. Քամալյանը, թեև այն արված է լուսանկարից, նկարչին հաջողվել է թեթև և աշխույժ վրձնահարվածներով ստեղծել լույսով ողողված, կենսախնդությամբ համակված ու ներշնչված պոետական կերպար Լոռվա հայրենի բնաշխարհի ֆոնին[8]: Փաստենք, որ Մ. Քամալյանի ուսումնասիրության շնորհիվ ի հայտ են եկել Հովի. Թումանյանին նվիրված մոտ 50 գեղանկարչական և գրաֆիկական դիմանկարներ:

Թիֆլիսում Հմ. Հակոբյանը մտերմանում է նկարիչ Գրիգոր Գաբրիելյանի հետ, որը օգտակար խորհուրդներ է տալիս նրան նկարչական տեխնիկան, մասնավորապես գծանկարի հստակությունը կատարելագործելու վերաբերյալ: Այդ ընթացքում ծնվում է «Նկարիչ Գաբրիելյանը էտյուդի ժամանակ» (1889 թ.) կտավը (նկ. 1): Գ. Գաբրիելյանը պատկերված է բնության գրկում, ստեղծագործելու պահին: Նա ասես հիացած է բնության գեղեցկությամբ և փորձում է այն վերարտադրել: Կարծես ձուլվել է բնությանը: Երկնքի երկնակամարի երանգները համահունչ են օքրային և կանաչին:

---

[6] Ղազարյան 1969, 53:
[7] Ղազարյան 1969, 53:
[8] Քամալյան 2018, 110:

Հմ. Հակոբյանը հաճախ այցելում էր Գ. Բաշինջաղյանի արվեստանոց, որի ստեղծագործական աշխարհը չէր կարող հետք չթողնել նրա արվեստում: Ակնհայտ է Բաշինջաղյանի ներգործությունը երիտասարդ նկարչի ռեալիստական մոտեցումների, ճաշակի ձևավորման հարցում: Նրանց ստեղծագործություններում առկա են անմիջականությունը, պարզությունը, իրականը տեսնելու և վերարտադրելու հմտությունը: Ի տարբերություն Բաշինջաղյանի, որը պատկերում էր միայն «մաքուր» բնանկարներ, Հակոբյանի կտավներում ավելանում էին մարդկային ֆիգուրներ՝ բնապատկերը վերածելով ժանրային պատկերի: Հմ. Հակոբյանը մշտապես հավատարիմ մնաց ռեալիստական սկզբունքներին ու չփորձեց հարել որևէ այլ ուղղության:

Նկարիչը մասնագիտական կրթություն է ստացել Մյունխենի գեղարվեստի ակադեմիայում (1891-1894): Հաճախել է Շիմոն Հոլոշիի մասնավոր ստուդիան, ապա ուսումը շարունակել է տեղի Գեղարվեստի ակադեմիայում՝ Ֆրանց ֆոն Դեֆրեգերի (ծագումով տիրոլցի էր և հայտնի էր այդ շրջանի կենցաղային, ժողովրդական թեմաներով ստեղված նկարներով) ղեկավարությամբ[9]: Ուսանելու տարիներին ճամփորդել է Շվեյցարիայում ու առաջին անգամ երկրաբան, պրոֆեսոր Անդրեաս Արծրունու արշավախմբի հետ այցելել Հայաստան: Այդ շրջանի նկարներից է «Տղամարդու դիմանկարը» կտավը, որը վկայում է երիտասարդ նկարչի ստեղծագործական մեծ ներուժի մասին: Մոխրագույնի, դեղնավունի, կինոբարիսկարմրի ուժգին հարաբերակցությունը, լույսի հակադրությունը, հաստատուն վրձնահարվածները ընդգծում են այս ստեղծագործության բարձր հուզականությունը[10]:

Ազգային նոր կերպարվեստի զարգացումը խթանելու, գեղարվեստական առկա ուժերը հավաքագրելու առումով կարևոր դեր են խաղացել 1881-1882, 1901-1904, 1906-1907, 1911 և 1916-1917 թթ. հայ արհեստավարժ և ինքնուս արվեստագետների մասնակցությամբ Կ. Պոլսում բացված խմբակային մեծ ցուցահանդեսները: Այդ տեսակետից էլ ավելի կարևոր նշանակություն են ունեցել Թիֆլիսում պարբերաբար կազմակերպվող ցուցադրությունները, որոնք կայացել են Գեղարվեստը խրախուսող ընկերության (1888-ից), Կովկասյան նկարիչների փոխօգնության ընկերության

[9] Աղասյան 2009, 55:
[10] Измайлова, Айвазян 1969, 157.

(1907-ից), ինչպես նաև 1916-ին գրեթե միաժամանակ հիմնադրված՝ Հայ արվեստագետների միության ու Վրացական գեղարվեստական միության նախաձեռնությամբ և բավական լայնորեն լուսաբանվել են մամուլում: Նշենք, որ 1883-1920 թթ. քաղաքի մշակութային կյանքն աշխուժացնող նշանակալի երևույթներ էին առանձին հայ նկարիչների ու քանդակագործների՝ Գևորգ Բաշինջաղյանի, Լազար Արտազյանի, Միքայել Միքայելյանի, Արշակ Ֆեթվաճյանի, Հարություն Շամշինյանի, Գրիգոր (Գիգո) Շարբաբչյանի, Հմայակ Հակոբյանի, Վահրամ Գայֆեճյանի, Սարգիս Խաչատուրյանի, Երվանդ Քոչարի և այլոց անհատական ցուցահանդեսները[11]:

Հմ. Հակոբյանը մասնակցել է նաև մի շարք այլ ցուցահանդեսների, որոնց մասին իրենց կարծիքն են հայտնել հայ մեծանուն գրողներ, արվեստագետներ: Այսպես, խոսելով 1897 թ. կազմակերպված «Կովկասյան ցուցահանդեսի» վերաբերյալ՝ Շիրվանզադեն Հմ. Հակոբյանի մասին ասում է. «Ընդհանուր առմամբ լավ տպավորություն է թողնում երիտասարդ նկարիչ Հակոբյանի վրձինը: Նրա պատկերների մեջ աչքի են ընկնում «Թամարիկը», «Մտածողությունը», «Ակադեմիական նատուրշչիկը»: «Թամարիկը», ...մի աղջկա գեղեցիկ գլուխ է ..., ֆոնի մուգությունը աղջկա երեսին տալիս է գունատություն... Ավելի արտահայտիչ է «Ակադեմիական նատուրշչիկը», որ մի ծերունու գլուխ է, վերին աստիճանի բնորոշ: Ափսոս միայն, որ նկարիչը յուր տիպարին տվել է մի քիչ թատրոնական տեսք, ձգելով ուսերին քղամիդ: Կարճ ասած, մեր երիտասարդ նկարիչը ունի դիտելու ընդունակություն, բայց տեխնիկան անկատար է: Վրձինը փափուկ է, հյութալի և ավելի համակրելի, քան պ. Նշանյանին: Պ. Հակոբյանը ապագա է խոստանում, միայն շատ պիտի աշխատի»[12]:

Անվանի հասարակական գործիչ Գ. Էդիլյանը «Համբավաբեր» շաբաթաթերթում Հմ. Հակոբյանի ցուցահանդեսի մասին գրել է. «Բավականին շատ նկարներ ունի Հակոբյանը, որոնք, սակայն ըստ երևույթին, մեծ ուշադրություն առաջ չեն բերում հասարակության մեջ, որովհետև նկարների մի մասը ծանոթ է հասարակությանը, մի երկուսը շատ սովորական գործերի տպավորություն են թողնում. այս բոլորով հանդերձ, այդ նկարների ետևը կանգնած է փորձված, ուսումնասիրող մի նկարիչ, որը հավա-

[11] Աղասյան 2009, 18:
[12] Մուրճ 1987, N 10, ՀԱՊ, ֆ-83, Հ-1995, S-1, թղ-2:

նորեն հաջորդ ցուցահանդեսին շատ ավելի ուշագրավ գործերով կմասնակցի»[13]:

1915-ին «Փառաց տաճարում» բացված կերպարվեստի ցուցահանդեսին մասնակցում էր նաև Հմ. Հակոբյանը: Տվյալ պատկերահանդեսի վերաբերյալ ականավոր հայագետ, արվեստաբան Գ. Լևոնյանը նշել է. «Ներկա ցուցահանդեսում ցուցադրված են նկարչական և արձանագործական 234 աշխատանք: Ցուցահանդեսի մեջ ամենից շատ պատկերներ ցուցադրել է նկարիչ Հմայակ Հակոբյանը (37 հատ): Հայրենակից արվեստագետը նույնպես անծանոթ չէ մեզ... շատ ուրախ ենք նկատելու, որ նա այս տարի զգալի չափով առաջադիմություն է ցույց տալիս: Իր պրիոմների մեջ քիչ ավելի շատ շարժումներ են նկատվում, թեև դեռ սառն են գույները, և ինչ-որ չորություն է տիրում նրա օդի մեջ[14]»:

1908 թ. Դ. Օքրոյանի տանը նկարչական ցուցահանդեսում Հմ. Հակոբյանը հանդես է եկել 35 նկարով: «Դրանց մեջ կան բնության տեսարաններ, տիպերի և ծաղիկների նկարներ, կենցաղագրական ուսումնասիրություններ: Ամենախոշոր և բավական հաջողված պատկերներից մեկն է «Երեկոյ է դառնում» պատկերը, որի մեջ զգացվում է որոշ տրամադրություն...», - գրում է «Մշակի» թղթակիցը[15]:

1948 թ. Հայաստանի պետական պատկերասրահում կազմակերպված՝ Հմայակ Հակոբյանի նկարների հետմահու ցուցահանդեսի առնչությամբ արվեստաբան Վ. Հարությունյանը գրում է, որ հայ արվեստի արժանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Հմ. Հակոբյանի մասին «մինչև այժմ մենք միայն հարևանցի գաղափար էինք կազմել պատկերասրահում եղած մի քանի պատահական նմուշների հիման վրա»[16]:

Նշված ցուցահանդեսները որոշակի պատկերացում են տալիս նկարչի անցած ուղու մասին: Նա կանգնած է մեր առջև իր բոլոր առավելություններով և թերություններով: Նա բազմաժանր նկարիչ է, ստեղծել է դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ, կենցաղային նկարներ: Հմ. Հակոբյանին մասնավորապես հետաքրքրել են Թիֆլիսում ապրող մարդը, նրա առօրյան, նիստուկացը: Դիմանկարի ժանրով արարել է հո-

[13] ՀԱՊ, ֆ-83, S-1, թպ-2, Ի-2349, 1917, N 9, 290-293:
[14] Մշակ 1915, N 79, 4, ՀԱՊ, ֆ-83, S-1, թպ-2, Ի-1996:
[15] Մշակ 1908, N 6, 2, ՀԱՊ, ֆ-83, S-1, թպ-2, Ի-1997:
[16] Հարությունյան 1948, ՀԱՊ, ֆ-83, S-1, թպ-2:

գեբանական, ազգային տիպեր, որոնք տոգորված են «դեմոկրատական, ինտերնացիոնալիստական» գաղափարներով[17]: Մեծ արտահայտչականությամբ է վրձնել «Նիրհող ծերուկը» (1900-1910 թթ.) կտավը (նկ. 2): Վարպետորեն է պատկերված մորուքավոր ծերունու դեմքը, նկարչի ուշադրությունը բևեռված է մարդու անհատականությանը: Գույները թափանցիկ են, ինչը հատուկ է Հակոբյանի գրեթե բոլոր դիմանկարներին:

Շատ նկարիչներ են անդրադարձել Ամենայն Հայոց կաթողիկոս, մեծագույն հայրենասեր Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի կերպարին, և յուրաքանչյուրը՝ ուրույն ոճով: Ազգանվեր հոգևորականի դիմանկարը (նկ. 3) Հմ. Հակոբյանը պատկերել է 1900-1910 թթ.՝ ինչպես միշտ ելնելով ռեալիստական սկզբունքներից. սև հագուստ՝ մուգ տոնային լուծումներով, դիմագծերը խոսուն են՝ արտահայտիչ է նրա տառապած, սակայն բարի, խորաթափանց հայացքը: Հովի. Այվազովսկին ևս անդրադարձել է Հայոց հայրիկի վսեմ կերպարին՝ ստեղծելով «Խրիմյան կաթողիկոսը Էջմիածնի շրջակայքում» (1895 թ.) կտավը, որում երևում են նրա բնավորությունը, առինքնող ու խոհեմ էությունը: Ի տարբերություն Հմ. Հակոբյանի, Այվազովսկու նկարը զերծ է ակադեմիական մոտեցումներից: Կաթողիկոսը պատկերված է բնանկարի ֆոնին, հոգսաշատ է ու մտազբաղ: Իսկ ահա նկարիչ Վ. Սուրենյանցը «Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի դիմանկարը» (1906 թ.) կտավում նրան պատկերել է այն պահին, երբ Հայոց հոգևոր առաջնորդը ստացել է ռուսական ցար Նիկոլայ Երկրորդի տխրահռչակ հրովարտակը:

Հմ. Հակոբյանը նատյուրմորտի ժանրում ևս դրսևորել է իր անհատականությունը: Նրբորեն տիրապետելով գույնի բյուրավոր երանգներին, ճիշտ հաղորդելով ռեֆլեքսները՝ նա վարպետորեն ընդհանրացրել է մակերևույթները, ստեղծել լույսով և օդով պարուրված կատարյալ ձևեր[18]: «Այստեղ բացառիկ վարպետության է հասնում, - գրել է Հ. Շիշմանյանը, - բայց նրա գործերում չկա նյութականության այնքան կատարյալ ու խոր զգացում և բարձր ճաշակ, որքան հայ նատյուրմորտիստ Զաքար Զաքարյանի մոտ է, բայց, այստեղ իրերը ներկայացված են ավելի պայծառ լույսի տակ և երանգների շեշտավորումով»[19]: Ինքնատիպ գործ է մաքրության և

[17] Մարտիկյան 1983, 85:
[18] Հմայակ Հակոբյան (1871-1939) 1948, 22:
[19] Շիշմանյան 1958, 188: Տե՛ս նաև Էջմիածին 1948 (7-9) Է-Թ, 88:

ազնվության խորհրդանիշ «Քրիզանթեմներ» կտավը (նկ. 4), որը նույնպես արված է ռեալիստական սկզբունքներով: Աշխատանքը արված է մուգ երանգներով, բայց ողողված է լույսով ու ջերմությամբ:

Նկարչի ստեղծագործությունները պահվում են ՀԱՊ-ում, Թումանյանի անվան տուն-թանգարանում, Վրաստանի արվեստի թանգարանում (ՎԱԹ), ՎԱԹ-Քարվասլայում և մասնավոր հավաքածուներում: 1916 թ. Հմ. Հակոբյանը դարձել է Թիֆլիսի «Հայ նկարիչների միության» անդամ[20]:

Հմայակ Հակոբյանը եղել է արվեստի նվիրյալ, սակայն մնացել է աննկատ և, ցավոք, մոռացվել է: Մահացել է 1939 թ. դեկտեմբերի 9-ին: Ընտանիք չի կազմել, ժառանգներ չի թողել:

Եզրակացություններ

Հմ. Հակոբյանը՝ հայ ռեալիստական կերպարվեստի ներկայացուցիչներից է իրապաշտական գեղանկարչության մեջ: Ստեղծագործել է բոլոր ժանրերով՝ յուրաքանչյուրի մեջ դրսևորելով իր արվեստի ներուժը, արտահայտչամիջոցները, գեղարվեստական մտածողությունը: Հատկանշական են դիմապատկերները, որոնք լոկ դիմանկարներ չեն, այլ հոգեբանական կտավների մի շռայլ աշխարհ, որ ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի մարդու կերպարը՝ իր հույզերով, մտորումներով, զգացմունքներով:

Գրականություն

Աղասյան Ա. 2009, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 292 էջ, 192 էջ նկար:

Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ. 2009, Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 576 էջ:

Էջմիածին, 1948 (7-9) Է-Թ, էջ 88:

Հայաստանի պետական պատկերասրահ (ՀՊՊ), Հմայակ Հակոբյան (1871-1939), 1948, Հմայակ Հակոբյանի ստեղծագործությունների հետմահվան ցուցահանդեսի կատալոգ, ներածական հոդվածը Ռ. Լոռիս-Միքայելյանի, ՀՊՊ հրատ., Երևան, 90 էջ+11 նկ.:

ՀՊՊ, ֆ-83, Հ-1995, Տ-1, թպ-2:

[20] Հմայակ Հակոբյան 1871-1939, կատալոգ 2012, 20:

Հայաստանի ազգային պատկերասրահ (ՀԱՊ), ֆ-83, Տ-1, թպ-2, Ի-2349, N 14, 1917, էջ 290-293:
Վ. Հարությունյան 1948, Նկարիչ Հ. Հակոբյանի ցուցահանդեսը ՀԱՊ, ֆ-83, Տ-1, թպ-2:
ՀԱՊ, ֆ-83, Տ-1, թպ-2, Ի-1997, Մշակ, 1908, N 6, 10/1, էջ 2:
Գ. Լևոնյան 1915, Փառաց տաճարում, ՀԱՊ, ֆ-83, Տ-1, թպ-2, Ի-1996, Մշակ, N 79, 17/4, էջ 4:
Հովհաննես Թումանյանը կերպարվեստում. Ցուցահանդեսի կատալոգ, 1958, Երևան, հրատ. նշված չէ, 6 էջ, 17 նկ.:
Ղազարյան Մ. 1969, Ներշնչող կերպարներ, Պատմա-բանասիրական հանդես, № 3, էջ 49-64:
Մարտիկյան Ե. 1983, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Գ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 224 էջ, 34 թերթ ներդիր:
Մարտիկյան Ե. 1975, Հայկական կերպարվեստի պատմություն, XVII-XIX դդ., երկու գրքով, գիրք Բ, Երևան, «Հայաստան» հրատ., 277 էջ:
Շիրվանզադե Կովկասյան ցուցահանդես, Մուրճ, 1987, N 10, էջ 1445:
Շիշմանյան Ռ. 1958, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, «Հայպետհրատ.», էջ 357:
Պետրոսյան Դ.Վ. 2007, Գեղեցկի և ճշմարտի գեղագիտական արտացոլման հիմնախնդրի շուրջ (Ալ. Շիրվանզադե – Գ. Լևոնյան բանավեճը «Մշակի» էջերում, 1917 թ.), Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, էջ 197-207:
Մարգարիտա Քամալյան 2018, Հովհաննես Թումանյանի դիմանկարները, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկուերորդ նստաշրջան (22-23 նոյեմբերի, 2017), Երևան, «Գիտություն» հրատ., 291 էջ:
Измайлова Т., Айвазян М. 1969, Искусство Армении, Москва, "Искусство", 258 с.
Հմայակ Հակոբյան 1871-1939 2012, կատալոգ, Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան, «Ասողիկ հրատարկչություն», էջ 89:

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Արմինե Պետրոսյան

XIX դ. վերջի – XX դ. սկզբների հայ ռեալիստական կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչ Հմայակ Հակոբյանը (1871-1939) հայկական գեղանկարչության մեջ բացառիկ երևույթ է: Նա գույնի և զգացումների

արտացոլման միջոցով ներկայացնում է ազգային բնավորությունը, հոգեկերտվածքը, XIX դ. Թիֆլիսի կենցաղն ու կենսակերպը:

Հմ. Հակոբյանը ստեղծագործել է գրեթե բոլոր ժանրերով: Ունի մի շարք դիմանկարներ, նատյուրմորտներ, բնանկարներ և հատկապես կենցաղային նկարներ: Նկարչի ինքնատիպ տաղանդի կնիքն են կրում, մասնավորապես, դիմանկարները, որոնք հոգեբանական ուշագրավ պատկերներ են, ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի մարդու կերպարը՝ իր հույզերով, զգացմունքներով:

Հմ. Հակոբյանը մասնակցել է մի շարք ցուցահանդեսների, որոնց առնչությամբ նկարչի ստեղծագործությունների վերաբերյալ իրենց կարծիքն են հայտնել հայ մեծանուն արվեստագետներ, գրողներ (Ա. Շիրվանզադե, Գ. Էդիլյան, Գ. Լևոնյան):

Բանալի բառեր՝ Հմայակ Հակոբյան, հայ ռեալիստական արվեստ, Թիֆլիս, ցուցահանդեսներ, դիմանկար, նատյուրմորտ, բնանկար:

ИСКУССТВО ХУДОЖНИКА АМАЯКА АКОПЯНА

Армине Петросян

Амаяк Акопян (1871-1939) является знаковой фигурой армянского реалистического изобразительного искусства конца XIX – начала XX в. Творчество художника отличалось самобытностью как в плане отражения национального характера, армянской ментальности, так и колорита Тифлиса и его быта. Художник творил почти во всех жанрах – портрета, натюрморта, пейзажа. Особое место в его живописи занимала бытовая тема. Его талант нашел яркое воплощение в созданной им портретной галерее. Главным героем его портретов был человек со всей палитрой его чувств и переживаний.

А. Акопян принимал участие в различных выставках, удостоившись внимания и оценки многих видных деятелей армянской культуры (А. Ширванзаде, Г. Эдилян, Г. Левонян и др.).

Ключевые слова – Амаяк Акопян, армянское реалистическое искусство, Тифлис, выставки, портрет, натюрморт, пейзаж.

THE ART OF PAINTER HMAYAK HAKOBYAN

Armine Petrosyan

Hmayak Hakobyan (1871-1939) is a symbolic figure of the Armenian realistic visual art of the late XIX – early XX centuries. The artist's creativity was distinguished by its originality both in terms of reflecting the national character, the Armenian mentality, and the color of Tiflis and his life.

The artist worked in almost all genres – portrait, still life, landscape. A special place in his painting was occupied by a household theme. His talent was vividly embodied in the portrait gallery he created. The main hero of his portraits was a man with a whole palette of his feelings and experiences.

A. Hakobyan participated in various exhibitions, having received the attention and appreciation of many prominent figures of Armenian culture (A. Shirvanzade, G. Edilyan, G. Levonyan and others).

Key words – Hmayak Hakobyan, Armenian realistic art, Tiflis, exhibitions, portrait, still life, landscape.

Նկ. 1. Նկարիչ Գաբրիելյանը էտյուդի ժամանակ (1889 թ.), ստվարաթուղթ, յուղաներկ, 16x17 սմ, ՀԱՊ

Նկ. 2. Նիրհող ծերուկը (1900-1910 թթ.), կտավ, յուղաներկ, 54x38 սմ, ՀԱՊ

Նկ. 3. Մկրտիչ Ա (Խրիմյան) կաթողիկոսի դիմանկարը (1900-1910 թթ.), կտավ, յուղաներկ, 102x77 սմ, ՀԱՊ

Նկ. 4. Քրիզանթեմներ (անթվակիր) կտավ, յուղաներկ, 47x27 սմ, ՀԱՊ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԻՄԵՐՆԵՐԸ ԵՎ ՍԿՅՈՒԹՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Գարեգին Թումանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Չարենցի 15, 0025 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ gstumanyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 20.12.2018, գրախոսվել է 30.08.2019, ընդունվել է տպագրության 05.05.2019

Կովկասից դեպի Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ քոչվորների ներխուժումներ, ըստ երևույթին, տեղի են ունեցել նաև նախորդ դարաշրջաններում՝ մինչև քննվող կիմերա-սկյութական տեղաշարժերը: Ենթադրվում է, որ իրարից ժամանակագրորեն հեռու այդ արշավանքների միջև կարելի է գտնել փուլային որոշ ընդհանրություններ՝ սկսած հյուսիսկովկասյան տափաստաններում քոչվոր ցեղերի կուտակումներից մինչև դրանց խախուտ միավորումների կենտրոն(ներ)ի փոխադրումը Առաջավոր Ասիայում նոր նվաճված որևէ տարածք: Դիտվում են նաև տարածական հետաքրքիր համընկնումներ: Օրինակ, մ.թ.ա. II հազարամյակի կեսերին Փոքր Ասիայում կասկերի զբաղեցրած տարածաշրջանը որոշ չափով համընկնում էր մ.թ.ա. I հազարամյակում կիմերների գրաված տարածքին[1]: Ուշագրավ է նաև, որ արիական հիմնախնդիրը հետազոտողների կարծիքով, սկյութական, իրանական և հնդկական առասպելաբանական որոշ սյուժեներ ունեն ընդհանուր հիմք[2]: Այնուամենայնիվ, անընդունելի է համարվել այն դրույթը, որ կիմերա-սկյութական ցեղերը կարող էին Անդրկովկասում հայտնվել մ.թ.ա. IX դարում[3]: Ըստ երևույթին, հիշյալ հարցը պետք

---

[1] Пьянков 1979, 196.

[2] Бонгард-Левин, Грантовский 1983, 202.

[3] Грантовский 1970, 370-371. Պատմության թատերաբեմում սկյութների հայտնվելու ժամանակաշրջանը որոշակիորեն հաստատված չէ: Սկյութների մասին հիշատակությունների աղբյուրների և նրանց վաղ առկայությունը ենթադրող ուսումնասիրությունների վերաբերյալ տե՛ս Sulimirski 1954, 282-284, 289-293: Տ. Սուլիմիրսկին ինքն էլ են-

է բաց համարել այնքան ժամանակ, քանի դեռ դրա վերաբերյալ առավել ծանրակշիռ փաստեր, մասնավորապես՝ համաժամանակյա գրավոր վկայություններ, չեն հայտնաբերվել:

Նախ անդրադառնանք կիմերների և սկյութների այն առաջնորդներին, ովքեր առնչվում են Հայկական լեռնաշխարհում ու նրա շուրջը ծավալված իրադարձություններին, և ում մասին գրավոր վկայություն է թողել պատմությունը: Մեզ հայտնի են կիմերական ընդամենը երեք անձնանուն՝ Թեուշպա, Դ/Թուգդամի/ե և Սանդաքշատրու[4]: Թեուշպան Ռուսա II-ի ժամանակակիցը և, հնարավոր է, դաշնակիցն էր[5]: Հայտնի է, որ նրա առաջնորդությամբ կիմերները մ.թ.ա. 679/678 թ. պարտություն են կրել Ասարհադոնի զորքերից: Խուբուշնայի ճակատամարտում Թեուշպան զոհվում է[6]: Կիմերների նոր առաջնորդ է հռչակվում Դուգդամին (մ.թ.ա. 679/678–653/640)[7]: Նրա զորքերը մ.թ.ա. 676/675 թ. ներխուժում են Փոքր Ասիա և ջախջախում Փռյուգական թագավորությունը[8]: Հնարավոր է, որ Ռուսա II-ի գահակալության տարիներին ուրարտացիների ռազմական հաջողութ-

---

թադրում է, որ սկյութները Հայկական լեռնաշխարհում պիտի որ հայտնված լինեին մ.թ.ա. X–IX դարերում: Մեր կարծիքով, բերված փաստերը դեռևս բավարար չեն այդ տեսակետը հաստատելու համար: Մասնավորապես, անհասկանալի է, թե տեղական (էթիունյան-ԳԹ) և անդրոնովյան մշակույթներին պատկանող խեցանոթների ձևերի և զարդաբանվածքի նմանությունն ինչպե՞ս կարող է փաստարկ հանդիսանալ Հայկական լեռնաշխարհում սկյութների վաղ առկայությունն ապացուցելու համար:

[4] Ջահուկյան 1977, 75: Ջահուկյան 1987, 494-495:

[5] Երեմյան 1968, 105-106: Հարգարժան գիտնականը, թյուրիմացաբար, կիմեր Թեուշպային համարում է սկյութ «Սագաշտարայի» (իմա՝ Շագապուտարա/Սկայորդու-ԳԹ) հաջորդը:

[6] Ադոնց 1972, 288: Дьяконов 1951, 216 (№ 65). Дьяконов 1956, 236. Алиев 1960, 234-235. Алексеев 1992, 28. Иванчик 1996, 61. Քոսյան 1999, 240: Ivantchik 2001, 56.

[7] Ուսումնասիրողների կարծիքով Δυγδαμής անձնանունը հին հունական գրավոր ավանդությունում վրիպակի պատճառով դարձել է Λυγδαμής. տե՛ս Дьяконов 1956, 240. Երեմյան 1968, 108: Phillips 1972, 132: Հերոդոտոսը հիշատակում է Լյուգդամիս անունով մարդկանց (Herodotus 1890, I, 61, 64, VII, 99): Նրանցից առաջինն ապրել է կիմերների առաջնորդ Դուգդամիից մեկ դար հետո և Պիսիստրատոսի ժամանակ Նաքսոսի կառավարիչն էր: Հիշատակված մյուս անձնավորությունը Հալիկառնասսից էր, որի դուստր Արտեմիսիայի մասնակցությունը Հելլադայի դեմ Քսերքսեսի արշավանքին ևս մի կողմնակի վկայություն կարելի է համարել հօգուտ Լյուգդամիս Հալիկառնասցու կիմերական ծագման: Ժամանակագրական տեսանկյունից բացառված չէ, որ խոսքը միևնույն անձնավորության մասին է:

[8] Меликишвили 1951, 39. Меликишвили 1959, 228-229. Меликишвили 1960, 341-342 (№ 278). Երեմյան 1968, 109: Քոսյան 1999, 242, 246-247: Арутюнян 2001, 335-336 (№ 414).

յուններում իրենց դերն էին խաղում նաև կիմերական վարձկան ջոկատները[9]: Որոշ ժամանակ անց կիմերներն արշավում են Լիդիա: Լիդիայի Գիգես արքան սկզբում հաղթում է կիմերներին, սակայն կիմերները, թրերների և լիկիացիների աջակցությամբ, կրկին խախտում են Լիդիայի սահմանները, իսկ Գիգեսը պարտության է մատնվում և զոհվում, ըստ երևույթին՝ մ.թ.ա. 644 թ.[10]: Կիլիկիայում Դուգդամիի մահից մի քանի տարի անց վճռական ճակատամարտ է տեղի ունենում կիմերական և սկյութական զորքերի միջև: Կիմերներին առաջնորդում էր Դուգդամիի որդին՝ Սանդաքշատրուն կամ Սանդակուրուն[11], իսկ սկյութներին՝ Պարտատուայից հետո գահ բարձրացած Մադիոսը: Այս ճակատամարտում կիմերները վերջնական պարտություն են կրում: Այսպիսով, կիմերների պատմական դերը Փոքր Ասիայում ավարտվում է. նրանց զգալի մասը բնակություն է հաստատում Հայկական լեռնաշխարհի արևմտյան սահմանների հարևանությամբ՝ Փոքր Հայքից արևմուտք: Այդ երկիրը հայերն այնուհետև անվանելու էին Գամիրք: Ըստ Հերոդոտոսի՝ կիմերները հաստատվել են նաև այն թերակղզում, որտեղ իր ժամանակ գտնվել է «հելլենների հիմնած Սինոպե քաղաքը»[12]:

Մեզ ավելի լավ են հայտնի սկյութական առաջնորդները և արքաները: Նրանցից են Իշպական/ Շագապուտարան, Պարտատուան /Պրոտոթիոսը և Մադիոսը: Շագապուտարայի վերաբերյալ ուրարտական գրավոր աղբյուրներն առայժմ ընձեռում են մեկ տվյալ: Ռուսախինիլիում հայտնաբերված կավե սալիկներից մեկի սեպագիր արձանագրությունը վկայում է, որ Ռուսա Արգիշտորդու ժամանակակից Շագապուտարան (*կուգ* ցեղի «առաջնորդը») «գնացել» է Մանա երկիր[13]: Այս փաստը հատկապես կարևորվում է մանացիների և սկյութների դաշնակցության և ասուրա-մանայական հակամարտության համատեքստում[14]: Ասորեստանյան արձանագրություններից մեկում ասվում է, որ Ասարհադոն արքան ջախջախել է

---

[9] Меликишвили 1951, 39. Меликишвили 1959, 226.

[10] Алексеев 1992, 30. Иванчик 1996, 110, 118. Քոսյան 1999, 245, 252:

[11] Սանդաքշատրու անվան տարընթերցման (^{m}Sa-an-dak-KUR-ru) վերաբերյալ տե՛ս Ivantchik 2001, 15. Strobel 2012, 797:

[12] Herodotus 1890, IV, 12.

[13] Меликишвили 1960, 348 (№ 286). Арутюнян 2001, 330–331 (№ 412). Salvini 2001, 262. Salvini 2012, 145.

[14] Գրեկյան 2013, 269:

սկյութ Իշպակայի զորքը[15]: Հզոր ցեղապետ Իշպական[16], որի անունը հավանաբար առաջացել է «ձիավոր» (Aspaka) բառից[17], նախկինում նույնացվել է Մ. Խորենացու հաղորդած Սկայորդու հոր հետ[18], մինչդեռ ճիշտ կլիներ Սկայորդի–Իշպակա համապատասխանեցումը՝ հիմք ընդունելով Պարույր–Պարտատուա նույնացման հնարավորությունը: Դժվար չէ տեսնել նաև, որ ուրարտական սեպագիր արձանագրության Շագապուտարան/Շագայորդին[19] նույնպես համապատասխանում է Խորենացու հիշատակած Սկայորդուն կամ, տառացի, Սակի որդուն: Համադրելով առկա տեղեկությունների քննությամբ ստացված արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ հայկական աղբյուրների Սկայորդուն ուրարտական արձանագրության մեջ համապատասխանում է Շագապուտարան, իսկ ասուրական արձանագրությունում՝ Իշպական: Այսինքն՝ Շագապուտարա և Իշպակա անձնանունների տակ «թաքնված է» միևնույն պատմական անձնավորությունը: Նույնն է նաև Շագապուտարայի և Իշպակայի գործունեության ժամանակը: Այսպիսով, գրավոր տարբեր աղբյուրների և պատմագիտական վերականգնումների հիման վրա սկյութական միևնույն ցեղապետի համար ունենում ենք անունների հետևյալ շարքը՝ Շագապուտարա–Շագայորդի–Սկայորդի–Իշպակա–Ասպակ: Հիշյալ Շագայորդին իշխում էր մի երկրում, որը գտնվում էր Շիրակից հյուսիս՝ Կղարջքի հարևանությամբ[20] և, հավանաբար, մեծ մասամբ համընկնում էր Ջավախքի հետ: Վերջինս Գուգարաց աշխարհի մասն էր: Հնարավոր է, որ Գուգարք տեղանվան հիմքում ընկած լինի սկյութական **գոգ** ցեղախմբի անունը[21]: Հավանաբար, Շագայորդին/

---

[15] Дьяконов 1951, 216-217 (№ 65).

[16] Հայտնի է այս անձնանվան հունարեն ’ Ἄσπακος գրելաձևը. տե՛ս Абаев 1949, 191:

[17] Грантовский 1970, 266.

[18] Երեմյան 1968ա, 98:

[19] Ուրարտական արձանագրության ^{m}šá-ga-pu$_{x}$-tar-a բառը հայերեն կարելի է թարգմանել «սկայորդի»: Այս եզրահանգումը տարիներ առաջ կատարել էր Տ. Դալալյանը՝ «Սկյութները Առաջավոր Ասիայում» վերնագրով անտիպ հոդվածում, որը նա սիրահոժար մեզ էր տրամադրել: Այժմ այդ աշխատության համառոտ տարբերակը հրատարակված է. տե՛ս Դալալյան 2013, 435: Հ. Կարագյոզյանի կարծիքով՝ ասորեստանյան աղբյուրների Իշպական ուրարտական արձանագրության Շագայորդին է, որը համապատասխանում է հայ պատմագրության մեջ հիշատակվող Սկայորդուն. տե՛ս Կարագյոզյան 1984, 80:

[20] Никольский 1896, 86. König 1957, 97. Арутюнян 1985, 94.

[21] Մանանդյան 1944, 36-40. Меликишвили 1959, 224.

Իշպական եղել է *գոգերի* հզոր ցեղի առաջնորդը[22]: Սկայորդու (Իշպակա/Ասպակ) անունն ակնհայտորեն կապված է նաև Տուրուբերանի Ասպակունեաց ձոր գավառի հետ, որը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքում: Խորենացին հաղորդում է, որ Սենեքերիմին սպանողներից մեկին՝ Սանասարին, Սկայորդին բնակեցնում է Ասորեստանի սահմանների մոտ, մեր երկրի հարավարևմտյան կողմում[23]: Նկարագրվող իրադարձությունները նման ձևով են ներկայացվում նաև հայ ժողովրդական վեպի պատումներից մեկում, որտեղ Սենեքերիմին սպանելուց հետո Ադնամելիքն ու Սանասարը գնում են «Սասունա լեռներ»[24]: Ստացվում է, որ սկյութների առաջնորդը, հովանավորելով արքայասպան ասորեստանցիներին, նրանց տեղավորում է իր ազդեցության տակ գտնվող տիրույթում: Հիշյալ դեպքը տեղի է ունեցել Սինաքերիբի սպանությունից հետո՝ հավանաբար մ.թ.ա. 681 թ. վերջին – 680 թ. սկզբին, մինչև Ասարհադոնի գահ բարձրանալը (մ.թ.ա. 680 թ. փետրվար–մարտ)[25]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մ.թ.ա. 681 թ. Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքն արդեն Իշպակայի ազդեցության ոլորտում էր[26]: Վանի թագավորության տարածքում մ.թ.ա. VII դարում սկյութների և կիմերների առկայության փաստը վաղուց մտել է գիտական շրջանառության մեջ[27]: Իշպական հավանաբար զոհվել է մ.թ.ա. 678 թ.՝ ասորեստանյան զորքերի դեմ մղված մարտում[28]: Իշպակայի մահից հետո առաջնորդ է դառնում նրա

---

[22] Այս ցեղախմբի անունը կարող էր ընկալվել նաև *գուգ*, *կուգ*, *կոգ* ձևերով:

[23] Moses Khorenats'i 1980, I, 23. Ակնհայտ է, որ ուրարտական և ասորեստանյան սեպագիր արձանագրությունների հիման վրա վերականգնվող դեպքերի ժամանակագրությունը (մ.թ.ա. 681-680 թթ.) Խորենացին ճիշտ է ներկայացրել: Այս իրադարձությունները տեղի էին ունենում այն ժամանակ, երբ սկյութների առաջնորդ Սկայորդին/Իշպական, իրոք, Հայկական լեռնաշխարհում էր:

[24] Սասնա ծռեր 1977, 150–154:

[25] Дьяконов 1951, 215 (№ 63). Бикерман 1975, 188.

[26] Այսպիսով, ուրարտական և հայկական աղբյուրներն էապես նպաստում են պատմական իրադարձությունների ճշգրիտ ժամանակագրությունը կազմելուն: Առաջավոր Ասիայում սկյութների հայտնվելու ամենավաղ ժամանակը մինչ այժմ համարվել է մ.թ.ա. 670-ականների սկիզբը, իսկ Իշպակայի հիշատակության համար ընդունվել է ≈մ.թ.ա. 675 թվականը. տե՛ս Алексеев 2003, 57, 290:

[27] Ուրարտական արքաները, հավանաբար, ավելի նպատակահարմար էին գտնում օգտվել սկյութական և կիմերական վարձու ջոկատների ծառայությունից, քան պատերազմել այդ ռազմատենչ ցեղերի դեմ. տե՛ս Меликишвили 1951, 38-40:

[28] Иванчик 1996, 82. Իշպակայի մահվան թվականի վերաբերյալ նախկինում ընդունված տեսակետը (մ.թ.ա. 673 թ.) շատ չի տարբերվում այսօր շրջանառվող տարե-

Պարտատուա որդին, ում արդեն արքա են անվանում ասորեստանյան աղբյուրները[29]:

Պարտատուան՝ Հերոդոտոսի «Պատմության» Պրոտոթիոսը[30] կամ Մովսես Խորենացու հիշատակած Պարույրը՝ Սկայորդու որդին[31], սկյութներին կառավարում է մոտավորապես քսանհինգ տարի՝ մ.թ.ա. 678–653/652 թթ.[32]: Նոր գահ բարձրացած «Իշկուզա երկրի արքա» Պարտատուան, ըստ երևույթին, ընդունում է Ասորեստանի թագավոր Ասարհադոնի բանագնացին, քանի որ ինքն էլ հավանաբար բանակցություններից հետո սուրհանդակ է ուղարկում Ասորեստան՝ խնդրելով արքայադստեր ձեռքը[33]: Կնքվում է պայմանագիր, որն ամրապնդվում է «Պարույր Ասպակորդու»[34] և Ասարհադոնի դստեր ամուսնությամբ[35]: Բացառված չէ, որ մ.թ.ա. 673 թվականին նվաճված Արմե–Շուպրիա երկրի կառավարումն Ասարհադոնը հանձնած լինի իր փեսային՝ դեպքերի բերումով Ասորեստանի դաշնակիցը դարձած Պարույրին/Պարտատուային[36]: Վերջինս օժանդակում է Ասարհադոնին մարերի դեմ մղվող պայքարում և ճակատագրական պահին Ասորեստանը փրկում է կործանումից[37]:

թվից. տե՛ս Дьяконов 1951, 216-217 (№ 65). Дьяконов 1956, 272. Երեմյան 1968, 110: Այս միջակայքում նշվել է նաև միջանկյալ տարեթիվ՝ ≈ մ.թ.ա. 675 թ. (Алексеев 2003, 290):

[29] Дьяконов 1956, 272. Артамонов 1974, 29.

[30] Herodotus 1890, I, 103.

[31] Moses Khorenats'i 1980, I, 21, 22. Капанцян 1947, 150. Կարագյոզյան 1984, 80: Հարությունյան 1998, 49:

[32] Ըստ նախկին տեսակետի՝ քսան տարի. տե՛ս Տիրացյան 1962, 91:

[33] Дьяконов 1951, 228-229. Алиев 1960, 226. Երեմյան 1968, 111: Ասորեստանի արքայադստեր և Պարտատուայի ամուսնության նախապատրաստությունը, ըստ երևույթին, կայացել է մ.թ.ա. 672 թ. տե՛ս Strobel 2014, 377:

[34] Մեզ թվում է, թե սխալ չի լինի ակկադերեն արձանագրություններում «Պարտատուա» կոչվող անձնավորության հայեցի պայմանական նման «անվանակոչումը»:

[35] Երեմյան 1968, 111. Գրեկյան 2013, 270: Կարծիքը, համաձայն որի Պարտատուայի և Ասորեստանի արքայադստեր ամուսնության վերաբերյալ «ոչ մի փաստ չկա» (Հարությունյան 1998, 46), չի դիմանում քննադատության. տե՛ս Дьяконов 1951, 229:

[36] Дьяконов 1956, 272–273. Մեզ հավանական է թվում այս եզրակացությունը, քանի որ Պարույր-Պարտատուայի հոր՝ Իշպակա-Ասպակի անունը կապվում է պատմական Արմե–Շուպրիայի «Ասպակունեաց ձոր» գավառի անվան հետ (Երեմյան 1968ա, 98): Այս ժամանակաշրջանում սկյութական գերիշխանությունը հավանաբար տարածվում էր Հայկական լեռնաշխարհի հարավում և հյուսիսային Միջագետքում (Тер–Мартиросов 1994, 80):

[37] Алиев 1960, 226-227, 230. Հիմքեր կան ենթադրելու, որ սկյութները մի ժամանակ եղել են Ասորեստանի դաշնակիցները. տե՛ս Иванчик 1999, 85:

Մադիոսը՝ Պրոտոթիոսի որդին, հավանաբար գահակալել է մ.թ.ա. 653/652–625 թթ.: Նրա առաջնորդությամբ սկյութները, որպես դաշնակիցներ, շարունակում էին գործել Ասորեստանի հակառակորդների դեմ: Սկյութները նախ իրենց են ենթարկել մարերին[38]: Մ.թ.ա. VII դարի կեսերին սկյութական զորամիավորումները, ըստ երևույթին, ծանր հարված են հասցրել Վանի թագավորությանը, ապա դաշնակցած ասորեստանյան ռազմական ուժերի հետ, մոտավորապես մ.թ.ա. 637 թ. պարտության են մատնել կիմերական զորամիավորումներին[39]: Դրանից հետո, ըստ Հերոդոտոսի, «սկյութները քսանութ տարի տիրեցին Ասիայում»[40]: Սակայն ավելի իրատեսական են թվում այն հեղինակների տեղեկությունները, որոնք հաղորդում են սկյութների 15-ամյա տիրապետության մասին[41]: Կիաքսարի ապստամբության ժամանակ Մադիոսը հարձակվել է Մարաստանի վրա՝ փորձելով օգնել ասորեստանցիներին՝ Նինվեի պաշարումը վերացնելու[42]: Կիաքսարի դեմ պատերազմն ավարտվում է Մադիոսի մահով, որից հետո Առաջավոր Ասիայում սկյութական գերիշխանությանը վերջ է դրվում:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով, կիմերների առաջխաղացումը սկսվել է մ.թ.ա. VIII դարի 30-ական թթ.[43]: Առավել հավաստի է, որ նրանց ներխուժումներն Առաջավոր Ասիա կայացել են մ.թ.ա. 714 թվականից ոչ ուշ, երբ կիմերներն արդեն հասել էին Ուրարտուի սահմաններին[44]: Ուրարտական արքաները ջանում էին հակակշիռ ապահովել ասուրական ռազմական արկածախնդրությունների և կիմերների ու սկյութների ավազակային ասպատակությունների դեմ[45]: Առժամանակ դա նրանց հաջողվում

---

[38] Дьяконов 1989, 66-67.

[39] Գրեկյան 2013, 273: Կիմերների նկատմամբ սկյութների տարած հաղթանակի կոնկրետ թվականը դժվար է վերականգնել: Այն, հավանաբար, տեղի է ունեցել Դ/ Թուգդամի/եի մահից (մ.թ.ա.≈ 640 թ.) մի քանի տարի հետո. տե՛ս Քոսյան 1999, 252:

[40] Herodotus 1890, I, 106.

[41] Քոսյան 1999, 252-253: Հետաքրքիր է, որ Խորենացին (I, 13) Հայաստանում Մադեսի տիրապետությանը հատկացնում է ընդամենը երկու տարի:

[42] Herodotus 1890, I, 103, 104, 106. Հերոդոտոսի հիմնարար աշխատությունում պատմական իրադարձությունների հիշատակման այս հերթականությունը, որը բավականաչափ ճշմարտանման է թվում, որոշ հետազոտողների կարծիքով լրացումների կարիք է զգում, մասնավորապես՝ ժամանակագրական նկատառումներով. տե՛ս Дьяконов 1956, 313: Երեմյան 1968ա, 101:

[43] Пиотровский 1959, 244. Երեմյան 1968, 89-90, 115:

[44] Sulimirski 1954, 283. Иванчик 1990, 8, 16. Алексеев 1992, 28. Ivantchik 2001, 14.

[45] Smith 2005, 271.

էր: Քոչվորների դեմ մարտնչելու դժվարությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կիմերներն ու սկյութները կիրառում էին նոր մարտավարություն և զինված էին նետ-աղեղներով, որոնց արդյունավետությունն առավել բարձր էր նմանատեսակ նախորդ զենքերից[46]: Կիմերների ներթափանցումն Առաջավոր Ասիա կարող էր հնարավոր դառնալ Ասորեստանի արքա Թըղլաթպալասար III-ից Վանի թագավորության տիրակալ Սարդուրի II-ի կրած ճակատագրական պարտությունից հետո, որպես հետևանք ուրարտական տերության ծայրամասերի պաշտպանունակության թուլացման[47]: Բացի այդ, Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մի շարք տարածաշրջաններ (Շիրակ, Սևանի ավազան և այլն) անընդհատ վերանվաճվում էին Վանի թագավորության կողմից[48]: Գերեվարությունների և ավարառությունների հետևանքով, հավանաբար, հիշյալ շրջանների ռազմական և տնտեսական հզորությունը խիստ նվազել էր: Թեև կիմերա–սկյութական ներխուժումներն Այսրկովկաս դիտարկվում են հինարևելյան տերությունների ներքին խոր ճգնաժամի համատեքստում[49], այնուամենայնիվ, չի կարելի չնկատել, որ Առաջավոր Ասիայի քաղաքական իրավիճակի արմատական փոփոխությունը «սկսվեց կիմմերական ու սկյութական հորդաների հարձակումներով»[50]: Քննարկվող դարաշրջանում Մերձավոր Արևելքի երկրների քաղաքական կյանքում «կիմերական և սկյութական գործոնները» կարևոր դեր էին խաղում[51]: Հին աշխարհը փուլ էր գալիս[52], և պատմությունը կիմերների և սկյութների զորագնդերին էր վերապահել այդ փլուզմանն օժանդակողների դերը[53]: Ասորեստանը փրկելու Պարույրի/-Պարտատուայի ջանքերը միայն ժամանակավոր արդյունք տվեցին, իսկ Մադիոսի ճիգերը փաստորեն զուր անցան[54]:

Խորհրդային հետազոտողներից ոմանք, հետևելով պատմահայր Հերոդոտոսին, հավանական են համարում, որ կիմերների ներթափանցումն Առաջավոր Ասիա (մասնավորապես՝ Հայկական լեռնաշխարհ), կա-

[46] Дьяконов 1989, 60-61.
[47] Пиотровский 1959, 233.
[48] Ղափանցյան 1940, 59: Мартиросян 1974, 19.
[49] Пиотровский 1949, 122. Мартиросян 1964, 269.
[50] Ադոնց 1972, 287: Капанцян 1947, 147–153.
[51] Меликишвили 1951, 38-40. Phillips 1972, 129. Тер-Мартиросов 1994, 80.
[52] De Morgan 1889, 166. Ադոնց 1972ա, 366: Мартиросян 1964, 16.
[53] Мартиросян 1964, 269.
[54] Алиев 1960, 226-227, 230.

տարվել է Մեոտիս–Կողքիսյան ճանապարհով[55]: Այս տեսակետի կողմնակիցները Հ. Մանանդյանի բերած փաստարկները համոզիչ են համարում և հատկապես կարևորում են հայ գիտնականի վաստակը Սև ծովի արևելյան ափով դեպի Անդրկովկաս հնագույն ճանապարհի գոյությունը ապացուցելու հարցում[56]: Եթե ճիշտ է Մեոտիս–Կողքիսյան վաղնջական ճանապարհի գոյության և այդ ճանապարհով կիմերների տեղաշարժման տեսությունը, ապա նրանց հարվածներից նախ պետք է տուժեր Սարդուրի II արքայի հիշատակած Կուլխա երկիրը (Կողքիսը)[57]: Կիմերների շարժման վերաբերյալ հայտնվել են նաև այլ կարծիքներ[58]: Ենթադրություններ են արվել, որ նրանց երթուղին անցել է Դարիալի կիրճով (Ալանաց դռնով)[59] կամ Ալագիրով (Մամիսոնի լեռնանցքով)[60]: Հնարավոր է, որ կիմերները, մինչև հետագայի Կապադովկիայի տարածքում (հայկական աղբյուրների Գամիրքում) բնակություն հաստատելը[61], նախ թափանցել են Ուրմիա լճի ավազան և Շիրակ[62]: Ըստ գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունների՝ Գամիրքը և Ուրմիա լճի հարավային ավազանն Առաջավոր Ասիայում հայտնի այն տարածաշրջաններից են, որտեղ կիմերներին հաջողվել է հիմնավորվել համեմատաբար երկարատև ժամանակով[63]: Ասուրական աղբյուրները մ.թ.ա. VII դարի ընթացքում Մանան հաճախ են հիշատակում կիմերների կամ սկյութների առնչությամբ[64]: Բոլոր դեպքերում, նրանց շարժման ընդհանուր ուղղությունը Փոքր Ասիայում դիտվում է արևելքից դեպի արևմուտք[65]: Կիմերներին հաջողվեց Փոքր Ասիայի արևմուտքում գրավել Եփեսոսը և Լիդիայի մայրաքաղաք Սարդեսը: Ի վերջո, Մադիոսի

---

[55] Մանանդյան 1944, 6-13, 29. Крупнов 1954, 187, 193.

[56] Крупнов 1958, 177-178.

[57] Меликишвили 1959, 222-223. Strobel 2014, 379.

[58] Ի.Մ. Դյակոնովը, օրինակ, համարում է, որ քննարկվող ժամանակաշրջանում տարածված մերձարևադարձային խիտ անտառների պատճառով հեծյալ ջոկատները չէին կարող արշավել Սև ծովի ափով. տե՛ս Дьяконов 1994, 108:

[59] Ծագում է պարսկերենից՝ Dar-i-Alān. տե՛ս Абаев 1949, 42:

[60] Дьяконов 1956, 230, 237. Phillips 1972, 129.

[61] Սամուելյան 1931, 84:

[62] Երեմյան 1968, 91:

[63] Пиотровский 1959, 233.

[64] Меликишвили 1949, 67.

[65] Дьяконов 1956, 237.

առաջնորդած սկյութական զորքերից վերջնականապես ջախջախվելով, նրանք հեռացան պատմության թատերաբեմից[66]:

Ինչ վերաբերում է սկյութներին, ապա նրանց կենցաղում պատերազմը, ընդհանրապես, մեծ դեր էր խաղում[67]: Առաջավոր Ասիա արշավելիս սկյութական հեծյալ ջոկատների համար ռազմական հենադաշտ է ծառայել, ըստ երևույթին, Հյուսիսային Կովկասը[68], որտեղ նրանց զորաջոկատները, հավանաբար, համալրվել են տեղական բնակչության ձիավոր խմբերով[69]: Չի բացառվում, որ սկյութական ներխուժումներն ընթացել են տարբեր ուղիներով և մի քանի փուլով[70]: Քոչվոր ցեղախմբերի Այսրկովկաս ներթափանցումներից մեկը, ըստ երևույթին, կատարվել է Դերբենդի անցքով (Ճորա պահակով)[71], սկզբում մինչև Արաքս գետը, իսկ այնուհետև՝ մերձուրմյան տարածաշրջան[72]: Այսպիսով, սկյութական ցեղերը սկզբում կայանել են Հայկական լեռնաշխարհի արևելքում, իսկ հետագայում (մ.թ.ա. VII դարի վերջում) առաջ են ընթացել դեպի արևմուտք՝ հասնելով Պաղեստին: Ի դեպ, այստեղի քաղաքներից մեկը (Բեթ շ/սան) ստացել է Սկյութա/ոպոլիս անունը[73]: Ուրմիա լճից հարավ սկյութների կայանելու վերաբերյալ մի վկայություն է համարվում Սակքըզի (Զիվիե) գանձի առկայությունը[74]: Մանայի կառավարիչները, ըստ երևույթին, երկիր ներխուժած

---

[66] Страбон 1964, I, 3, 21. Дьяконов 1956, 232, 234-235. Քոսյան 1999, 252-253:

[67] Мелюкова 1964, 7.

[68] Ильинская 1983, 55.

[69] Смирнов 1966, 16.

[70] Дьяконов 1956, 235. Пиотровский 1949, 121-122, 130. Пиотровский 1959, 245. Казиев 1949, 9. Երեմյան 1968, 89:

[71] Phillips 1972, 131. Հարությունյան 1998, 33–34:

[72] Иессен 1965, 22.

[73] Պրոկոպիոս Կեսարացի 1987, 125. Пиотровский 1940, 79. Пиотровский 1959, 235, 240. Дьяконов 1956, 302. Sulimirski 1954, 294, 309.

[74] Ghirshman 1954, 106. Пиотровский 1954, 151. Այս նշանավոր հնագիտական հուշարձանը հայտնաբերվել է 1947 թվականին, պատահաբար, երբ փոթորկից հետո փլվել է բլրի լանջը: Հետազոտողների կարծիքով հիշյալ «գանձը» իրականում ականավոր առաջնորդի թաղումն ուղեկցող գույքն է. տե՛ս Бонгард-Левин, Грантовский 1983, 17: Ըստ որում, դամբարանում զետեղված բազմաթիվ առարկաներ բնորոշ են սկյութական մշակույթին, իսկ մի շարք այլ իրեր պատրաստված են ասուրական և տեղական (Մանայի) ավանդույթների ոգով. հմմտ. Ghirshman 1954, 106-112. Barnett 1956, 111-112: Դամբանաբլրի մեծ չափերից, իրերի մշակութային պատկանելությունից և շքեղությունից, ինչպես նաև թվագրությունից ելնելով, չի կարելի բացառել, որ այդտեղ թաղված է եղել Պարույրի/Պարտատուայի որդի Մադիոսը՝ մ.թ.ա. VII դարի քսանականներին զոհված սկյութական հզոր արքան: Այստեղ գտնված արծաթյա թիթեղներից մեկի վրա ար-

սկյութներին և կիմերներին դարձնում են իրենց դաշնակիցները ու թույլ են տալիս բնակվել իրենց պետության սահմաններում, որը և առաջացնում է բնակչության որոշակի հատվածի դժգոհությունը[75]: Այս քոչվոր ցեղախմբերի ներխուժումը Հայկական լեռնաշխարհ հանգեցրեց Վանի թագավորության թուլացմանը[76]: Ուրարտական քաղաքների անկման պատճառներից մեկն էլ հրոսակների կողմից դրանց ջրամատակարարման համակարգերի և ոռոգման կառույցների ավերումն էր[77]: Այնուամենայնիվ, ուրարտական քաղաքակրթության որոշ կենտրոններում կյանքը շարունակվում էր նույնիսկ Վանի թագավորության անկումից հետո[78]: Այսինքն՝ կիմերների և սկյութների արշավանքները, որոնք ուղեկցվում էին ավերածություններով և կոտորածներով, ի վիճակի չէին ամբողջովին դադարեցնելու Ուրարտուի պետական կենսագործունեությունը[79]: Հակառակը՝ ստեղծված հեղհեղուկ իրավիճակը կայունացնելու նպատակով Մերձավոր Արևելքի հին պետությունները հնարավորին չափ օգտվում են կիմերական և սկյութական վարձու զորաջոկատների ծառայություններից[80]: Միևնույն ժամանակ կիմերական և սկյութական ցեղերի ներխուժումներն Առաջավոր Ասիայի պետությունների սահմաններ լրջորեն փոխում են տարածաշրջանի քաղաքական իրավիճակը[81] և նախադրյալներ ստեղծում հինարևելյան տերությունների՝ Ասորեստանի և Ուրարտուի անկման համար[82]: Մասնավորապես, Հայկական լեռնաշխարհում նաև մշակութային անկում է նկատվում: Հայկական բարձ-

---

ձանագրված է Պարտատուա անունը. հմմտ. Strobel 2012, 831: Ասվածին չի հակասում բրոնզե տաշտաձև «դիակալի» թվագրությունը՝ «որոշ չափով վաղ, քան մ.թ.ա. VII դարի վերջը». տե՛ս Wilkinson 1960, 219-220: Հիշենք նաև, որ Զիվիեի «գանձը» գտնվել է հիշյալ զետեղարանում: Նախկինում ենթադրություն է արվել, որ «գանձը» կազմող իրերի հավաքածոն, իրականում, Իշպակայի թաղման գույքն է. տե՛ս Курочкин 1994, 120-121:

[75] Меликишвили 1949, 59, 67.

[76] Дьяконов 1951, 29-30. Пиотровский 1959, 235, 240-241, 256.

[77] Тирацян 1979, 160.

[78] Այս առումով առավել ակնառու է Էրեբունի–Արինբերդի օրինակը, որի պեղումներով հայտնաբերված ճարտարապետական և հնագիտական տվյալներն ասվածի լավագույն վկայություններն են: Հետուրարտական ժամանակաշրջանում կյանքը շարունակվում էր նաև այլ քաղաքներում՝ Տոսպ-Վանում, Արգիշտիխինիլի-Արմավիրում. տե՛ս Տիրացյան 1966, 95. Тирацян 1979, 161–162, 171:

[79] Дьяконов 1951a, 30, 39. Пиотровский 1959, 232–233.

[80] Меликишвили 1949, 59, 67. Меликишвили 1951, 38-40. Меликишвили 1954, 314-316, 363-364. Пиотровский 1959, 233-234. Тер–Мартиросов 1994, 80.

[81] Երեմյան 1968, 114:

[82] Երեմյան 1970, 51:

ռավանդակի արևելքում մ.թ.ա. VII դարի ընթացքում կազմավորվում է մարական պետականությունը՝ նոր նվաճումների հավակնություններով[83]: Կիմերների առավել ակտիվության ժամանակաշրջանն Առաջավոր Ասիայում ընդունված է համարել մոտավորապես մ.թ.ա. 720-650 թթ., իսկ նույն տարածաշրջանում սկյութների հզորության ժամանակն ընկնում է ≈ մ.թ.ա. 680-620 թթ. միջև[84]: Ենթադրվում է, որ մ.թ.ա. VII դարի երկրորդ կեսին սկյութները (իմա՝ նրանց մի մասը–ԳԹ) վերադառնում են մերձսևծովյան տափաստաններ[85]:

Կիմերների ծագումը պարզաբանելու հիմնական դժվարությունն այն է, որ նրանց վերաբերյալ տվյալները կցկտուր են կամ միջնորդավորված[86]: Կիմերները, ըստ էության, Արևելյան Եվրոպայի պատմական առաջին ժողովուրդն են[87]: Կարծիք կա, որ կոբանյան մշակույթի հնագիտական համալիրները կիմերների մասին պատմական վկայությունների իրեղեն փաստերն են[88]: Այս տեսակետը մեր ժամանակներում չի ընդունվում[89]: Ժխտվում է նաև կիմերների առնչությունը ղըզըլ-կոբայան մշակույթին[90]: Նրանք «հնդեվրոպական ժողովուրդ» են համարվում[91] և բնորոշվում են որպես իրանական լեզուներին պատկանող ցեղախումբ[92]: Կիմերները համարվում են սկյութներին ազգակից ժողովուրդ[93]: Որոշ ուսումնասիրողներ նշում են «կիմերական մշակույթի» ծագումնաբանական կապը «սրուբնայա» մշակույթի հետ, ուստի և դրանցից առաջինի և թրակական մշակույթի միջև ազգակցության բացակայությունը՝ չբացառելով վերջինիս որոշ տարրերի փոխառության հնարավորությունը[94]: Կիմերների էթնիկ պատկանելության խնդիրը, որոշ հետազոտողների կարծիքով, լուծվում է նրանց հյուսիսիրա-

---

[83] Алиев 1960, 232-233.

[84] Երեմյան 1968, 113-114:

[85] Лесков 1981, 109.

[86] Xydopoulos 2015, 119.

[87] Городцов 1928, 46-47. Крупнов 1958, 176.

[88] Ельницкий 1949, 23.

[89] Скаков 2009, 149. Նշված աշխատության մեջ կոբանյան մշակույթը քննարկվում է կոբանա-կոլխիդյան պատմամշակութային ընդհանրության շրջանակներում:

[90] Крис 1989, 31.

[91] Ստրաբոն 1940, 111. Ադոնց 1972, 272:

[92] Дьяконов 1956, 241.

[93] Иванчик 2009, 75.

[94] Мелюкова 1989, 16.

նական (սկյութներ, սարմատներ և այլն) ցեղերի շարքը դասելու օգտին[95]: - Կիմերները, համաձայն գոյություն ունեցած պատկերացումների, սկյութներ կոչվող ցեղային ընդհանրության մեջ մտնող ցեղախմբերից մեկի անդամներն են: Այժմ պայմանականորեն ընդունված է «կիմերական մշակույթ» անվանել հյուսիսերձսևծովյան նախասկյութական բնակչության մշակույթը[96]:

Սկյութները միակ իրանական էթնիկ խումբն են, որոնք զերծ են մնացել զրադաշտականության ազդեցությունից[97]: Հին աշխարհի բազմաթիվ ժողովուրդներ «սկյութ» անվանումը գործածել են հավաքական իմաստով[98]: Ըստ Մ.Ի. Արտամոնովի՝ «սկյութը» ընդհանուր անվանում է Դանուբից մինչև Ենիսեյ ընկած եվրասիական տափաստանների բնակչության համար՝ մ.թ.ա. VII–III դարերում[99]: «Սկյութը», որպես ազգագրական հասկացություն, անորոշ է և առաձգական[100]: Հիշյալ եզրույթի տակ պետք է հասկանալ սոցիալ-տնտեսական զարգացման մոտավորապես միևնույն աստիճանի վրա գտնվող խառնիխուռն ցեղերի համախմբությունը[101], որոնք կապված էին շատ թե քիչ ընդհանուր մշակույթով և երբեմն նաև ծագումով[102]: Հավանական է, որ Առաջավոր Ասիայի «սկյութական» որոշ հնագիտական համալիրներ կապված են ոչ թե բուն սկյութական ցեղերի («շկուզա»), այլ նույնքան սկյութական «գիմիրա» ցեղախմբերի հետ, որոնք հիշյալ տարածաշրջանում ներկա էին մ.թ.ա. VII–VI դարերում[103]: Հնարավոր է, որ ասորեստանցիները կիմերների հետ են նույնացրել նաև այլ քոչվոր ցեղախմբերի[104]: Թե՛ սկյութները, թե՛ կիմերները Առաջավոր Ասիայում հանդես են եկել որպես հեծյալ ռազմիկների ջոկատներից կազմված քոչվորների ցեղախմբեր, որոնք ունեին մշակութային զարգացման նույն մակարդակը[105]: Ենթադրվում է, որ և՛սկյութական, և՛բուն կիմերական ցեղերը մ.թ.ա. VIII–VII դարերում ունեին միանման զենք և հեծելասարք, արտա-

[95] Абаев 1971, 11. Xydopoulos 2015, 119.
[96] Иванчик 1999, 78, 88.
[97] Дьяконов 1970, 45-46.
[98] Тер–Аветисян 2010, 191.
[99] Артамонов 1966, 10.
[100] Ростовцев 1929, 9.
[101] Пиотровский 1939, 32.
[102] Sulimirski 1954, 282.
[103] Дьяконов 1956, 241.
[104] Городцов 1928, 47.
[105] Иессен 1954, 130.

կարգ մոտ մշակույթներ, առանց նկատելի տարբերությունների[106]: Մյուս կողմից, համամիտ ենք, որ հնագիտական մշակույթների գրեթե նույնությունից (տվյալ դեպքում՝ կիմերական և սկյութական) չի բխում այդ մշակույթները կրողների էթնիկ նույնականությունը[107]: Ամեն դեպքում, էթնոսը պարզելու համար կարող են նշանակություն ունենալ թաղման ծեսի երբեմն թույլ նկատելի մանրամասները[108]:

Գրականություն

Ադոնց Ն. 1972, Հայերի ծագումը, Հայաստանի պատմություն, Սարգսյան Գ.Խ. (խմբ.), Երևան, «Հայաստան», էջ 287-346:

Գրեկյան Ե. 2013, Մարաստան, Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I, Քոսյան Ա.Վ. (խմբ.), Երևան, «Զանգակ», էջ 261-282:

Դալալյան Տ. 2013, Սկյութներ, Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I, Քոսյան Ա.Վ. (խմբ.), Երևան, «Զանգակ», էջ 425-438:

Երեմյան Ս.Տ. 1968, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, Պատմա-բանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 89-116:

Երեմյան Ս.Տ. 1968ա, Հայկական առաջին պետական կազմավորումները (VII-VI դդ. մ.թ.ա.), Պատմա-բանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 91-120:

Երեմյան Ս.Տ. 1970, Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, Պատմա-բանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 27-56:

Կարագյոզյան Հ. 1984, Ուրարտական գաղափարագիր անձնանուններ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, Երևան, էջ 72-82:

Հարությունյան Բ.Հ. 1998, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Երևան, «Հայագիտակ», 90 էջ:

Ղափանցյան Գ.Ա. 1940, Ուրարտուի պատմությունը, Երևան, «Պետական համալսարանի հրատարակչություն», 238 էջ:

---

[106] Иессен 1953, 110. Медведская 1992, 105. Ivantchik 2001, 56, 280. Մշակույթների նմանությունից ընդամենը կարելի է եզրակացնել, որ քոչվորների հիշյալ երկու խմբերը պատկանում են միևնույն տնտեսական-մշակութային տիպին, մեր պատկերացմամբ՝ մեկ մշակութային ընդհանրությանը: Ուստի հնարավոր ենք համարում, որ թաղման ծեսի բաղադրամասերի մանրակրկիտ վերլուծությամբ կիմերական և սկյութական համալիրները տարանջատվեն և քննարկվեն առանձին՝ որպես տարբեր մշակույթների բաղկացուցիչներ:

[107] Ivantchik 2001, 280.

[108] Монгайт 1973, 82.

Մանանդյան Հ. 1944, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, «Հայպետհրատ», 72 էջ:

Պրոկոպիոս Կեսարացի 1987, Գաղտնի պատմություն, թարգմ.՝ Հ. Բարթիկյանի, Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 164 էջ:

Ջահուկյան Գ.Բ. 1977, Կիմերների և կիմերերենի պրոբլեմը արդի գիտության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, N 4, Երևան, էջ 73-82:

Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն», 748 էջ:

Սամուելյան Խ. 1931, Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Երևան, «Պետհրատ», 382 էջ:

Սասնա ծռեր 1977, Ժողովրդական վեպ, աշխատությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, «Սովետական գրող», 700 էջ:

Ստրաբոն 1940, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, «Պետական համալսարանի հրատարակչություն», 124 էջ:

Տիրացյան Գ.Ա. 1962, Գրախոսություն. Հ. Ժամկոչյան, «Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում, Երևան, 1961», Տեղեկագիր (հաս. գիտ.), N 4, Երևան, էջ 87-95:

Տիրացյան Գ.Ա. 1966, Հին հայկական պետության առաջացումը, Պատմա-բանասիրական հանդես, N 4, Երևան, էջ 83-102:

Քոսյան Ա.Վ. 1999, Արամ նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, N 1, Երևան, էջ 237-259:

Абаев В.И. 1949, Осетинский язык и фольклор, т. 1, Москва-Ленинград, изд. АН СССР, 601 с.

Абаев В.И. 1971, О некоторых лингвистических аспектах скифо-сарматской проблемы, Проблемы скифской археологии, Либеров П.Д., Гуляев В.И. (ред.), Москва, “Наука”, с. 10-13.

Алексеев А.Ю. 1992, Скифская хроника (Скифы в VII-IV вв. до н.э.: историко-археологический очерк), С.-Петербург, “Петербургкомстат”, 206 с.

Алексеев А.Ю. 2003, Хронография европейской Скифии VII-IV веков до н.э., С.-Петербург, “Государственный Эрмитаж”, 416 с.

Алиев И. 1960, История Мидии, т. I, Баку, изд. АН АзССР, 491 с.

Артамонов М.И. 1966, Сокровища скифских курганов в собрании Государственного Эрмитажа, Прага-Ленинград, “Артия”, “Советский художник”, 120 с.

Артамонов М.И. 1974, Киммерийцы и скифы, Ленинград, изд. Ленинградского университета, 156 с.

Арутюнян Н.В. 1985, Топонимика Урарту, Ереван, изд. АН АрмССР, 308 с.

Арутюнян Н.В. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван, “Гитутюн”, 542 с.

Бикерман Э. 1975, Хронология древнего мира, Москва, “Наука”, 336 с.

Бонгард-Левин Г.М., Грантовский Э.А. 1983, От Скифии до Индии. Древние арии: мифы и история, Москва, “Мысль”, 206 с.

Городцов В.А. 1928, К вопросу о киммерийской культуре, Труды Секции археологии Института археологии и искусствознания, т. II, Москва, с. 46-60.

Грантовский Э.А. 1970, Ранняя история иранских племен Передней Азии, Москва, “Наука”, 391 с.

Дьяконов И.М. 1951, Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, N 3, Москва-Ленинград, с. 207-252.

Дьяконов И.М. 1951а, Последние годы Урартского государства по ассиро-вавилонским источникам, Вестник древней истории, N 2, Москва-Ленинград, с. 29-39.

Дьяконов И.М. 1956, История Мидии, Москва-Ленинград, изд. АН СССР, 485 с.

Дьяконов И.М. 1970, Арийцы на Ближнем Востоке: конец мифа (К методике исследования исчезнувших языков), Вестник древней истории, N 4, Москва, с. 39-63.

Дьяконов И.М. 1989, Урарту, Фригия, Лидия, История древнего мира, кн. 2, Дьяконов И.М. и др. (ред.), Москва, “Наука”, с. 46-69.

Дьяконов И.М. 1994, Киммерийцы и скифы на Древнем Востоке, Российская археология, N 1, Москва, с. 108-116.

Ельницкий Л.А. 1949, Киммерийцы и киммерийская культура, Вестник древней истории, N 3, Москва-Ленинград, с. 14-26.

Иванчик А.И. 1990, Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II, Вестник древней истории, N 3, Москва, с. 3-19.

Иванчик А.И. 1996, Киммерийцы. Древневосточные цивилизации и степные кочевники в VIII-VII вв. до н.э., Москва, “Наука”, 324 с.

Иванчик А.И. 1999, Современное состояние киммерийской проблемы. Итоги дискуссии, Вестник древней истории, N 2, Москва, с. 77-97.

Иванчик А.И. 2009, К вопросу о скифском языке, Вестник древней истории, N 2, Москва, с. 62-88.

Иессен А.А. 1953, К вопросу о памятниках VIII-VII вв. до н.э. на юге европейской части СССР (Новочеркасский клад 1939 г.), Советская археология, XVIII, Москва, с. 49-110.

Иессен А.А. 1954, Некоторые памятники VIII-VII вв. до н.э. на Северном Кавказе, Вопросы скифо-сарматской археологии (по материалам конференции ИИМК АН СССР 1952 г.), Шелов Д.Б. (ред.), Москва-Ленинград, изд. АН СССР, с. 112-131.

Иессен А.А. 1965, Из исторического прошлого Мильско-Карабахской степи, Материалы и исследования по археологии СССР, N 125, Иессен А.А., Кушнарева К.Х. (ред.), Москва-Ленинград, изд. АН СССР, с. 10-36.

Ильинская В.А. 1983, Скифы и Кавказ (тезисы доклада), Археологический сборник Государственного Эрмитажа, вып. 23, Пиотровский Б.Б. (ред.), Ленинград., “Искусство”, с. 55-56.

Казиев С.М. 1949, Археологические раскопки в Мингечауре, Материальная культура Азербайджана, т. I, Баку, с. 9-49.

Капанцян Г. 1947, Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, изд. АН Арм. ССР, 290 с.

Крис Х.И. 1989, Кизил-кобинская культура предгорного Крыма, Степи европейской части СССР в скифо-сарматское время, Археология СССР, Мелюкова А.И. (ред.), Москва, "Наука", с. 29-32.

Крупнов Е.И. 1954, О походах скифов через Кавказ, Вопросы скифо-сарматской археологии (по материалам конференции ИИМК АН СССР 1952 г.), Шелов Д.Б. (ред.), Москва-Ленинград, изд. АН СССР, с. 186-194.

Крупнов Е.И. 1958, Киммерийцы на Северном Кавказе (По археологическим данным), Материалы и исследования по археологии СССР, Материалы и исследования по археологии СССР, N 68, Пиотровский Б.Б. (ред.), Москва-Ленинград, изд. АН СССР, с. 176-195.

Курочкин Г.Н. 1994, Хронология переднеазиатских походов скифов по письменным и археологическим данным, Российская археология, N 1, Москва, с. 117-122.

Лесков А.М. 1981, Курганы: находки, проблемы, Ленинград, "Наука", 168 с.

Мартиросян А.А. 1964, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, изд. АН Арм. ССР, 312 с.

Мартиросян А.А. 1974, Аргиштихинили, Ереван, изд. АН Арм. ССР, 176 с.

Медведская И.Н. 1992, Периодизация скифской архаики и Древний Восток, Российская археология, N 3, Москва, с. 86-107.

Меликишвили Г.А. 1949, Некоторые вопросы истории Манейского царства, Вестник древней истории, N 1, Москва-Ленинград, с. 57-72.

Меликишвили Г.А. 1951, Некоторые вопросы социально-экономической истории Наири-Урарту, Вестник древней истории, N 4, Москва-Ленинград, с. 22-40.

Меликишвили Г.А. 1954, Древневосточные материалы по истории народов Закавказья, т. I, Наири-Урарту, Тбилиси, изд. АН ГрузССР, 446 с.

Меликишвили Г.А. 1959, К истории древней Грузии, Тбилиси, изд. АН Груз. ССР, 510 с.

Меликишвили Г.А. 1960, Урартские клинообразные надписи, Москва, изд. АН СССР, 504 с.

Мелюкова А.И. 1964, Вооружение скифов, Москва, "Наука", 91 с.

Мелюкова А.И. 1989, Предскифский период в степях Северного Причерноморья, Степи европейской части СССР в скифо-сарматское время, Археология СССР, Мелюкова А.И. (ред.), Москва, "Наука", с. 10-16.

Монгайт А.Л. 1973, Археология Западной Европы: каменный век, Москва, "Наука", 356 с.

Никольский М.В. 1896, Клинообразные надписи Закавказья, Материалы по археологии Кавказа, вып. V, Москва, тип. А.И. Мамонтова и К°, 136 с.

Пиотровский Б.Б. 1939, Урарту. Древнейшее государство Закавказья, Ленинград, "Государственный Эрмитаж", 58 с.

Пиотровский Б.Б. 1940, Скифы и Закавказье, Труды отдела Востока Государственного Эрмитажа, т. III, Ленинград, с. 71-92.

Пиотровский Б.Б. 1949, Археология Закавказья, Ленинград, изд. Ленинградского университета, 131 с.

Пиотровский Б.Б. 1954, Скифы и древний Восток (Доклад на конференции по скифо-сарматской археологии), Советская археология, XIX, с. 141-158.

Пиотровский Б.Б. 1959, Ванское царство (Урарту), Москва, изд. восточной литературы, 284 с.

Пьянков И.В. 1979, К вопросу о путях проникновения ираноязычных племен в Переднюю Азию, Переднеазиатский сборник, т. III, Дандамаев М.А., Лившиц В.А. (ред.), Москва, "Наука", с. 193-207.

Ростовцев М.И. 1929, Срединная Азия, Россия, Китай и звериный стиль, ΣΚΙΘΙΚΑ 1, Seminarium Kondakovianum, Прага, тип. "Политика", с. 7-48.

Скаков А.Ю. 2009, Некоторые проблемы истории Северо-Западного Закавказья в эпоху поздней бронзы – раннего железа, Краткие сообщения Института археологии, вып. 223, Москва, с. 143-172.

Смирнов А.П. 1966, Скифы, Москва, "Наука", 200 с.

Страбон 1964, География, в 17 книгах, Москва, "Наука", 936 с.

Тер-Аветисян С.В. 2010, Памятники древности Карабаха и скифская проблема, Арменоведческие исследования, Научное наследие, т. 6, Ереван, "Гитутюн", с. 175-194.

Тер-Мартиросов Ф.И. 1994, Скифское царство в Передней Азии и исторические основы предания о Паруйре Скайорди как царе Армении, Историко-филологический журнал, N 1-2, Ереван, с. 67-84.

Тирацян Г.А. 1979, Города Армении эллинистического времени в свете археологических исследований, Вестник древней истории, N 2, Москва, с. 160-175.

Barnett R.D. 1956, The Treasure of Ziwiye, Iraq, v. XVIII, London, p. 111-116, pl. XV-XX.

Çilingiroğlu A., Salvini M. 2001, Ayanis I, Roma, "CNR-Istituto per gli studi Micenei ed Egeo-Anatolici", 396 p.

De Morgan J. 1889, Mission scientifique au Caucase; études archéologiques & historiques I, Paris, "Ernest Leroux", 231 p.

Ghirshman R. 1954, Iran: from the Earliest Times to the Islamic Conquest, London, "Penguin Books", 368 p.

Herodotus 1890, The History of Herodotus, trans. by G.C. Macaulay, London and NY, "pub. Macmillan", XII+299p.

Ivantchik A.I. 2001, Kimmerier und Skythen, Moskau, "Philipp von Zabern", 324 S.

König F.W. 1957, Handbuch der chaldischen Inschriften, T. II, Graz, "Ferdinand Berger, Horn (N.-Ö.)", 276 S.

Moses Khorenats'i 1980, History of the Armenians, Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, Cambridge (Mass.), London, "Harvard University Press", VIII+408 p.

Phillips E.D. 1972, The Scythian Domination in Western Asia: Its Record in History, Scripture and Archaeology, World Archaeology, N 4/2, p. 129-138.

Salvini M. 2001, The Inscriptions of Ayanis. Cuneiform and Hieroglyphic, in: Çilingiroğlu A., Salvini M. 2001, p. 251-319.

Salvini M. 2012, Corpus dei testi urartei IV, Roma, "Istituto di studi sulle Civiltà dell'Egeo e del Vicino Oriente", 323 p.

Smith A.T. 2005, Prometheus Unbound: Southern Caucasia in Prehistory, Journal of World Prehistory, N 19/4, New York, London, p. 229-279.

Strobel K. 2012, "Kimmeriersturm" und "Skythenmacht": eine historische Fik-tion?, Studies Presented to Frederick Mario Fales on the Occasion of His 65th Birthday, Lanfranchi G.B. et al (eds.), Wiesbaden, "Harrassowits", p. 793-842.

Strobel K. 2014, The Cimmerians in Asia Minor, Some Observations on Anatolian Cultures, Çinardali-Karaaslan N. et al (eds.), Ankara, "Hacettepe University Press", p. 369-386.

Sulimirski T. 1954, Scythian Antiquities in Western Asia, Artibus Asiae, N 17/¾, Ascona, p. 282-318.

Wilkinson C.K. 1960, More Details on Ziwiye, Iraq, v. XXII, London, p. 213-220, pl. XXIX-XXX.

Xydopoulos I.K. 2015, The Cimmerians: their origins, movements and their difficulties, The Danubian Lands Between the Black, Aegean and Adriatic Seas, Tsetskhladze G.R. et al (eds.), Hargrave, Oxford, "Gordon House", p. 119-123.

ԿԻՄԵՐՆԵՐԸ ԵՎ ՍԿՅՈՒԹՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Գարեգին Թումանյան

Կիմերների և սկյութների որոշ առաջնորդներ առնչվում են Հայկական լեռնաշխարհում ու նրա շուրջը ծավալված իրադարձություններին: Մեզ հայտնի է կիմերական ընդամենը երեք անձնանուն՝ Թեուշպա, Դուգդամի և Սանդակուրու: Կիլիկիայում կիմերական և սկյութական զորքերի միջև մոտավորապես մ.թ.ա. 637 թ. տեղի ունեցած ճակատամարտում կիմերները վերջնական պարտություն են կրում: Այսպիսով, կիմերների պատմական դերը Փոքր Ասիայում ավարտվում է. նրանց զգալի մասը բնակություն է հաստատում Հայկական լեռնաշխարհի արևմտյան սահմանների հարևանությամբ՝ Գամիրքում:

Առավել հայտնի են սկյութական առաջնորդները և արքաները՝ Իշպակա/Շագապուտարան, Պարտատուա/Պրոտոթիոսը և Մադիոսը: Համադրելով առկա տվյալների վերլուծությամբ ստացված արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ ասուրական արձանագրության Իշպակային ուրարտական արձանագրության մեջ համապատասխանում է Շագապուտարան, իսկ հայկական աղբյուրներում՝ Սկայորդին: Նրանից հետո առաջնորդ է դառնում Պարտատուան, որին արդեն արքա են անվանում ասորեստանյան աղբյուրները: Պարտատուան (Հերոդոտոսի «Պատմության» Պրոտոթիոսը կամ Մովսես Խորենացու հիշատակած Պարույրը՝ Սկայորդու որդին) սկյութներին կառավարում է մոտավորապես քսանհինգ տարի՝ մ.թ.ա. 678-653/652 թթ.: Մադիոսը՝ Պրոտոթիոսի որդին, հավանաբար գահակալել է մ.թ.ա. 653/652-625 թթ.: Նրա առաջնորդությամբ սկյութները նախ իրենց են ենթարկել մարերին, ապա դաշնակցած ասորեստանյան ռազմական ուժերի հետ՝ պարտության են ենթարկել կիմերական զորամիավորումներին: Կիաքսարի ապստամբության ժամանակ Մադիոսը հարձակվել է Մարաստանի վրա՝ փորձելով օգնել ասորեստանցիներին՝ Նինվեի պաշարումը վերացնելու: Կիաքսարի դեմ պատերազմն ավարտվում է Մադիոսի մահով, որից հետո Առաջավոր Ասիայում սկյութական գերիշխանությանը վերջ է դրվում:

Այդ ժամանակաշրջանի Մերձավոր Արևելքի երկրների քաղաքական կյանքում «կիմերական և սկյութական գործոնները» կարևոր դեր էին խաղում: Հին աշխարհը փուլ էր գալիս, և պատմությունը կիմերների և սկյութների զորագնդերին էր վերապահել այդ փլուզմանն օժանդակողների դերը:

Բանալի բառեր՝ Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Վանի թագավորություն, կիմերներ, սկյութներ, առաջնորդներ, Պարտատուա:

КИММЕРИЙЦЫ И СКИФЫ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ

Гарегин Туманян

Ряд киммерийских и скифских вождей имеют отношение к событиям на Армянском нагорье и вокруг него. Нам известны всего 3 киммерийских вождя: Теушпа, Дугдамми и Сандакурру. В битве со скифами (в 637 г. до н.э.) киммерийцы потерпели окончательное поражение. На этом истори-

ческая роль киммерийцев в Малой Азии завершилась, значительная их часть поселилась у западных границ Армянского нагорья – в стране Гамирк.

Наиболее известными были скифские вожди и цари – Ишпакай/ Шагапутара, Партатуа/Прототий и Мадий. Сопоставление имеющихся данных позволяет заключить, что Ишпакаю из ассирийской надписи соответствует Шагапутара в надписи урартской и Скайорди в армянских источниках. После него вождем становится Партатуа, который в ассирийских источниках уже называется царем. Партатуа (Прототий в "Истории" Геродота, или Паруйр, сын Скайорди, упомянутый Мовсесом Хоренаци) правил скифами около 25 лет, в 678–653/652 гг. до н.э. Мадий, сын Прототия, по-видимому, царствовал в 653/652–625 гг. до н.э. Под его предводительством скифы сначала подчинили себе мидян, затем совместно с воинскими силами ассирийцев нанесли поражение киммерийским отрядам. Во время восстания Киаксара, пытаясь помочь ассирийцам, Мадий напал на Мидию, чтобы снять осаду Ниневии. Война против Киаксара завершилась смертью Мадия, и таким образом настал конец скифской гегемонии в Передней Азии. В политической жизни стран Ближнего Востока рассматриваемого исторического отрезка "киммерийский и скифский факторы" играли важную роль. Древний мир рушился, и этому способствовали киммерийские и скифские отряды.

Ключевые слова – Малая Азия, Армянское нагорье, Ванское царство, киммерийцы, скифы, вожди, Партатуа.

CIMMERIANS AND SCYTHIANS IN THE ARMENIAN HIGHLAND

Garegin Tumanyan

The article tells about those Cimmerian and Scythian leaders, who pertained to the developments taking place in the Armenian Highland and around it. We are aware of only three personal names of Cimmerians: Teušpa, Dugdammi, and Sandakurru. In the battle that took place in Ciliciain about 637 B.C., Cimmerians suffered eventual overthrow from Scythian troops. At this point, the historical role of Cimmerians in the Asia Minor was ended; a tangible part of them settled near the western borders of the Armenian Highland – in the land Gamirkʿ.

Scythian leaders and kings are known much better– Išpakāi/ Šagaputara, Partatua/Protothyes, and Madyes. Through synthesizing the results of the analysis of existing data, an inference can be made that Išpakāi mentioned in Assyrian inscriptions coincides with Šagaputara from Urartian inscriptions and Skayordi from Armenian sources. After him, Partatua becomes the leader, who is already referred to as a king in Assyrian sources. Partatua (or Protothyes from Herodotus "Histories" or Paroyr, the son of Skayordi as mentioned by Moses Khorenatsʿi) ruled over Scythes for about 25 years, during 678–653/652 B.C. Madyes, the son of Protothyes, probably, reigned during 653/652–625 B.C. Under his leadership, Scythians placed under their command Medes first, then, in an alliance with Assyrian military forces, defeated Cimmerian troops. During the revolt led by Kyaxares, Madyes assault on Media in an attempt to help Assyrians to raise the siege of Nineveh. The war against Kyaxares ended with Madyes's death, after wich the Scythian dominance in the Asia Prior came to its end. "Cimmerian and Scythian factors" played an important role in the political life of the countries of Near East of that period. The old world was collapsing, and the history assigned Cimmerians and Scythians the part of contributing to that collaps.

Key words – Asia Minor, Armenian Highland, Van kingdom, Cimmerians, Scythians, leaders, Partatua.

«ԵԿԵՂԵՑԻ» ԵՎ «ՈՒԽՏԱՎԱՅՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լիլիթ Սիմոնյան

Պատմական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Չարենցի 15, 0025 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ simonian_lilit@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 30.09.2018, գրախոսվել է 28.08.2019, ընդունվել է տպագրության 05.05.2019

Ներածություն

Սրբավայրերի և ուխտատեղիների ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս տվյալ մշակույթի կրողների կողմից գործածվող մի շարք հասկացություններ, որոնք կիրառվում են գործառույթով իրարից տարբերվող օբյեկտներ բնորոշելու համար: Այդ հասկացությունների իմաստների ճշտումը թույլ է տալիս ավելի հստակ պատկերացնել պաշտամունքային այն համալիրները, որոնք ձևավորվում և գործում են այդ օբյեկտների շուրջ: Առավել կարևոր են այդպիսի ճշտումները այն դեպքերում, եթե սրբավայրի գործառույթները ժամանակի մեջ փոխվել են:

Ինչպես հայտնի է, բառերն ու հասկացությունները ենթարկվում են պատմական իմաստափոխության, նաև տարբեր իմաստներ են ստանում՝ կախված բովանդակային այն միջավայրից, որտեղ կիրառվում են: Եթե միևնույն հասկացությունը հասարակական տարբեր խմբերի ներկայացուցիչներ գործածում են տարբեր իմաստներով, ապա որևէ նշանակություն չճշտելու, չսահմանելու դեպքում կարող է առաջանալ գիտական կազուսի, թյուրիմացության երևույթը: Այս առումով ժամանակակից հայոց լեզվում, (ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր) սրբազան օբյեկտների, մասնավորապես՝ կրոնական նշանակության վայրերի և շինությունների բնորոշման համար օգտագործվում են մի շարք բառեր, որոնց մեջ տարբեր անձինք ներդնում են տարբեր իմաստներ: Այդպիսի իմաստափոխությունը կատարվում է դանդաղ, բայց անընդհատ, ունենում է անհավասար տարածվածություն և ուղղակիորեն կապվում է բառն օգտագործողի աշխարհայացքի հետ, որն էլ իր հերթին հետևանք է նրա (ընդհանուր և մասնագի-

տական) կրթության, արժեքային կողմնորոշումների, կրոնական պատկանելության և հասարակական որոշակի խմբի հետ նույնականանալու հետ: Հարցի սոցիալ-հոգեբանական կողմին չանդրադառնալով՝ պարզենք, թե ինչպես են կիրառվել կրոնական հաստատություններ, շինություններ և այլ օբյեկտներ բնորոշող հասկացությունները Ք.հ. V դ., երբ ձևավորվում էին հիմնական կրոնական եզրույթները, և որքանով են պահպանվել դրանց նախնական իմաստները ժամանակակից հայերենում:

Մեթոդ և նախադրույթներ: Թվում է, թե նման ուսումնասիրությունը սոսկ լեզվաբանական ուղղվածություն ունի, բավական է ի մի բերել տարբեր ժամանակաշրջաններում կիրառված հասկացությունները, և կարելի է պարզել իմաստափոխության ճանապարհները: Այսպես, Հ. Ոսկյանը Վասպուրականի վանքերի օրինակով առանձնացնում է ճգնատեղիների (անապատ, քարանձավ, ծերպ, սոր, լեռ, սյուն) և վանքերի (անապատ, մենաստան կամ մենանոց, փարախ, եղբայրանոց, ուխտ, քավարան, մայրաքաղաք, կուսաստան, կրոնավորանոց, կրոնաստան, հանդիսարան)[1] իմաստը փոխանցող մի շարք եզրույթներ: Հ. Մեսրոպյանը ևս դիտարկում է մի շարք բարբառային բառեր, որոնք բնորոշել կամ բնորոշում են եկեղեցին և վանքը պատմաազգագրական տարբեր շրջաններում[2]:

Իրականում ամեն ինչ շատ ավելի բարդ է: Խնդիրն այն է, որ ազգագրական հետազոտության ճանապարհով գրանցվում են մի շարք հակասական և իրարամերժ իմաստներ, և միևնույն բառով կարող են բնորոշվել մշակութային բավականին տարբեր երևույթներ: Հետևաբար, հարցի լուծման համար ընտրել ենք միջճյուղային-ֆենոմենոլոգիական մոտեցումը, որը ենթադրում է հարցման երկու ձև. հարցվողին խնդրվում է բառի իմաստը բացատրել տեսականորեն և ցույց տալ այն օբյեկտը, որը բնորոշվում է տվյալ բառով:

Հասկանալի է, որ գրավոր սկզբնաղբյուրների ուսումնասիրության պայմաններում հնարավոր չէ կատարել նմանատիպ ճշտումներ, և ուսումնասիրողն ստիպված է բավարարվել միայն այն սահմանումներով, որոնք տալիս է այս կամ այն հեղինակը, և ստուգել այդ սահմանումը՝ նրա նշած նյութական օբյեկտը անմիջապես ուսումնասիրելով: Այդուհանդերձ, սույն

[1] Ոսկեան 1947, 987-988:
[2] Մեսրոպյան 2016, 217-222:

ուսումնասիրությունն իբրև հիմք ենթադրում է նաև գրավոր սկզբնաղբյուրների հնարավորինս խորազնին վերլուծություն:

Վանականների և քահանաների կարգավիճակը Հայ Առաքելական Ս. Եկեղեցին որոշարկել և պահպանում է ըստ Ս. Սահակ Պարթևի կանոնների[3], որոնք նրա պնդմամբ՝ կազմվել են Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, իսկ ինքը Ս. Սահակը միայն թարգմանել է հունարենից հայերեն[4]: Սահակ Պարթևի կանոններից մեկը հրահանգում է. «Քանզի բազումք կարծեցին տգիտութեամբ այլ զոմն եկեղեցի ասել եւ այլ զոմն վանս, եւ տխմար բանիւք իւրեանց կամեցան կռիւս եւ հերձուածս մուծանել ի մի միաբանութիւն հաւատոց եւ մոռացան զպատուիրանին բանն որ ասէ. «Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն»... քանզի եկեղեցի ոչ ցուցանէ մեզ պատուիրան Աստուծոյ որ ի քարանց եւ ի փայտից է շինեալ, այլ զհաւատովն շինեալ զազգ մարդկան ի վերայ վիմին հաստատութեան...»[5]: Այստեղ մեծ կաթողիկոսը նկատի ունի Եկեղեցին՝ որպես հիմնարկ, կազմակերպություն, հոգևոր կառույց:

Այդուհանդերձ, արդեն Ս. Սահակի օրոք և առավել՝ բարձր և ուշ միջնադարում «եկեղեցի» և «վանք» հասկացությունների միջև գոյություն ուներ որոշակի իմաստային տարբերություն: Այդ տարբերությունը վերաբերում էր գլխավորապես հոգևորականներին բնակավայր և աշխարհականների համար՝ ուխտավայր ծառայելու գործառույթներին, որոնք վանքերն ունեին գրեթե միշտ, իսկ գյուղերի և քաղաքների սահմաններում գտնվող եկեղեցիները՝ շատ ավելի հազվադեպ: Ս. Պարթևը, գիտակցելով, որ այդ հասկացություններն արդեն իսկ արմատավորվել են որպես պաշտամունքային շենքերի բնորոշումներ, անդրադառնում է դրանց պայմանականության խնդրին. «Նաւահանգիստ է ամենեցուն տաճար աղաւթից եւ տեղի խնդրուածոց մերոց, զոր *յարանուանաբար* (ընդգծումը մերն է – Ս.Լ.) եկեղեցի սովոր եմք կոչել...»[6]: Նա նշում է, որ շինություններով պատվում են այն տեղերը, որոնք կոչվում են «ժողովրդանոցք», որովհետև դրանք այն վայրերն են, ուր հավաքվում են քահանաները, ուխտի մանուկները և Աստծո պաշտոնյաները՝ աղոթք և խնդրվածք կատարելու համար, և ավե-

[3] Կանոնագիրք հայոց 1964, 363-421:
[4] Կանոնագիրք հայոց 1964, 402:
[5] Կանոնագիրք հայոց 1964, 385-386:
[6] Կանոնագիրք հայոց 1964, 412:

լացնում է, որ այդպիսի տեղերը կոչվում են նաև «աղաւթարանք» և «սրբարանք»: Բացի այդ, դրանցում հաստատված են պատարագի համար նախատեսված տերունական սեղանը և մկրտության ավազանը, այդ տեղերում է կատարվում սաղմոսերգությունը, և դրանք (Ս. Պարթևը կրկին կիրառում է «յարանուանաբար») կոչվում են «եկեղեցի»[7]: Հասկանալի է, որ հեղինակը նկատի ունի հուն. εκκλησία բառի նախնական իմաստը՝ «ժողովարան, ժողովատեղ», և աղոթատեղիները «յարանուանաբար» այդպես են կոչվում, քանի որ հայերենում արդեն իսկ «եկեղեցի» բառի մեջ արմատավորվել էր պաշտամունքային շինություն հասկանալու սովորույթը:

Այնուհետև նա անդրադառնում է նաև «վանք» հասկացությանը, որը մեկնում է որպես «...սիւն հաստատութեան ճշմարտութեան ուխտի մանկանց, զի փայփայէ եւ թեւակոխէ ի հրահանգս հոգեւորս. եւ զորս ամենեցուն քահանայից եւ ժողովրդականաց պարտ է յարգել եւ մեծարել զվարդապետս...Վասն այսորիկ իսկ եւ *դիպողագոյն* եդաւ անուն վանք...»[8]: Թեև «դիպողագոյն» ասելով, այս անգամ շեշտում է անվան պատեհությունը, դիպուկ լինելը, այստեղ խոսք չի կարող լինել հուն. μοναστήριον բառի ուղիղ թարգմանության մասին, քանի որ այն ունի «միայնակեցություն» իմաստը (այս դեպքում ավելի հարմար կլիներ «մենաստանը» և ոչ՝ «վանքը») և չունի սյունի կամ բնակատեղիի նշանակությունը: Հետևաբար, Ս. Սահակը բացատրում է հենց հայերեն բառը՝ իր նախնական իմաստով, որպես ավան, կայան կամ բնակատեղի[9]:

Վերջապես, Ս. Պարթևն իր Կանոններում ընդգծում է «ժողովրդանոցք» և «մատրունք» հասկացությունների իմաստային և իրավական նույնությունը եկեղեցու հետ, որոնք չեն կարող լինել փոքր կամ մեծ որևէ այլ իմաստով, բացի «ըստ աստիճանի իշխանութեան»[10]:

---

[7] Կանոնագիրք հայոց 1964, 392-393:

[8] Կանոնագիրք հայոց 1964, 394:

[9] Աճառյան 1979, 302: Նոր բառգիրք Հայկազեան լեզուի 1981, 1950: Վերջինում՝ «Օթեվան, իջաւան, բնակարան, կայան, դադարք, վրան, հիւրանոց, փարախ, տաղաւար»:

[10] Կանոնագիրք հայոց 1964, 396: Իշխանության աստիճանը որոշելու սկզբունքը մութ է մնում: Հավանաբար, խոսքը սրբավայրի հոգևոր զորեղության, ազդեցիկության, բուժելու և մխիթարելու կարողության մասին է, որը ժողովուրդը ներկայումս սովորաբար արտահայտում է «զորություն, զորավոր» բառով: Հավատացյալի պատկերացման մեջ որևէ սրբավայրի զորեղությունը կախված չէ ո՛չ դրա վրա առկա շինության չափերից, ո՛չ էլ գործող կամ ավերակ լինելուց, այլ միայն այն ազդեցությունից, որ այն թողնում է այցելողների վրա: Որոշակի կասկած, համենայն դեպս, կարող է մնալ այն հար-

Խոսելով եկեղեցիների և վանքերի ծառայողների մասին՝ նա քանիցս շեշտում է «ամուսնացեալ քահանայք» և «ուխտի մանկունք» հասկացությունները՝ որոշակիորեն հակադրելով աշխարհականների հետ կանոնավոր կերպով շփվող քահանային և վանքի միաբանության անդամ կուսակրոնին՝ վերջինիս գերապատվությամբ: Ուխտի մանկանց գործն է համարում աշխարհականների հոգևոր խնամքը մասնավոր խնդիրների դեպքում. «սփոփել զհիւանդս և մխիթարել զսգաւորս»[11]:

Ս. Սահակը չի անդրադառնում «կաթողիկէ» բառիմաստին, մինչդեռ Վաղարշապատի գլխավոր եկեղեցին (ներկայիս Մայր Աթոռ Ս. Էջմիածինը) հին հեղինակների մոտ կոչվում է հենց *Կաթողիկէ*[12]: Թեև մեր օրերում այդ հասկացությունը նաև ճարտարապետական եզրույթ է, V դ. այն ունեցել է մայր տաճարի իմաստը[13] և կապվել է Վաղարշապատի լուսավորչաշեն Մայր եկեղեցու հետ:

Դժվար է ասել՝ երբ է հայոց մեջ հաստատվել սովորական վանքի և անապատ-վանքի միջև տարբերությունը, մինչդեռ վերջինս նախատեսված էր ավելի խիստ ճգնության համար և հաճախ ուխտավորներ չէր ընդունում: Անապատի և վանքի տարբերությանը «Կայծեր» վեպում հանգամանորեն անդրադարձել է Ռաֆֆին: Նա նշում է, որ վանքը իր էությամբ «հոգևոր-բարեգործական հիմնարկություն» է, որը կարող է ունենալ դպրոց, հիվանդանոց, ուրկանոց, աղքատանոց, ծառայել որպես իջևանատուն-պատսպարան՝ ընդունելով կարիք ունեցող աշխարհականներ: Հետևաբար, վանքերը երբեմն կառուցվում էին այնպիսի վայրերում, որտեղ պիտի ծառայեին իրենց նպատակին: Ընդհակառակը, անապատն այն վայրն է, որտեղ բնակվում էին աշխարհից, կյանքից կտրվել ցանկացողները, ահա

ցի վերաբերյալ, թե արդյոք Ս. Սահակի օրոք կա՞ր սրբավայրերի այլ դասակարգում՝ կապված դրանց պաշտոնական կարգավիճակի հետ թե՞ ոչ, քանի որ Կանոններում քանիցս շեշտվում է, օրինակ, վանքերի ավելի բարձր կարգավիճակը ծխական եկեղեցիների համեմատ:

[11] Կանոնագիրք հայոց 1964, 394:

[12] Հմմտ. «...հիմնարկութիւնն սրբոյ տանն Աստուծոյ, մեծի եկեղեցւոյն կաթողիկէի...» (Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 24-26):

[13] «Կաթողիկէ» բառի՝ որպես Ս. Էջմիածնի Մայր տաճարի բնորոշման և հետագայում որպես հասարակ անուն և ճարտարապետական եզրույթ կիրառելու մասին տե՛ս Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում 2003, էջ 18:

թե ինչու դրանք կառուցվում էին բնակավայրերից հեռու, երկրի «ամենաթաքթաքուր» տեղերում[14]:

Ռաֆֆու հիշատակած՝ վանքերի «բարեգործական» առաքելությունը, որը, հավանաբար, առանձին թափ էր առել Ս. Ներսես Մեծ կաթողիկոսի օրոք, մարմնավորում է Սահակ Պարթևի վերոհիշյալ՝ «սփոփել զհիւանդս և մխիթարել զսգաւորս» հրահանգը: Հասկանալի է, որ սովորական վանքերը բոլորովին էլ կտրված չէին ժողովրդից, ընդհակառակը, հենց իրենց գթառատ գործունեության շնորհիվ դրանք առանձնակի սեր էին վայելում ժողովրդի լայն շրջաններում: XIX-XX դդ. ընթացքում գրանցված բազմաթիվ նյութեր վկայում են, որ անգամ բնակավայրից դուրս, դժվարամատչելի տեղում գտնվող վանքը այն սրբությունն էր, որի անունով մարդիկ երդվում էին, որի հովանավորությունն ու առանձին «օրինականացումն» էին հայցում ամուսնացող զույգերի համար, որին (իբրև անձնավորված սրբի՝ անկախ օծման նվիրումից[15]) դիմում էին փորձանքի ու դժվարության պահին, որի «դուռը» ուխտի էին գնում, մատաղ ու «շուշպա» (գլխաշոր կամ մեծ թաշկինակ) նվիրում, խնամում էին անգամ եթե այն բոլորովին ավերված էր: Այսինքն, նաև այն դեպքերում, երբ վանքի պատերից ներս այլևս չէին բնակվում հովանավոր, մշտապես իրենց համար աղոթող հոգևորականները, որոնք բավական ծանր աշխատանք էին կատարում բազմամարդ ուխտերի ընթացքում՝ պատարագով, աղոթքով, օրհնությամբ և նշխար բաժանելով, և որոնք պատրաստ էին հանգրվան տալ աղքատին ու մոլորված անցորդին, հիվանդին ու հոգեպես բեկյալին. վանքի քարերն անգամ պահպանում են այդ մարդասիրական առաքելության հրաշալի հիշատակը: Միևնույն ժամանակ, անապատներում բնակվում էին միայն ճգնավորները, աշխարհականների մուտքն այնտեղ արգելված էր կամ գոնե սահմանափակված, հաճախ հասարակ ժողովուրդն անգամ չգիտեր այդ անա-

[14] Ռաֆֆի 1956, 148-149:

[15] Այսինքն, անկախ այն բանից, թե օծման արարողությամբ ո՛ր սրբին է նվիրված վանքը, անձնավորված սուրբ էր ինքը վանքը, որը ժողովրդի կողմից դիտվում էր իբրև սեփական կամքն ունեցող և տեսիլքներում ու երազներում մարդկային կերպարանքով հանդես եկող անձ: Այսպես էր հարսանեկան թագվորագովքերում, մինչդեռ փեսային կանգնեցնում էին դեմքով դեպի որևէ սրբավայր, երգում էին. «Էջմիածին պահի քի պարզերես», «Աղթամարայ Սըպ խէչու օխնէք առնէր» (Էմինյան ազգագրական ժողովածու 1906, 31, 32):

պատների գոյության մասին[16], և լքվելու դեպքում դրանք ուղղակի ամայանում էին: Ռաֆֆին շեշտում է նաև, որ անապատները երկրի քաղաքական ու հոգևոր կյանքի ճգնաժամային փուլերի երևույթ են, մասնավորապես, մեծ թվով կառուցվել են Շահ-Աբբասի արշավանքից և զանազան այլ արհավիրքներից հետո[17]:

Գրիգոր Մագիստրոսը, նամակ ուղղելով տեր Գրիգորին և արքեպիսկոպոս Ստեփաննոսին, հատուկ շեշտում է. «...աղաչելով մաղթեմք զձեզ, որ ի ծայրս էք լերինն ընդ Յիսուսի», - և բարձրադիր վանքում գտնվողներին խնդրում է աղոթել իր համար[18]: Դա նշանակում է, որ սրբավայրերը լեռնային գոտում կառուցել են ոչ միայն դժվարամատչելի և առանձնացված լինելու համար, այլև ուղղակի բարձր, Աստծուն մոտ:

Սրբազան տարածքը, որը զգալիորեն ավելի մեծածավալ է, քան բուն շինությունը՝ վանքը, եկեղեցին, մատուռը, ունի իրեն հատուկ հիերոտոպիան[19] և դիրքը:

Եթե վանքի «անապատ» անվանումը պատմականորեն կապված է Անտոն Անապատականի հետ, որը համարվում է քրիստոնեական ճգնավորականության շարժման հիմնադիրը[20], ապա բոլորովին այլ ծագում ունի ավելի հազվադեպ կիրառվող «արգելանոց» հասկացությունը: Այսպես,

---

[16] Մեր օրերում դժվար է գտնել որևէ հայ կամ թեկուզ հայաստանցի մարդու, որը չգիտե «վանք» բառի իմաստը կամ չի կարող հիշատակել գոնե մի քանի առավել հայտնի վանքեր: Փոխարենը, ժամանակակից հայի համար «անապատ» բառն ընկալվում է հիմնականում իր նախնական՝ անջրդի-անբնակ տարածության իմաստով: Այսպես, երբ մենք զրուցում էին Սոդք գյուղի գյուղապետ, Գանձակի Ոսկանապատ (Զուռնաբադ) գյուղի նախկին բնակիչ Կոլյա Շախսուվարյանի (ծնվ. 1957 թ.) հետ, նա պատմեց իր հայրենի գյուղի անվան ստուգաբանական լեգենդը, համաձայն որի, «Ոսկանապատ» անունը կապվում է այդտեղ եղած ոսկու հետ, որն էլ պարսկերեն «զառ» է թարգմանվել և դարձել Զուռնաբադ: Երբ ի պատասխան իր տարակուսանքի, թե ինչու՞ պետք է այդ անտառապատ, կանաչ գյուղը «անապատ» կոչվեր, բացատրեցինք, որ այդ բառը բնորոշում է նաև վանք-մենաստանը, դա նրան մեծ զարմանք պատճառեց, թեև նա իր հարազատ վայրերի վանքերի հրաշալի գիտակ է և առատ տեղեկություններ հայտնեց, մասնավորապես, Ս. Պանդալեոնի վանքի ուխտագնացության վերաբերյալ (Սիմոնյան, Հակոբյան, ԴԱՆ 2017):

[17] Ռաֆֆի 1956, 151-152:

[18] Գրիգոր Մագիստրոսի թղթերը 1910, 77:

[19] «Հիերոտոպիա - սրբազան տարածքների ստեղծում՝ դիտարկված որպես ստեղծագործության հատուկ ձև, ինչպես նաև պատմական հետազոտությունների առանձին բնագավառ, որտեղ բացահայտվում և վերլուծվում են այդ ստեղծագործության կոնկրետ օրինակներ» (Лидов 2009, 9):

[20] Կոստանեանց 1886, 10:

Վարագա լեռան մոտ գտնվող (Սալնաձորի անապատ, Սալնապատի վանք) Ս. Գրիգորի վանքը Գ. Սրվանձտյանցն անվանում է նաև Արգելանոց[21], մինչդեռ ավանդույթի համաձայն, այդտեղ է ճգնել և աղոթել Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ Ս. Հռիփսիմյաց Ս. Նշանի վայրը հաղորդությամբ իմանալու նպատակով[22]: Այս նույն իմաստն ունեցել է Բերկրիի Արգելան վանքի անվանումը[23], մինչև որ (ոչ առանց Ս. Ստեփաննոս Տեր Հուսկան որդու հրաշագործ գերեզմանի համբավի միջնորդության) վերածվել է հատուկ անվան: Այս առումով, «ուխտ», «ուխտատեղի», «ուխտավայր» անվանումները, թեև կարող են կիրառվել գործող վանքերի համար, այդուհանդերձ, իրենց իմաստով հակադրված են «անապատին» և «արգելանոցին»:

Հարկավ, իր գոյության 17 դարերի ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցին չի մնացել նույնը: Եթե դավանաբանության կորիզի և պաշտամունքային ավանդույթների առանցքի մասին դեռ կարելի է ասել, որ դրանք գրեթե նույնն են մնացել պատմական այդ հսկայական ժամանակահատվածում, ապա մնացյալ բոլոր, առաջին հերթին՝ գործնական և առարկայական տարրերը ենթարկվել և ենթարկվում են աստիճանական, իսկ երբեմն էլ՝ թռիչքաձև փոփոխությունների՝ կախված տիրող քաղաքական, հասարակական-կենցաղային պայմաններից և գիտելիքի հանդեպ այս կամ այն վերաբերմունքից: Այդ փոփոխությունները վերաբերում են նաև եկեղեցու ներքին կազմակերպությանը, հոգևորականների պարտականություններին, հոգևոր ծառայությունների այն ամբողջ համալիրին, որի պահանջարկը կա հասարակության մեջ, և որը մասամբ իրականացվում է հատուկ մասնագիտացված ծառայող-հոգևորականի օգնությամբ, իսկ մասամբ՝ առանց դրա, առաջին հերթին, այն համայնքների պարագայում, որոնք պատմական այլևայլ պատճառներով զրկված են լինում գործող եկեղեցիներից և հոգևոր սպասավորներից: Որպես հետևանք՝ ավանդաբար, հիշողությամբ պահպանված պաշտամունքային ձևերը կարող են քարանալ և պահպանել ավելի վաղ շրջաններին բնորոշ տարրեր և ենթարկվել անկանոն կերպարանափոխությունների: Ավելին, հոգևոր կենտրոններում տեղի ունեցող նորամուծությունները տարբեր ժամանակներում ու տարբեր պատճառներով հավասարաբար չեն հասել պատմական Հա-

[21] Սրվանձտյանց 1982, 371:
[22] Սարգիսեան 1864, 258:
[23] Ալիշան 1853, 49:

յաստանի բոլոր բնակավայրերին, այլ երբեմն հապաղումով, երբեմն աղավաղված և միջնորդված ձևով, երբեմն էլ առհասարակ չեն ընդունվել տեղի բնակչության և նույնիսկ տեղական հոգևոր հովիվների կողմից: Այդ բոլոր երևույթները միևնույն դավանանքի և հիմնական կանոնադրության ներսում հանգեցնում էին և այսօր էլ դեռ հանգեցնում են ձևերի այն մեծ բազմազանությանը, որի հետ XIX-XX դդ. ընթացքում գործնականում բախվել են կրոնին ու պաշտամունքին վերաբերող ազգագրական նյութերը գրանցած բոլոր հետազոտողները: Ահա այս տեղական դրսևորումները, որոնց, ինչպես արդարացիորեն նշել են նախորդ հետազոտողները[24], անխուսափելիորեն միախառնվել են զանազան նեղ-տեղական, օտարամուտ, արխաիկ-նախաքրիստոնեական պաշտամունքային տարրեր, ընդունված է բնորոշել ընդհանուր՝ «ժողովրդական քրիստոնեություն» հասկացությամբ:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ դիտարկենք սրբազան տարածքներ բնորոշող բանավոր ավանդված եզրույթները, այդ թվում՝ XIX-XX դդ. ազգագրական ուսումնասիրությունների ընթացքում գրանցված նյութը:

Լքված և ավերված վանքերի ուխտագնացությունները և տոները և ժողովրդական եզրույթները

«Եկեղեցի» և «վանք» հասկացությունների միջև եղած իմաստային տարբերության հարցը սոսկ լեզվաբանական չէ, քանի որ այն առնչվում է հասարակական կյանքի բազմաթիվ դրսևորումներին: Ինչպես նշվեց, տարբեր սրբավայրեր հասարակ մարդկանց համար տարբեր աստիճանի հասանելիություն ունեին՝ կապված սեռական, տարիքային և այլազան խտրականության հետ[25]: Փաստերը վկայում են, որ այդ սահմանափակումները

[24] Այսպես, Ա. Սահակյանը, ստորաբաժանելով համընդհանուր վարդապետության տարբերայնացումը երկու մակարդակների՝ վարդապետական-պաշտոնական և ժողովրդական, վերջինի վերաբերյալ նշում է. «...ստորին խավերի թեմերի, վիճակների և հասարակ հավատացյալների այլ կոլեկտիվների շրջանակներում տվյալ եկեղեցու քարոզած վարդապետությունը ավանդաբար յուրացվում էր կոլեկտիվ մտածողության օրենքներին համապատասխան» (Սահակյան 2014, 5):

[25] Այսպես, Վանա լճի Լիմ և Կտուց կղզիների վրա գտնվող անապատ-վանքերի կանոնադրության համաձայն, «Կանանց և երիտասարդ մարդկանց, որոց երեսին դեռ ևս մազ չէ երեւացել, միանգամայն արգելուած է վանք մտնելու: Իսկ եթէ գտնուին այնպիսի անչափահաս անձինք, որ դեռ պատանեկութեան օրից կամենան ճգնութեան դիմել, այն ժամանակ դոքա մինչև իրանց մօրուք դուրս գալը պիտի բնակուին կղզւոյ նաւա-

սովորաբար խոչընդոտ չեն եղել ժողովրդական ուխտագնացությունների համար: Սակայն վանքի կամ անապատի կարգավիճակը չէ, որ որոշիչ է ժողովրդական ուխտավայր դառնալու կամ չդառնալու համար: Սովորաբար, որոշիչ գործոնները բոլորովին այլ են. տեղի հատուկ պատմական-հոգևոր նշանակություն, մասունքի առկայություն, հրաշալի իրադարձություն, բուժում կամ զավակ պարգևելու ընդունակության համբավ, սրբի գերեզման, սուրբ ջրի աղբյուր և այլն: Այդ գործոններն առանձին ուսումնասիրության նյութ են: Տարբերությունը պաշտոնական և ժողովրդական քրիստոնեության միջև այն է, որ ժողովրդի համար «վանք» բնորոշումը վերաբերում է հենց ուխտավայրին, այնպիսի սրբատեղիի, որը առավել հաճախ գտնվում է բնակավայրից դուրս, և որտեղ այցելում են հատուկ նպատակներով, հաճախ նաև՝ հատուկ ժամանակ:

Գ. Սրվանձտյանցի սահմանումը գրեթե չի տարբերվում բառարաններում նշվածներից և ընդգծում է վանքի՝ բնակության վայր լինելը. «Վանք, մեր լեզվին մեջը՝ տուն, բնակություն, իջևան կամ օթևան, հիվանդանոց, աղոթավորաց տուն, ծածկույթով հարկ մը, թաղ մը, ավան մը – կամ որ նույն էր վան, քիչ մի ևս հառաջ երթամ ըսելու թե՝ քաղաք մը...»[26]: Այսինքն, Սրվանձտյանցը վերադառնում է Սահակ Պարթևի հաստատած նշանակությանը: Կ. Սրապյանը, խոսելով Բասենի գյուղացիների գործածած «վանք» բառի վերաբերյալ, շեշտում է դրա իմաստային տարբերությունը իր գործածածից. «Այս գաւառի ժողովուրդն առ հասարակ վանք ասելով կիմանան սրբատաշ քարերով շինուած եկեղեցիներն, իսկ մեք կը զանազանեմք այս տեղ կամ արձանագրութենէն տեղեկանալով, կամ շուրջը գտնուած միաբանական կացարաններու աւերակներէն նկատելով»[27]: Այսպիսով, ինչպես բասենցիները, այնպես էլ Կ. Սրապյանը հենվում էին միանգամայն սուբյեկտիվ չափանիշների, այն է՝ շինության առկայության և դրա նյութի մշակվածության, բնակության կացարանների առկայության կամ վիմագրական տեղեկության վրա: Հաշվի առնելով, որ արձանագրությունները ևս թողնում են տարբեր ծագումով և բառի մեջ տարբեր

հանգստի մօտ եղած առանձին շինութեան մէջ, որ Դրսի տուն է անուանվում». [Մկо 1882, 313)]: Հմմտ. մինչև Մաշտոց Հայրապետը և Մարիամ Բագրատունին կանանց՝ Սևանի կղզի ոտք դնելու արգելքը (տե՛ս Սմբատեանց 1895, 113):

[26] Սրվանձտյանց 1978, 388:

[27] Սրապեան 1879, 380:

իմաստ դնող մարդիկ, դրանցում հանդիպող բառը միանշանակ պարզություն չի մտցնում խնդրի մեջ:

Առավել կարևորն այստեղ այն է, որ սրբավայրը կարող է «վանք» կոչվել նաև այն դեպքում, երբ այն երբևէ ծառայել է որպես վանական միաբանության բնակավայր, բայց հետո դադարել է այդպիսին լինելուց. ամայացել, լքվել, ավերակի է վերածվել, դարձվել է պահեստ, գոմ և այլն: Այդուհանդերձ, միաբանության բացակայությունը կարծես թե որևէ կերպ չի անդրադառնում վանքի՝ որպես սուրբ տեղ ընկալվելու վրա՝ հավատացյալ աշխարհականների տեսանկյունից, և նրանք շարունակում են որոշակի ժամկետներում այցելել երբեմնի վանքի տարածքը՝ ուխտագնացություն կատարելով: Ավելին, լքված վանքը, դրա ավերակների քարերը կարող են վերածվել ժամասացությունների և կրոնական հավաքատեղիի, եկեղեցու համար շինանյութ դառնալ:

Անգլիացի ճանապարհորդ Ու. Աուսլին այդպիսի երևույթ է նկարագրում Հին Ջուղայում: Այստեղ «Քելիսիա Լատինի» կոչվող պարզունակ մի մատուռ (*գումբեդ*) կար, որի մեջ ժողովուրդը հավաքել էր ավերված եկեղեցու քարաբեկորները և կիրառում էր մատուռը իր ծիսական կարիքները հոգալու համար[28]:

Այս երևույթն առկա է և կարող է ուսումնասիրվել նաև մեր օրերում: Ծիսական որոշակի «ինքնասպասարկումով» թե պատարագ մատուցելու, մատաղի օրհնություն կատարելու համար քահանա հրավիրելով, բայց Հայաստանի Հանրապետության բազմաթիվ վայրերում մեր օրերում, ինչպես և Խորհրդային Միության տարիներին, կատարվում են մեծ թվով ուխտագնացություններ դեպի չգործող, ավեր վանքեր՝ անկախ այն բանից, թե ուխտավորներին հայտնի՞ է արդյոք որևէ պատմական տեղեկություն այդ վայրում եղած վանքի գործող լինելու մասին թե՞ ոչ: Եվ եթե ուխտի գնացող բնակչությունը, օրինակ, Արդվիի Ս. Հովհաննես կամ Արզականի Նեղուցի Ս. Աստվածածին վանքերի վերաբերյալ որոշակի տեղեկույթ ունի, նույնը չի կարելի ասել Վարդենիկի Իշխանավանքի, Մեղրաձորի Թեժառույքի կամ Ձնջոլուի Ս. Կարապետի մասին: Ըստ էության, Խորհրդային Միությունը վերացրել էր անապատականության մշակույթը և գրեթե ոչնչացրել գործող վանքերը (բացառությամբ Ս. Էջմիածնի), այնպես որ արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ժողովրդի մեջ «վանք»

[28] Ouseley 1823, 432.

հասկացությունը բնորոշում էր ավելի շուտ բնակավայրից դուրս գտնվող սրբատեղի-ավերակը, իսկ համընդհանուր կրթությունը հետզհետե ավելի էր արմատավորում «մի քանի պաշտամունքային շինություններից կազմված պատմամշակութային հուշարձան» իմաստը, որը պարադոքսային կերպով չկա որևէ բացատրական բառարանում:

Տեղահանություն, ցեղասպանություն և աթեիստական հակակրոնական կամպանիա վերապրած ժողովուրդն, այդուհանդերձ, շարունակում է այս եղանակով պահպանել այն ավանդույթը, որի վերաբերյալ հստակ ցուցումներ են պարունակում Սահակ Պարթևի Կանոնները:

Այս առումով հետաքրքիր է տեղահանված, բնակավայրը ստիպողաբար լքած բնակչության վերաբերմունքը նոր հայրենիքի սրբատեղիների հանդեպ: Յուրացնելով նախկինում հայ բնակչություն չունեցող տարածքները՝ նրանք անմիջապես հայտնաբերում էին որևէ օբյեկտ, որը հեշտորեն նույնականացնում էին որպես սրբավայր և սկսում էին այն կոչել «վանք» կամ «ուխտավայր» նշանակությունն ունեցող որևէ այլ բառով: Այդ օբյեկտի շուրջ ձևավորվում էր ուխտագնացության ավանդույթը:

Այս դեպքում «վանք» հասկացությունն առաջին հերթին պետք է հասկանալ որպես բնակավայրից դուրս, գյուղապատկան արոտավայրերի կամ նույնիսկ ցանքատարածքների սահմաններում գտնվող սրբազան օբյեկտ,- շինություն, փլատակ, անգամ բնական որևէ օբյեկտ, օրինակ, ժայռաբեկոր, ծառ կամ աղբյուր, - որտեղ պաշտամունքի և հանրային ճաշկերույթի համար սահմանված հատուկ ժամկետներում հավաքվում է տվյալ գյուղի կամ մի քանի գյուղերի բնակչության որոշակի մասը, և որի հետ կապվում են հրաշքի, բուժիչ զորության կամ հնում կատարված որևէ արտասովոր իրադարձության մասին ավանդական զրույցներ կամ երգ-վիպասացություններ[29]: Այդ սրբազան օբյեկտը կամ վայրը նշանագրված է որպես հավատացյալների ընդհանրության հավաստման, նվիրական նպատակներով հավաքվելու վայր, որտեղ կատարվող նվազագույն պաշտամունքը, թերևս, մոմավառությունն է և աղոթքը:

[29] Հազվագյուտ դեպքերում ուխտավայր-հավաքատեղի կարող է դառնալ ուղղակի հանրային հավաքույթի համար հարմար բնական որևէ տարածք՝ անկախ այդտեղ իբրև սրբություն նույնականացվող օբյեկտի առկայությունից: Այս պարագայում նորագյուտ սրբազան օբյեկտը կարող է հետագայում կցվել կամ չկցվել հանգստավայրին:

Հայտնաբերված փլատակ-սրբատեղիները երբեմն անուններ չունեն, և միայն մասնագետների հատուկ ուսումնասիրությունները՝ վիմագրության ընթերցումները, ձեռագիր աղբյուրների քննությունը, կարող է պարզություն մտցնել վանքի պատմության հարցում: Այս դեպքերում հավատացյալ ժողովուրդը այդ սրբատեղիները կոչում է միանգամայն պատահական անուններով. Ձորի վանք, Վերի վանք, Դարի սուրբ (ըստ տեղադրության)[30], Կարմիր վանք, Սպիտակ վանք (ըստ քարի գույնի), Խարաբա, Ավեր, Խոնարհված վանք և այլն: Դրանք կարող են կոչվել նաև Թուխ Մանուկ, Նահատակ, Ճգնավոր, Ծաղկավանք, Ամենափրկիչ և այլ՝ որոշակիորեն չեզոք անուններով, իսկ հետո դրանց շուրջ ձևավորվում են համապատասխան ավանդազրույցներ, որոնք հիմնավորում են այդ անունները[31]: Վերջինները վկայում են զանազան պատճառներով ընդհատված ավանդույթի մասին:

Հաճախ էլ ժողովրդին հայտնի են վանքերի անունները, բայց ոչ՝ այդ անունների իմաստը: Այս պարագայում կարելի է հատուկ առանձնացնել անվանաձևերը, որոնք կտրվել են իրենց ավանդական արմատներից և ստացել նոր բացատրություններ կամ ժողովրդական ստուգաբանություններ: Առավել վառ օրինակները կապված են երբեմնի մասունքների անուններով կոչված վանքերի հետ: Այսպես, Հրազդան քաղաքի հարևանությամբ գտնվող Աղբյուրակ (Ախպարա) գյուղի ամենասիրված ուխտատեղին է Ս. Աջ վանքը: Գլխավորապես, Պարսկահայքից այստեղ տեղափոխված բնակչությունը ինչ-ինչ ճանապարհներով տեղեկացել է ավերակ վանքի այդ անվան մասին: Հավանաբար, երբևէ այդտեղ պահվել է ինչ-որ սրբի մասունք՝ ամփոփված արծաթե աջի մեջ: Սակայն այդ սրբավայրի վերաբերյալ ներկայումս հայտնի միակ ավանդազրույցը պատմում է ներգաղթած ժողովրդի մասին, որի՝ դեպի նոր բնակավայրը տանող ճանապարհի հենց աջ կողմում է գտնվել վանքը, և դրա անունն էլ բացատրվում է որպես ճանապարհից աջ գտնվող վանք[32]: Նույնը վերաբերում է Առինջի Գետար-

[30] Այսպիսին է, օրինակ, Շիրակի Մեծ Սեպասար գյուղի Դարի սուրբը, որին ուխտ են գնում գյուղի կաթոլիկ հայ բնակիչները (Սիմոնյան, Հովհաննիսյան, Ավետիսյան, ԴԱՆ 2017, Շիրակ):

[31] Վառ օրինակ է Թեժառույք վանքի Թուխ Մանուկ անվանումը՝ հույն շինարարների ու քրիստոնեություն ընդունած հրեա երեխաների նահատակության մասին իր պատմություններով (Հովհաննիսյան 2016, 75-76, Հակոբյան, Լաչինյան, ԴԱՆ 2014, Մեղրաձոր):

[32] Սիմոնյան, Հովհաննիսյան, Գրիգորյան ԴԱՆ 2017, Աղբյուրակ: Հայտնել է Կարեն Աթանեսյանը, ծնվ. 1977 թ.: Նույնը պատմեցին նաև այլ բնակիչներ:

գել վանքին (Ձագավանքին), որը ևս մինչև վերջերս ավերված էր: Գետարգել անվանումն, ինչպես հայտնի է, կապված է այդ վանքում պահված *Գետարգել* Ս. Նշանի հետ[33]: Գյուղի ներկայիս բնակչությունը, սակայն, այդ անվանումը կապում է մեկ այլ պատմության հետ, որի համաձայն, երբ այլակրոն թշնամիները (արաբները, լեզգիները կամ թուրքերը) հարձակվել են գյուղի վրա, վանքի հարևանությամբ հոսող գետը հանկարծ բարձրացել է, հայերը հասցրել են անցնել գետի մյուս ափը, իսկ վրա հասած թուրքերը խեղդվել են ջրում կամ ուղղակի չեն կարողացել անցնել գետը: Այդպես գետն արգելել է Առինջի զավթումը[34]: Վայոց ձորի Շատին գյուղի նախկին վայրից ոչ հեռու, Անգեղձոր, կամ Ընգղաձոր վայրում, հին գերեզմանոցի հարևանությամբ գտնվող Նահատակի մատուռի վերաբերյալ Քաջբերունին հայտնում է, թե հասանգյուղցիները (Հասանի գյուղ, ներկայումս՝ Շատին) այն պարզապես «մատուռ» են անվանում, մինչդեռ այնազուրցիները (Այնազուր, ներկայումս՝ Աղավնաձոր) «կասեն Ընգեղի մատուռ»: Միաժամանակ պատմում են, թե երկու լեգենդ այդ վայրի՝ սրբավայր դառնալու մասին, որոնցից մեկը վերաբերում է քրիստոնեություն ընդունած և ցեղակիցներից նահատակված թուրք երիտասարդի, իսկ մյուսը՝ հետապնդող տաճիկների ձեռքից ազատվելու նպատակով ինքնասպան եղած մի աղջկա գերեզմանի մասին[35]: Սակայն Ընգեղի անվան միջոցով Քաջբերունին մատուռը կապում Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Մարտիրե զորավարի և նրա 300 զինվորների՝ պարսից սրից ընկնելու պատմության հետ[36]: Մեր գիտարշավի ընթացքում լսեցինք պատմություններ արդեն միայն պարսից զորքից հետապնդված ու մեծ ճակատամարտում զոհված Վարդան Մամիկոնյանի զինվորների նահատակության մասին, ընդ որում, ոչ միայն Անգղաձորի Նահատակ մատուռի, այլև՝ գյուղի ներկայիս տարածքում

[33] Ըստ Վարդան Աշխարհագրի, «...Ձագավանքն ի Կոտէս է, ուր կայ Գետարգել սուրբ Նշանն» [Վարդան վարդապետ, Աշխարհացոյց (Բառգիրք Հայոց արարեալ ի Երեմիայ վարդապետէ 1728, 509): Գետարգել Ս. Նշանի՝ Պետրոս Գետադարձի անվան և Ձագավանքի հետ կապող գրավոր ավանդույթի վերլուծությունը տե՛ս Սահակյան Ա. 2014, 117-135:

[34] Սիմոնյան, Հովհաննիսյան, ԴԱՆ 2016, Առինջ: Պատմել է Առինջի բնակիչ հոգեբան Մադլենա Առաքելյանը: Նույն պատմությունը արեցին գյուղի այլ բնակիչներ ևս: Պետք է նշել, որ դեռևս 30 տարի առաջ բնակիչների հիշատակած վայրում իսկապես գետ է հոսել, որը հետո փոխել է իր հունը:

[35] Քաջբերունի 2000, 156:

[36] Ստեփանոս Օրբելյան 1986, 106:

գտնվող Թաք ինգյոզ (ընկույզ) սրբավայրի վերաբերյալ[37]: Այսպիսով, ժողովրդի՝ պատմական աղբյուրներին ծանոթ լինելը ներազդել է ավանդության վրա:

Ընդսմին, չի բացառվում, որ «Նահատակ», «Ճգնավոր» կոչվող որոշ ավեր վանքեր, մատուռներ ու քարանձավներ հենց անապատական-ճգնավորների հետ աշխարհականների շփման, նրանց՝ որպես սուրբ անձանց ընկալելու հիշատակն են, հատկապես եթե դրանք գտնվում են անապատ-մենաստաններով հարուստ Սյունիքում և Արցախում:

Ուխտավայր և տոն

Ս. Սահակ Պարթևի Կանոնների ՇԹԾ կետը վերաբերում է հատկապես վանքերում կատարվող տոներին: Քանի որ Ս. Սահակի օրոք գործում էր հին հայկական տոմարը, զարմանալի չէ, որ առաջին տոնը, որը մեծ կաթողիկոսը հրահանգում է նշել վանքերում, Ս. Հովհաննես Մկրտչի տոնն է, որի ժամկետը Ս. Գրիգոր Լուսավորչի հաստատած կանոնի համաձայն, համընկնում էր տարվա առաջին ամսի՝ նավասարդի սկզբի հետ[38]. «Տաւն սրբոյն Յովհաննու Մկրտչի եւ վկայի, զոր նախակարգեաց առաքեալն եւ խոստովանողն Քրիստոսի եւ հայր վերստին նորոգման բոլոր Հայաստան աշխարհիս Գրիգորիոս՝ ի վանս, զի ուխտադրութեան պահաւք հաստատեցաւ: Եւ որ ինչ միանգամ այլ ինչ ուխտք են՝ ի վանս կատարեսցին, եւ շաբաթք, եւ պահք, եւ ծոմք, զի ուխտից են կատարմունք, զի ուխտաւորեալ են բնակիչք, շնորհիւ ուխտին կերակրեսցին: Եւ տաւն ամենայն մարտիրոսաց զոր մատուռն կոչեմք»[39]:

---

[37] Սիմոնյան, Հովհաննիսյան, ԴԱՆ 2018, Շատին, բանասաց՝ Վանուշ Մաթևոսյան, ծնվ. 1955 թ.: Եթե Ընգղաձորի Նահատակ մատուռը XIX դարում գյուղացիների ուժերով վերականգնած շինություն է, որի մեջ պահպանվել են քառակողմ կոթող և IX դ. խաչքար, ապա Թաք ինգյոզ սրբավայրը վաղքրիստոնեական եկեղեցի է, միանավ բազիլիկ, դրա մեջտեղում միևնույն արմատից չորս բնով ընկուզենի է աճում, որը սուրբ է համարվում: Այլ գյուղացիներ ևս հաստատեցին, որ, ըստ ավանդության, այստեղ թաղված են Վարդան Մամիկոնյանի առնվազն 30 զինվորները, իսկ զորավարի աճյունը գտնվում է Նահատակի մատուռում:

[38] Ագաթանգեղոս 1977, 137:

[39] Կանոնագիրք հայոց 1964, 397:

«Մատուռն» անունը, որ Սահակ Պարթևը տալիս է բոլոր նահատակներին նվիրված տոնին[40], այն դնելով Ս. Կարապետի տոնից հետո, իր իմաստով և էությամբ նույնն է, ինչ Աշխարհամատրան կիրակին, որ հետագա դարերում ի հայտ է գալիս որպես Զատկին հաջորդող կիրակիներից մեկը, հուշում է ևս մեկ բառիմաստ՝ կապված ուխտավայր ծառայող սրբատեղիների հետ: Այդ բառը, որը, ինչպես նշվեց վերևում, մինչ այդ նա գործածում է որպես եկեղեցու հոմանիշ, իր իմաստով կապված է մարտիրոսների հետ, ինչից կարող ենք եզրակացնել, որ հնում այն ոչ այնքան ժողովարան-եկեղեցու (ժողովրդական բնութագրությամբ՝ «**ժամ**», «ժամ(ա)տուն», այսինքն, վայր, որտեղ կատարվում են կանոնավոր ժամերգությունները) հոմանիշն էր, որքան վկայարանի, որտեղ կամ թաղված էր որևէ նահատակի մարմինը, կամ պահվում էր որևէ սրբի մասունք[41]:

Զարգացնելով այս միտքը և դիտարկելով «մատուռ» հասկացությունն ըստ իմաստային այն երանգի, որը դրա մեջ դնում է ժողովուրդը, կարող ենք գոնե մոտավոր կերպով պատկերացնել այն ուղին, որն անցել է այդ բառը՝ μαρτύριον-վկայարանից մինչև անհայտ նահատակի գերեզման և փոքր, առանց խորանի, վեմ-քարի ու սեղանի եկեղեցի, ընդ որում, «նահատակ» բառն ինքը կարող էր բնորոշել ոչ միայն հանուն քրիստոնեական հավատքի մարտիրոսված անձին, այլև առհասարակ անմեղ զոհին: Մատուռն այսու կարող է լինել ինչպես անվանական, նվիրված այս

---

[40] Նույն իմաստով «մատուռնն» բառն օգտագործված է Նիկիայի Ե կանոնի մեջ. տե՛ս Կանոնագիրք հայոց 1964, 120: Բառի այսպիսի մեկնությունը տե՛ս նաև Աճառյան 1977, 271:

[41] Տե՛ս Օրմանյան 1992, 101-102: Պետք չէ մոռանալ, սակայն, որ սրբերի մասունքներ կարող էին պահվել նաև ծխական որոշ եկեղեցիներում, դրանց կից կարող են գտնվել նույնիսկ առանձին վկայարան-մատուռներ: Այդպիսին է, օրինակ, Երևանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին՝ Ս. Անանիայի վկայարանով: Ուխտատեղի կարող էր լինել նաև այնպիսի ժամ-եկեղեցին, որում պահվում էին մասունքի դեր կատարող խորհրդանշական օբյեկտներ (օրինակ, Ալափարսի Ս. Վարդանը՝ սրբի սիրտը համարվող կամ նրա նահատակության արյան հետքերը կրող օբսիդիան քարով) կամ հին, կորուսյալ վանքի հիշատակը հանդիսացող գյուղական եկեղեցիներ (օրինակ, Արարատ գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, որը կառուցվել է ի հիշատակ Ակոռիի Ս. Հակոբ վանքի): Մյուս կողմից, ինչպես ցույց են տալիս դաշտային հետազոտությունները, լքված գյուղի ժամը հետագայում կարող է դառնալ ուխտատեղի-վանք: Այս է պատճառը, որ երբեմն երկու հասկացությունները կիրառվում են համատեղ և նույնիսկ շփոթվում են: Այսպես, Վայոց ձորի Աղավնաձոր գյուղից բավական հեռու, լքված գյուղատեղիի տարածքում գտնվող բազիլիկ եկեղեցիով սրբատեղին կարող է կոչվել և՛ *Վանքի դուռ,* և՛ *Ժամի դուռ* հավասարապես:

կամ այն մարտիրոս-սրբին, այնպես էլ անանուն: Ամեն դեպքում, եթե Ար-ցախում գերապատվություն է տրվում «նահատակ» հասկացությանը, ապա, օրինակ, Շիրակում գերակայում է «մատուռ» եզրույթը: Հասկանալի է, որ ինչպես «եկեղեցին», այնպես էլ «մատուռը» կամ «նահատակը» ճարտարապետական շինության տեսակի իմաստը չունեն[42]: Դրանցից յուրաքանչյուրը կարող է լինել շքեղ կամ համեստ, կարող է նույնիսկ բացօթյա հուշարձանի կամ առհասարակ բնական օբյեկտի տեսք ունենալ: Այսպես, Շիրակի Մեծ Մանթաշ գյուղի, թերևս, ամենասիրված ուխտատեղին Թուխ Մատուռն է, որը մինչև մի քանի տարի առաջ ոչ մեծ շինության մեջ ամփոփվելը ոչ այլ ինչ էր, քան բացօթյա խաչքարախումբ[43]: Ժողովրդի կողմից «վկայարան» բառի կիրառությունը մեր հետազոտությունների ընթացքում չի գրանցվել: Ընդհակառակը, «մատուռ» հասկացությունը՝ «փոքր եկեղեցի» կամ «սրբավայրում կառուցված փակ տաղավար» իմաստով միանգամայն տարածված է ՀՀ բոլոր մարզերում:

Վանքում նշվող տոների շարքում Սահակ Պարթևը հիշատակում է Վարդավառը, Հայտնությունն իր քառասնորդքով (40-օրյա պահքով), Տյառնընդառաջը, Առաջավոր պահքի ավարտը (կատարումն), Միջինքը, Ղազարու տոնը, Ավագ (Զատկի) հինգշաբթին, Զատկի երկուշաբթին, Համբարձումը (տաւն Ամբառնելոյ Տեառն) և Վախճանելոց տոնը՝ հրոտից ամսի վերջին[44]: Վերջին տոնի նույնականացումը դժվարություն է առաջացնում, քանի որ իր զուգահեռը չունի ավելի ուշ շրջանի տոների շարքում: Ամենայն հավանականությամբ, այն ավելյաց օրերով բաժանված է Ս. Կա-

[42] «Այն տաճարը, որի հիմքերը օրհնված ու օծված քարերով են նվիրագործված, եկեղեցի է, իսկ նրանք, որի հիմքերն օրհնված և օծված չեն, այլ ուրիշ շենքերից են վերածվել և ժամանակավոր իբրև եկեղեցի են գործածվում, մատուռ են կոչվում» (Օրմանյան 1992, 102): Այսպիսով, ըստ Օրմանյանի, եկեղեցին հիմնարկեքի հատուկ ծեսով կառուցված տաճարն է և ոչ՝ գերեզմանի, մասունքի վրա կամ կամայականորեն կառուցված թեկուզև սրբություն հանդիսացող շինությունը: Սակայն ժողովուրդը կարող է իբրև մատուռ ճանաչել նաև հին, երբեմնի, հավանաբար, հատուկ հիմնարկեքի ծեսով կառուցված եկեղեցին, եթե չի պահպանվել դրա բեմը, և դրանում հնարավոր չէ պատարագ մատուցել:

[43] Սիմոնյան, Հովհաննիսյան, Ավետիսյան, ԴԱՆ 2016, Շիրակ, Մեծ Մանթաշ:

[44] Կանոնագիրք հայոց 1964, 398:

ռապետի տոնից, սակայն ո՛չ տոնի խորհուրդը, ո՛չ նախապատմությունը կամ բնորոշ ծիսակարգը ներկայումս հայտնի չեն[45]:

Բացի վանքերի տոներից, Ս. Սահակը նշում է նաև ամուսնացյալ քահանաների ծառայությամբ կատարվողները. Ավագ շաբաթը (շաբաթն Զատկի) և Զատիկը, երկրորդ Զատիկը և դրան հաջորդող բոլոր կիրակիները մինչև Հոգեգալուստ (Պենտեկոստե), Ս. Աստվածածնի տոնը և Վարդավառը՝ բացի մատաղից, որը վանքի տոնի ծիսահամալիրի մեջ է, ինչպես նաև Բարեկենդանը, Ծաղկազարդը («Ողոգոմեանն մեծ, որ թարգմանի բարեբանեալ աւր», հուն. εὐλογημένεος) և առաքյալներին ու մարգարեներին նվիրված տոները[46]: Ինչպես տեսնում ենք, կա որոշակի տարբերություն Սահակ Պարթևի հաստատած՝ վանքում կատարվող տոների և ժողովրդական ուխտագնացությունների առավել տարածված ժամկետների միջև: XIX-XXI դդ. ազգագրական նյութերը գրեթե չունեն հիշատակություններ առ այն, որ ժողովուրդը դեպի վանքեր կամ բնակավայրերից դուրս գտնվող այլ սրբավայրեր է գնացել, օրինակ, Ս. Սարգսի տոնին[47] (կամ Առաջավորաց պահքի ավարտին), Տեառնընդառաջին, Միջինքին կամ Ղազարի հարության օրը: Ս. Սարգսի տոնի վերաբերյալ խնուսցիներն անգամ ասացվածք ունեին. «Ինչ օր կուզես՝ դուրս էղի, Ս. Սարգսի շաբաթ գիշեր՝ ներս էղի»[48]: Ընդհակառակը, Ս. Աստվածածնի տոնը (Խաղող-օրհնեքը) գրեթե համատարած նշվել և նշվում է ուխտագնացությամբ (ներկայումս՝ Սոլակի Մայրավանքի, Տեղերի Ս. Աստվածածնի, Արզականի Նեղուցի Ս. Աստվածածնի, Մարտիրոսի Ս. Աստվածածին-Մարտիրոսաց վանքի ուխտագնացությունները և այլն), ինչպես և ուխտագնացության

---

[45] Հնարավոր է, որ վաղ միջնադարում գոյություն է ունեցել հանգուցյալների հիշատակին նվիրված մի քանի օր տևող տոն, որի նախատիպն է զրադաշտականների «ֆրավաշիների» տոնը: Այս վերջինը կատարվում էր Ֆերվարտական կամ Ֆերվերդաջան (ավելյաց) ամսին, որն անմիջապես հաջորդում էր Աբան ամսին: Հմմտ. Абурейхан Бируни 1957, 236: Հետագայում, ինչպես հայտնի է, հանգուցյալների հիշատակի օրերը բաժանվեցին տարվա հինգ տաղավար տոների մեռելոցների վրա: Այս վարկածը, սակայն, հավելյալ փաստարկման կարիք ունի:

[46] Կանոնագիրք հայոց 1964, 400-401:

[47] Ներկայումս այդպիսի ուխտագնացություններ հայտնի են, օրինակ, Ուշիի Ս. Սարգիս վանքի և Գեղարքունիքի Ծաղկունք գյուղի Ս. Սարգիս եկեղեցու դեպքերում: Ընդ որում, հնում Ծաղկունքի Ս. Սարգսի ուխտի օրն էր Համբարձման տոնը (Անապատ Սևանայ 1896, 172): Վարդաբլուրի Ս. Սարգսի և Դովեղի Ս. Սարգսի ուխտագնացությունները կատարվել և կատարվում են Վարդավառի օրը:

[48] Մելիքեան 1957, 409:

սիրված օրեր են Զատկին հաջորդող հատկապես առաջին երկու կիրակիները: Հասկանալի պատճառով Ս. Սահակի կանոնների մեջ չի հիշատակվում ուխտագնացությամբ նշվող ևս մեկ սիրված տոն՝ Խաչվերացը, որը հաստատվել է մոտ մեկ դար անց միայն: Ս. Կարապետի տոնի օրինակով քիչ չեն նաև ուխտատեղիներում նշվող սրբի օրերը[49]: Հիմնական սկզբունքը, այդուհանդերձ, պահպանվել է. տոների մի մասը ենթադրում է հավատացյալների այցելությունը ծխական եկեղեցի, մյուսը՝ ուխտագնացություն բնակավայրից դուրս գտնվող վանքեր: Հետևաբար, ուխտագնացության ավանդույթը ամրագրված է վանքերին ու որոշակի տոնական օրերին: Հավանաբար, հնուց է ավանդված նաև տվյալ սրբի տոնը նշելը այդ սրբին նվիրված սուրբ տեղերում՝ լինեն դրանք վանքեր, մատուռներ թե ժամեկեղեցիներ, թեև Ս. Սահակի Կանոններում այդպիսի ցուցում չկա:

Հին ուխտավայրի այցելության համար կարող են ընտրվել նոր տոների ժամկետներ՝ նոյեմբերի 7 (Հոռոմայր[50], Շատիվանք[51]), մայիսի 1 (Երիցավանք[52]) և այլն: Պետք է հաշվի առնել, սակայն, որ խորհրդային այդ տոների ժամկետները բավական մոտ են անասնապահական գործունեության կարևոր շրջաններին, և նախքան դրանց հաստատումը ևս այդ ժամկետներին եղել են ուխտագնացությունների ամսաթվեր: Այսպես, մայիսի 1-ը սասունցիների համար Դավթի բերդի ուխտագնացության օրն էր[53]: Արմաշում ևս մայիսի 1-ին ընդունված էր ուխտագնացություն կատարել դեպի Ս. Աստվածածնի ծառը[54]: Նոյեմբերն, իր հերթին, ժամկետով մոտ է նախրաթողին և աշնանային Նավասարդին:

Ս. Պարթևը չի կանոնակարգել ուխտագնացության բոլոր արարողությունները, սակայն ուղղակի ցուցումներ ունի առնվազն դրանցից կա-

---

[49] Այդ թվում՝ Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Գևորգի (օրինակ՝ Մուղնուխտը), Ս. Հակոբ Մծբնեցու, Ս. Ստեփանոսի և այլն:

[50] Ուխտագնացություն կատարողները, կրողները մեծ մասամբ ժխտում են Հոռոմայրի ուխտագնացության ժամկետի առնչությունը Հոկտեմբերյան հեղափոխության տոնի ժամկետի հետ՝ հավաստելով, որ իրենց պապերը մինչև խորհրդային կարգերը ևս այցելել են վանքը նոյեմբերի 7-ին (Սիմոնյան ԴԱՆ 2015, Լոռի), իրարից անկախ հայտնել են Այգեհատ և Օձուն գյուղերի բնակիչները:

[51] Բնակիչներն ընդունում են, որ անշարժ ամսաթիվը՝ այլ ոչ՝ որևէ կիրակի օր, կապված է Խորհրդային տարիներին նոյեմբերի 7-ի՝ տոն և ոչ աշխատանքային օր լինելու հետ:

[52] Սիմոնյան, Հակոբյան ԴԱՆ 2017, Կապան:

[53] Կարապետյան արխիվ, թ. 25:

[54] Դուրեան 1933, 109:

րևորագույնի՝ մատաղի և հանրային ճաշկերույթի վերաբերյալ: Ըստ նրա հրահանգի՝ ուխտատեղի է տարվում «նախանը», այսինքն, երախայրիքը, նուբարը, առաջին պտուղը, որն ուտում են տեղի ծառայող-պաշտոնյաները և հյուրերը[55]: Մասնավոր ագապը (սիրաճաշը) ենթադրում է զոհաբերված կենդանու կաշվի կեսը և երկու մաս ճրագուն նվիրաբերել վանքին, իսկ քահանաներին տալ ամբողջ ճրագուն կամ, ոչխարի դեպքում՝ ամբողջ մորթին և դմակը: Ագապից օգտվում են նաև բոլոր պանդուխտները, աղքատները, ծառայողները և մյուս հավատացյալները. դա վերաբերում է նաև տոնի նոր հացին ու ապաշխարության հացին, որը քառասնորդաց շրջանում (Մեծ Պահքի ընթացքում) նվիրաբերում են շաբաթ կամ կիրակի օրերին[56]: Վերջին ցուցումը վերաբերում է Մեծ Պահքի ընթացքում, առավել հաճախ՝ Ավագ ուրբաթ օրը աղքատներին ու անցորդներին բաժանվող հացին: Այս ավանդույթը ևս պահպանվել է ժողովրդի մեջ: Հացի զոհաբերությունը կոչվում է **չալաքի**[57] և կարող է կատարվել ինչպես հանգուցյալների հիշատակի համար, այնպես էլ երաշտի դեպքում, բայց կարող է կապվել կամ չկապվել սրբավայրերի հետ[58]:

«**Նախան**» բնորոշումը դաշտային հետազոտության միջոցով չի հայտնաբերվել: Մոռացված է նաև քրիստոնեական մատաղի «ագապե» հունարեն անվանումը: Ժողովրդի մեջ տարածված են նաև տոների՝ Ս. Հովհաննես Օձնեցու ժամանակից հայտնի անվանումները, իսկ ս. Սահակ Պարթևի նշածները գործածական չեն:

Սրբավայր-ուխտատեղի բնորոշող հասկացությունները ժողովրդի մեջ

Դաշտային ազգագրական հետազոտության և ազգագրական աղբյուրների ուսումնասիրության շնորհիվ պարզվել է, որ ազգագրական տարբեր շրջաններում XIX-XX դդ. հայ ժողովուրդն օգտագործել է սրբավայր-ուխտատեղիի իմաստն արտահայտող մի քանի բառեր, որոնցից առավել տարածվածն, անշուշտ, «**սուրբն**» է: Դա, ըստ էության, ընդհանուր անվանում է սրբատեղիի համար, և եթե անգամ տվյալ բնակավայրում գոյու-

[55] Կանոնագիրք հայոց 1964, 398:

[56] Կանոնագիրք հայոց 1964, 399-400:

[57] Աճառեան 1913, 874:

[58] Սիմոնյան, Հովհաննիսյան, ԴԱՆ 2015, Ռինդ, Սիմոնյան, Ավետիսյան, ԴԱՆ 2018, Արարատ գ.:

թյուն ունեն ուխտատեղիի ավանդական այլ անվանումներ, հետազոտողին բավական է բնակիչներին խնդրել ցույց տալ կամ թվել իրենց գյուղի «սրբերը», որպեսզի նրանք հասկանան, թե խոսքը ուխտատեղիների և ոչ, օրինակ, գործող եկեղեցիների կամ պատմական հուշարձանների մասին է: Միակ խնդրահարույց իմաստը այս դեպքում կարող է ունենալ «տան սուրբ»-ը, քանի որ նույնիսկ այն դեպքերում, երբ տանը պահվող որևէ սուրբ առարկա կամ տան, բակի տարածքում հայտնաբերված ինչ-որ զորություն չի դառնում ուխտագնացության առիթ, այն որակվում է միևնույն «սուրբ» բառով:

Քանակական առումով երկրորդն, անշուշտ, «**վանքն**» է, որ ներկայումս կարող է գործածվել ինչպես իր հին՝ «ուխտատեղի», այնպես էլ ժամանակակից ճարտարապետական իմաստով՝ որպես շեն վանական համալիր կամ դրա ավերակ: Իրականում հին ավերված վանքերի մի մասը այսօր էլ ուխտատեղի է, և ժողովրդական այնպիսի անվանումները, ինչպես Կարմիր վանք, Սպիտակ վանք, Գարավանք (Կարավանք, Սև վանք), Ղոշավանք, Վանքի բլեր և այլն, իսկապես մեծ մասամբ վերաբերում են պատմական, հաճախ՝ իրենց իսկական անուններով հայտնի վանքերին: Ըստ այդմ, բազմաթիվ ուխտավայրերի անունների մեջ «վանք» արմատի առկայությունը (Ծաղկավանք, Ձորի վանք, Վերի վանք, Խոնարհ վանք և այլն), գործածված երբևէ վանական համալիրներ չեղած, պաշտամունքային համեստ, հաճախ՝ ժողովրդական կառույցների կամ բնական ու մշակութային այլ օբյեկտների վերաբերյալ, վկայում է, որ այդ բառը կիրառվում է ուխտավայրի և ոչ՝ ճարտարապետական համալիրի իմաստով:

Սակայն ոչ պակաս կարևորություն ունեն այն ավելի հազվագյուտ դեպքերը, երբ գործածվում են այլ բառեր: Լոռու մի մասի գյուղերին բնորոշ է «**խեչ**» բառը[59]: Պետք է նշել, որ «**խաչ**» ձևով այս անվանումն առկա է նաև այլ վայրերում՝ Գեղարքունիքում, Կոտայքում, Արագածոտնում, Սյունիքում, Տավուշում, Արցախում: Այդ անվանումը առավել հաճախ կապված է տվյալ սրբավայրում առկա խաչքարի հետ, որը պաշտամունքի հիմնական օբյեկտն է. Կապույտ խաչ (Կոտայք, գ. Գեղաշեն), Թաք խաչ (Գեղարքունիք՝ Դդմաշեն և Ծաղկունք գյուղերի միջև), Կենաց խաչ (Արա-

[59] Սիմոնյան, ԴԱՆ 2014, Դսեղ, ԴԱՆ 2015, Օձուն, ԴԱՆ 2014, Վանաձոր-Անտառամուտ-Մղարթ:

գածոտն. գ. Արագած), Խաչեր (ք. Թալին. նույնն է, ինչ Ս. Սանդուխտ[60]) և այլն, սակայն քիչ չեն դեպքերը, երբ սրբավայրում կա խաչքար, բայց դրան «խաչ» կամ «խեչ» չեն անվանում, և ընդհակառակը՝ սրբավայրի անվանումը պարունակում է «խաչ» հասկացությունը, թեև այդ վայրում որևէ խաչքար չկա: Եթե Մեծ Սեպասար գյուղի կաթոլիկ հայոց Մանուկ խաչ մատուռը կապված է Տերունական Խաչի՝ Հռոմից բերված մասունքի հետ[61], ապա Արեգունի գյուղի Սատանախաչը արձանագիր տապանաքար է, Մեծ Թաղեր գյուղի Ծծախաչը (Շմանեք)՝ քարանձավ, Արարատ գյուղի Կապուտ խաչը՝ սրբավայր, որ կապույտ հազ է բուժում, բայց խաչքար չունի[62]:

Հետաքրքիր օրինակ է քեսաբցիների «**գեղեցիք**» բառը, որը բնորոշում է ժողովրդական սրբավայրը, ուխտատեղին: Այն «եկեղեցի» բառի բարբառային ձև է, և սա այն բացառիկ դեպքն է, երբ ժողովուրդը ուխտավայրը բնորոշում է «եկեղեցի» բառով[63]:

Հատկապես Աշտարակի շրջակայքի, Սյունիքի գյուղերի համար ոչ պակաս բնորոշ է «**ճգնավոր**» հասկացությունը, որը վերաբերում է գլխավորապես անմատչելի քարանձավային սրբավայրերին[64]: Այս տիպի սրբավայրերը և նույն անվանումը կրող, բայց ոչ քարանձավային սրբատեղիները արժանի են առանձին ուսումնասիրության[65]:

Սպիտակի Լեռնանցք գյուղի բնակիչները գերադասում են «**ուխտ**» բառը[66]: Քանի որ «ուխտ» հասկացությունն ինքնին ունի մի քանի իմաստ, «ուխտել», «ուխտավայր» և «ուխտագնացություն» եզրույթները տարբեր

---

[60] Տեղական անվանումը հայտնել է մշակութաբան Ամալյա Դիլանյանը:

[61] Սիմոնյան, Հովհաննիսյան, ԴԱՆ 2017, Շիրակ:

[62] Սիմոնյան, Ավետիսյան, ԴԱՆ 2018, Արարատ գ.:

[63] Տեղեկության և բառի ստուգաբանության համար շնորհակալություն եմ հայտնում պ.գ.դ. Հակոբ Չոլաքյանին:

[64] Ուշագրավ է Արտաշավանի Ճգնավորը՝ դժվարամատչելի երկու սրահից բաղկացած քարանձավային սրբավայր՝ գյուղից ոչ հեռու. Սիմոնյան, Հովհաննիսյան, ԴԱՆ 2017, Արագածոտն:

[65] Ճգնավոր սրբավայրերի մի մասը կապվում է պատմական անձանց հետ, մյուսները՝ նախաքրիստոնեական պաշտամունքների փոխակերպումներ են: Դրանք կարող են ունենալ յուրահատուկ առասպելաբանություն: Հարթագյուղի (նախկին Ղալթաղչի) Ս. Ճգնավոր մատուռը կառուցված է հին տապանաքարի վրա և գտնվում է հին գերեզմանոցի տարածքում: Չի բացառվում, որ այդ տեղում եղել է հին եկեղեցի կամ մատուռ. Սիմոնյան, Հովհաննիսյան, ԴԱՆ 2017, Ստեփանավան-Սպիտակ:

[66] Սիմոնյան, Հովհաննիսյան, Ավետիսյան, ԴԱՆ, Ապարան-Լեռնանցք, 2016: Հայտնել է Հմայակ Մելոյանը, ծնվ. 1972 թ.:

իմաստներ են ձեռք բերել պատմության ընթացքում: Ինչպես նշում է Սահակ Պարթևը, «...եւ ամենայն իսկ ուխտի մանկանց չէ արժան ի շէնս աւթել, այլ ի վանս»[67]: Այսինքն, նաև այս դեպքում Լեռնանցքի բնակիչները պահպանել են այն հնամենի իմաստը, որը կապում է վանքը և կուսակրոն հոգևորականին:

Ինչպես նշվեց, մեծ տարածում ունի նաև **նահատակ** բնորոշումը փոքր, գլխավորապես, պաշտվող գերեզմանաքարեր ունեցող սրբավայրերի համար:

Այսպիսով, ժողովրդական եզրույթների մեջ դժվար չէ զանազանել գյուղի տարածքում գտնվող, պատարագի ու ժամերգության համար նախատեսված **եկեղեցին** կամ **ժամը** և տարբեր բառերով բնորոշվող ուխտատեղին: Ի տարբերություն կանոնավոր, գործող եկեղեցու, մնացած բոլոր սրբությունները կարող են բնորոշվել մի քանի հատուկ բառերով, որոնց իմաստը կապված չէ շինության առկայության կամ չափերի հետ, այլ արտահայտում է դրանց ոչ նյութական, կրոնական-հոգևոր նշանակությունը:

Վայրը և շինության առկայությունը: Այն հարցին, թե ի՞նչ դեր ունի կրոնական որևէ օբյեկտի գործող կամ չգործող լինելը ուխտավայր լինելու կամ չլինելու մեջ, կարելի է պատասխանել՝ համեմատելով քահանայական ծառայություններ մատուցող եկեղեցիները փլատակ, կանգուն, բայց ամայի և ուղղակի բնական օբյեկտ հանդիսացող սրբավայրերի հետ:

Ըստ էության, մեր հարցադրումը հարկ է բաժանել ավելի մանր խնդիրների, որոնք թույլ կտան պատկերը տեսնել ավելի մեծ մոտարկումով.

ա. ի՞նչ նշանակություն ունի սրբավայրի տեղադրությունը,

բ. ուխտագնացության շարունակականությանը խանգարու՞մ են եկեղեցու շենքի, ինչպես նաև քահանայի և նրա մատուցած ծառայության բացակայությունը և ուխտավայրի հեռավորությունը:

Սրբավայրի տեղադրության խնդիրը կարևոր է մի քանի առումներով: Բնակավայրի ներսում գործող եկեղեցին ունի մի շարք վառ արտահայտված գործառույթներ, որոնք բնորոշ չեն հեռավոր սրբավայրին: Այսպես, պարբերական՝ կանոնավոր ծառայությունը, որը որոշակի շաբաթական ռիթմի մեջ է դնում և պահում համայնքը, և որի շնորհիվ եկեղեցի հաճախելը կարող է դառնալ առօրեականության մի մասը, շեշտակիորեն տարբերվում է առիթից առիթ կամ հատուկ դեպքերում կատարվող ուխ-

[67] Կանոնագիրք հայոց 1964, 398-399:

տագնացությունից: Անգամ առանձին օրերին կամ մեծ տոներին պարբերաբար կատարվող ուխտագնացությունը ենթադրում է ծիսական կյանքի ժամանակային ավելի խոշոր բաժանում, ավելի «դանդաղ ռիթմ»: Եթե կարելի է բնակավայրի ներսում գտնվող եկեղեցի այցելել ցանկացած հարմար պահի, ապա հեռավոր, հատկապես դժվարամատչելի վայրի այցելությունը ենթադրում է հատուկ նախապատրաստություն: Ինչպես հայտնի է, երբեմն այդ նախապատրաստությունը կարող է տևել ամիսներ և նույնիսկ տարիներ (օրինակ, եթե մատաղի համար հատուկ կենդանի են մեծացնում): Շատ հեռու վայրում գտնվող ուխտավայրի, օրինակ, Երուսաղեմի, այցելությունը, ենթադրում է նաև դրամական որոշակի միջոցների կուտակում, ինչը որևէ նշանակություն չունի տեղական կրոնական օբյեկտի դեպքում: Նույնը վերաբերում է ժամային գրաֆիկին, քանի որ, ի տարբերություն օրվա որոշակի ժամերին կատարվող ժամերգությունների և պատարագների, ուխտավայրի այցելությունը ավելի ազատ է ժամանակի տնօրինման հարցում. ուխտագնացությունը երբեմն կարող է տևել մեկից ավելի օր և ենթադրել ժամային ազատ գրաֆիկ: Բացի այդ, տարբեր է նաև սրբավայրի տարածքում գտնվելու տևողությունը. եթե եկեղեցու տարածքում գտնվելը սովորաբար սահմանափակվում է պատարագի, ժամերգության, իսկ ազատ այցելության դեպքում՝ աղոթքի և փոքր արարողության տևողությամբ, ապա ուխտավայրում կատարվում են մատաղներ, ճաշկերույթ, խնջույք, գուշակություններ և այլն, իսկ հաճախ նաև պատարագ է մատուցվում: Այսինքն, ուխտավայրի ծիսական համալիրն ավելի մեծ է, քան ծխական եկեղեցունը:

Տարածական գործոնը ևս կարևոր դեր է կատարում բնակավայրի ներսում գտնվող սրբավայրի և հեռավոր ուխտավայրի գործառույթների զանազանման մեջ: Ժամ-ժողովարանը պետք է բավականաչափ ընդարձակ լինի՝ հավատացյալների համապատասխան քանակը միաժամանակ տեղավորելու համար, մինչդեռ սրբատեղին կարող է անգամ ծածկ և (զոհա)սեղան չունենալ, եթե այդտեղ պատարագներ չեն մատուցվում: Ուխտատեղի-սրբավայրը կարող է լինել շատ փոքր՝ նախատեսված միաժամանակ մեկից երեք մարդու այցելության համար: Ընդհակառակը, եկեղեցու բակը կարող է շատ մեծ չլինել, մինչդեռ ուխտավայրի, հատկապես վանքի շուրջը կանոնավոր ուխտագնացության օրերին սովորաբար բազմաթիվ մարդիկ են կուտակվում, որոնք մնում են այդտեղ մի քանի ժամ

կամ նույնիսկ ամբողջ օրեր, և այս է պատճառը, որ ուխտավայրերի «հարակից» տարածքները հաճախ բավական մեծ են:

Ընդսմին, գոյություն ունի *ծխական եկեղեցի* և *ուխտավայր* երևույթների որոշակի հոսունություն: Այսպես, բնակչության տեղափոխության դեպքում երբեմնի տեղական եկեղեցին կարող է վերածվել ուխտավայրի: Այսպիսին է, օրինակ, Կոտայքի Ֆանտան գյուղի բնակիչների Թեզ խարաբի ուխտը: Երբեմնի մալականների Սուխոյ Ֆոնտան գյուղը և Թեզ խարաբ կամ, ինչպես Մ. Սմբատյանն է կոչում, Վաղավեր հայկական գյուղը տարբեր բնակավայրեր էին, և Ս. Աստվածածինը հայկական գյուղի եկեղեցին էր[68], որը, սակայն, կառուցել էին ոչ թե Մակուից գաղթած բնակիչները, այլ գյուղի բնիկները, իսկ նոր բնակիչներն այն գործածում էին որպես ժամ[69]: Երբ գյուղերը միավորվել են, այսինքն, Թեզ խարաբի բնակիչները տեղափոխվել են Ֆանտանի տարածքը, երբեմնի գյուղական եկեղեցին վերածվել է ուխտավայրի, որտեղ մայիս ամսի վերջին կամ հունիսի սկզբին համընկնող որոշակի կիրակի օրը հաճախում են Ֆանտանի գրեթե բոլոր բնակիչները և բազմաթիվ հյուրեր այլ վայրերից[70]: Մոտավորապես այդ նույն դերն է ունեցել Քուչակի (Չամոլուի) Թուխ Մանուկը: Երբ Չամոլու գյուղի տեղում կառուցվել է Ապարանի ջրամբարը, և բնակիչները տեղափոխվել են Քասախ, շրջակա գյուղերի բնակիչների և քասախցիների համար Թուխ Մանուկը դարձել է ընդհանուր սրբավայր[71]: Ուխտատեղի կարող են դառնալ նաև արոտավայրերում գտնված կամ հիմնադրված սրբավայրերը, որոնք ինչ-ինչ պատճառներով ձեռք են բերում զորավոր վայրերի համբավ (օրինակ, Վայոց ձորի Աղավնաձորի Ապանա կամ Աբանա արոտավայրը, որը Երեմիա Քյոմյուրճյանի քարտեզում նշված է իբրև Ապանա ուխտատեղ[72]):

Երբեմն տեղի է ունենում և հակառակը. բնակավայրն այնքան է մեծանում, որ երբեմնի ուխտավայրը հայտնվում է բնակավայրի տարածքի

---

[68] Սմբատյան 1895, 282:

[69] Անապատ Սևանայ 1896, 78:

[70] Սիմոնյան, Հակոբյան, ԴԱՆ 2014, Ֆանտան-Կապուտան:

[71] Հայտնել է քասախաբնակ, նախկին Չամոլուի բնակիչների ժառանգ երաժշտագետ-ֆոլկլորագետ Անահիտ Գևորգյանը, ծնվ. 1975 թ.: Ներկայումս սրբավայրը գտնվում է Քուչակ գյուղի տարածքում (Սիմոնյան, Շամամյան, ԴԱՆ 2011, Ապարան. Սիմոնյան, Հովհաննիսյան, ԴԱՆ, Ապարան, 2013, 2016):

[72] Տե՛ս Uluhogian G. 2000, քարտեզ IV, թիվ 116.

ներսում՝ հետզհետե վերածվելով տեղական եկեղեցու, հատկապես այն դեպքերում, եթե այդ վայրը հնուց ուխտի հատուկ օր չի ունենում:

Որքան մոտ է եկեղեցին բնակավայրին, այնքան մեծ է հոգևորականի դերը համայնքի հոգևոր խնամքի մեջ: Հեռավոր ուխտավայրում պատարագներ և կրոնական այլ ծառայություններ մատուցվում են բացառապես ուխտագնացության օրերին: Սա այն դեպքերից մեկն է, որ XIX դ. նյութերի և ներկայիս տվյալների մեջ գոյություն ունեն լուրջ տարբերություններ: Ավելին, այդ տարբերությունն ավելի մեծ է պատմական ավելի խոշոր ընդգրկումների դեպքում, քանի որ հնում ուխտատեղիները նաև գործող վանքեր էին:

Խորհրդային և հետխորհրդային տարիներին այսպիսի վանքերն ու անապատները ուղղակի դադարել են գոյություն ունենալ և որոշ դեպքերում վերածվել են ժողովրդական ուխտավայրերի, որոշ դեպքերում՝ ոչ: Որպես ուխտավայրեր՝ այդ նույն ժամանակաշրջանում օգտագործվել են լքված և չգործող, ավերակ վանքերը և նույնիսկ դրանց երբեմնի գոյության տեղերը: Ստեղծվել են նաև նոր սրբավայրեր՝ մշակութային հուշարձանների և սրբազան իրերի (խաչքար, տապանաքար, քառակողմ կոթող, հին ձեռագիր, հնատիպ գիրք, եկեղեցական սպասք, խաչ, կրոնավորի հագուստի մաս և այլն) գործածումով կամ առանց դրա (երազով, տեսիլքով, որևէ հրաշալի իրադարձությունից հետո): Դրանց շուրջ, սակայն, ձևավորվել է պաշտամունքային այն նույն համալիրը, որը հայտնի էր դեռևս Ս. Պարթևի կանոններից՝ մասնակի տեղական փոխակերպումով: Նույնիսկ դրանց վերաբերյալ եղած բանահյուսությունը, սովորաբար, ունի մի քանի «դասական» սյուժեների կառուցվածքային չափօրինակը: Սակայն ուշագրավ է, որ նոր սրբավայրերը, որպես օրենք, հեռավոր ուխտատեղիներ չեն լինում, այլ կառուցվում են բնակավայրի տարածքում, դրանք նախատեսված չեն բազմամարդ ուխտագնացությունների համար, ծառայում են որպես աղոթատեղի և անհատական ուխտի վայրեր: Միաժամանակ, դրանց շուրջ կարող է ձևավորվել մատաղի սովորությունը և ժողովրդական հեքիմության պրակտիկան:

Մեր երկրորդ հարցադրումը, թե՝ արդյոք շինության և հոգևոր ծառայության գործո՞ն է կարևոր ուխտավայրի համար, ունի երկակի պատասխան: Ինչպես XIX, այնպես էլ XX դ. տվյալները թույլ են տալիս այս հարցին պատասխանել բացասաբար: Հնուց գոյություն ունեցած ուխտա-

գնացությունը՝ յուրովի հիշողությունը վայրի սրբության մասին, առավել կարևոր գործոնն է ուխտագնացության շարունակականության համար: Սակայն Հայաստանի անկախությունից և հայ ժողովրդի՝ քրիստոնեական արժեքներին վերադառնալու միտումից ի վեր դիտվում է բոլորովին այլ պատկեր: Ավեր, անխնամ, հոգևոր ծառայությունից զուրկ սրբատեղիները մի տեսակ ամոթի զգացում են առաջացնում հավատացյալների մեջ: Շատերն իրենց պարտքն են համարում վերաշինել հին մատուռները, հատկապես եթե տվյալ սուրբը որևէ միջնորդություն է ունեցել իրենց կյանքում (փրկել է երեխայի կյանքը, առողջացրել հիվանդին, տվել է փափագած ամուսնական երջանկությունը, զավակ է պարգևել և այլն), կամ անձնավորված սուրբը հայտնվել է երազում և բողոքել իր վիճակից: Շարքային քաղաքացիները և պաշտոնյաները, օտարության մեջ ապրող համագյուղացիները մեծ ոգևորությամբ կառուցում են մատուռներ, ձեռնարկում են իրենց հնարավորության չափով (ոչ միշտ՝ համապատասխան մասնագիտական որակի) վերականգնումներ, վերաօծել տալիս սրբավայրը և դրանով իսկ փոխում նրա նախնական անունը, ինչը հաճախ դժվարացնում է սրբավայրի հետազոտությունը, սակայն վկայում է սեփական սրբությունների հանդեպ մարդկանց հոգածության մասին:

Գրականություն

Ագաթանգեղոս 1977, Պատմություն հայոց, Երևան, «Սովետական գրող», 191 էջ:

Ալիշան Ղ. 1853, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, «Ս. Ղազար», 105 էջ:

Աճառեան Հ. 1913, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1141 էջ:

Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, «ԵՊՀ հրատ.», 675 էջ:

Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, «ԵՊՀ հրատ.», 635 էջ:

Անապատ Սևանայ 1896, Արևելեան մամուլ, Զմիւռնիա, թ. 3, էջ 74-78, թ. 6, էջ 170-174:

Բառգիրք Հայոց արարեալ ի Երեմիայ վարդապետէ 1728, Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսեան տպ., 576 էջ:

Գրիգոր Մագիստրոսի թղթերը 1910 (առաջ. և ծանոթ. Կ. Կոստանեանցի), Ալեսանդրապոլ, Գէորգ Ս. Սանոյեանցի տպ., 352 էջ:

Դուրեան Ե. արք. 1933, Հայոց հին կրօնը, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակովբեանց, էջ:

Էմինյան ազգագրական ժողովածու 1906, գ. Զ, Թիֆլիս, Բարխուդարեանց տպ., 418 էջ:
Կանոնագիրք հայոց 1964, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, հ. Ա, Երևան, «ՀՍՍՌ ԳԱ հրատ.», 472 էջ:
Կարապետյան Ե. Սասունցիների ազգագրություն, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ (ԱԲԱ), թղթ. 150:
Կոստանեանց Կ. 1886, Հայոց վանքերը. համառօտ տեսութիւն, Մոսկվա, типографія О.О. Гербекъ, 99 էջ:
Հակոբյան Գ., Լաչինյան Ա. ԴԱՆ 2014, Մեղրաձոր:
Հովհաննիսյան Կ. 2016, Թուխ Մանուկը բանահյուսական սկզբնաղբյուրներում, Էջմիածին, Բ., էջ 69-95:
Ղազար Փարպեցի 1982, Հայոց պատմություն, Երևան, «ԵՊՀ հրատ.», 540 էջ:
Մելիքեան Ե.Յ. 1957, Հարք-Խնուս, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 584 էջ:
Մեսրոպյան Հ. 2016, Կրոնաեկեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Երևան, «Ասողիկ», 349 էջ:
Մկo 1882, Վանայ լճի կղզիները, Արձագանք, № 20, էջ 312-315:
Նոր բառգիրք Հայկազեան լեզուի 1981, հ. Երկրորդ, Երևան, «ԵՊՀ հրատ.», 1067 էջ:
Ոսկեան Հ.Հ. 1947, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1130 էջ:
Սահակյան Ա. 2014, Ժողովրդական քրիստոնեությունը միջնադարյան Հայաստանում, Ե., «ԵՊՀ հրատ.», 372 էջ:
Սարգիսեան Հ.Ն. 1864, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, «Ս. Ղազար», 289 էջ:
Սիմոնյան Լ., Շամամյան Ն., ԴԱՆ 2011, Ապարան:
Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ. ԴԱՆ 2013, 2016, Ապարան:
Սիմոնյան Լ., ԴԱՆ 2014, Դսեղ:
Սիմոնյան Լ., ԴԱՆ 2014, Վանաձոր-Անտառամուտ-Մղարթ:
Սիմոնյան Լ., Հակոբյան Գ., ԴԱՆ 2014, Ֆանտան-Կապուտան:
Սիմոնյան Լ., ԴԱՆ 2015, Լոռի:
Սիմոնյան Լ., ԴԱՆ 2015, Օձուն:
Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., ԴԱՆ 2015, Ռինդ:
Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., ԴԱՆ 2016, Առինջ:
Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Ավետիսյան Լ., ԴԱՆ 2016, Ապարան-Լեռնանցք:
Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., ԴԱՆ 2017, Արագածոտն:
Սիմոնյան Լ., Հակոբյան Հ. ԴԱՆ 2017, Վարդենիս-Սոդք:
Սիմոնյան Լ., Հակոբյան Հ., ԴԱՆ 2017, Կապան:
Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., Ավետիսյան Լ., ԴԱՆ 2017, Շիրակ:
Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., ԴԱՆ 2017, Ստեփանավան-Սպիտակ:

Սիմոնյան Լ., Հովհաննիսյան Կ., ԴԱՆ 2018, Շատին:
Սիմոնյան Լ., Ավետիսյան Ա., ԴԱՆ 2018, Արարատ գ.:
Սմբատեանց Մ. 1895, Տեղեկագիր Գեղարքունեաց ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 843 էջ:
Սրապեան Կ. 1879, Ճանապարհորդութիւն ի նահանգն Կարուց, Արարատ, Թ., էջ 380-387:
Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր երկու հատորով, հ. 1, Երևան, «ՀՍՍՌ ԳԱ հրատ.», 666 էջ:
Սրվանձտյանց Գ. 1982, Երկեր երկու հատորով, հ. 2, Երևան, «ՀՍՍՌ ԳԱ հրատ.», 562 էջ:
Ստեփանոս Օրբելյան 1986, Սյունիքի պատմություն, Երևան, 616 էջ:
Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում 2003, կազմ. Քյոսեյան Հ., Դևրիկյան Վ., Վաղարշապատ, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 528 էջ:
Ռաֆֆի 1956, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 5, Երևան, «Հայպետհրատ», 538 էջ:
Քաջբերունի 2000, Ճանապարհորդական նկատողություններ, Երևան, «Մուղնի», 544 էջ:
Օրմանյան Մ. 1992, Ծիսական բառարան, Երևան, «Հայաստան», 182 էջ:
Абурейхан Б. 1957, Памятники минувших поколений. Избранные произведения, т. I, Ташкент, изд. АН Узб. ССР, 485 с.
Лидов А. 2009, Иеротопия. Пространственные иконы и образы парадигмы в византийской культуре, Москва, “Феория”, 362 с.
Ouseley W. 1823, Travels in Vaious Countries of the East, Vol. III, London, Rodwell & Martin, 600 p.
Uluhogian G. 2000, Un’ Antica Mappa dell’Armenia. Monasteri e sanctuari dal I al XVII secolo, Ravenna, Longo editore, 199 p.

«ԵԿԵՂԵՑԻ» ԵՎ «ՈՒԽՏԱՎԱՅՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լիլիթ Սիմոնյան

Մինչև մեր օրերը պահպանվում է Ս. Սահակ Պարթևի կանոնը՝ ծիսակատարության նպատակով տոնական ժամկետներին հատուկ վայրեր այցելելու մասին: Առավել լիարժեք ձևով պահպանվել են ուխտատեղիվանքերում իրագործվող արարողությունները, մինչդեռ շատ դեպքերում փոխվել են ոչ միայն սրբարանների տեղերը, այլև դրանց հետ կապված

առասպելաբանությունը: Նշանակալից փոփոխությունների են ենթարկվել ուխտագնացության ժամկետները, թեև կարևորագույն կրոնական տոնե-րի օրերին սուրբ տեղեր այցելելու ավանդույթը պահպանվել է գրեթե ան-փոփոխ: Ժողովրդի մեջ պահպանվել է «ժամ» (ծխական եկեղեցի) և «վանք» (ուխտատեղի) հասկացությունների բաժանումը, թեև վերջինը կա-րող է բնորոշվել նաև այլ եզրույթներով: Հարգելով հին սրբությունները և նախնիներից եկող ուխտագնացության ավանդույթը՝ ժամանակակից հա-վատացյալը հակված է վերականգնելու սրբավայրերը, սակայն եթե նա նորն է կառուցում, ապա այն գտնվում է բնակատեղիից ոչ հեռու: Մեր օրերում գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն սրբավայր նշանակող ժողովրդական և մասնագիտական (ճարտարապետական) եզրույթների միջև:

Բանալի բառեր՝ ուխտատեղի, սրբավայր, մատուռ, տոն, կանոն, նահատակ, ծիսական արարողություն:

СООТНОШЕНИЕ КУЛЬТУРНЫХ ФЕНОМЕНОВ “ЦЕРКОВЬ” И “ПАЛОМНОЕ МЕСТО” В АРМЯНСКОМ НАРОДНОМ ХРИСТИАНСТВЕ

Лилит Симонян

Традиция обрядовых действ, совершаемых в паломных местах – монастырях, сохранилась по сей день. Однако поменялись не только места святилищ, но и связанная с ними мифология. Значительные изменения претерпели сроки паломничеств, но традиция посещения паломных мест во время важнейших религиозных праздников осталась неизменной. И в наши дни в народе бытует разделение понятий “жам” (приходская церковь) и “ванк” (паломное место), хотя для характеристики последнего существуют также другие термины. Уважая старые святыни и традицию паломничества, идущую из глуби веков, современный верующий склонен восстанавливать святилища, однако если он строит новое, то оно находится неподалеку от поселения. На сегодняшний день есть определенное расхождение между народными и профессиональными (архитектурными) терминами, которыми обозначают святилища.

Ключевые слова – паломное место, святилище, часовня, праздник, канон, мартириум, обрядовое действо.

CORRELATION OF CULTURAL PHENOMENA "CHURCH" AND "SHRINE" IN THE ARMENIAN FOLK CHRISTIANITY

Lilit Simonyan

To our days the canon of St. Sahak Partev concerning visiting special lo-calities to fulfill rituals on festive dates, is preserved. The ritual ceremonies connected with shrines and saint places maintained best, while in many cases not only places of shrines but also mythology related to them have been modi-fied. Considerable changes underwent terms of pilgrimages, although the very tradition of visiting sacral places in the dates of the most important Church feasts has been preserved almost intact.

The differentiation of notions "jham" (parish church) and "vank" (sa-cral place, locality of pilgrimage) has remained among the folk, although there are also some other terms for the latter. Respecting old sacralities and the ancestors' tradition of pilgrimage, the modern believer is willing to re-construct shrines. But if he/she constructs a new one, the shrine is built not far from the habita-tion. In our days certain disagreement exists between folk and professional architectural terms in designating sacral constructions.

Key words – shrine, sacral place, chapel, feast, rule, martyr, rite.

ԱՐՁԱՆԱԳԻՐ ԽԱՉՔԱՐԵՐ ՄԵՂՐԻԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԱՆԱՊԱՍՏԱՆԱՑ) ՎԱՆՔԻՑ

Արման Նալբանդյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Չարենցի 15, 0025 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ hnagetyan18@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 04.04.2019, գրախոսվել է 11.06.2019, ընդունվել է տպագրության 05.05.2019

Ներածություն

Ներկայիս Մեղրիի տարածաշրջանը համապատասխանում է պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհի Արևիք գավառին[1]: Ըստ ամենայնի, այն հայկական բազմաթիվ բնակավայրերի պես մոնղոլների և Լենկ-Թեմուրի արշավանքների ժամանակ ենթարկվում է ավերման, ինչի հետևանքով հետընթաց է ապրում նաև մշակութային կյանքը: XVII դ. պարսկական տիրապետության համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանում, երբ վերահաստատվում են Սյունիքի լքված գյուղերը, վերականգնվում հուշարձանները, կառուցվում նորերը, Մեղրիում նույնպես վերսկսվում են շինարարական աշխատանքները: XVIII դ. բնակավայրը վերածվում է պարսկա-օսմանյան լծի դեմ պայքարի կարևոր ամրոցի[2]:

Մեղրիում պահպանված հուշարձանների մեծ մասը վերակառուցվել է XVII-XVIII դդ., դրանք առավելապես պաշտամունքային (վանքեր, եկեղեցիներ) ու պաշտպանական (բերդեր, ամրոցներ) համալիրներ են, ինչպես նաև կամուրջներ, աղբյուրներ, ջրանցույցներ և այլն: Ինքնատիպ են նաև պահպանված որմնանկարների նմուշները, իսկ XIX դ. բնակելի տները ներկայացնում են ազգային ճարտարապետության մի բացօթյա թանգարան[3]:

Մոնղոլական արշավանքներից մինչև XVII դ. ընկած ժամանակահատվածում, թեև մշակութային կյանքը Մեղրիում անկում է ապրում, այնուամենայնիվ, չի դադարում և վերջին տարիներին կատարված պեղումների արդյունքներով կարելի է փաստել, որ որոշ վանքեր և արհեստավորական

---

[1] Երեմյան 1963, 109-110, 117:
[2] Սեբաստացի 1988, Հայ ժողովրդի պատմություն 1972, 161-175:
[3] Հասրաթյան 1987, 5:

համայնքներ շարունակում են գործել[4]: Հատկապես XV դ. երկրորդ կեսից մինչև XVII դ. առաջին քառորդը Մեղրիի նյութական մշակույթի մասին մեզ պատկերացում են տալիս մի շարք բնակավայրերում եկեղեցիներին կից պահպանված գերեզմանատների շիրմաքարերը, ինչպիսիք՝ շուրջ երկու տասնյակի չափ, ի հայտ եկան և ուսումնասիրվեցին Մեղրիի Ս. Հովհաննես վանքի 2016 թ. հետազոտական աշխատանքների ժամանակ: Դրանք տեղական բազալտ և գրանիտ քարերից պատրաստված կոպտատաշ գերեզմանաքարեր են, որոնց նիստերից մեկին (երբեմն երկու նիստին) պատկերված է պարզունակ փորագիր խաչ, իսկ դրա շուրջը բոլարաձև արձանագրություն է՝ հիմնականում միևնույն համառոտ բնագրով. «Աստուա՛ծ ողորմի...», ապա՝ հանգուցյալի անունը և մահվան տարեթիվը[5]:

Սակայն տարածաշրջանին բնորոշ այս «անշուք» կոթողների կողքին Մեղրիում կա նույն ժամանակաշրջանի (XVI դ.) մեկ այլ կոթողի տեսակ՝ ավազաքարից, չափերով փոքր և բարակ պատերով խաչքարեր: Երեքն էլ Մեղրիի Ս. Հովհաննես վանքից են (տեղացիների շրջանում հայտնի է Անապաստանաց վանք անունով[6]), որոնցից երկուսի բեկորները հայտնաբերվեցին վանքի 2016 և 2018 թթ. պեղումների ժամանակ[7], իսկ երրորդը գտնվում էր Մեղրիի գեղագիտական դաստիարակության կենտրոնում: Ընդհանուր առմամբ, այդ տարիների պեղումներից հայտնաբերվեցին բազմաթիվ խաչքարերի բեկորներ, որոնք կերտված են հիմնականում կանաչ, հազվադեպ կարմիր, շագանակագույն ավազաքարերից: Դրանք բավական բարակ են (5 սմ լայնք) և ունեն արագ քայքայվելու հատկություն: Աչքի են ընկնում զարդաքանդակների նրբագեղությամբ,

---

[4] 2012 թ. պեղումներ են իրականացվել Մեղրիի «Ագարակ» հին բնակատեղիի Ս. Ամենափրկիչ եկեղեցու տարածքում (տե՛ս Նալբանդյան, Վարդանյան 2014, 49-66), իսկ 2016 և 2018 թթ.՝ Մեղրիի Ս. Հովհաննես վանքի տարածքում:

[5] Նման գերեզմանակոթողներ կային թե՛ եկեղեցու սրահում, թե՛ բակում, իսկ հիմնական մասը բազմաթիվ շինաքարերի հետ միասին սահել էր եկեղեցուց հյուսիս՝ բլուրն ի վար: Այս բոլորը մեկտեղեցինք եկեղեցու բակում:

[6] Կարծում ենք՝ վանքն այսպես է կոչվել դեռևս ուշ միջնադարում՝ պայմանավորված ներգաղթյալ վերաբնակիչների համար ապաստարան լինելու հանգամանքով: Այդ է վկայում նաև պեղումների ընթացքում ի հայտ եկած օջախ-վառարանների և խեցեղեն սպասքի առատությունը:

[7] Մեղրիի Ս. Հովհաննես վանքի 2016 և 2018 թթ. պեղումները իրականացվեցին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից (հնագետներ՝ Ա. Նալբանդյան, Հ. Բադալյան, Տ. Ալեքսանյան)՝ «Երկիր և մշակույթ» կազմակերպության նախաձեռնությամբ, եկեղեցու վերականգնման ծրագրի շրջանակում:

խաչի ճոխությամբ, եզրագոտիների զանազան ձևերով: Խաչը պատկերված է սրածայր խորանի մեջ: Քիվն արտահայտված չէ և առանձնանում է միայն պատկերագրորեն: Խաչքարի ստորին մասում թվակիր արձանագրություններն են:

Ներկայիս Մեղրի քաղաքի հյուսիսարևմտյան բարձրադիր վայրում է գտնվում Մեղրիի վանքը՝ դեպի Լեհվազ տանող հին ճանապարհի ձախ կողմում՝ շրջապատված այգիներով, բնակելի և տնտեսական շինություններով, միջնադարյան և ժամանակակից գերեզմանոցով (նկ. 1-2): Վանքից կանգուն է մնացել միայն եկեղեցին, իսկ գավիթ-նախասրահը և տնտեսական սենյակները հիմնովին ավերված են: Եկեղեցին կառուցված է տեղական բազալտից, գմբեթը աղյուսաշեն է: Սա ամբողջ ուշմիջնադարյան Սյունիքի երեք գմբեթավոր եկեղեցիներից մեկն է[8]: Մեղրիի վանքը հանգամանալից ուսումնասիրել է ճարտարապետ Մուրադ Հասրաթյանը, որը լուսաբանում է բազմաթիվ խնդիրներ և տալիս եկեղեցու մանրամասն ճարտարապետական նկարագիրը: Ողջ տարածաշրջանի միջնադարյան հուշարձաններն ուսումնասիրելիս նա զուգահեռներ է անցկացնում և խառնաշփոթից վեր հանում եկեղեցու կառուցողական և գործառութային պատկերը: Պետք է հաշվի առնել, որ Մեղրիի Ս. Հովհաննես վանքի եկեղեցու կառուցումը իրականացված է բավականին բարդ և անսովոր ճարտարապետական հնարքներով: Եկեղեցին ունի ուղղանկյուն ծավալ, երկթեք տանիք, որի վրա ուղղակի բարձրանում է գմբեթը՝ ստեղծելով գմբեթավոր դահլիճի արհեստական նմանակում: Ներքին հարդարանքներից են աղյուսե որմնակամարները, խորանի որմնախորշերը, որոնց գագաթներն ունեն շեշտված սրություն, կաղապարի մեջ ձուլված հրեշտակների պատկերները և, իհարկե, XVIII դ. որմնանկարները: Արտաքին հարդարանքի միակ արտահայտությունը հարավային պատի մեջ ագուցված խոյի գլխաքանդակն է: Սակայն ժամանակին այն եկեղեցին արտաքուստ զարդարող միակ տարրը չի եղել. եկեղեցու արևմտյան ճակատը հարդարված է եղել փոքրաչափ խաչքարերով, որոնց որմնափոսերն այժմ դատարկ են (նկ. 3): Այդպիսիք հինգն են. չորսը՝ մուտքի վերևում, իսկ մեկը՝ դրանցից աջ, նախասրահի որմնամույթի վերնամասում՝ որմնակամարների միացման հատվածում (կասկած չկա, որ դրանցում են ագուցված եղել պեղումներից հայտնաբերված բեկորային խաչքարերը):

[8] Հասրաթյան 1973, 83, Հասրաթյան 1987, 9:

Պատմական տեղեկություններ

Վանքի մասին պատմական տեղեկությունները սկզբնաղբյուրներում խիստ կցկտուր են, և մենք վստահաբար չենք կարող պնդել, թե արդյո՞ք դրանք Ս. Հովհաննեսի մասին են: Սակայն մի կարևոր հանգամանք. «վանք» եզրույթը Մեղրի քաղաքի եկեղեցիներից կրում է միայն Ս. Հովհաննեսը: Ս. Հովհաննես վանքը հիշատակում է դեռևս Ստեփանոս Օրբելյանը, երբ թվարկում է թեմի վանքերն ու անապատները. «*Արդ՝ սրբոյ աթոռոյս ի բոլոր թէմի եղեալ վանք եւ անապատք են սոքա. **Մեղրոյ սուրբ Յովհաննէս անուն վանքն**. Մեծ անապատն արանց. Հարանց անապատն արանց. Շնհէրու Ասպուածածին անապատն կուսանաց. Հալիձորու անապատն կուսանաց. Մանլեւու ամենափրկիչ անապատն կուսանաց. Գանձափարախու վանքն. Կարճեւանու սուրբ ուխտն Յովհաննու եւ Ծիծեռնակու սուրբ վանքն*»[9]: Ընդ որում, Մեղրիի վանքը բավական խոշոր է եղել, ինչը երևում է հարկատու գյուղերի ցանկից, ըստ որի՝ Մեղրիի վանքը վճարում էր 20 միավոր հարկ[10]:

Նման մի հակիրճ տեղեկություն հաղորդում է XVIII դ. կաթողիկոս Աբրահամ Կրետացին. «*Եւ ապա եկինք ի Մեղրի, որում կայր փոքրիկ վանք մի պատրուական և հաճոյական*»[11]:

Ս. Հովհաննես վանքին անդրադարձել է նաև Ղևոնդ Ալիշանը. «*Մի մի եկեղեցիք են թաղիցն՝ Մեծի եւ Փոքուն, եւ բարեշէնք, ըստ վկայութեան յեպին յիշեալ եւրոպացի ուղեւորին, այլ ոչ թուին եւ բարեխնամք. որպէս եւ ոչ **Մեղրոյ վանքն Ս. Յովհաննէս**, որ կայ յարեւելակողմանն, սակաւուք հեռի ի շինէն. յորում բաց յառաջնորդէն թուի թե չգուցեն միաբանք, այլ պահապանք ոմանք, թէպէտ եւ կալուածս ոչ սակաւ ունի մենաստանն*»[12]: Այս վանքը չպետք է շփոթել Փոքր թաղի եկեղեցու հետ, որը հայտնի է Ս. Հովհաննես Մկրտիչ անվամբ[13]: Հայաստանի ազգային արխիվում պահվող՝ Զանգեզուր գավառի Մեղրիի չափաբերական մատյաններում հիշվում են Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես և Մեղրի գյուղի Ս. Հովհաննես եկեղեցիները[14]: Այսօր դժվար է պնդել՝ արդյոք երկու տարբե՞ր,

[9] Օրբելեան 1910, 499-500:
[10] Օրբելեան 1910, 521:
[11] Կրետացի 1973, 155:
[12] Ալիշան 1893, 303:
[13] Մելիք-Բախշյան 2009, 263:
[14] ՀԱԱ, ֆ. 47, g. 7:

թե՞ միևնույն եկեղեցիների մասին է հիշատակվում (մանավանդ որ Փոքր թաղը նույնպես Մեղրի գյուղի մաս է կազմել): Պետք է հավելել նաև, որ երկու դեպքում էլ քահանան միևնույն Խաչատուր Տեր-Գրիգորյանցն է՝ իր 1898 թ. կնիքով հաստատագրված:

Ս. Հովհաննես վանքի պեղումներից հայտնաբերված երկու արձանագիր խաչքարերի՝ եկեղեցու արևմտյան պատին ագուցված լինելը հաստատվում է Հայաստանի ազգային արխիվում պահվող՝ խորհրդային տարիներին կատարված հետազոտությունների հաշվետվություններով:

Դեռևս 1939 թ. խաչքարերից երկուսն իրենց տեղում են եղել՝ եկեղեցու արևմտյան պատին, ինչը փաստվում է նաև այդ թվականին Հ. Եղիազարյանի ղեկավարած արշավախմբի հաշվետվությամբ. *«Արևմտյան դռան ճակատին, պատի մեջ ագուցված են փոքրիկ քանդակազարդ խաչքարեր՝ եղծված արձանագրություններով, նկատվում են թվականները, մեկին՝ ՋՀ (1521), մյուսին՝ ՌԽ (1591)»:* Հաջորդ՝ 1940 թ. նորից արշավախումբ է մեկնել Մեղրի, որի զեկույցի մեջ նույնպես կա այդ խաչքարերի մասին հիշատակություն՝ տարեթվերից մեկի փոփոխմամբ. «*Գրավոր հիշատակություններ կան դռան ճակատին, պատի մեջ հագցված երկու փոքրիկ խաչքարերի վրա, որոնք եղծված են և նկատվում են թվատառերը՝ ՋՁ (1531) և ՌԽ (1591), որոնք ագուցված են հետագայում: Այդ խաչքարերը քանդակազարդ են, անարվեստ ձևով, եղել են չորսը, այժմ մնում են երկուսը»:* Եկեղեցու հաջորդ ուսումնասիրությունն իրականացվել է արդեն 1959 թ. Հուշարձանների պահպանության բաժնի արշավախմբի կողմից՝ Ա. Շահինյանի ղեկավարությամբ: Արշավախմբի զեկույցի՝ Մեղրիի վանքին վերաբերող հատվածում կարդում ենք. *«Մուտքի ճակատին դրված են երկու փոքրիկ կոպտավուն քարից խաչքարեր, որոնցից մեկը քանդակված է վարպետ Մովսեսի կողմից 1521 թ., իսկ մյուսը քանդակված է 1591 թ.»:* Խորհրդային տարիների հերթական ուսումնասիրությունը կատարեցին 1977 թ. Ս. Սաղումյանը, Վ. Խաչատրյանը և Լ. Գրիգորյանը. տեխնիկական վիճակի զննումների մասին արշավախմբի հաշվետվությունում նշված՝ *«Մուտքի ճակատին դրված են եղել 2 փոքր խաչքարեր, որոնք այժմ ընկած են»* հակիրճ տեղեկությունը պարզում է, որ ճակատին ագուցված վերջին երկու խաչքարերն ընկել են 1959-1977 թթ. միջակայքում[15]:

[15] Հղումներն արված են ՀԱԱ, ֆ. 47, ց. I-ի հաշվետվություններից:

XVI դ. խաչքարերի առկայությունը Ս. Հովհաննես վանքի եկեղեցու որմերին և նույն դարի ենթադրյալ որմնագրերը թույլ են տալիս հիմնավորել, որ եկեղեցին կարող է կառուցված լինել ոչ ուշ, քան XVI դ. առաջին քառորդին:

Մեր կատարած հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվեցին 5 և հնարավոր է՝ ավելի խաչքարերի նմանատիպ շուրջ 30 բեկոր (նկ. 4-5): Բոլոր բեկորները մաքրել, հատուկ սոսնձով ամրացրել և վերականգնել է քանդակագործ Սամվել Զարբաբյանը: Արձանագիր բեկորների առկայությունը հնարավորություն տվեց առանձնացնելու երկու գրեթե ամբողջական խաչքար: Ստորև ներկայացնում ենք այդ խաչքարերի նկարագրությունը և արձանագրությունները:

ԽԱՉՔԱՐ 1 (նկ. 6, գծ. 1). Բեկորները հայտնաբերվեցին 2016 թ. վանքի բլրի հյուսիսային լանջի փլատակը մաքրելու և պեղման աշխատանքների ժամանակ: Այն 5 սմ հաստությամբ կանաչ ավազաքարից խաչքար է, որի վերին հատվածից գտնվեց 4 բեկոր և 1 առանձին կտոր՝ ստորին հատվածից, որը, սակայն, մյուսներին չմիացավ: Խաչքարային հորինվածքում նախշազարդ եզրագոտիներն են, վերնամասի ութթև աստղի մեջ հավերժության զույգ նշաններ և զույգ ծաղիկներ (կամ աստղեր): Հետնախորքում քանդակված է ծաղկած խաչը: Յոթաստիճան պատվանդանի և ձողի վրա կանգնած խաչի թևերն ավարտվում են զույգ ակնագնդերով և բողբոջով, մակերեսը հարդարված է փորագիր գծերով: Գլխավոր խաչից ձախ նկատելի է փոքր խաչի հատված: Խաչքարի ստորին հատվածի խոշոր բեկորին (լայնությունը՝ 32,5 սմ, պահպանված բարձրությունը՝ 39 սմ) առկա է երկտող արձանագրություն:

Հիշատակվողի անվան հատվածում խաչքարը կոտրված է, և վերականգնումը պայմանական է: Հետաքրքրական է այն, և ինչպես կտեսնենք հաջորդ խաչքարերի օրինակով ևս, Ա տառերը վարպետները կերտել են մեկ ուղղահայաց ստեղնի տեսքով: Ելնելով այդ հանգամանքից՝ վերծանում ենք թվականը ՌԽԱ[16]: Ա տառի՝ նման խորհրդանշական պատկերում քիչ չէ նաև Ջուղայի XV-XVII դդ. խաչքարերի վիմագրերում[17]:

---

[16] Վիմագրերի վերծանությանն աջակցելու համար մեր շնորհակալությունն ենք հայտնում վիմագրագետ Ա. Հարությունյանին, գրչանկարների համար՝ Գ. Համբարձումյանին:

[17] Այվազյան 2004, 55-56, խաչքարեր՝ 107, 112-115 և 58, խաչքար՝ 139 և այլն: Հարությունյան 2016, 110-113:

ԱԼՍՏՈՒԱՅԾ ՈՂՈՐՄԻ ԽԱՉ[ԱՏՐՈ][1]-Ց, ԹՎԻՆՅ ՌԽԱ (1592):

Գծ. 1

Փաստորեն, սա արխիվային վավերագրերում հիշատակված երկու խաչքարերից մեկն է, որը նախկին ուսումնասիրողները, հաշվի չառնելով վերը նշված հանգամանքը, թվագրել են 1591-ով: Եկեղեցու հյուսիսարևմտյան հատվածի փլուզման հետևանքով ընկել ու կոտրվել է (ըստ ուսումնասիրությունների և կատարված չափումների, այն տեղադրված է եղել մուտքից վերև գտնվող 4 որմնախորշերից աջակողմյան խորշում): Պարզվեց, որ խաչքարի բացակայող վերին խոշոր հատվածը գտնվում է Փոքր թաղում՝ տեղացի Ռոյ Ղազարյանի տանը, որը համաձայնեց բեկորը հանձնել արշավախմբին. դրանով խաչքարի վերին կեսն ամբողջացվեց:

ԽԱՉՔԱՐ 2 (նկ. 7, գծ. 2). 2018 թ. գավթից հարավ-արևմուտք՝ 60 սմ խորությունից հայտնաբերվեցին կանաչ ավազաքարից խաչքարի բեկորներ, որոնցով խաչքարի հիմնական ծավալը չվերականգնվեց: Դրանցից մեկի մակերեսին եռաբողբոջ խաչաթևերից մեկի վերջավորության հատված է, մյուսին՝ հիմնախաչի ստորին թևի և դրանից աջ փոքր խաչի հատված: Խաչքարի ստորին հատվածը՝ կազմված եռատող արձանագրությամբ 4 բեկորից, վերականգնվեց ամբողջությամբ (ընդ որում, բեկորներից մեկը գտնվեց ավանդատան գաղտնարանից)[18]:

[18] Եկեղեցու հարավային ավանդատան տակ, գանձագողության հետևանքով ավերված գաղտնարանում նույնպես կատարվեցին մաքրման և պեղման աշխատանքներ, որոնց շնորհիվ գտնվեցին հնագիտական բազմաթիվ ուշագրավ իրեր, որոնց թվում՝ մետաղական աշտանակների, մոմակալների մասեր, XIV-XIX դդ. տպագիր և ձեռագիր



ՍԼՈՒՐԲ ԽԼԱՀԱՍ ՅԻՇԼԱՏԼԱԿ ԼԷ ՏԼԷՐ ԱԶԱՐ ԻԱՅ ԿՐԱՒՆԱՒՈՐԻՆ:
ԹՎԻՆ ՌԽԶ (1597):

Գծ. 2

Սա միակ դեպքը չէ, երբ Մեղրիի վանքում հիշատակվում է Ազարիա անունը. եկեղեցու հյուսիսարևելյան մույթի կամարին, խորհրդային տարիներին արված ծեփի տակ վերջերս ի հայտ եկավ բավական ընդարձակ, սակայն դժվարընթեռնելի խազագիր արձանագրություն: Այն գրված է ոմն տեր Օվանեսի անունից, որը խաղաղ կյանք և երկար տարիներ է մաղթում իր հոգևոր հայր Ազարիա քահանային: Արդյո՞ք խաչքարի արձանագրությունում հիշատակված Ազարիա կրոնավորը որմնագրում հիշատակված միևնույն Ազարիա քահանան է, չենք կարող պնդել: Այս վարկածը հաստատվելու դեպքում առավել կարևոր է դառնում մեկ այլ հանգամանք, այն է՝ եկեղեցին պետք է կառուցված լինի առնվազն XVI դ., այլ ոչ թե XVII դ., ինչպես ընդունված է:

Ժամանակակից աշխարհում շարունակում են ապրել ժողովուրդներ, որոնց պատմության ակունքները հնագույն անցյալում են, և որոնք էական դեր են խաղացել արդի քաղաքակիրթ աշխարհի ձևավորման ընթացքում: Ի՞նչ վիճակում են այդ ժողովուրդները, ի՞նչ մարտահրավերների առաջ են նրանք կանգնած ներկայում, ի՞նչ խնդիրներ կան նրանց հարուստ մշակութային ժառանգության պահպանման և հետազոտման գործում:

Այս հարցերը համակարգված քննարկելու նպատակով, 2017 թ. ապրիլի 23-24-ին, Հունաստանի նախաձեռնությամբ, Աթենքում կյանքի կոչվեց Հնագույն քաղաքակրթությունների առաջին ֆորումը, որին մասնակցում էին Բոլիվիայի, Եգիպտոսի, Իտալիայի, Իրանի, Իրաքի, Հունաստանի, Չինաստանի և Պերուի ներկայացուցիչները: Այս իրադարձության լրացումը եղավ նույն պետությունների նախարարների հանդիպումը Բոլիվիայի մայրաքաղաք Լա Պասում 2018 թ. հուլիսի 13-ին: Հիշյալ հանդիպումներում ընդունված՝ Աթենքի և Թիվանակուի հռչակագրերը նախնականորեն ազդարարում էին հնագույն քաղաքակրթություններ կրող ժողովուրդների և նրանց մշակութային ժառանգության պահպանմանը վերաբերող խնդիրների հատուկ քննարկման անհրաժեշտությունը՝ հիմքեր նախապատրաստելով ավելի մեծ ու հիմնարար հանդիպման համար:

Հնագույն քաղաքակրթությունների ժողովուրդների երկրորդ ակադեմիական ֆորումը տեղի ունեցավ Լա Պասում, 2019 թ. մարտի 20-22-ին: Մասնակցում էին վերոհիշյալ բոլոր պետությունների ներկայացուցիչները (բացի Իրաքից): Աշխատանքներին միացավ նաև Հայաստանը, որը 2018 թ. հուլիսի 13-ից դարձել է կազմակերպության լիիրավ անդամ: Մասնավորապես, Հայաստանը ներկայացնում էին Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանը և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Արսեն Բոբոխյանը:

Հյուրընկալ երկիրը՝ Բոլիվիայի բազմազգ պետությունը, պատահականորեն չէր ընտրվել որպես ֆորումի բեմահարթակ: Բարձրլեռնային Անդերում գտնվող այս երկիրն իր 36 բնիկ ազգություններով, ինկերի և նախաինկական մշակութային հզոր ժառանգությամբ, այսօր հավակնում է դառնալ հնագույն

ինդկացիական մշակույթների բարձրախոսը և զարգացնել յուրահատուկ ինքնություն՝ փորձելով իր հարուստ անցյալը օգտագործել տարածաշրջանային (անդյան) և ընդհանուր (լատինամերիկյան կամ «Աբյա յալա»-ի՝ կունա լեզվով մինչկոլումբոսյան Ամերիկայի անվանումը) ինքնություն զարգացնելու նպատակով: Այս իմաստով, անցյալի ու նախնիների ոգեկոչումը, անկասկած, հզոր միջոց է հիշյալ կոնստրուկտի զարգացման համար:

Ֆորումի եռօրյա աշխատանքները կազմակերպվել էին Բոլիվիայի Արտաքին գործոց նախարարության կողմից, Մշակույթի և տուրիզմի նախարարության անմիջական մասնակցությամբ: Առաջին երկու օրերի քննարկումները, որ կատարվում էին անգլերենով և իսպաներենով, տեղի ունեցան Արտաքին գործոց նախարարության շենքում (Լա Պաս): Մինչդեռ Հռչակագրի հայտարարությունը հանրայնացվեց վերջին օրը՝ UNESCO-ի համաշխարհային ժառանգության միավոր հանդիսացող և ծովի մակերևույթից մոտ 4000 մ բարձրության վրա գտնվող Թիվանակու հնագիտական հուշարձանում, որը հիմնականում Ք.հ. I հազ. թվագրվող տաճարական համալիրներով և բուրգերով ներկայացված սրբազան մի լանդշաֆտ է, որտեղից, ըստ ավանդության, սերում են ինկերի նախնիները: Հիշյալ իրադարձությունը ուղեկցվեց նախնիների պաշտամունքին նվիրված հատուկ շքերթով և նվիրաբերական զոհաբերությամբ բնորոշվող ծիսակատարություններով՝ բացօթյա Կալասասայա տաճարում, որոնք իրականացրեցին տեղաբնիկ այմարա, ինչպես նաև կեչուա և այլ ժողովուրդների ներկայացուցիչները: Արարողությունն ավարտվեց պաշտոնական ելույթներով և ֆորումի «Եզրակացությունների» ընթերցմամբ, որոնք ընդմիջարկվում էին ազգային խմբերի պարային ներկայացումներով: Ֆորումի վերջնական կետը Տիտիկակա լիճն էր, որի Գուաքուի նավահանգստում հարգանքի տուրք մատուցվեց Ումա Պաչամամային՝ Ջրի և Մայր հողի աստվածությանը:

Հնագույն քաղաքակրթությունների ժողովուրդների երկրորդ ակադեմիական ֆորումի հիմնական նպատակն էր այդ քաղաքակրթությունների հոգևոր և նյութական մշակութային ժառանգության պահպանմանը, վերագնահատմանը, մշակութային քաղաքականության մշակմանը, առկա ռիսկերի գնահատմանը, հնագույն ժողովուրդների ինտեգրմանը և համապատասխան մեխանիզմների մշակմանը վերաբերող խնդիրներ քննարկելը՝ օգտագործելով ակադեմիական (հնագիտություն, մշակութային մարդաբանություն, լեզվաբանություն) ենթատեքստ: Ըստ այդմ, հանդիպման քննարկումներին մասնակցում էին ոչ միայն մասնագետներ և քաղաքական գործիչներ, այլև տեղական (հնդկացիական) համայնքների ներկայացուցիչներ: Գիտության, քաղաքակա-

Նկ. 1. Ֆորումի բացումը, Լա Պաս, 20.03.2019

Նկ. 2. Ֆորումի եզրափակումը, Թիվանակու, 22.03.2019

նության և մշակույթի ուղղակի կրողների երկխոսությունը ստեղծում էր բացառիկ հնարավորություն ոչ միայն քննարկելու, այլ նաև անմիջականորեն զգալու առկա խնդիրները: Ֆորումը բաժանված էր վեց թեմատիկ խմբերի. 1. Հնագույն քաղաքակրթությունների մշակութային ժառանգության պահպանությանը վերաբերող ձեռքբերումները և դժվարությունները, 2. Հնագիտությունը՝ որպես ազգային ինքնության խթանիչ, 3. Մշակութային ժառանգության պահպանման, գնահատման և կառավարման, ինչպես նաև տուրիզմի զարգացմանը վերաբերող հարցեր, 4. Հնագույն քաղաքակրթությունների մշակութային քաղաքականության մարտահրավերները, 5. Ջուրը և հնագույն քաղաքակրթությունները, 6. Կենդանի մշակույթները և հնագույն լեզուները: Բանավեճերի ընթացքում հատուկ շեշտադրվում էին տեղաբնիկ ժողովուրդների ինքնության պահպանմանը, անցյալի ու ներկայի ներդաշնակմանը, մշակութային երկխոսությանը վերաբերող խնդիրները: Հատկապես կարևորվեց այն հանգամանքը, որ 2019 թվականը ՄԱԿ-ի կողմից հռչակվել է որպես բնիկ լեզուների (և դրանց պահպանման) միջազգային տարի:

Հայկական պատվիրակության ներկայացուցիչները մասնակցեցին գրեթե բոլոր քննարկումներին, ինչպես նաև հանդես եկան առանձին ելույթներով երկրորդ և հինգերորդ թեմատիկ խմբերում՝ փորձելով բացահայտել Հայաստանի քաղաքակրթական նշանակությունը: Մասնավորապես, Վ. Տեր-Ղևոնդյանը «Հին հայերենը՝ որպես մշակույթի փոխանցման հզոր միջոց» ելույթում Հայաստանը ներկայացրեց որպես համաշխարհային գրավոր մշակույթի զարգացման կարևոր կենտրոն, ցույց տվեց հայերենի պատմական կենսունակության աստիճանը, իսկ Ա. Բոբոխյանը՝ «Անդերից մինչև Հիմալայներ՝ Հայկական լեռների վրայով. բարձրլեռնային մշակութային ժառանգության ուսումնասիրության ձեռքբերումները և մարտահրավերները» զեկույցում կարևորեց Հայկական լեռնաշխարհը՝ որպես հազվագյուտ բարձրլեռնային մշակութային ժառանգություն կրող մի գոտի:

Հանդիպման վերջում ընդունվեցին «Եզրակացություններ», որոնք, զարգացնելով Աթենքի և Թիվանակուի հռչակագրերի դրույթները, մասնավորապես, շեշտում են, որ ֆորումը այսուհետև ձգտելու է դառնալ հնագույն քաղաքակրթությունների մշակութային ժառանգության պահպանման և արդի աշխարհում այն ներկայացնելու կարևոր խոսափող: Ֆորումի ներկայացուցիչների աշխարհայացքը հենվում է այն պարզ մտքի վրա, որ արդի բոլոր մշակույթներում անցյալն ու ներկան շաղկապված են իրար, հետևապես հնագիտությունը, պատմությունը և մշակութային մարդաբանությունը պետք է մշակեն մեթոդաբանական ընդհանուր սկզբունքներ՝ այդ մշակույթները հետազոտելու համար:

Բնիկ ժողովուրդները, գիտնականները և քաղաքականություն կերտողները պետք է մշտապես երկխոսության մեջ լինեն՝ միասին քննարկելով անցյալի ու ներկայի խնդիրները: Դրա շնորհիվ ազգային/էթնիկ ինքնությունները պետք է վերաիմաստավորվեն ներկա զարգացումների համատեքստում, իսկ ինքնությունն ընկալվի որպես հստակ մշակութային իրողություն:

Տասներկու առանձին կետերով նախանշվեցին աշխարհայացքային և գործնական անելիքները: Մասնավորապես, ֆորումի անդամ-երկրները որոշեցին կատարել միասնական գործողություններ, որոնք ուղղված են լինելու՝ 1. նյութական և ոչ նյութական ժառանգության համատեղ պահպանմանը, 2. մշակութային ժառանգության կոնսերվացմանն ու վերագնահատմանը, 3. տեխնիկական համատեղ աջակցությանը, փորձի փոխանակմանը և ֆինանսական օգնությանը, 4. հնագույն մշակույթների հոգևոր արժեքների իմաստավորմանը, 5. «ճանապարհորդող» և ժամանակավոր հնագիտական ու արվեստի ցուցադրությունների կազմակերպմանը: Որոշվեց նաև՝ 6. ստեղծել մշտական մարմին, որ կզբաղվի համապատասխան խնդիրներով, 7. իրականացնել գործողություններ մշակութային թրաֆիքինգի և ոչ-արժանապատիվ տուրիզմի դեմ, 8. ճանաչել բնիկ ժողովուրդների լեզուները, մշակույթը և աշխարհայացքը՝ որպես կենդանի մշակույթների մաս և նպաստել դրանց ակտիվացմանը, 9. միասնաբար աշխատել բնիկ ժողովուրդների պատմամշակութային ժառանգության պահպանման հարցերի շուրջ, 10. ճանաչել հնագույն քաղաքակրթությունների տեխնոլոգիական ներդրումը համընդհանուր կենսապահովման մշակույթի զարգացման գործում, 11. ճանաչել Անդերով անցնող Քափաք Նանի պատմական ճանապարհային համակարգի կարևորությունը բնիկ ժողովուրդների ներկայիս ինտեգրման գործում, 12. կապեր ստեղծել անդամ երկրների թանգարանների միջև՝ հաշվի առնելով հնագույն քաղաքակրթությունների միջազգային թանգարան ունենալու Բոլիվիայի հայցը: Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի աշխատանքները էական ներդրում են հնագույն ժողովուրդների և նրանց ստեղծած մշակութային ժառանգության արդի իմաստավորման տեսանկյունից: Հուսով ենք, որ նրա հետագա գործունեությունը էապես կնպաստի համապատասխան բնագավառում ակադեմիական, քաղաքական և ժողովրդական ոլորտների երկխոսության զարգացմանը:

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

О МЕЖДУНАРОДНОЙ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ "КАВКАЗСКАЯ АЛБАНИЯ В ИСТОРИКО-КУЛЬТУРНОМ ПРОСТРАНСТВЕ ЕВРАЗИИ"

1-2 ноября 2018 г. в столице Российской Федерации – Москве, в числе прочих мероприятий, посвященных 200-летию Института востоковедения РАН, состоялась международная научная конференция под названием "Кавказская Албания в историко-культурном пространстве Евразии". Конференция состояла из шести сессий: 1) "Новейшие археологические исследования Кавказской Албании"; 2) "Проблемы письменности и источниковедения Кавказской Албании"; 3) "Проблемы истории Кавказской Албании"; 4) "Проблемы исторической географии и ономастики Кавказской Албании"; 5) "Новейшие исследования по религии и культуре Кавказской Албании"; 6) "Эхо Кавказской Албании на Восточном Кавказе». На конференции было представлено 23 доклада.

Международная научная конференция собрала видных албанистов и кавказоведов из многих стран, в том числе из России, стран Южного Кавказа (Республика Армения, Азербайджанская республика, Грузия) и Европы (Германия, Франция, Великобритания, Венгрия). Она продлилась два дня и была весьма продуктивной.

Примечательно, что этот форум, пожалуй, впервые за прошедших три десятилетия, за одним столом собрал известных специалистов по Кавказской Албании из Армении, Грузии и Азербайджана.

В конференции приняли участие: 1) Алексан Акопян (Институт востоковедения НАН РА); 2) Григорий Айвазян (Институт археологии и этнографии НАН РА); 3) Григор Брутян (Матенадаран им. Месропа Маштоца, РА); 4) Грануш Харатян (Институт археологии и этнографии НАН РА); 5) Гошгар Гошгарлы (Институт археологии и этнографии НАН АР); 6) Натиг Алышов (Институт археологии и этнографии НАН АР); 7) Ульвия Гаджиева (Институт археологии и этнографии НАН АР); 8) Джейхун Эминли (Институт археологии и этнографии НАН АР); 9) Роман Лолуа (Институт рукописей им. К. Кекелидзе, Грузия); 10) Эдуард Хуршудян (независимый исследователь, Казахстан); 11) Александр Акопян (Казанский /Приволжский/ федеральный университет, РФ); 12) Муртазали Гаджиев (Институт истории, археологии и этнографии ДНЦ РАН, РФ); 13) Игорь Семенов (Институт истории, археологии и этнографии ДНЦ РАН, РФ); 14) Аликбер Аликберов (Институт востоковедения РАН, РФ); 15) Арчил Балахванцев

(Институт востоковедения РАН, РФ); 16)Евгений Гончаров (Институт востоковедения РАН, РФ); 17) Наталия Сафонова (Институт востоковедения РАН, РФ); 18) Патимат Тахнаева (Институт востоковедения РАН, РФ; 19) Армен Казарян (Государственный институт искусствознания, РФ); 20) Юрий Ландер (Институт языкознания РАН, РФ); 21) Тимур Майсак (Институт языкознания РАН, РФ); 22) Олег Мудрак (РГГУ, Институт языкознания РАН, РФ); 23) Велихан Мирзеханов (Институт всеобщей истории РАН, РФ); 24) Васиф Гаибов (Институт археологии РАН, РФ); 25) Сергей Мокроусов (Институт археологии РАН, РФ); 26 Гусен Шахпазов (Ассоциация межэтнической журналистики, Россия); 27) Лара Фабиан (Albert-Ludwigs-Universität Freiburg, Германия); 28) Иштван Фодор (The Hungarian National Museum,Венгрия); 29) Аннегрет Лунинг Плонтке (Friedrich-Schiller-Universität Jena, Германия); 30) Джюсто Траина (Institut Universitaire de France, Италия/Франция); 31) Пол Вордсворт (University of Oxford, Великобритания).

Инициатором и организатором конференции выступил Институт востоковедения РАН в лице заместителя директора Института, арабиста и кавказоведа Аликбера Калабековича Аликберова.

Организаторами международной научной конференции в качестве основных целей ее проведения были заявлены: I) Порождать и не ограничивать плодотворную дискуссию, в рамках исключительно научного дискурса; II) Генерация новых знаний на основе оригинальных исследований и отход от чрезмерной политизации темы. И наконец, как подчеркнули организаторы мероприятия, "Для Института востоковедения РАН изучение истории и культуры Кавказской Албании важно еще и потому, что тематика конференции актуализирует проблемы: 1) формирования и развития раннегосударственных образований на территории России и Кавказа; 2) распространения восточного христианства, частью которого является Кавказско-Албанская (Алуанская) церковь; 3) этнокультурного и межцивилизационного взаимодействия различных племен и народов на Кавказе в античный и раннесредневековый периоды. Ведь Кавказская Албания находилась на стыке двух частей света – Азии и Европы, на перекрестке культур и цивилизаций, испытывала на себе влияние Парфии и Рима, Ирана и Византии. Отсюда – евразийское измерение конференции, ее широкий концептуальный контекст".

Здесь следует напомнить о том, что первый в России научный форум – симпозиум "Кавказская Албания и лезгинские народы – история и современность", был организован Федеральной Лезгинской национальной культурной

автономией (ФЛНКА) еще в 2008 году и стал поистине знаковым событием в албанистике. В 2015 году по итогам этого симпозиума, а также конференций, проведенных ранее в Ереване (2007, 2012 г.) и Баку (2011 г.), под грифом Института востоковедения РАН при поддержке ФЛНКА, под редакцией заместителя директора Института востоковедения РАН Аликбера Аликберова и зав. отделом археологии Института истории, археологии и этнографии ДНЦ РАН, доктора ист. наук Муртазали Гаджиева, был издан первый в истории новой России научный сборник по истории Кавказской Албании– "Albania Caucasica", том I. Это академическое издание включило в себя избранные материалы, апробированные на четырех международных конференциях, а именно – "Кавказская Албания и этнокультурное наследие" (Ереван, 2007 г.), "Кавказская Албания и лезгинские народы" (Москва, 2008 г.), "Место и роль Кавказской Албании в истории Азербайджана и Кавказа" (Баку, 2011 г.) и "Албания-Алуанк-Арран: проблемы этнополитической истории и христианской культуры" (Ереван, 2012 г.). По сути дела в 2015 г. на базе Института востоковедения РАН была создана новая уникальная в своем роде площадка для международного сотрудничества профессиональных ученых-албанистов и специалистов по смежным научным дисциплинам со всего света.

Как заявили организаторы международной научной конференции "Кавказская Албания в историко-культурном пространстве Евразии", по ее итогам избранные материалы конференции также планируется опубликовать уже во II томе сборника "Albania Caucasica".

Участники конференции выступили с докладами, посвященными различным вопросам истории, этнологии, археологии, исторической географии, нумизматики, языка, культуры Кавказской Албании, ее связей с соседними народами и странами, поведали о новых открытиях в разных сферах данной области науки, обменялись друг с другом опытом.

На конференции с содержательным совместным докладом под названием "Албания, Алуанк и Алан: историчность связей этих названий и их интерпретация" выступили **Олег Мудрак**[1] и **Аликбер Аликберов**, которые озвучили любопытную теорию о том, что термин Алан, подобно топониму Албания-Алуанк, мог не являться этническим понятием, а обозначать понятие "царский – благородный". Авторы считают, что имеется исконная прасев.– кавказская основа *'*äle-w-* 'правитель; благородный', от которой были образованы и

[1] Институт языкознания РАН.

Алуан, и Алан (Аллан). Она, по их мнению, не несла в себе никакой этнической коннотации, а была социальным термином, впоследствии превратившимся в политоним – так же, как и в случае с Алуанком (="царями" или "царствами" с арм. показателем мн. ч.-*k*), и с аланами (букв. "царскими"), ср. "царские скифы" в греческой традиции.

Весьма интересным и довольно содержательным был также доклад доктора ист. наук **Муртазали Гаджиева**[2] "Роль и значение среднеперсидского языка в Кавказской Албании", в котором автор показал, что среднеперсидский в определенный момент истории Кавказской Албании приобрел роль "лингва франка" для албанских племен.

Доктор ист. наук **Алексан Акопян** выступил с докладом "Локализация рек и городов Албании по Клавдию Птолемею". Автор, опираясь на сведения географа II в. н.э. Птолемея и других смежных источников, впервые в подобном масштабе в исторической географии попытался восстановить картину и локализовать все 29 населенных пунктов и 6 рек (в 5-и секторах) Кавказской Албании. Его успешная локализация и идентификация всех шести рек была основана, в первую очередь, на уточнении северо-восточной границы царства Кавказской Албании, а также на глубоком анализе и тщательных сопоставлениях имеющегося материала. Всё это явилось залогом верной интерпретации представлений Клавдия Птолемея о Кавказской Албании, благодаря чему в настоящее время мы можем говорить о высокой точности локализации албанских топонимов и иметь широкие перспективы для этимологического анализа самих этих топонимов со стороны лингвистов.

Доклад кандидата ист. наук **Грануш Харатян** "Идентификационные и самоидентификационные термины удин-христиан по материалам эпитафий и армянских письменных источников XIX-XX вв." освятил важные аспекты вопроса об идентификации и самоидентификации христианского удинского народа. Автор показала, что в армянских письменных источниках XIX в. для обозначения удин и культурно-географического пространства их обитания обычно употреблялись такие термины, как: "остатки албан или утийцы", "удинские армяне", "удины-григориане", "коренные жители", "утиязычные армянской веры", "утиязычные армяне", "коренными армянами в уезде являются удины", "жители тюркоязычны, коренные местные и по нации утийцы", "жители коренные, из

[2] Зав. отделом археологии Института истории, археологии и этнографии Дагестанского НЦ РАН.

племени утийцев", "утийские и магометанские армяне", "сунниты удинского происхождения", "удины православные и григориане", "страна утийцев", "мир утийцев". Однако зачастую они назывались просто "армянами» и "грузинами". Во внутреннем же употреблении сами себя удины называли "уди", "кштон" (qshton), "неойши".

Весьма интересен был также доклад **Григора Брутяна** "Алуанский и грузинский календари по Календарю Анании Ширакуни[3]", в котором автор подробно проанализировал генезис алуанского и грузинского календарей и пришел к заключению о том, что и тот, и другой восходят к армянскому прототипу. Суммируя результаты анализа фактов из трудов Анании Ширакаци, автор получил следующую картину событий. В 552 г. Армянская церковь, в лице католикоса Мовсеса Еливардеци, решает свои календарные вопросы официальным принятием пасхалий, составленных Атанасом Таронаци. Девять лет спустя, в 561 г. Александрийский собор календароведов, в отсутствии представителей из Армении, Грузии и Албании (и некоторых других стран), рассматривает в числе других вопросов и вопрос календарей этих народов и учреждает отдельные календари для народов, не участвовавших в работе собора. Все календари этих народов были составлены по образцу Египетского календаря, имели совпадающие начала года и месяцев и одинаковую систему високосов. Армянская, а также Грузинская и Алуанская церкви, входящие в иерархическую структуру Армянской церкви, не принимают эти календари, созданные александрийцами. В конце VI века начинается процесс отделения Грузинской церкви от Армянской и, как результат этого отделения, в 781 г. Грузинская церковь переходит к новой (халкедонитской) пасхалии и, вместе с этим, к применению календаря, созданного для них Александрийским собором. Нумерация годов данного нового пасхалия становится летосчислением, известным как Грузинский К'роникон. Что касается Алуанской церкви, как указывает автор, то она, до конца оставаясь в каноническом единстве с Ар-

[3] Имя этого автора в разных армянских средневековых источниках даётся по-разному: Анания Ширакаци (из Ширака), Анания Ширакуни, Великий Анания, Анания Математик, Анания Ширакаванци (из Ширакавана), Анания Анеци (из Ани) и т.д. В своих трудах он сам себя называет “Анания сын Йованнэса Ширакуни”. Это означает, что Ширакуни – его родовое имя (т.е. он был сыном дворянина). Под именем Ширакуни его упоминают и ранние средневековые авторы Григор Магистрос Пахлавуни и Йованнэс Саркаваг (Дьякон). Исходя из этого, автором было решено пользоваться именем Анания Ширакуни, несмотря на то, что в современной литературе он больше известен как Анания Ширакаци.

мянской, не перешла на самостоятельную пасхалию и не создала самостоятельного летосчисления и, возможно, никогда не применяла календарь, составленный для нее Александрийским собором. Последнее утверждение, помимо всего вышесказанного, автор обосновывает и тем, что Алуанская церковь функционировала на территориях, населенных преимущественно армянами, где вполне естественным и достаточным было бы применение Армянского календаря. Подавляющее большинство названий месяцев Грузинского и Алуанского календарей, согласно автору, являются прямым заимствованием соответствующих армянских названий, или имеют смысловую общность с ними.

Кандидат ист. наук **Григорий Айвазян** представил доклад "К вопросу об удинской этноконсолидации албанских лезгиноязычных племен в эпоху средневековья". Основываясь на анализе источников и теоретических положениях, выработанных на нынешнем этапе развития исторической и этнографической науки, стало возможным конкретно поставить и решить вопрос об этнических процессах, протекавших на территории исторической Кавказской Албании с античной эпохи до XVIII-XIX вв. Имеющийся источниковедческий материал позволил автору ретроспективно восстановить этническую картину населения исторической Кавказской Албании на протяжении упомянутого выше длительного периода. Он показал, что в указанный период здесь можно было наблюдать показательное для динамики этнических процессов явление. А именно: протекавший с античной эпохи с разной степенью интенсивности процесс этноконсолидации в среде лезгиноязычных албанских племен-христиан (с 315 г.) в конечном итоге привел к формированию совершенно иного охвата этноса под названием **уди-ути-удины** по сравнению с античностью и ранним средневековьем. Этот охват **к IX-X вв.** уже примерно совпадал с территорией христианского царства Шаки-Эрети (так называемого "второго Албанского царства"). Сопоставление античных и средневековых источников позволило автору показать, что процесс этноконсолидации в среде лезгиноязычных албанцев-христиан западной половины Кавказской Албании, на базе их религиозной и этнолингвистической общности, был успешно завершен к **IX-X вв. н.э.** образованием единого удинского народа, который стал **народом доминантом** Кавказской Албании периода царства Шаки-Эрети. Под левобережной Албанией и албанцами-христианами в указанный период уже фактически понималась **"Страна утийцев"** и окончательно сложившееся удинское христианское этническое сообщество, подразумевавшее единство в религии, языке, в социально-идеологической и культурной областях. **Этноним "уди" к**

этому времени уже стал самоназванием (эндоэтнонимом) практически всех лезгиноязычных албанцев-христиан, хотя этот народ в более поздние эпохи пошел по пути дезинтеграции и деэтнизации, который в основном завершился **к XVIII-XIX вв.**

Олег Мудрак в своем содержательном докладе "Алванские алфавитные названия и уточнение значений букв", подробно анализируя генезис кавказско-албанского алфавита, пришел к однозначному заключению, что он был составлен по примеру армянского и при помощи носителя армянского языка.

В своем любопытном докладе "К вопросу о времени и месте написания агванского Евангелия по нумизматическим данным" **Александр Акопян** на основе нумизматических данных пришел к выводу, что временные рамки написания алуанского Евангелия охватывают VI-X вв., а географический ареал соответствует территории царства Эрети к X веку.

Доктор ист. наук **Эдуард Хуршудян** (Казахстан) выступил с весьма примечательным докладом под названием "О двух Сасанидских буллах из коллекции А. Саиди". Содержание надписей этих булл автор попытался связать с раннесредневековой Албанией.

Участник из Венгрии – **Иштван Фодор** (István Fodor) представил обобщающий доклад "Гунны и Кавказская Албания", а с докладом "О горах в древней Албании" выступила участница конференции из Германии Лара Фабиан.

Патимат Тахнаева представила весьма актуальный доклад "К вопросу о фальсификации истории Кавказской Албании: дагестанские примеры". Конечно, автор доклада затронула очень важную тему, но при этом дипломатично обошла стороной вопрос о вопиющих примерах искажения истории Кавказской Албании в азербайджанской историографии, которые на нынешнем этапе достигли поистине небывалых масштабов.

С докладами на английском языке выступили следующие участники конференции: **Джусто Траина** (Giusto Traina) с докладом под названием "Страбон и Албанцы" – "Strabo and the Albanians"; **Пол Вордсворт** (Paul Wordsworth) – с докладом "Поселения в позднеантичной и средневековой Кавказской Албании – перспектива, сельская местность Гаратяпя Бардинский район" – "Settlement in late Antique and medieval Caucasian Albania – a rural perspective from the site of Qaratəpə (Bərdə rayon)"[4]; **Аннегрет Плонтке-Люнин** (Annegret Plontke Luening)

[4] Примечателен тот факт, что автор доклада пытался прояснить некоторые вопросы, связанные с позднеантичной и средневековой Кавказской Албанией, на основе

– с докладом "Ранние христианские церкви в Кавказской Албании" – "Early Christian Churches in Caucasian Albania". Был также озвучен совместный доклад **Джейхуна Эминли**, **Лары Фабиан и Эмиля Икандерова** "Краткий обзор недавних полевых работ в Лерике (Южный регион Азербайджана)" –"Brief remarks on recent fieldwork in Lerik (South region of Azerbaijan)".

Во время обсуждения докладов, подведения итогов конференции между коллегами из разных стран развернулась весьма содержательная и конструктивная дискуссия по актуальным вопросам албановедения, которая практически не уступала по своей продуктивности официальной части конференции.

Здесь, однако, следует отметить, что ни один из научных форумов, посвященных проблемам истории Кавказской Албании, в той или иной форме и в определенной степени не мог избежать проявлений этноцентризма и политизации вопроса. К сожалению, не обошлось без подобных негативных проявлений и на этот раз. Примером тому может послужить доклад представителя Азербайджана **Ульвии Гаджиевой**, которая в своем докладе "Конфессиональная связь кавказских албан с Иерусалимом" использовала практически весь принятый в арсенале азербайджанской историографии и излюбленный азербайджанской пропагандистской машиной набор антинаучных, антиармянских клише, тезисов и выкладок наподобие приведенных в ее печально известном труде "Деэтнизация кавказских албан в XIX веке" (Баку, 2004). На каждой странице последнего опуса она, вслед за своими именитыми предшественниками и учителями, такими как З. Буниятов,Ф. Мамедова и др., всячески пыталась доказать, что коренное армянское население Азербайджана и Арцаха – это чуть ли не на наших глазах "арменизированные" албано-удины, а значит, скорее азербайджанцы, нежели армяне. Антинаучность этой концепции многократно подвергалась критике со стороны известных армянских ученых, поэтому нет особой необходимости останавливаться на этом подробно.

Другие представители Азербайджана, а именно археологи: **Гошгар Гошгарлы**, выступивший с докладом "К вопросу о мотивации второго похода Помпея в Кавказскую Албанию", **Джейхун Эминли** ("Об одной разновидности погребального обряда античной Габалы") и **Натиг Алышов** ("О предварительных результатах археологического исследования 2017-2018 гг. церкви Тюлю в северо-западной части Азербайджана"), с учетом уровня допустимой в совре-

---

материалов и артефактов из этнически армянского правобережья реки Кура, а именно из района города Партав-Барда.

менной азербайджанской историографии степени объективности, в основном оставались в рамках приемлемой научной корректности.

Остается добавить, что грузинский лингвист **Роман Лолуа** свой доклад "Сообщения древнеармянских источников о генезисе кавказско-албанской письменности" посвятил исключительно одной цели, а именно – показать отсутствие наличия всякой связи между алуанским, а заодно и грузинским алфавитом и письменностью с армянским алфавитом и именем Месропа Маштоца.

Российский докладчик **Арчил Балахванцев** в своем докладе "Границы Кавказской Албании в античную эпоху: источниковедческий аспект" пытался показать (вслед за К. Алиевым и другими представителями азербайджанской историографической школы),что границей Великой Армении и Кавказской Албании в античности была не река Кура, а Аракс. В этой связи Алексан Акопян резонно предложил автору еще раз внимательнее ознакомиться с подробным анализом данного вопроса в своей, вышедшей в свет еще 30 лет назад, известной работе "Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках" (Ереван, 1987).

Несмотря на отдельные проявления негативных тенденций, в целом международная научная конференция "Кавказская Албания в историко-культурном пространстве Евразии", несомненно, стала, знаковым событием в научном мире, по своей результативности и продуктивности внеся весомый вклад в копилку международной албанистики, дав положительный импульс развитию научного албановедения на много лет вперед.

ГРИГОРИЙ АЙВАЗЯН
Кандидат исторических наук

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ՈՒՂԻՆ

Հայկ Հակոբյանը ծնվել է 1956 թ. նոյեմբերի 5-ին Երևանում, անվանի գրականագետ և աղբյուրագետ, դոկտոր, պրոֆեսոր Պիոն Հակոբյանի ընտանիքում: Հ. Հակոբյանի հետ ընկերական թե գործնական հարաբերություններում, նրա հավասարակշռված խոսվածքում ու շարժուձևերում չէր կարելի չնկատել մտավորական միջավայրից սերված մարդուն բնորոշ ազնվությունն ու բարեկրթությունը:

1973-1978 թթ. սովորում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցնում Հայաստանի ազգագրության պետական թանգարանում՝ որպես գիտաշխատող, ցուցադրության և մեթոդական աշխատանքների բաժնի վարիչ, ապա՝ գիտնական քարտուղար: 1981 թ. Մոսկվայում ընդունվում է ԽՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: Հելլենիստական Արևելքի պատմության անվանի մասնագետ, դոկտոր, պրոֆեսոր Գենադի Կոշելենկոյի գիտական ղեկավարությամբ գրում է «Հայաստանի և Հռոմի տնտեսական և մշակութային կապերը» թեմայով թեկնածուական աշխատությունը, որը պաշտպանում է 1986 թ. ապրիլի 9-ին ԽՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտում: 1984 թվականից սկսում է աշխատել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Նորակառույցների հնագիտության, ապա՝ Անտիկ հնագիտության բաժիններում՝ հասնելով մինչև գիտնական քարտուղարի պաշտոնի: 2001 թ. մինչև իր մահկանացուն կնքելը, պատմագիտական և հնագիտական հետազոտություններով զբաղվելուն զուգընթաց, Հ. Հակոբյանը կատարում է նաև կրթական աշխատանք՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում վարելով մեկ տասնյակից ավելի թեմաների նվիրված դասընթացներ: 2017 թ. նոյեմբերին նա ընտրվում է ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հին դարերի բաժնի վարիչ:

Հ. Հակոբյանի գիտական վաստակի ճանաչվածության արտահայտությունն է նրա անդամակցությունը մի շարք գիտական խորհուրդների՝ ՀՀ ԳԱԱ

հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ազգագրության պետական թանգարանի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, ինչպես նաև ՀՀ կառավարությանը կից հնագիտական մեթոդական խորհրդի:

Հ. Հակոբյանի բազմակողմանի զարգացածությունն ու տարբեր բնագավառներում գիտելիքների մեծ պաշարը նրան մղում էին իր խոսքն ասելու պատմագիտության տարբեր ոլորտներում: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում էր Հին Հայաստանի, Հին Արևելքի և Միջերկրածովյան երկրների քաղաքական, հոգևոր ու նյութական մշակույթի պատմության զանազան ճյուղերը՝ ռազմական արվեստ, կրոն, առասպելաբանություն, անտիկ աշխարհի ճարտարապետություն, քաղաքաշինություն, շինարվեստ, պատմական քարտեզագրություն և այլն: Ողջ կյանքում նա հարազատ մնաց հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջանների պատմության ու մշակույթի ուսումնասիրության գործին, որից նա սկսել էր իր գիտական գործունեությունը Մոսկվայում՝ 1981-1984 թթ., ԽՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտում որպես ասպիրանտ ուսանելու տարիներին: Սակայն գիտնականի պրպտող միտքը նրան աստիճանաբար տարավ նաև այլ ժամանակաշրջաններ՝ բրոնզի դար, Ուրարտու, վաղ միջնադար: Հ. Հակոբյանի գիտական կենսագրության մի մեծ և կարևոր հատվածը կապված է Հայաստանի՝ շուրջ մեկ տասնյակ հնավայրերում նրա ղեկավարությամբ կամ մասնակցությամբ իրագործված հնագիտական պեղումների հետ: Իր հնագիտական «մկրտությունը» Հայկը ստացել է Հին Հայաստանի առաջին մայրաքաղաք Արմավիրի պեղումներին մասնակցելու տարիներին: Բոլորի սերն ու հարգանքը վայելող, հայ հնագիտության մեծերից մեկի՝ Գևորգ Տիրացյանի ղեկավարած համերաշխ արշավախմբի կազմում նա ձեռք բերեց դաշտային հնագիտական աշխատանքի իր առաջին փորձն ու հմտությունները: Նրա կյանքի արմավիրյան շրջանն առանձնահատուկ էր նաև նրանով, որ այդ ընթացքում ձևավորվեց երիտասարդ հնագետների ընկերական մի շրջանակ, որն անխախտ մնաց տասնամյակներ շարունակ: Հայկ Հակոբյանի «արմավիրյան» շրջանի շարունակությունը եղավ ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի պեղումներին նրա մասնակցությունը ճանաչված հնագետ Ռաֆիկ Թորոսյանի արշավախմբում:

Հ. Հակոբյան հնագետի անունն առաջին հերթին կապվում է Շիրակի մարզի Հողմիկ գյուղի մերձակայքում գտնվող հելլենիստական բնակավայրի երկարամյա պեղումների հետ, որոնք նրա ղեկավարությամբ իրագործվել են 1987 թ. սկսած, ընթացել են նույնիսկ ավերիչ երկրաշարժին հետևած տարիների ծանրագույն պայմաններում ու շարունակվել մինչև 2000-ականների կեսերը:

Նա ակտիվորեն մասնակցել է նաև Շիրակի մարզի Կարմրաքար գյուղի մոտակայքում գտնվող անտիկ դամբարանադաշտի (1991-1992 թթ.) և Շիրակի սարահարթում հայտնաբերված միջնադարյան «Խարաբեք» գյուղատեղիի պեղումներին (1986-1987 թթ.), Սևանի ավազանում հայ-իտալական արշավախմբի կողմից կատարված լայնածավալ և բազմաբնույթ հետազոտություններին, մասնավորապես՝ Ալբերդի ամրոցի (1993-1995 թթ.), Երևանում՝ Ծիծեռնակաբերդի բրոնզեդարյան-վաղ երկաթեդարյան ժամանակաշրջանի բնակավայրի (1998, 2007 թթ.), Բջնիի ամրոցի պեղումներին (2003-2004 թթ.):

Հակոբյան հնագետը տեղյակ էր նաև բնագավառի նորարարական մեթոդներին, մասնավորապես՝ օդային հնագիտությանը: Հարկ է հիշել անգլիացի հնագետ Ռ. Պալմերի նախաձեռնությամբ՝ դելտապլանով իրագործված թռիչքները, որոնց ընթացքում կատարվել են Արագածոտնի մարզի մի շարք հուշարձանների աերոնկարահանումները:

Նրա գիտական հրատարակությունների մեծ մասը վերաբերում է ինչպես անտիկ, այնպես էլ ավելի վաղ ժամանակաշրջաններում ռազմական գործի և ռազմարվեստի ուսումնասիրությանը: Ամենավաղ աշխատություններից մեկում («Մեծ և Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը», ՊԲՀ, 1986, N 4, 138-155)՝ նվիրված Մեծ և Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգին, գրավոր և հնագիտական աղբյուրների տվյալների հիման վրա ներկայացվել է փոքր պահակակետերից, ամրոցներից, լեգեոներական ճամբարներից ու քաղաքներից բաղկացած հռոմեական *լիմեսը*, որը Եփրատի երկայնքով ձգվում էր Սատաղից մինչև Մելիտինե: Այն իր գլխավոր գործառույթից բացի, որը կայսրության սահմանների պաշտպանությունն էր, անուղղակիորեն նպաստում էր նաև արևմուտք-արևելք տնտեսական և մշակութային կապերի աշխուժացմանը՝ սահմանի երկայնքով առաջացած քաղաքների և առևտրային միջանցքների շնորհիվ:

Մեկ այլ հոդված («Հռոմեա-արևելյան առնչությունները ռազմական մարտավարության բնագավառում», Բանբեր Երևանի համալսարանի, 1983, N 3, 49-70), նվիրված է ռազմական մարտավարության բնագավառում հռոմեա-արևելյան առնչությունների քննությանը: Շուրջ չորս դարերի ընթացքում Արևելքի ժողովուրդների դեմ հռոմեացիների վարած պատերազմների և ճակատամարտերի մասին աղբյուրների ընձեռած տեղեկությունները վկայում են մարտավարական հնարքներում և բանակի կազմակերպման մեջ աստիճանաբար տեղի ունեցող փոփոխությունների մասին: Հեղինակը ցույց է տալիս, որ հռոմեացիները ստիպված էին պատերազմ մղելու իրենց սկզբունքները հարմարեցնել Հայաստանի, Միջագետքի և Պարսկաստանի բնակլիմայական առանձ-

նահատկություններին՝ մեծացնելով հեծելազորի դերը: Մյուս կողմից, հռոմեական բանակին արդյունավետ հակազդելու նպատակով, արևելյան ռազմական մարտավարության մեջ ևս կատարվում են փոփոխություններ, մասնավորապես՝ ուժեղացվում է հետևակը, և կիրառվում է կայուն զորադասավորությամբ մարտ վարելու սկզբունքը: Այս զարգացումներում որոշակի դեր է կատարել նաև հպատակ ժողովուրդներից կազմված զորամիավորումների ներգրավումն ինչպես հռոմեական, այնպես էլ պարսկական բանակներում: Հ. Հակոբյանի՝ ռազմարվեստին վերաբերող հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին հայոց բանակի պատմությանը նվիրված մենագրական շարքում՝ «Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան սպառազինությունն ու ռազմարվեստը», «Վանի թագավորության պատերազմներն ու ռազմարվեստը», «Հայաստանի բանակն ու ռազմարվեստը Երվանդունիների օրոք»: Այս գրքերը և ռազմարվեստին վերաբերող նրա հոդվածները, հիրավի, նոր խոսք էին հայ պատմագիտության և հայոց բանակի պատմության ուսումնասիրության և ներկայացման գործում:

Հ. Հակոբյանի գիտական հետաքրքրությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեին Տիգրան Մեծի կերպարը, նրա գործունեությունն ու ժամանակաշրջանը, որոնց ուսումնասիրությանը նա նվիրեց երկար տարիներ: «Տիգրան Մեծ» մենագրության մեջ հունա-հռոմեական և հայ միջնադարյան գրավոր աղբյուրների, պատմագրական այլ տվյալների հիման վրա լուսաբանվեցին Տիգրան II-ի կենսագրության տարբեր փուլերը, նրա անձնական կյանքի ու պետական գործունեության դրվագները: Հին աշխարհի ռազմական արվեստի ուսումնասիրության բնագավառում նորագույն նվաճումների հիման վրա առաջին անգամ քննական վերլուծության ենթարկվեց Տիգրան Մեծի և հռոմեական զորավարներ Լուկուլլոսի և Պոմպեոսի բախումների պատմությունը: Հեղինակը Տիգրան Մեծին ներկայացնում է որպես երկրպագվող միապետ, դիվանագետ, զորավար, բարեփոխիչ և լուսավորիչ:

Հնագետ-պատմաբանն իր ուսումնասիրություններում մեծ տեղ է հատկացրել հեթանոսական Հայաստանի կրոնական պատկերացումների ձևավորմանն ու զարգացմանը, կրոնական հաստատություններին և ճարտարապետությանը: Տարբեր տարիներին գրած մի շարք հոդվածներում և այլ բնույթի աշխատություններում նա անդրադարձել է հեթանոսության պատմությանը Հայաստանում՝ հնագույն ժամանակներից մինչև մ. թ. III դար (գունավոր քարտեզ), Հայաստանում հոգևոր հաստատությունների հորինվածքին՝ ընդգրկելով պատմական մեծ ժամանակահատված՝ հնագույն ժամանակներից մինչև անտիկ դարաշրջանը, «Թուխ մանուկների» պատկերագրությանը, տաճարի հինարևելյան և անտիկ ժամանակաշրջանի մոդելներին, Հայաստանի առնչությա-

նը Միթրային նվիրված հռոմեական տաճարներին: Տաճարային ճարտարապետության, պաշտամունքային շինությունների կառուցվածքային և կոմպոզիցիոն սկզբունքների, մանրամասների և գործառութային նշանակության վերաբերյալ եզրակացություններին նա հանգել է, մասնավորապես, Հողմիկի բնակավայրի հնագիտական հարուստ նյութն իմաստավորելու մղումով: Այդ համատեքստում ի հայտ են եկել Անտիկ Հայաստանի պաշտամունքային ճարտարապետությանը, հին Հայաստանում տաճարների կառուցվածքին, սյունազարդ դահլիճների և Հողմիկի անտիկ տաճարական համալիրի համեմատական վերլուծությանը, ինչպես նաև Հին Հայաստանի բագիններին ու զոհասեղաններին նվիրված հետազոտությունները:

Հ. Հակոբյանի ուսումնասիրությունների կարևոր թեմաներից է Հայաստանի հոգևոր կյանքի շրջադարձային կետ հանդիսացող՝ հեթանոսությունից դեպի քրիստոնեություն անցման փուլը: Դարաշրջանին վերաբերող որոշ, դեռևս մեկնաբանության կարոտ խնդիրներ են արծարծված Հայոց դարձին և Գրիգոր Լուսավորչի կերպարին ու գործունեությանը նվիրված աշխատություններում: Հատկապես ուշադրության են արժանի Հայաստանում նոր հավատքի պատմամշակութային նախադրյալներն ու զանազան դրսևորումները լուսաբանող ծավալուն հոդվածները՝ «Հեթանոսական տաճարը Լուսավորչի թիկունքում», «Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հինարևելյան ակունքները», «Մեհյանների կործանման և Հայոց դարձի պատմության որոշ մանրամասներ», «Գրիգոր Լուսավորչի լեգենդի հինարևելյան և միջերկրածովյան զուգահեռները», «Քրիստոնեության ընդունումը Հայաստանում (լեգենդն ու իրականությունը)», «Գրիգոր Լուսավորիչը Փոքր Ասիայում»: Սրանցում հեղինակը՝ որպես հիանալի վերլուծաբան, համալիր կերպով է ներկայացնում պատմական, հնագիտական, առասպելաբանական, աղբյուրագիտական և պատկերագրական նյութը:

Հ. Հակոբյանը իր կյանքի ընթացքում կուտակած գիտելիքների խորությամբ ու փորձի հսկայական ծավալով դեռևս կարող էր մեծ ներդրում ունենալ պատմագիտության, հնագիտության, ինչպես նաև երիտասարդ սերնդին կրթելու ասպարեզում: Այնուամենայնիվ, նրա թողած գիտական ժառանգությունն արդեն իսկ մեծ ու հարատև արժեք է, իսկ բարի ու ազնիվ ընկերոջ մասին հիշողությունն անջնջելի է նրան ճանաչողներիս համար:

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
ՀԱՍՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփելյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 964
Ստորագրված է տպագրության 27.08.2019 թ.:
Տպագրական 20.5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 27.08.2019 г.
20.5 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 27.08.2019
20.5 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://lraber.sci.am
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ lraber@sci.am
Официальный сайт журнала: http://lraber.sci.am
Электронная почта журнала: lraber@sci.am
Official site of the Journal: http://lraber.sci.am
E.mail of the Journal: lraber@sci.am